ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
YEREVAN "HAYBUSAK" UNIVERSITY SCIENTIFIC AND SCIENTIFIC-METHODOLOGICAL JOURNAL

ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

YEREVAN "HAYBUSAK" UNIVERSITY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

SOCIAL SCIENCES

2(3)

ԵՐԵՎԱՆ - YEREVAN - **2022**

Երաշխավորված է տպագրության Երևանի «Հայբուսակ» համալսարանի գիտական խորհրդի որոշումով

Խմբագրական կոլեգիա.
Աբրահամյան Մարտին - *ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆ., գլխավոր խմբագիր*
Պետրոսյան Տիգրան - *կգթ խմբագիր*
Բոստանջյան Վարդան - *տնտեսագիտության դոկտոր, պրոֆ.*
Պետրոսյան Հայկ - *մանկավարժական գիտ. դոկտոր, պրոֆ.*
Սաֆարյան Գառնիկ - *իրավագիտության դոկտոր, պրոֆ.*
Օտարերկրյա անդամ՝
Բալասանյան Դիանա - *բանասիրության դոկտոր, Լա Լագունայի համալսարան, Իսպանիա*

Երևանի «Հայբուսակ» համալսարանի գիտական և գիտամեթոդական հանդես – 2(3), Երևան: Էդիթ Պրինտ, 2022, 240 էջ:

Հանդեսը պարունակում է Երևանի «Հայբուսակ» համալսարանի ակադեմիական համակազմի, այլ բուհերի և գիտական հիմնարկների գիտական և գիտամեթոդական աշխատանքներ՝ տնտեսագիտության, մանկավարժության և հոգեբանությոան, դասավանդման մեթոդիկա, բանասիրության, իրավագիտության և արվեստի ոլորտներում:

ISSN 2953-7827

© «Հայբուսակ» հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բոստանջյան Վ. - ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ 6

Գևորգյան Գ., Վարդանյան Ա. - ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ 13

Գևորգյան Գ. - ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԴԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ 19

Ասատուրյան Ս. - ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ 23

Ասատուրյան Ս. - ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ 35

Հարությունյան Ա. - ԱՈՒԹՍՈՐՍԻՆԳԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 45

Մկրտչյան Լ. - ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ 50

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ և ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետրոսյան Հ. - ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 55

Պապիկյան Կ. - ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ 62

Մակոյան Մ. - ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՋև ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ - ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 69

Հովհաննիսյան Եվա - ՍԹՐԵՍԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՔՈՓԻՆԳ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 73

Խուգեյան Ա. - ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 80

Մելիքսեթյան Վ. - ԾՆՈՂՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁԻ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ 85

Զազյան Ա. - ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՇԱՐԺԻՉ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 95

Налбандян М. - МЕТОДИЧЕСКИЕ ПОДХОДЫ ПРЕПОДАВАНИЯ ЭКОЛОГИИ В СОВРЕМЕННОМ МЕДИЦИНСКОМ ВУЗЕ 104

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Балоян М. - ЦИКЛ СТИХОТВОРЕНИЙ МАНДЕЛЬШТАМА «АРМЕНИЯ» В ПЕРЕВОДЕ ВАН ЦЗЯСИНЯ 109

Խաչատրյան Ե. - ՀԱՅ-ԲԱՍԿՅԱՆ ՑԵՂԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՕՏԱՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....119

Բալայան Ն. - ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՅԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ԵՌԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....128

Ohanyan L., Babayan V. - THE REFLECTION OF THE HEDONISTIC WORLDVIEW IN THE WORKS OF THE “LOST GENERATION” AUTHORS 138

ԱՐՎԵՍՏ

Եղիազարյան Ա. - ՆՈՐԱՁԵՎ ՀԱԳՈՒՍՏԻ ԲՐԵՆԴԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ.....143

ԻՐԱՎՈՒՆՔ

Սաֆարյան Գ., Շահնազարյան Ն. - ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ..... 147

Սաֆարյան Գ., Շահնազարյան Ն. - ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ.....156

Մալխասյան Լ. - ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ. ԸՄԲՌՆՈՒՄ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 168

Սիրունյան Ռ. - ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ 177

Մուրադյան Մ. - ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՈՍԿԵԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....188

Մարտիրոսյան Ն. - ՍԱՀՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ, 1911Թ. 203

Ստեփանյան Հ. - ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՁԱՐԳԱՑՄԱՆ և ՁևԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 211

Առաքելյան Գ. - ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿ-Ի ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 223

Շահնազարյան Ն. - ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ 229

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Վարդան Բոստանջյան

Երևանի պետհամալսարան

Մուտքագրված է 14.05.22, հաստատված է տպագրության 23.06.22

Ամփոփագիր. *Հոդվածում քննարկվել են կազմակերպությունների վարկունակության գնահատման հիմնահարցերը: Ուսումնասիրվել են վարկունակության գնահատման հիմնական մեթոդները, դրանց առավելությունները և թերությունները: Ներկայացվել են վարկավորման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացը և դրա հիմնական փուլերը: Ներկայացվել են վարկունակության վրա ազդող գործոնները և վարկային ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները:*

Հիմնաբառեր. *վարկունակություն, վարկային ռիսկ, սքորինգ, վարկավորում, վարկային պարտավորություն*

Վարկային միջոցների ներգրավումն ու օգտագործումը հանդիսանում է շուկայական հարաբերությունների հիմնական բնութագրիչներից և ուղղված է տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական կարիքների բավարարմանը: Ընդհանուր առմամբ, վարկավորման գործընթացի կարևոր բաղադրիչներից և պայմաններից մեկն է հանդիսանում վարկառուի և վարկատուի միջև փոխվստահությունը, որի ապահովմանն է ուղղված հաճախորդի վարկունակության վերլուծությունը: Յուրաքանչյուր բանկ սեփական հայեցողությամբ է որոշում այդ նպատակով տվյալների բազայի ձևավորման և օգտագործման առանձնահատկությունները, ինչպես նաև ընտրում վարկունակության գնահատման համապատասխան մեթոդը:

Ընդհանուր առմամբ, վարկունակության տակ հասկացվում է փոխառուի ընդունակությունն ամբողջությամբ և սահմանված ժամկետներում կատարելու սեփական պարտքային պարտավորությունները: Ընդ որում, այն որոշակիորեն տարբերվում է վճարունակությունից, քանի որ վերջինս ենթադրում է հաճախորդի կողմից բոլոր, իսկ վարկունակությունը՝ միայն վարկային պարտավորությունների կատարման ընդունակություն ու հնարավորություն: Վարկունակությունը ցույց է տալիս առաջիկա ժամանակահատվածում (վարկային պայմանագրով նախատեսված ժամկետում) վարկային պարտավորությունների կատարման հաճախորդի ընդունակությունը: Այն իրենից ներկայացնում է հաճախորդի պատրաստակամությունն ու հնարավորությունը

ժամանակին և ամբողջական ծավալով կատարելու սեփական ֆինանսական պարտավորությունները: Այլ խոսքով, վճարունակությունն ավելի լայն է, քան վարկունակությունը, քանի որ վերջինը վերաբերում է բացառապես վարկային պարտավորությունների կատարմանը: Միաժամանակ, դրանք սերտորեն կապված են միմյանց հետ և հաճախորդի վարկունակության գնահատման ժամանակ վճարունակությունը կամ անվճարունակությունը հանդես են գալիս որպես որոշիչ գործոն:

Վարկունակությունը դիտարկելիս պետք է հաշվի առնել ոչ միայն փոխառու միջոցների վերադարձման վարկառուի ցանկությունը, այլ նաև դրանց արդյունավետ օգտագործման հնարավորությունը, քանի որ շատ դեպքերում փոխառու միջոցների վերադարձը կախված է լինում դրանց օգտագործման արդյունավետությունից: Հետևաբար, վարկունակության վերլուծության նպատակներից մեկը պետք է լինի փոխառուի վարկավորման նպատակահարմարության որոշումը:

Վարկունակության վերլուծության հիմնական խնդիրներն են.

- վարկի օպտիմալ չափի, ժամկետայնության և վճարման ձևի որոշումը,
- հաճախորդի ընթացիկ ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների գնահատումը,
- վարկի մարման ժամանակահատվածում հաճախորդի ֆինանսական ցուցանիշների կանխատեսումը,
- հաճախորդի ֆինանսական կայունության վրա ազդեցության տեսանկյունից վարկավորման նպատակահարմարության վերլուծությունը,
- վարկի վերադարձման հարցում հաճախորդի պատրաստակամության գնահատումը,
- գրավային ապահովվածության, դրա իրացվելիության և բավարարության գնահատումը:
- Գործնականում, վարկունակության գնահատման միասնական ստանդարտացված համակարգ գոյություն չունի և բանկերը փոխառուի վարկունակության վերլուծության նպատակով կիրառում են տարբեր մեթոդներ: Նման իրավիճակի հիմնական պատճառներ են հանդիսանում.
- վարկունակության վրա ազդող գործոնների գնահատման որակական և քանակական մոտեցումների նկատմամբ վստահության տարբեր աստիճանը,
- վարկունակության գնահատման պատմականորեն ձևավորված պրակտիկայի և վարկային մշակույթի առանձնահատկությունները,
- վարկային ռիսկերի կրճատման ուղղությամբ կիրառվող գործիքների տարածվածության տարբերությունները,
- վարկունակության մակարդակի վրա ազդող գործոնների բազմազանությունը, ինչի հետևանքով վարկային վարկանիշի կազմման ժամանակ բանկերը տարբեր վերաբերմունք են ցուցաբերում դրանց նկատմամբ,
- վարկունակության գնահատման միասնական արդյունքի բացակա-

յությունը. որոշ բանկեր բավարարվում են ֆինանսական գործակիցների հաշվարկմամբ, իսկ մյուսները կազմում են վարկային վարկանիշներ և հաշվարկում են վարկային ռիսկի աստիճանը:

Վարկունակության վերլուծությունն իր մեջ պետք է ընդգրկի վարկային հարաբերությունների բոլոր փուլերը և ենթադրի հաճախորդի գործունությունն արտացոլող քանակական և որակական ցուցանիշների մանրակրկիտ ուսումնասիրություն՝ վարկունակության, վարկի ապահովվածության, վարկային ռիսկի աստիճանի և վարկավորման լավագույն սխեմայի ընտրության վրա դրանց ազդեցության տեսանկյունից:

Հաճախորդի վարկունակության վերլուծության նպատակը տրամադրվող ռեսուրսների վերադարձման հնարավորությունների գնահատումն է, ինչը ենթադրում է հետևյալ խնդիրների լուծում.

- վարկատուի կողմից տրամադրվող ֆինանսական ռեսուրսների օպտիմալ մեծության և դրանց մարման եղանակների հիմնավորում,
- վարկառուի կողմից վարկային ռեսուրսների օգտագործման արդյունավետության որոշում,
- վարկառուի ընթացիկ ֆինանսական վիճակի գնահատում և վարկի տրամադրումից հետո դրա հնարավոր փոփոխությունների կանխատեսում,
- վարկատուի կողմից վարկառուի նկատմամբ մշտադիտարկման իրականացում՝ վերջինիս ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ պահանջների պահպանման կտրվածքով,
- վարկառուի վարկունակության բավարար մակարդակի ապահովման ուղղությամբ կազմակերպությունում կայացվող որոշումների արդյունավետության և նպատակահարմարության վերլուծություն,
- վարկային ռիսկերի բացահայտում և վարկավորման վերաբերյալ որոշման կայացման վրա դրանց ազդեցության գնահատում,
- ֆինանական տեղեկատվության բավարարության և դրա արժանահավատության վերլուծություն:

Հարկ է նշել, որ եթե կորպորատիվ հաճախորդների վարկունակության գնահատումը ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացվում է ֆինանսատնտեսական ցուցանիշները, ինչպես նաև հաճախորդի բիզնես մոդելի առաձնահատկությունները և փոխառու միջոցների օգտագործման ուղղությունները հաշվի առնելով, ապա ֆիզիկական անձանց վարկունակության գնահատումը հիմնականում ստանդարտացված է և հիմնված է վիճակագրական մոտեցումների կիրառման վրա: Մանրածախ վարկավորման յուրահատկությունը կայանում է նրանում, որ տրամադրվող դրամական միջոցները համեմատաբար փոքր են, իսկ փոխառուների և արտաքին ցնցումների հանդեպ նրանց հակազդեցությունների միջև տարբերությունն այնքան մեծ չէ, ինչպես կորպորատիվ հատվածում: Այդ իսկ պատճառով, ֆիզիկական անձանց վարկունակության գնահատման առավել

տարածված միջոցներից է վարկային սքորինգը, որն իրենից ներկայացնում է հաճախորդին բալերի տրամադրման համակարգ՝ ելնելով պարտքը մարելու նրա ունակությունից և պոտենցիալից: Բալերը հաշվարկվում են նախորդ ժամանակաշրջանների վերաբերյալ առկա վարկային տեղեկատվության հիման վրա՝ պարզ վիճակագրական մոդելի կիրառմամբ: Որպես կանոն, պոտենցիալ հաճախորդի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրները երեքն են՝ հաճախորդի կողմից լրացված վարկային հայտը, գործատուի կողմից տրամադրված եկամուտների մասին տեղեկանքը (որոշ դեպքերում) և վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվությունը: Հաճախորդի մասին առկա բոլոր տվյալները մուտքագրվում են սքորինգային համակարգ, որում յուրաքանչյուր պարամետրի, կախված իր կշռից, հատկացվում է որոշակի բալ: Վերջիններիս բարձր մակարդակը վկայում է հաճախորդի հուսալիության և վարկունակության մասին: Սքորը, ըստ էության, վարկառուի վարկային ռիսկի քանակական գնահատականն է, պարունակում է վարկառուի մասին տեղեկատվություն և որոշակի ցուցանիշներ, որոնց հիման վրա կատարվում է վերլուծությունը: Վարկային բյուրոյից ստացված տեղեկատվության հիման վրա կազմվում է սքոր զեկույց: Վարկային սքորինգը վարկային ռիսկի վիճակագրական և գործառնական մոդելավորման տարբերակ է, որը ենթադրում է վարկառուի վարկային ռիսկի թվային գնահատականի ներկայացում: Այն սովորաբար իրականացվում է վարկային բյուրոյի կողմից, գնահատվում է տվյալ անձի կողմից վարկի վերադարձելիության ռիսկն առաջիկա որոշակի ժամանակահատվածում և հիմք է հանդիսանում ինչպես վարկավորման առաջնային որոշում կայացնելու, այնպես էլ ռիսկի վրա հիմնված գնագոյացում կատարելու և վարկի պայմանները սահմանելու համար:

Վարկային տեղեկատվության հավաքագրմամբ և մշակմամբ հիմնականում զբաղվում են վարկային բյուրոնները, որոնք ժամանակակից ֆինանսական համակարգի ամենակարևոր ինստիտուտներից են դարձել: Ներկայումս, Հայաստանում գործում է «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ն, որն առաջին մասնավոր վարկային բյուրոն է: ԱՔՌԱ-ի հիմնական խնդիրներից է գնահատել բանկային, ֆինանսական և ապահովագրական ոլորտներում, ինչպես նաև ընդհանուր գործարար դաշտում առկա ռիսկը: Ընդհանուր առմամբ, վարկային բյուրոյի գործունեությունը նվազեցնում է վարկառուի ռիսկի գնահատման ժամանակն ու ծախսերը և նպաստում է վարկային ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխմանը և դրանց աճին: Վարկային բյուրոյի հետ համագործակցող կազմակերպությունները հնարավորություն են ստանում կարճ ժամանակում ստանալ պոտենցիալ հաճախորդների վարկային պատմությունն արտացոլող զեկույց:

«ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲ և «Ֆեյր Այզաք Սերվիսիզ Լիմիթիդ» (NYSE: FICO) ընկերությունների կողմից համատեղ մշակվել է ՖԱՅԿՈ Սքոր (FICO Score) համակարգը, որը վիճակագրական ուսումնասիրության և վերլուծության ենթարկելով հաճախորդի վարկային պատմությունը՝ տալիս է վարկառուի վարկային ռիսկի (վարկարժանության) թվային գնահատականը՝

որպես սպառողական կրեդիտավորման ռիսկի մակարդակի չափորոշման առանցքային գործիք: ՖԱՅԿՈ Սքորը հնարավորություն է տալիս վարկատու կազմակերպություններին ավտոմատացնել և հնարավորինս դյուրինացնել վարկավորման գործընթացի բոլոր փուլերը՝ սկսած հաճախորդի առաջնային գնահատման արդյունքում վարկավորման որոշման կայացման պահից, մինչև ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը: Միաժամանակ, ՖԱՅԿՈ Սքորը թույլ է տալիս խնայել ծավալուն վարկային զեկույցի վերլուծության և մեկնաբանման վրա ծախսվող լրացուցիչ ժամանակը: Դրանում, բացի վարկառուի սքոր գնահատականից, երևում են նաև համակարգում առկա նվազագույն, առավելագույն, միջին գնահատականներն ու վարկառուի սքորինգային համակարգի գնահատականի ձևավորման վրա ամենամեծ ազդեցությունն ունեցող 4 գործոնները: Միջին սքոր գնահատականն իրենից ներկայացնում է համակարգում առկա անձանց ՖԱՅԿՈ սքոր գնահատականների կշռված միջինը: Վարկառուի սքոր գնահատականը տատանվում է 300 - 850 միջակայքում: ՖԱՅԿՈ սքորի հաշվարկման մոդելի համաձայն բնութագրիչները խմբավորվում են հետևյալ կերպ՝ վճարումների (մարումների) պատմություն – 35%, վարկային բեռի մեծություն – 30%, վարկային պատմության երկարություն – 15%, օգտագործված փոխառությունների տեսակներ – 10%, նոր վարկային դիմում- 10% [1]:

Հաճախորդների վարկունակության գնահատման տեսանկյունից էական կարգավորումներ է պարունակում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «Երեք հարյուր հազար դրամը չգերազանցող սպառողական կրեդիտների տրամադրման ընթացքում սպառողների վարկունակության գնահատման կանոնների վերաբերյալ» կարգը, որի նպատակը պատասխանատու վարկավորման իրականացմանը նպաստելն է: Այն տարածվում է ֆինանսական կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձ սպառողներին տրամադրվող այն սպառողական վարկերի վրա, որոնց գումարը չի գերազանցում 300.000 ՀՀ դրամը [2]: Տվյալ կարգով սահմանվում են վարկունակկության գնահատման հետևյալ կանոնները և սահմանափակումները.

1. Ֆինանսական կազմակերպությունը հաշվարկում է 12 ամսյա ժամանակահատվածի կտրվածքով մինչև 300.000 ՀՀ դրամ վարկերի պորտֆելում չաշխատող վարկերի և այդ պորտֆելի ընդհանուր վարկերի հարաբերակցության միջին ցուցանիշը և եթե այն գերազանցում է 20%-ը, ապա ֆինանսական կազմակերպությունը հաջորդող 12 ամիսների ընթացքում վարկը տրամադրում է սպառողի համար հաշվարկվող վարկունակության գնահատման (scoring) համակարգի գնահատականի կամ սպառողի պարտավորության և եկամտի սահմանային հարաբերակցության ցուցանիշի սահմանաչափը բավարարվելու դեպքում: Հակառակ դեպքում ֆինանսական կազմակերպությունը սպառողական կրեդիտավորումն իրականացնում է իր ներքին ընթացակարգի համաձայն՝ ելնելով սպառողների վարկունակության գնահատման համար ներքին իրավական ակտերի ֆինանսական

կազմակերպության մշակած պահանջները:

2. Այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպությունը կրեդիտավորումն իրականացնում է գնահատումների (scoring) համակարգով ձևավորված գնահատականների հիման վրա, ապա վարկը տրամադրվում է, եթե սպառողի գնահատականը (score) գերազանցում է հետևյալ ցուցանիշը.

Գ = $\frac{1}{2}$ (Հնարավոր նվազագույն գնահատական + Հնարավոր առավելագույն գնահատական):

Սպառողի պարտավորության և եկամտի սահմանային հարաբերակցության (ՊԵՀ) ցուցանիշի հիման վրա վարկավորման դեպքում վարկը տրամադրվում է, եթե նշված ցուցանիշը չի գերազանցում 50%-ը: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով:

$$\text{ՊԵՀ} = \frac{\text{սպառողի պարտավորությունների ամսեկան գումար}}{\text{սպառողի ամսեկան եկամուտ}}$$

Ընդ որում, սպառողի պարտավորությունների ամսական գումարը բոլոր, ներառյալ՝ նոր վարկային պայմանագրով տրամադրվելիք, վարկային պարտավորությունների գծով իրականացման ենթակա ամսական վճարների հանրագումարն է, իսկ սպառողի ամսական եկամուտը՝ տնօրինվող (հանած հարկերը և պարտադիր այլ վճարները) եկամուտը: Այսինքն, ընդհանրացնելով նշված սահմանափակումների հիմնական պատկերը, կարող ենք արձանագրել, որ համաձայն նշված կանոնների մինչև 300.000 դրամ սպառողական վարկերի տրամադրման պայման են հանդիսանում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը (որը չպետք է գերազանցի 20 տոկոսը) և հաճախորդի պարտավորության և եկամտի սահմանային հարաբերակցությունը (որը չպետք է գերազանցի 50 տոկոսը):

Վերլուծելով ՀՀ վարկային համակարգում ռիսկերի կառավարման գործընթացը, պետք է նշել, որ ռիսկերի կառավարումն իրականացվում է միջազգայնորեն սահմանված ստանդարտներին համապատասխան: Դրանով հանդերձ, հաճախորդների վարկունակության գնահատման առումով առկա են որոշակի խնդիրներ, որոնք բացասաբար են անդրադառնում վարկավորման գործընթացի վրա: Դրանք լուծման նպատակով անհրաժեշտ ենք համարում հետևյալ քայլերի իրականացումը.

1. Սպառողական վարկերի տրամադրման առումով որոշակի խնդիրներ կան կանխիկ և ապառիկ ձեռք բերման դեպքում տվյալ ապրանքի գնային տարբերումության հետ կապված, ինչն, ըստ էության, հաճախորդի ֆինանսական վիճակը վատթարացնող և լրացուցիչ ֆինանսական բեռ ենթադրող երևույթ է: Կարծում ենք, այն պետք է օրենսդրական մակարդակով արգելվի (բացառությամբ խիստ հիմնավորված դեպքերի): Ի դեպ, նման կարգավորում արդեն իսկ գոյություն ունի «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքում, համաձայն որի արգելվում է անկանխիկ վճարման դեպքում

ապրանքի, ծառայության դիմաց ավելի բարձր գին սահմանելը կամ ավելի մեծ գումար ստանալը [3]:

2. Մինչև 300.000 դրամ սպառողական վարկերի տրամադրման համար ֆինանսական կազմակերպության չաշխատող վարկերի տեսակարար կշիռը (որը չպետք է գերազանցի 20 տոկոսը) որպես պայման դիտարկելը, կարծում ենք, ավելի շատ ուղղված է ֆինանսական կազմակերպության գործունեության կայունության ապահովմանն ու լրացուցիչ վարկերի ներգրավման սահմանափակմանը, քան հաճախորդների վարկունակության գնահատմանը: Հետևաբար, հաճախորդի վարկունակության գնահատման ժամանակ այդ ցուցանիշը ուղղակի պատկերացում չի տալիս վարկի վերադարձման հնարավորության և հավանականության մասին:

3. Հաճախորդի պարտավորության և եկամտի սահմանային հարաբերակցությունը (որը չպետք է գերազանցի 50 տոկոսը) կարծում ենք, բավականաչափ բարձր է և լուրջ ռիսկեր է պարունակում վարկի չվերադարձման հավանակության և հաճախորդի պարտքային բեռի ավելացման տեսանկյունից: Ընդ որում, այս դեպքում հաշվի են առնվում հայտատուի, այլ ոչ թե նրա ընտանքի եկամուտները:

4. Վարկի սահմանաչափը՝ 300.000 դրամ, կարծում ենք, բավականաչափ փոքր է և անհրաժեշտ է բարձրացնել, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, սպառողական կրեդիտ են համարվում մինչև 5 մլն դրամի չափով վարկերը:

Հղումներ.

1. https: //acra.am
2. https: //www.arlis.am/DocumentView.aspx?docID=149459
3. «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենք
4. «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք

ВАРДАН БОСТАНДЖЯН. МЕТОДЫ ОЦЕНКИ КРЕДИТОСПОСОБНОСТИ И СПОСОБЫ ОБЕСПЕЧЕНИЯ ИХ ДОСТОВЕРНОСТИ. *В статье обсуждены вопросы оценки кредитоспособности организаций. Изучены основные методы оценки кредитоспособности, их преимущества и недостатки. Представлен процесс принятия решений о кредитовании и его основные этапы. Представлены факторы, влияющие на кредистоспособность, и основные подходы по управлению кредитных рисков.*

VARDAN BOSTANJYAN. METHODS OF CREDITWORTHINESS ASSESSMENT AND WAYS TO ENSURE THEIR RELIABILITY. *The article discusses issues of evaluation of creditworthiness of organizations. The basic methods of evaluation of creditworthiness, their advantages and disadvantages are examined. The process of making lending decisions and it's main stages are presented. Factors affecting on creditworthiness and the main approaches to manage credit risks are presented in the article.*

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Գայանե Գևորգյան, Արմինե Վարդանյան

ԵՀՀ Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ինստիտուտ

Մուտքագրված է 24.05.22, հաստատված է տպագրության 23.06.22

Ամփոփագիր. *Երկրի պարենային ապահովության գնահատման հիմնական գործիքը Պարենային հաշվեկշիռն է: Այն որոշակի ժամանակահատվածի կտրվածքով հիմնական պարենային արտադրանքների ռեսուրսների և դրանց օգտագործման ուղղությունների հաշվեկշիռն է:*

Հիմնաբառեր. *Պարենային հաշվեկշիռ, պարենային անվտանգություն, պարենային ճգնաժամ, պարենային անկախություն, պարենային անվտանգության գլոբալ ինդեքս, պարենային ինքնաբավության մակարդակ*

Երկրի ազգային անվտագնության կարևորագույն բաղադրիչներից մեկը պարենային անվտանգությունն է: Այն համարվում է ապահովված, եթե առկա է տնտեսության զարգացման այնպիսի մակարդակ, որը երաշխավորում է բնակչության ֆիզիոլոգիական նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում սննդամթերքի մատակարարման անհնարինության դեպքում՝ պարենային ճգնաժամերի առաջացման բացառումը: Պարենային անվտանգության մասին առավել ամբողջական պատկերացում է տրված «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում [1]: Երկրի պարենային ապահովության գնահատման հիմնական գործիքը Պարենային հաշվեկշիռն է: ՀՀ ԱՎԾ-ն առաջին անգամ 2002թ-ին հրապարակեց «Պարենային ապահովության և աղքատության 2001թ տարեկան հաշվետվությունը», որով սկիզբ դրվեց պարենային հաշվեկշիռների կիսամյակային և եռամսյակային հրապարակմանը: Անցած տարիների ընթացքում պարենային հաշվեկշիռների կազմման մեթոդաբանությունը անընդհատ կատարելագործվել է, պարենային վիճակագրությունը դարձել է ավելի լիարժեք, և հիմնականում բավարարում է միջազգային կառույցների մշակած չափորոշիչներին: Պարենային հաշվեկշիռները կիրառվում են որոշակի ժամանակահատվածում երկրի պարենային ապահովության ամբողջական նկարագրության, պարենի անբավարար մատակարարման հետ կապված ռիսկերի գնահատման, պարենային ապահովության բնագավառում քաղաքական որոշումների կայացման և այլ նպատակներով: ՀՀ Առողջապահության նախարարությունը և Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը համատեղ մշակել են գիտականորեն հիմնավորված նվազագույն պարենային զամբյուղ ՀՀ –ի համար: Վերջինիս մշակման համար հիմք են հանդիսացել նուտրիցիոլոգիայում (սննդաբանություն) ընդունված հաշվեկշռված սնուցման հիմնական սկզբունքները, մասնավորապես սննդային

հիմնական բաղադրիչների՝ սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի 1: 1: 4 հարաբերակցության պահպանումը: Օրաբաժնի էներգետիկ արժեքը 2412.1 կկալ է, պարենային զամբյուղի արժեքը որոշվում է առաջարկված սննդատեսակների քանակության և դրանց շուկայական արժեքի արտադրյալով: Ներկայումս ՀՀ Պարենային զամբյուղի արժեքը տարեկան կտրվածքով 431 796.6 դրամ է, ամսական կտրվածքով՝ 35 983.0 դրամ: Նվազագույն պարենային զամբյուղի արժեքի վրա 1, 8 գործակից կիրառելով՝ հաշվարկվում է նաև նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, որն էլ հիմք է հանդիսանում նվազագույն աշխատավարձի սահմանման համար: Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը ընդունվում է ամսեկան 66 568.6 դրամ, տարեկան կտրվածքով՝ 798 823 դրամ:

Պարենային զամբյուղի արժեքը որոշվում է նաև համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ տնային տնտեսությունների որոշակի ընտրանքում իրականացվող հետազոտությունների արդյունքների հիման վրա(կատարվել է 5184 տնային տնտեսությունների. հարցում), ըստ որի Էներգետիկ արժեքը (օրական) 2 232.0 կկալ է, պարենային զամբյուղի արժեքը (ամսական) 30 927.0 դրամ, իսկ սպառողական զամբյուղի արժեքը (ամսական) 51 379.5 դրամ [2]:

Պարենամթերքի հիմնական տեսակների բավարար քանակության առկայությունը ֆիզիկական մատչելիության հիմնական գրավականն է: Եթե դրա հետ միասին նաև մեծանում է պարենամթերքի ինքնաբավության մակարդակը, ուրեմն կարելի է պնդել, որ երկիրը ձգտում է պարենային անկախության: Պարենային անկախությունը հիմնական պարենամթերքի՝ ֆիզիոլոգիական նորմերին համապատասխանող պահանջարկի առնվազն 80%-ով սեփական արտադրության հաշվին բավարարումն է: Միջազգային պրակտիկայում երկրների պարենային անվտանգության դիրքը գնահատվում է պարենային անվտանգության գլոբալ ինդեքսով, որը բաղկացած է 3 բաղադրիչից՝ պարենամթերքի մատչելիություն, հասանելիություն, որակ և անվտանգություն, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ձևավորվում է մի քանի գործոններով: 2019 թվականին առաջին անգամ Հայաստանում կատարվել է պարենային անվտանգության գլոբալ ինդեքսի հաշվարկ, որի արդյունքներով Հայաստանի պարենային անվտանգության գլոբալ ինդեքսը կազմել է 57.1, այդ թվում՝ պարենամթերքի մատչելիության մասով՝ 51.7, հասանելիության մասով՝ 66.2, որակի և անվտանգության մասով՝ 45.4: Եթե նախկինում երկրի պարենային ապահովման խնդիրը առավել քննարկվում էր գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության շրջանակում, ապա ներկայումս պարենային անվտանգության հիմնախնդրի լուծումը պայմանավորված է ամբողջությամբ վերցրած երկրի սոցիալ-տնտեսական զարգացումով: Այս առումով Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր, տնտեագիտության գծով Նոբելյան մրցանակի դափնեկիր Սեն Ամարաթիան իրավացիորեն նշում է. «Սովը, թերսնումը և սովամահությունը ոչ միայն պարենամթերքների արտադրության և գյուղատնտեսության, այլև ամբողջ տնտեսության գործունեության հետևանքն են»:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տվյալներով պարենային անբավարարությունը որոշ երկրների համար դարձել է ոչ միայն զարգացումը արգելակող այլ նաև սոցիալական և քաղաքական անկայունություն ծնող լուրջ սպառնալիք: Աշխարհի բնակչության 1/7 մասը սովի է մատնված: Այս հիմնախնդիրը դարձել է աշխարհի երկրների համար տնտեսական քաղաքականության կարևոր գերակայություններից մեկը: Ագրարային ոլորտում վարվող քաղաքականությունը բոլոր երկրներում էլ հիմնվում է պարենային անվտանգության ապահովման վրա, ինչը երաշխիք է մարդու առաջնային պահանջմունքի առավել ամբողջական բավարարման համար: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տվյալներով, եթե 1965 թ. բնակչության մեկ շնչին ընկնում էր 0, 388 հա վարելահող և բազմամյա տնկարկ, ապա 2015 թ.՝ ընդամենը 0, 194 հա, և այս ցուցանիշն ուրբանիզացիայի և բնակչության աննախադեպ աճի հետևանքով տարեցտարի նվազում է: Ներկայում երկրագնդի վրա օգտագործվում է 1480 մլն հա մշակովի հողատարածք: Ըստ ԱՄՆ-ում ընդունված չափանիշի մեկ մարդու պարենապահովման համար միջին հաշվով անհրաժեշտ է 0.84 հա, եվրոպական չափանիշներով՝ 0.24 հա, իսկ հոլանդական ագրոտեխնոլոգիաների կիրառմամբ՝ 0, 06 հա (տարբերությունները բացատրվում են երկրների հողօգտագործման տարբեր արտադրողականությամբ) [3]:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տվյալներով, ներկայում աշխարհում արտադրվում է պահանջարկից ավելի պարենամթերք, բայց դրա անհավասարաչափ բաշխվածության և բնակչության վճարունակության տարբեր մակարդակների պատճառով երկրագնդի տարբեր մասերում բնակչությանշուրջ 9%-ը սովի է մատնված: Նման իրավիճակում ուղղակի անհանդուրժելի է պարենի հսկայական քանակությամբ ոչնչացումը կամ աղբանոցում հայտնվելը: Հաշվարկները ցույց են տալիս, որ աշխարհում 1, 3 մլրդ տոննա ՊԿՍԹ (Պարենային կորուստներ և սննդային թափոններ) 44%-ը բաժին է ընկնում մրգին և բանջարեղենին, 20%-ը՝ արմատապտուղներին, 19%-ը՝ ցորենին, 8%-ը՝ կաթնամթերքին, 4%-ը՝ մսին, 3%-ը՝ յուղատու և ընդեղեն մշակաբույսերին, իսկ 2%-ը՝ ձկնեղենին: Այդ քանակության 1/3-ը բավարար է լուծելու երկրագնդի բնակչության խոցելի խմբերի սովի հիմնախնդիրը: Չարիքը այն է, որ սահմանափակ բնական ռեսուրսներով և գյուղացու աշխատանքով ստեղծված բարիքի մի զգալի մաս կորչում է:

FAO-ի ագրոարդյունաբերության հարցերով պատասխանատու Ռոբերտ վան Օտերդեյքը ՀՀ-ի համար կատարել է հետևյալ դիտարկումը. «Հայաստանում հասցեագրման կարիք ունեցող ամենասուր խնդիրները պարենի կորուստների և թափոնների վերաբերյալ ճշգրիտ տվյալների պակասն է, անտեղյակությունը խնդրի բարդությունից, դրա ներգործությունից, պատճառներից ու արժեշղթաների մասնակիցների, սպառողների, ծառայություն մատուցողների և շրջակա միջավայրի վրա թողած հետևանքներից»: ՊԿՍԹ

կրճատման հիմնախնդիրն ունի գլոբալ բնույթ: Բնավ պատահական չէ, որ 2015 թ. սեպտեմբերի 25-ին ՄԱԿ-ը 193 երկրների ղեկավարների մասնակցությամբ ընդունեց մինչև 2030 թ.-ի Կայուն զարգացման 17 նպատակ (ԿԶՆ): Ըստ 2-րդ նպատակի՝ «Սովի վերացում» հիմնախնդրի լուծման կարևոր ուղիներից մեկն էլ «պարենային կորուստների դեմ պայքարում ներգրավվածությունն է: Հայաստանը, որպես մասնակից երկիր, պարտավորված է գործուն քայլեր իրականացնել այդ ուղղությամբ: Միջազգային կազմակերպությունների՝ Միավորված ազգերի զարգացման ծրագրի, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Պարենի համաշխարհային և այլ ծրագրերի նախաձեռնությամբ որոշակի միջոցառումներ արդեն իսկ իրագործվում են, սակայն արտադրողների և սպառողների շրջանում ՊԿՍԹ կրճատումը դեռևս զանգվածային և գործնական բնույթ չի կրում: Որպես կոնկրետ օրինակ՝ պետք է վկայակոչել այն, որ դեռևս եզակի երևույթ է բարեգործական ճաշարանների հովանավորումը, իսկ վերջերս աշխարհում լայն տարածում ստացած «Ֆուդշերինգի» համակարգն ընդհանրապես չի կիրառվում: «Ֆուդշերինգը» ՊԿՍԹ կրճատման և սովի հաղթահարման համեմատաբար նոր ձեռնարկում է կամ ժամանակակից արտահայտությամբ՝ նոր միտում (թրենդ): Բառացի՝ «Ֆուդշերինգ» հասկացությունն ունի երկու արմատ՝ անգլերեն food - «պարեն, սնունդ» և share - «կիսվել, միասին օգտագործել» իմաստներով: Ֆուդշերինգի շարժումը, որի կամավոր մասնակիցներին անվանում են ֆուդսերվերներ, գնալով լայն տարածում է ստանում ամբողջ աշխարհում: Հայաստանում դեռևս նման շարժում չի ծավալվում, սակայն ՊԳԿ-ն նախատեսում է իրականացնել ՊԿՍԹ կրճատման նոր ծրագրեր, որոնց շրջանակում նպատակահարմար է աջակցել նաև Ֆուդշերինգի նախաձեռնություններին:

Համաշխարհային տնտեսության միջազգայնացման արդի փուլում, եթե բացառենք տվյալ երկրի ներքին և արտաքին սպառնալիքները, տնտեսապես նպատակահարմար է որոշակի պարենամթերքի ներմուծումն այն երկրներից, որտեղ դրա արտադրությունն ավելի նպաստավոր է: Սակայն, ինչպես ցույց են տալիս COVID-19 համավարակը և պատերազմները, պարենային խնդիրը այլ լուծումներ է պահանջում: Ավելի խոցելի են դառնում այն երկրները, որոնց պարենային ինքնաբավության մակարդակը ցածր է, այսինքն՝ վերջիններս մեծ չափով կախված են արտաքին շուկայից, և բացի այդ, բնակչության ծախսերի հիմնական մասը բաժին է ընկնում սննդամթերքին: Աշխարհում պարենային ապրանքների գների վերաբերյալ ամենաթարմ տեղեկությունները հրապարակում է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO): Վերջինս ունի օպերատիվ կարգով տեղեկությունների ստացման, մշակման ու հրապարակման գործուն ցանց, որը հնարավորություն է ընձեռում բացահայտելու աշխարհում պարենային անվտանգության վիճակը և հավաստի ազդակներ ուղարկելու պատասխանատուներին, ինչպես նաև աջակցելու առավել խոցելի խմբերին: Ավելին, FAO-ն տիրապետում է նաև սահմանափակ միջոցների՝ նախատեսված, այսպես կոչված, «արտակարգ» աջակցության ծրագրերի համար, որոնցից պարբե-

րաբար օգտվում է նաև Հայաստանը: ՀՀ ՎԿ տվյալները ցույց են տալիս, որ 2021 թ. Ապրիլին նախորդ տարվա ապրիլի համեմատությամբ շաքարը թանկացել է 41, արևածաղկի յուղը՝ 73, 5, ձուկը և ձկնամթերքը՝41, ձուն՝ 55, 7, կաթը և պանիրը՝13, 4, մսամթերքը՝ 4, մրգերը՝ 10, 4 և բանջարեղենը՝8, 5%-ով: Իսկ, ընդհանուր առմամբ, պարենային ապրանքների գները այդ ժամանակահատվածում աճել են 8.3%-ով: Հայաստանի հարևան երկրներում 2021 թ. ապրիլի դրությամբ՝ ինչպես ընթացիկ, այնպես էլ նախորդ տարում գնաճի ամենաբարձր մակարդակը գրանցվել է Իրանի Իսլամական Հանրապետությունում, Թուրքիայում, Ղրղզստանում, Ուզբեկստանում և Ուկրաինայում: Բարեբախտաբար, պարենային ապրանքների գների աճի մակարդակը համեմատաբար ցածր էր Հայաստանի հիմնական գործընկեր Ռուսաստանում, իսկ ԵՄ երկրներում և ԱՄՆ-ում ցածր էր նույնիսկ սպասվող մակարդակից:

Պարենային անվտանգության ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության հիմնական խնդիրներն են.

- սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովումը,
- բնակչության սպառման համար մատակարարվող սննդամթերքի անվտանգության ապահովումը,
- պետական պարենային պահուստի ստեղծումը, պահպանումը և համալրումը:

Սննդամթերքի որակը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին և այլ պահանջներին:

Պարենային ճգնաժամի կամ դրա վտանգի դեպքում կառավարությունը սահմանում է պարենային անվտանգության ապահովման հատուկ ռեժիմներ, ընդհուպ՝ սննդամթերքի նորմավորված բաշխում:

Հանրահայտ է պարենի արտադրության հիմքը գյուղատնտեսությունն է: Հայաստանի Հանրապետության ագրարային բարեփոխումների իրականացումից անցել է մոտ երեք տասնամյակ, սակայն գյուղատնտեսության ոլորտի օրենսդրական դաշտը դեռևս անկատար է մնում: «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի բացակայությունը խոչընդոտում է համապատասխան ապրանքարտադրող սուբյեկտների կազմակերպաիրավական ձևերի հստակեցումը, ոլորտի քաղաքականության և պետական աջակցության իրավահարաբերությունների կանոնակարգումը, գյուղատնտեսական հողերի լիարժեք և արդյունավետ օգտագործման կառուցակարգերի կիրառումը:

2020թ. կեսերին ՀՀ կառավարությունը հաստատել է համավարակի պայմաններում գյուղատնտեսական արտադրությունը խթանելու երկուսուկես տասնյակ ծրագիր: Սա աննախադեպ մոտեցում է և կարող է բարձր արդյունք ապահովել [4]:

Ի դեպ, այդ ծրագրերը կոչված են ոչ միայն խթանելու առաջարկը, այլև, նոր աշխատատեղեր ստեղծելու և արտահանումը խրախուսելու շնորհիվ,

ավելացնելու պահանջարկը: Սակայն, խնդիրն այն է, որ դրանց մեծ մասը լիարժեքորեն իրականացնելու և արդյունք ապահովելու համար որոշակի ժամանակ է պահանջվում:

Ագրոպարենային համակարգի զարգացման քաղաքականության մեջ, որպես հիմնական գերակայություններ, դրված են գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործումը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրումը, գյուղատնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացումը, բնակլիմայական ռիսկերի մեղմումն ու տնտեսավարողների եկամուտների ավելացումը:

Նշված բնագծերը ապահովելու համար առաջարկվում է՝

1. Ապահովել գյուղատնտեսության ոլորտում աշխատող մարդկանց արդյունավետությունը, փորձառությունը և որակավորումը:

2. Բարելավել գյուղատնտեսության ենթակառուցվածքները /ոռոգման համակարգ, ճանապարհներ, սառնարաններ, սպանդանոցներ, պահեստներ/:

3. Կիրառել բարձր տեխնոլոգիաներ՝ գյուղատնտեսության արդյունավետությունը բարելավելու համար:

4. Ընդլայնել ֆինանսների և ռեսուրսների հասանելիությունը գյուղատնտեսական ոլորտի նոր ձեռնարկությունների ստեղծման և գործողների զարգացման համար:

Նշված միջոցառումները, կարծում ենք, կլուծեն պարենային անվտանգության խնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

Օգտագործված գրականություն

1. «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը https: //www.mineconomy.am/
2. ՀՀ Սպառողական զամբյուղի արժեքը, https: //www.mineconomy.am/
3. Ս.Ավետիսյան, Շրջանաձև տնտեսությունը՝որպես կլիմայի փոփոխության ռիսկերի կառավարման գործիք, Ամբերտ, 2021/2
4. «Covid-19- տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումներ» https: //www.mineconomy.am/

ГАЯАНЕ ГЕВОРГЯН, АРМИНЕ ВАРДАНЯН. ПРОДОВОЛЬСТВЕННАЯ БЕЗОПАСНОСТЬ И ЕЕ УПРАВЛЕНИЕ В АРМЕНИИ. *Основным инструментом оценки продовольственной безопасности страны является продовольственный баланс. Продовольственный баланс – это баланс ресурсов основных продуктов питания и направлений их использования за определенный период времени*

GAYANE GEVORGYAN, ARMINE VARDANYAN. FOOD SECURITY AND ITS MANAGEMENT IN ARMENIA. *The main tool for assessing the country's food security is the food balance. The food balance is the balance of the resources of the main food products and the directions of their use for a certain period.*

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԴԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Գայանե Գևորգյան

ԵՀՀ Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ինստիտուտ

Մուտքագրված է 24.05.22, հաստատված է տպագրության 23.06.22

Ամփոփագիր. *ՀՀ-ում ներդրումներ ներգրավելու առանցքային խնդիրը կայանում է նրանում, որ երկրում մինչ օրս չեն ձևավորվել տարբեր ներդրումային հոսքերի համար համապատասխան արդյունավետ ուղիներ և հարթակներ, իսկ եղած հարթակների արդյունավետությունը խիստ ցածր է:*

Հիմնաբառեր. *ներդրումային ֆոնդ, կուտակային ֆոնդ, ներդրումային բանկ, վենչուրային ֆոնդ, ֆոնդի կառավարիչ, ֆոնդերի ֆոնդ*

Յուրաքանչյուր երկրի տնտեսական բարեփոխումների արդյունավետությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե տվյալ երկրի ֆինանսական շուկան որքանով է ունակ նպաստելու խնայողություններ-ներդրումներ-տնտեսական աճ- խնայողություններ փոխակերպումների փակ շրջապտույտի իրագործմանը: Զարգացած երկրներում կապիտալի շուկայում սովորաբար գործում են ոչ բանկային ֆինանսական ինստիտուտներ, որոնց անվանում են փողի երկարացման ինստիտուտներ [1]: Տնտեսության մեջ ներդրումների ներգրավման կարևորագույն միջոց են ներդրումային ֆոնդերը: Դրանք ամենաշատը տարածված են ԱՄՆ-ում, Լյուքսեմբուրգում, Ֆրանսիայում: Աշխարհում ներդրումային ֆոնդերի թիվը 2020թ. 2016թ. համեմատությամբ գրանցել է 25, 3% աճ [2]: «ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգում» [3] նշվում է, որ ներդրումային ֆոնդը կոլեկտիվ ներդրումային սխեմա է, որը թույլ է տալիս մանր ներդրողներին միավորել իրենց միջոցները և իրականացնել կոլեկտիվ ներդրումներ, որոնց կառավարում է ներդրումային ֆոնդը՝ որպես մեկ, միասնական պորտֆել: Յուրաքանչյուր ներդրող ստանում է եկամուտներում իր մասի իրավունք, որը հավաստվում է ներդրումային ֆոնդի փայով կամ բաժնեմասով: Չափազանց կարևոր է ՀՀ-ում ներդրումային ֆոնդերի զարգացումը պայմանավորող գործոնների վերլուծությունը և դրանց արդյունավետ կիրառմանը ուղղված միջոցառումների աստիճանական իրականացումը: «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքը [4] սահմանում է ՀՀ տարածքում գործող ներդրումային ֆոնդերի տեսակները, ֆոնդերի, ֆոնդերի կառավարիչների և ֆոնդի պահառուների իրավական կարգավիճակը, դրանց կազմավորման, գործունեության, կառավարման ու դադարեցման ընթացակարգերը, ֆոնդերի ներդրումային քաղաքականությանը ներկայացվող պահանջները: Ներդրումների ոլորտի մեջ ներգրավված ֆինանսական կազմակերպությունների կարգավորման և վերահսկողության գործառույթն իրականացնում է ՀՀ ԿԲ-ն:

ՀՀ-ում ներդրումային ֆոնդերի մեջ դե յուրե և դե ֆակտո կայացած ինստիտուտների շարքում են կենսաթոշակային ֆոնդերը, ինչը պայմանավորված է ՀՀ-ում իրականացված կենսաթոշակային բարեփոխումներով, մասնավորապես կենսաթոշակների կուտակային պարտադիր և կամավոր բաղադրիչների ներդրումով: Կենսաթոշակային ֆոնդի ակտիվները ձևավորվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով [5] սահմանված կարգով հավաքագրված կուտակային վճարների և դրանց ներդրման հաշվին, և որի մասնակիցներին ֆոնդի ակտիվներից վճարումները կատարվելու են կենսաթոշակի ձևով մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում: Իրականում կենսաթոշակային ֆոնդերի դերակատարությունը տնտեսությունում ներդրումների առումով դեռևս շոշափելի արդյունք չի տվել և առկա քաղաքականության շարունակության դեպքում դեռ երկար ժամանակ չի զգացվի: Կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը «զուտ ակտիվներ/ՀՆԱ» հարաբերակցությունում կազմել է ընդամնը 2.2%: Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի ՀՀ տարածքում պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեն 2 ներդրումային ֆոնդի կառավարիչներ՝ «Ամունդի Ակբա Ասեթ Մենեջմենթ Արմենիա ՓԲԸ»-ն և «Ցե Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա ՍՊԸ»-ն, որոնցից յուրաքանչյուրը կառավարում է 3 պարտադիր կենսաթոշակային ֆոնդ:

Ֆոնդերի 75%-ը ներդրվել է ՀՀ-ում, 13%-Հյուսիսային Ամերիկայում, համապատասխանաբար 5% և 4% Եվրոպայում և Ասիայում: Հայաստանում կատարված ներդրումների մեծությամբ առաջատարը Ցե-Կվադրատ Ամպեգան է (8%-ով ավել մյուս կառավարչից), ինչը մեծապես պայմանավորված է կորպորատիվ պարտատոմսերում և ավանդներում վերջինիս ներդրումների մեծ տեսակարար կշռով: Ցե-Կվադրատ Ամպեգան առաջատար է նաև Ասիայում կատարված ներդրումների մեծությամբ, մինչդեռ Հյուսիսային Ամերիկայում և Եվրոպայում առավել շատ ներդրումներ է իրականացրել «Ամունդի Ակբա Ասեթ Մենեջմենթ Արմենիա ՓԲԸ»-ն: Հարկ է նշել, որ, եթե Հայաստանյան ներդրումները բացառապես պարտքային գործիքներ են՝ պետական և կորպորատիվ պարտատոմսեր, ավանդներ, ապա արտասահմանյան ներդրումները բաժնային են՝ մասնավորապես կոլեկտիվ ներդրումային ֆոնդերի փայեր, ընդ որում գերազանցապես թողարկված մայր ֆոնդի կառավարիչ ընկերությունների կողմից: Հայաստանյան և արտասահմանյան ներդրումների տեսակարար կշիռն էլ համապատասխանում է ներդրումների արժութային կառուցվածքներին, մասնավորապես ակտիվների շուրջ 70%-ը ներդրված է ՀՀ դրամով, 22%-ը՝ ԱՄՆ դոլարով, 8%-ը Եվրոյով:

ՀՀ-ում տարիներ առաջ հիմք դրվեց ներդրումային բանկի ձևավորմանը, ի դեմս՝ «Համահայկական Բանկ» -ի, որը ստեղծվեց 2008 թ. իր իսկ մասին հատուկ ընդունված օրենքով: Մինչդեռ, 2017 թ. օգոստոսին Համահայկական

Բանկը տրանսֆորմացվեց ներդրումային ֆոնդի: Առավել հետքարքիրը դրանում ՀՀ կենտրոնական բանկի մեկնաբանությունն էր, որը հնչեց այսպես. «Համահայկական բանկի առջև դրված խնդիրների արդյունավետությունն ու ճկունությունն ապահովելու նպատակով Կենտրոնական բանկը ձեռնարկել է տրանֆորմացիայի գործընթաց, որի արդյունքում Համահայկական Բանկը տրանսֆորմացվում է բանկից ներդրումային ֆոնդի»: Հետաքրքիր է նաև այն, որ համապետական նշանակության նման ֆինանսական կառույցի պետական մակարդակով հռչակված և չիրականացված գաղափարի և շուրջ 8 տարի անարդյունավետ գործունեության համար ոչ մի պետական մարմին պատասխանատվություն չի ստանձնել: Հարկ է շեշտել, որ ներդրումային բանկի մոդելի ձևավորումը ՀՀ-ում ուղղակի ձախողվել է: Ներդրումային բանկերի ձևավորումը անհրաժեշտություն է, դրանց գործունեության արդյունքում որակական նոր մակարդակի կբարձրացվի ընդհանուր ներդրումային միջավայրի զարգացումը, զգալիորեն կաճեն ֆինանսական ներդրումներ ներգրավելու իրական հնարավորությունները, էապես կաշխուժանա նաև դրանից ածանցվող արժեթղթերի շուկան:

ՀՀ-ում առանձնակի կարևորվում է տրանսֆերների համար ներդրումային ֆինանսական հոսքերի համարժեք հարթակների ձևավորումը (պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով): ՀՀ-ում հատկապես կարևորվում է վենչուրային ներդրումային ֆոնդերի կայացումը, որոնք ըստ էության, նույն ներդրումային ֆոնդերի տարատեսակներն են, որոնց ակտիվների առնվազն 50 տոկոսը (ըստ միջազգային պրակտիկայի) ներդրվում է նոր ստեղծված կամ զարգացման վաղ փուլում գտնվող կազմակերպությունների թողարկած կարգավորվող շուկաներում առևտրին չթույլատրված արժեթղթերում՝ այդ կազմակերպությունների աճի, զարգացման կամ դրանց թողարկած արժեթղթերը կարգավորվող շուկայում թույլատրելու նպատակով:

ՀՀ–ում վենչուրային ֆոնդերի արդյունավետ կայացման ուղիներից պետք է հանդիսանա պետության մասնակցությունը այսպես կոչված ֆոնդերի ֆոնդում: Նման ֆոնդի ակտիվների առնվազն 50 տոկոսը պետք է ներդրվի այլ ֆոնդերի փայերում: Միջազգային պրակտիկայում դրա առավել հաջողված օրինակներից է իսրայելական «Յոզման» (Yozma):

Աշխարհում տարբեր պատճառներով ընթացող միգրացիոն շարժերը և հատկապես Հայաստան հարևան երկրներից ներգաղթը, ՀՀ իշխանություններից պահանջում են բացել ՀՀ-ում իրականացվող ներդրումային խողովակներն ու հարթակները: Հարկ ենք համարում նշել այն հանգամանքը, որ ներդրումային ինստիտուտների կողմից «Կապիտալում բաժնեմասի հետվերադարձի» և «Կամուրջ ֆինանսավորման» («Bridge Investment) կառուցակարգերը նոր հորիզոններ կբացեն և կնպաստեն ներդրողների ակտիվացման համար: Դրանց շարքում են որոշակի ֆինանսական խնայողական միջոցներ կուտակած ՀՀ քաղաքացիները, սփյուռքի մեր հայրենակիցները,

օտարերկրացիները, որոնք պատրաստ են ՀՀ-ում որոշակի ներդրումներ կատարել, սակայն չունեն նման ներդրումների իրականացման գործուն կառուցակարգեր, գործիքներ և երաշխիքներ: ՀՀ-ում ներդրումային ֆոնդերի հարկումը խտրականություն չի պարունակում ներդրումային ֆոնդի միջոցով ուղղակի և անուղղակի ներդրումների հարկման ռեժիմների միջև: Այս մոտեցումը համապատասխանում է ԵՄ հանձնաժողովի ստանդարտին UCITS III EC (Undertakings for Collective Investment in Transferable Securities), ինչը խտրական չէ, գրավիչ է և արդյունավետ:

ՀՀ տնտեսության զարգացման գործում ներդրումային ֆոնդերի դերը շատ է կարևորվում: Ներդրումային ֆոնդերի ստեղծումն ու զարգացումը դիտարկվում է արժեթղթերի շուկայի զարգացման ուղի, որն էլ իր հերթին կխթանի ֆինանսական շուկայի և դրա առանձին հատվածների կայացմանն ու զարգացմանը:

Օգտագործված գրականություն

1. http: //en.wikipedia.org/wiki/Global_assets_under_management
2. http: //www.icfactbook.org/fb
3. «ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգ»
4. «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենք
5. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք

ГАЯНЕ ГЕВОРГЯН. РОЛЬ ИНВЕСТИЦИОННЫХ ФОНДОВ В РАЗВИТИИ ЭКОНОМИКИ АРМЕНИИ *Ключевой вопрос привлечения инвестиций в Армению заключается в том, что в стране еще не разработаны эффективные пути и платформы для различных инвестиционных потоков, а эффективность существующих площадок очень низкая.*

GAYANE GEVORGYAN. THE ROLE OF INVESTMENT FUNDS IN THE DEVELOPMENT OF THE ECONOMY OF ARMENIA. *The key issue of attracting investments in Armenia is that the country has not yet developed effective ways and platforms for different investment flows, and the efficiency of existing platforms is very low.*

ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Սերգեյ Ասատուրյան

ԵՀՀ Տնտեսագիտության, ինֆորմատիկայի ինստիտուտ

Մուտքագրված է 10.05.22, հաստատված է տպագրության 23.06.22

Ամփոփագիր. *Ագրոտուրիզմը ժողովուրդների կյանքում կարևոր դեր կատարող գործունեություն է, այն հզոր տնտեսական գործիք է, մարդկանց ժամանցի և սպասարկման բիզնես, որը միևնույն ժամանակ նպաստում է երկրի միջազգային ճանաչմանը՝ հիմնվելով նրա պատմամշակութային հարստության և տեղական բնութագրերի վրա:*

Հիմնաբառեր. *տուրիստական տուն, հանրակացարան, բունգալո, ճամբար, մոթել:*

Ագրոտուրիզմը գործունեության տեսակ է, որը կարևոր նշանակություն ունի ժողովուրդների կյանքում, հզոր տնտեսական միջոց է, գործարարություն մարդկանց զվարճացնելու և սպասարկելու համար, որը միաժամանակ նպաստում է երկրի միջազգային ճանաչմանը՝ պատմամշակութային և տեղանքին բնորոշ առանձնահատկությունների հիման վրա [1]:

Ագրոտուրիզմի զբոսաշրջության տեսակը, գյուղական միջավայրում հանգստի կազմակերպման, գործարար և այլ նպատակներով իրականացնող քաղաքացիների գործունեություն է [2]:

Ներկայումս մեծ ուշադրության են արժանանում նաև բնական միջավայրի ճիշտ կառավարման և օգտագործման խնդիրները, որոնց լուծումները գյուղական համայնքներում առաջացնում են ժամանակի հրամայական հանդիսացող տնտեսական դիվերսիֆիկացիաներ: Նմանատիպ գործընթացների հիման վրա էլ ագրոտուրիզմը տարբեր միջոցներով ազդեցություն է ունենում գյուղական միջավայրի զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա:

Ագրոտուրիզմը երբեմն համարում են էկոզբոսաշրջության բաղկացուցիչ մաս: Էկոտուրիզմը զբոսաշրջության տեսակ է, որը նպաստում է բնական և մշակութային ժառանգության ճանաչմանն ու հասկանալուն, և բերում է տեղի բնակչությանն անհրաժեշտ չափով շահույթ, որպեսզի մարդիկ որպես եկամտի աղբյուր գնահատեն և պահպանեն շրջակա միջավայրը [3]: Էկոտուրիզմի հիմնական նպատակներն են բնական և մշակութային ժառանգության պահպանությունը, բնապահպանական իրազեկությունը և կրթությունը, տեղի բնաչության բարեկեցության բարձրացումը:

Ագրոտուրիզմը ճանապարհորդություն է դեպի այն վայրեր, որտեղ քիչ թե շատ պահպանված է կուսական բնությունը: Այս հանգստի տեսակը չի խախտում էկոհամակարգերի ամբողջականությունը և նպատակ է հետապնդում երևան հանել տվյալ վայրի բնական և էթնոմշակութային առանձնահատկությունները: Միաժամանակ, էկոզբոսաշրջությունը տվյալ վայրի բնակիչների համար բնության պահպանությանն ուղղված միջոցները հավելելու ձև է:

Այլ կերպ՝ էկոզբոսաշրջությունը զբոսաշրջության մի տեսակ է՝ ուղղված դեպի բնությանն ու դրա վերականգնմանը: Շատ հաճախ էկոզբոսաշրջությունը զուգորդվում է ակտիվ հանգստի կազմակերպմամբ, հատկապես կարող է ընդգրկել մշակութային, ինչպես նաև արկածային զբոսաշրջության բաղադրիչներ, որոնք էլ ավելի գրավիչ են դարձնում այս ուղղությունը:

Սակայն էկոզբոսաշրջությունը, գյուղական զբոսաշրջությունը և ագրոտուրիզմը ավելին են, քան ճանապարհորդությունը, հանգիստը: Դրանց միաժամանակյա գործունեությունը նպաստում է գյուղական համայնքների համաչափ զարգացմանը:

Զբոսաշրջային շուկայում ըստ ճանապարհորդողների տարիքային սանդղակի, տարանջատում են զբոսաշրջիկների հետևյալ խմբերը՝

- ծնողների հետ ճանապարհորդող երեխաներ,
- երիտասարդներ (15-24 տարեկան),
- տնտեսապես ակտիվ և երիտասարդ մարդիկ (25-44 տարեկան),
- միջին տարիքի տնտեսապես ակտիվ մարդիկ (45-64 տարեկան),
- թոշակառուներ (65 տարեկան և բարձր):

Ըստ տրանսպորտային միջոցի՝ զբոսաշրջության մեջ առավել տարբերակվում են իրենց կամ վարձակալված մեքենայով, և հանրային տրանսպորտով ճանապարհորդող, հեծանվային սպորտի սիրահար զբոսաշրջիկներ:

Ըստ զբոսաշրջիկների ծագման չափորոշչի՝ տարբերակում են ներքին, արտագնա և ներգնա զբոսաշրջություն [4]:

Ագրոտուրիզմի պահանջարկն արտահայտվում է քաղաքամերձ շրջաններում զբոսաշրջային ծառայությունների քանակության տեսքով: Իսկ գյուղական զբոսաշրջության արտադրանքը տեղանքին բնորոշ այն զբոսաշրջային ծառայությունների ամբողջությունն է, որը տվյալ գնի դեպքում պատրաստ են վաճառել զբոսաշրջային արտադրանք թողարկողները:

Ագրոտուրիզմի կազմակերպման մեջ ներգրավվելով ճանաչողական բնույթի ռեսուրսներ՝ նպաստում են զբոսաշրջիկների համար օտար երկրի ճանաչված, բացահայտված լինելուն:

Ճանաչողական տուրերն ունեն թեմատիկ ուղղվածություն՝ պատմական, մշակութային, էկոլոգիական, ազգագրական, թատերական և այլն: Այս ձևերի կազմակերպման ժամանակ երբեմն ներկայացվում են տվյալ ուղղության թեմատիկայով միջոցառումներ: Նման էքսկուրսիաները ուղեկցվում են փորձառու գիդ-ուղեկցորդների կողմից, որոնք ցանկալի է, որ խոսեն զբոսաշրջիկների համար հասկանալի լեզվով՝ առանց թարգմանչի:

Գաստրոնոմիկ զբոսաշրջությունը հիմնված է որևէ տեղանքին բնորոշ ուտեստների և ըմպելիքների ցուցադրման, վաճառքի և վաճառքի վայրում նրանց պատրաստմանն ու օգտագործմանը միտված գործընթացների կազմակերպման վրա: Զբոսաշրջության այս տեսակն իր մեջ ներառում է նաև այն փառատոններ և իրադարձություններ, որոնք նվիրված են խմիչքներին կամ ուտեստներին (օրինակ՝ Մյունհենի «Օկտոբերֆեստը», Արենիի

«Գինու» փառատոնը և այլն): Տոնի վերածված նման իրադարձությունները բազմաբնույթ են դարձնում տուրերը և հանգեցնում են տվյալ ուղղության մրցակցային առավելությունների մեծացմանը:

Ազգային խոհանոցը ձևավորվում է դարերի ընթացքում և համարվում է ազգային նկարագրի, ավանդույթների վառ օրինակ: Բազմաթիվ զբոսաշրջիկներ ճանապարհորդության ընթացքում կարևորում են համեղ սնվելը, և, իհարկե, ազգային խոհանոցի առանձնահատկություններով համեմում են իրենց հիշողությունները: Բազմաթիվ երկրներում ազգային խոհանոցը գյուղական համայնքներում տարբեր դրսևորումներ ունի, որոնք էլ գաստրոնոմիկ զբոսաշրջության կազմակերպման մեջ մեծ հետաքրքրություն են առաջացնում:

Գաստրոնոմիկ զբոսաշրջությունը բացահայտում և տարածում է տվյալ երկրի, ժողովրդի խոհանոցային արվեստը, ավանդական ուտեստների և խմիչքների պատրաստման գործընթացները: Ագրոտուրիզմի զարգացման հետ մեկտեղ գյուղատնտեսների տներում ստեղծվում են համապատասխան պայմաններ՝ուտեստների պատրաստման գործընթացը պատշաճ ձևով ցուցադրելու և ցանկության դեպքում զբոսաշրջիկներին այդ ամենի մասնակիցը դարձնելու համար:

Ագրոտուրիզմի կազմակերպման ժամանակ ավելի կիրառելի են արկածային զբոսաշրջության թեթև տեսակները, քանի որ դրանց մեջ գրեթե առանց դժվարության կարողանում են ներգրավվել տարբեր սեգմենտի զբոսաշրջիկների և որոնք ֆիզիկական մեծ ծանրաբեռնվածություն չեն պահանջում, նվազեցված է ճամփորդության ռիսկայնության մակարդակը: Այս տուրերը հաճախ են լրացվում էթնոզբոսաշրջությամբ:

Ագրոտուրիզմի կազմակերպվող իրադարձությունները, փառատոններն ու տոնակատարությունները տնտեսական մեծ նշանակություն ունեն: Դրանք գրավում են տարբեր նախասիրություններ ունեցող զբոսաշրջիկներին և նպաստում են միջազգային շուկայում տվյալ երկրի գրավիչ նկարագրի ձևավորմանը: Իսկ ամենահատկանշականն այն է, որ դրանք նպաստում են զբոսաշրջային սեզոնի երկարաձգմանը, համայնքներում զբոսաշրջության զարգացմանը:

Բազմաթիվ երկրներում պետականորեն ուշադրության է արժանանում իրադարձային զբոսաշրջությունը, որի զարգացումը մեծ խթան է հյուրընկալման ոլորտում ապակենտրոնացման, այդ թվում՝ տարածքային, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ու զարգացման համար, մասնավորապես, Հայաստանում կարելի է առանձնացնել գաստրոնոմիական իրադարձությունները՝ խորովածի փառատոն Ախթալայում, դոլմայի փառատոն Սարդարապատում, հարիսայի օր Մուսա լեռում, գինու փառատոն Արենիում, մեղրի փառատոն Բերդ քաղաքում, բերքի փառատոններ տարբեր մարզերում և այլն:

Ժամանակակից մարդու ապրելակերպի անհանգիստ առօրյան, լար-

վածությունը հանգեցնում են քաղաքամերձ շրջաններում հանգստի համար նախատեսված ենթակառուցվածքների հանդեպ հետաքրքրության: Պատշաճ սպասարկման ենթահամակարգերով գյուղական միջավայրը հոգեկան հանգստություն է ստեղծում մարդկանց մոտ և օգնում հաղթահարել դժվարություններ, կոփում մարդու օրգանիզմը, ֆիզիկապես ու հոգեպես հանգստի վիճակ ապահովում:

Ագրոտուրիզմ նախընտրողները գյուղական համայնքների սպասարկման ենթահամակարգերում չեն պահանջում ամենաբարձր մակարդակով իրականացվող սպասարկում, սակայն պետք է պահպանել որոշակի նորմեր, թեև վերջին տասնամյակում զբոսաշրջության այս տեսակի հանդեպ ցուցաբերվող մեծ ուշադրությունը հանգեցրել է վերոնշյալ հաստատությունների որակական փոփոխությունների առաջընթացին:

Ագրոտուրիզմի տուրերը հաճախ զուգորդվում են տեղանքին առանձնահատուկ զբաղմունքներով: Այս տեսակի զբոսաշրջություն իրականացնող տնտեսությունները ստեղծում են իրենց տեղանքին բնորոշ կոլորիտ, ինչն էլ ավելի է մեծացնում ագրոտուրիզմի գրավչությունը:

Եվրոպական որոշ երկրներում գյուղական ագրոտուրիզմը դարձել է գյուղական ենթակառուցվածքների դինամիկ զարգացման, ֆերմերների զբաղվածության ապահովման և ֆինանսավորման լուրջ աղբյուր, էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրման ու մատուցման գրավական: Գյուղական համայնքներում առկա սպասարկման ենթահամակարգերը ճամփորդությունների կազմակերպման ծառայություններ են մատուցում, որը գյուղացու եկամտի կարևոր աղբյուրներից է հանդիսանում, օրինակ՝ գյուղական բնակավայրերում առկա արհեստանոցներում, հուշարձաններին կից վաճառակետերում, տեղական արհեստների նմուշների վաճառքը նպաստում է հուշանվերների և զբոսաշրջային նշանակության այլ ապրանքների արտադրությամբ զբաղվող ենթաճյուղերի մասնագիտացմանը: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս գյուղերում առևտրային կազմակերպությունների ակտիվացմանը, գյուղական ընտանիքին ֆինանսական աջակցմանը:

Ագրարային տուրիզմի իրականացման համար անհրաժեշտ գիշերակաց ապահովող կառույցները չեն առանձնանում իրենց բազմազանությամբ, սակայն իրենց յուրօրինակ գործունեությամբ, հարդարանքով ու գտնվելու վայրով ապահովում են եզակիություն ու անկրկնելի գրավչություն:

Զբոսաշրջային տունը հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ մեկ շենքի կամ բնակարանի տարածքում տրամադրվում է գիշերակացի ծառայություն, ինչպես նաև կազմակերպվում և մատուցվում են սննդի ծառայություններ [5]: Այս տեսակի մեջ մտնում են.

- Հացուկաց, կամ մահճակալ և նախաճաշ - B&B (bed and breakfast),
- Հոսթել - hostel:

Զբոսաշրջիկի համար B&B-ն ամենալավ ճանապարհն է ծանոթանալու տեղական ավանդույթներին, կենցաղային առանձնահատկություններին,

բացի որ մեկ հարկի տակ ապրելու է տանտիրոջ հետ: Դրանք ուժեղ մրցակից են համարվում գյուղական տարածքներին կից այլ հյուրանոցատիպ հանգրվանների համար: Գյուղական հանգիստ նախընտրողների համար Հացուկացներում մրցակցային այդ առավելությունները հատկապես ապահովում են ջերմ մթնոլորտը և հյուրընկալ վերաբերմունքը:

Հոսթելը էժանագին, կարճաժամկետ բնակության համար նախատեսված, հիմնականում երիտասարդական հյուրանոց-հանգրվան է:

Բունգալոն ոչ մեծ քոթեջ է, որը կառուցված է բնության գրկում: Այն հիմնականում նախատեսված է ընտանեկան հանգստի համար: Կարող է ունենալ ընդարձակ պատշգամբ և մի քանի հարկ:

Հյուրանոցատիպ հանգրվանը հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ մատուցվում են հյուրանոցային ծառայություններ մեկ կամ մի քանի շինություններում և ունեն առնվազն 5 սենյակ: Քոթեջը բնակելի տուն է հարակից պարտեզով՝ ինչպես քաղաքի սահմաններում, այնպես էլ դրանից դուրս: Նախատեսված է մշտական և ժամանակավոր բնակության համար: Կախված հարկերից՝ առաջին հարկում սովորաբար տեղաբաշխվում է խոհանոցը, սանհանգույցը, իսկ վերին հարկում՝ ննջարանները:

Քեմփինգը հիմնականում ավտո-, մոտո- և հեծանվային զբոսաշրջիկների համար նախատեսված ճամբար է: Այն սովորաբար տեղաբաշխվում է քաղաքից դուրս, երբեմն մոթելների հարևանությամբ: Այստեղ զբոսաշրջիկներին տրամադրվում են գիշերակացի տեղեր վրաններում կամ ամառային տնակներում, որոնք ունեն առաջին անհրաժեշտության հարմարություններ, ինչպես նաև խոհանոց՝ սննդի անհատական պատրաստման համար:

Մոթելը հյուրանոցային տնտեսության այն տեսակն է, որը գտնվում է ճանապարհների հարևանությամբ, որտեղ այցելուն կարող է ստանալ հյուրանոցային ծառայություններ մեկ կամ մի քանի շինություններում:

Քաղաքամերձ շրջաններում հանդիպում են նաև հյուրանոցներ, առողջարաններ, հանգստյան տներ, ճամբարային բնակատեղիներ և հյուրանոցային տնտեսության այլ օբյեկտներ:

Գյուղական միջավայրն իր տարածքում գործող սննդի սպասարկման օբյեկտների առանձնահատկություններից ելնելով՝ ունի լայն հնարավորություն ազգային խոհանոցը ներկայացնելու և զարգացնելու դրա արդյունավետություն՝ ուղղված երկրի, ժողովրդի ճանաչմանը: Այն հանրային սննդի սպասարկման օբյեկտները, որոնք գործում են գյուղական համայնքներում, հիմնականում մատուցում են ազգային ուտեստներ: Ազգային խոհանոցը ձևավորվում է դարերի ընթացքում և համարվում է ազգային նկարագրի վառ օրինակ: Բազմաթիվ զբոսաշրջիկներ ճանապարհորդության ընթացքում կարևորում են համեղ սնվելը, և, իհարկե, տվյալ ազգային խոհանոցի ակունքներին ծանոթանալը:

Օտար երկրում հանգստի նպատակով անցկացրած ժամանակը մարդիկ ցանկանում են իրենց հիշողություններում ամրագրել հուշանվերների միջոցով: Զբոսաշրջիկների համար նախատեսված ապրանքների և հուշանվերների

իրացման վաճառակետերն իրենց կարևորությունն ունեն զբոսաշրջային արդյունաբերության մեջ: Հուշանվերների վաճառակետերը որոշ չափով զարկ են տալիս ազգային արհեստների, արվեստների վերածնմանը և մասսայականացմանը: Խեցեգործները, ուլունքագործները, գորգագործները, նկարիչները և այլոք իրենց կարողություններն են արտահայտում կենցաղային, ամենօրյա օգտագործման այն իրերի վրա, որոնք հետաքրքրում են օտարերկրյա զբոսաշրջիկին: Հուշանվերների վրա դաջված տեղանունները, պատկերները պետք է ոչ միայն ներկայացնեն ամբողջ երկիրը, այլ կոնկրետ տվյալ տարածաշրջանը, տեղանքը կամ գյուղը: Որքան զարգացած է տվյալ երկրում զբոսաշրջության ոլորտը, այնքան այդ երկրի բոլոր շրջանների խորհրդանիշները ներկայացված են հուշանվերներում:

Գյուղական միջավայրում հուշանվերի վաճառակետը տնտեսապես շատ արդյունավետ է աշխատում: Այն գյուղացու համար հանդիսանում է թե՛ աշխատատեղի երաշխիք, թե՛ զբոսաշրջիկներից եկամուտ ստանալու աղբյուր:

Զբոսաշրջային գործունեությունը ենթադրում է մարդկանց տեղափոխումը մեկ վայրից մյուսը, ինչպես երկրի տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Տրանսպորտային ծառայությունները համարվում են զբոսաշրջիկներին մատուցվող հիմնական ծառայություններից մեկը:

Ագրարային տուրիզմի կազմակերպման ժամանակ փոխադրումները լինում են հիմնական և օժանդակ: Դրանք կատարվում են տրանսպորտային ծառայությունների միջոցով, որոնք կարող են ներառված լինել տուրի կազմի մեջ կամ որոշակի գումարի դիմաց տեղում առաջարկվել: Զբոսաշրջիկը կարող է նաև ինքնուրույն ձեռք բերել տրանսպորտային միջոցը, եթե ունի նման ցանկություն:

Զբոսաշրջություն իրականացնող ընտանիքները նախընտրում են հիմնականում ավտոմոբիլային տրանսպորտ, եթե նույնիսկ օդային տրանսպորտով են ժամանել տվյալ երկիր, այդ իսկ պատճառով նրանք վարձակալում են մեքենաներ և ինքնուրույն տեղաշարժվում:

Քայլարշավի սիրահարները, ովքեր նախընտրում են հանգրվանել գյուղական միջավայրում, օգտվում են հանրային, միջքաղաքային տրանսպորտից, պատահական մեքենաներից:

Ագրոտուրիզմի զբոսաշրջության մեջ որպես փոխադրամիջոցներ կիրառվում են նաև կենդանիներ՝ ձիեր, ավանակներ, շներ և այլ տեսակներ: Թերևս միայն կենդանիների առկայությունը չի ենթադրում, որ նրանց կարելի է համարել «փոխադրամիջոց»: Դրա համար անհրաժեշտ են, որ, օրինակ, ձիերը լինեն խնամված, ունենան հարմարավետ թամբեր:

Գյուղերում շատ են պահպանվում ազգային առանձնահատկությունները, ծիսակարգերը, արարողությունները և զբոսաշրջության այս տեսակի լայնածավալ կազմակերպումն ավելի է մեծացնում դրանց վերականգնելու և մասսայականություն վայելելու հնարավորությունները:

Ագրոտուրիզմի մեջ ընդգրկվող յուրատեսակ զբաղմունքներն են՝

- տեղում աճեցված պտուղների բերքահավաքը,
- գյուղմթերքի վերամշակումը,
- ոգելից խմիչքների պատրաստումը,
- մեղրաքամը,
- կաթնամթերքից ուտեստների յուրօրինակ տեսականու պատրաստումը,
- ալյուրից ուտեստների տեսականու պատրաստումը,
- կենդանիների խնամքը,
- ձիավարությունը,
- ձկնորսությունը,
- հողագործությունը,
- ավանդական արհեստագործությունը:

Ագրարային զբոսաշրջության այն մասնակիցները, ովքեր ցանկանում են ակտիվ հանգիստ անցկացնել, առաջարկվում է գյուղական աշխատանքի տարբեր տեսակներ, օրինակ՝ փորել մարգերը, քաղհանել բանջարանոցը, խնամել պտղատու հատապտուղների թփերը, ինչպես նաև գյուղական այլ հետաքրքրություններ: Իսկ ով ցանկանում է ավելի մոտիկից շփվել կենդանիների հետ, կարող է հոգ տանել կենդանիների մասին, առաջարկվում է կերակրել խոզերին, հավերին, ճագարներին և այլ կենդանիների, արածեցնել ոչխարներին, այծերին, հորթերին: Այն զբոսաշրջիկները, ովքեր ձիերի մեծ սիրահար են, հնարավորություն ունեն հանգստի ժամանակ ձի խնամել և ձիավարել:

Ավելի խաղաղ և հանդարտ հանգիստ նախընտրողների համար առաջարկվում է ձկնորսություն և սեփական որսից ձկնապուր պատրաստելու հնարավորություն:

Ագրոտուրիզմի մեջ ազգային ավանդույթների, սովորույթների, տոնակատարությունների ցուցադրումը պահանջում է մանրակրկիտ ծրագրում, մանրուքների նկատմամբ մեծ ուշադրության ցուցաբերում և այլն: Ճիշտ ընտրված ժամանակահատվածը տոնակատարության կարևոր նախապայմանն է, որին նաև զբոսաշրջիկներն են ցանկանում անմիջական մասնակցություն ունենալ, այդ իսկ պատճառով էլ հարկավոր է պատրաստ լինել նաև նման իրադրություններին: Տեղացիներն այս իրադարձություններից բավականին շահույթ են ստանում և առաջիկա ամբողջ տարվա ընթացքում նախապատրաստվում են հաջորդ իրադարձությանը:

Ագրարային զբոսաշրջության ուղղությամբ գործունեություն ծավալելիս անհրաժեշտ է պահպանել մի շարք նորմեր, որոնք կնպաստեն տվյալ տարածաշրջանի զբոսաշրջային վարկանիշի բարձրացմանը: Դրանք են՝

Գյուղացի-հյուրընկալի կողմից ստեղծված գործնական վարքագիծը պետք է համակցել բարյացակամ հայացքով և բարի վարվելակերպով, ինչն էլ ստեղծում է ընկերական մթնոլորտ ու ավելի դյուրին է դառնում սպասարկումը:

Հյուրին պետք է ընդունել այնպիսին, ինչպիսին նա կա: Մի քանի րոպե շփումից հետո հարկավոր չէ նրան փորձել փոխել: Քաղաքավարության

սահմանը պետք չէ անցնել, որպեսզի քծնանքի չվերածվի: Քաղաքավարությունը տարբեր ազգային պատկանելություն, տարիք, բնավորություն ունեցող մարդկանց հետ շփման հարցում ամենահիմնական միջոցն է:

Տանտերերը, այգեգործները, ֆերմերները պետք է աշխատեն ֆիզիկական ծանրաբեռնվածությունն օրվա ընթացքում այնպես բաշխել, որ հյուրերի ժամանման հիմնական ժամերին կարողանան նրանց առավելագույն ուշադրություն դարձնել:

Գյուղացի-հյուրընկալը պետք է գիտակցի, որ զբոսաշրջիկի համար ամեն ինչ նոր է տվյալ միջավայրում, ու զբոսաշրջիկի կողմից ամենաանկանխատեսելի վարքականոնի դրսևորման ժամանակ էլ արհամարհական կամ ագրեսիվ վերաբերմունք չդրսևորի:

Զբոսաշրջիկի հետ ստեղծված ցանկացած անախորժ պահերի ժամանակ պետք է կարողանալ տիրապետել իրավիճակին և խուսափել չափից ավելի բորբոքվելուց:

Գյուղացու անմիջականությանը բնորոշ անտեղի նկատողություններ հարկավոր չէ անել գյուղական զբաղմունքների մեջ ներգրավված զբոսաշրջիկին, պետք է բավարարվել թեթև խրատներով, ճիշտ գործելու ձևերը ցուցադրելով, և խուսափել համեմատականներ անցկացնել զբոսաշրջիկի երկրի նմանատիպ գործունեությունների հետ:

Զբոսաշրջիկները, որոնք հանգրվանելու են գյուղական միջավայրում, տներում, և որոշ չափով ընդհանուր կենցաղ են վարելու տանտերերի հետ, պետք է զգան, որ իրենց անկեղծ ուրախ են այդտեղ տեսնել:

Գիշերակաց ապահովող տներում, որտեղ գյուղական զբոսաշրջիկները ավելի անմիջական վերաբերմունքի են արժանանում, երբեմն իրենց թույլ են տալիս նկատողություններ անել կենցաղավարության որևէ հարցում: Հարկավոր է անկեղծ և ժամանակին ներողություն խնդրել, դա նվաստացում չէ, այլ ուղերձ՝ ուղղված սպասարկման մակարդակը հնարավորինս բարելավելուն:

Գյուղացու ամեն արարք պետք է հիմնավորված լինի, որպեսզի զբոսաշրջիկի մոտ դրանց արդարացի, ճիշտ լինելու վերաբերյալ կասկած չառաջանա:

Պետք է գյուղական միջավայրում յուրաքանչյուր գործ կազմակերպել այնպես, որ բարձր պահի գյուղացու, գյուղի, երկրի գրավչությունն ու վարկանիշը [6]:

Որպես յուրահատուկ ծառայության տեսակ՝ ագրոտուրիզմը մասսայականություն է սկսել վայելել Արևմտյան Եվրոպայում: Ֆրանսիան, Իսպանիան, Ավստրիան և մի շարք այլ արևմտաեվրոպական երկրներ գյուղական զբոսաշրջության ոլորտում իրենց ծավալած գործունեությամբ հիմնավորեցին այն փաստը, որ գյուղական բնակավայրերում գումար վաստակելու համար, բացի գյուղատնտեսական մշակաբույսեր աճեցնելուց և անասնապահությամբ զբաղվելուց, կարելի է նաև մասնագիտորեն զբաղվել հյուրընկալությամբ: Ստորև ներկայացնենք մի շարք երկրներում գյուղական զբոսաշրջության զարգացման վարկածները:

Ֆրանսիայում 1950-ական թվականներին նկատվում էր ոչ հեռանկարային գյուղական շրջաններից բնակչության արագընթաց արտահոսք դեպի խոշոր քաղաքներ: Երկրում մի կարճ ժամանակահատված կտրուկ նվազեցին ֆրանսիացիների համար մեծ հպարտություն համարվող գինու և պանրի արտադրման ծավալները: Այս ամենը լուրջ մտահոգության ալիք բարձրացրեց պետական կառավարման հարթակներում: Պետության կողմից նախագծված մի շարք ծրագրերի իրականացման արդյունքում վերականգնվեցին տասնյակ տնտեսություններ՝ ագարակներ, պանրագործարաններ, գինեգործական տնտեսություններ: Նոր կազմավորվող տնտեսությունների տերեր ընտրվեցին երիտասարդ ամուսիններ, որոնք էլ իրենց գործունեության մեջ ավելի ճկուն կառավարչական գործելակերպ դրսևորելով՝ մեծ մասն արագորեն ինտեգրվեցին գյուղական զբոսաշրջության գործառույթների մեջ՝ առավել շահավետ ձեռնարկատիրական գործունեություն ունենալու համար:

Իտալիայում ագրոտուրիզմը սկսել է զարգանալ 1970-ական թվականներին: Ենթադրվում էր, որ զբոսաշրջային ձեռներեցությունն ագարակատերերի համար ոչ մասնագիտական գործունեություն է, ու հնարավորություն կընձեռեր առանց մեծածավալ ներդրումներ կատարելու բարեփոխել ֆինանսական վիճակը: Գյուղական զբոսաշրջությունն իր առաջացման սկզբնական շրջանում բավականին մատչելի հանգիստ էր առաջարկում, սակայն միաժամանակ որպես հանգստի ոչ ավանդական տարբերակ՝ չէր վայելում մեծ հեղինակություն: Հետագայում իրավիճակը սկսեց փոփոխվել:

Ներկայումս Իտալիայի ինքնավար մարզերի շրջանում ագրոֆերմաների մեջ գլխավորող դերակատարում ունեն Տոսկանան՝ ամբողջ ագրոտնտեսության 34%, Ումբրիան՝ 14%, Սիցիլիան՝7%: Գյուղական միջավայրում հանգիստը հատկապես համադրում են զբոսաշրջության մի շարք տեսակներով՝ազգային գաստրոնոմիա, հեծանվային սպորտ, ձիերով զբոսանք և այլն:

Իտալիայի գյուղական զբոսաշրջությանը նպաստող գործոններից են.

Արևմտյան Եվրոպայի զարգացած զբոսաշրջային շուկաներում հետաքրքրությունը նվազեց հանգստի ավանդական տեսակների նկատմամբ և նոր տուրապրանքի պահանջարկ առաջացավ:

Ագրարային զբոսաշրջության զարգացմանը նպաստել են նաև սոցիալական գործոններ, օրինակ, որպես հանգստի մատչելի տարբերակ, շատ հարմար էր բազմազավակ ընտանիքների և երիտասարդների համար:

Աշխարհում մեծանում է հետաքրքրությունն էկոլոգիական զբոսաշրջության հանդեպ՝ որպես բնության գրկում հանգստի կազմակերպման տեսակ, իսկ գյուղական զբոսաշրջությունը հիանալի կերպով ներգրավվել է էկոզբոսաշրջության մեջ՝ որպես ժամանակակից հետաքրքրություն վայելող ուղղություն:

Գերմանիայում ագրարային զբոսաշրջության զարգացման մեկնարկը կապված էր երկրի ծայրամասերում հանգստի այդ տեսակի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրասիրությամբ: Ինչպես Գերմանիայում, այնպես էլ

եվրոպական մի շարք երկրներում ագրարային զբոսաշրջության զարգացման նախապայմաններից էր գյուղատնտեսական ճգնաժամը:

Հետաքրքիր է Բավարիայի ագարակներից մեկի օրինակը: Ըստ այդմ՝ բավարիացի մի գյուղատնտես, ունենալով ընդամենը 30 հա հողատարածք, իր հողատնտեսական աշխատանքներով չէր կարողանում դիմակայել տարածաշրջանում գոյություն ունեցող մրցակցությանը: Նա ամբողջովին բարեկարգում և վերափոխում է իր ագարակը՝ դարձնելով գյուղական զբոսաշրջության այցելավայր: Ագարակում գործող սրճարանի տարածքում նա տեղադրում է ջրաղաց, ցախանոցում հավաքում հնաոճ գյուղական սարքավորումների բավականին հարուստ տեսականի, կառուցում արհեստական տնակ, որտեղ սկսում է աճեցնել տեղանքի ֆլորային և ֆաունային բնորոշ բավականին մեծ տեսականի: Կարճ ժամանակում քիչ եկամտաբեր ագարակը վերածվեց ծաղկող գյուղական զբոսաշրջային տնտեսության, որտեղ զբոսաշրջիկներին առաջարկում էին բնության գրկում հանգիստ և օրգանիկ սնունդ:

Սլովենիայում ագրարային զբոսաշրջության զարգացման համար առավել քան նկատելի է պետության աջակցությունը: Այսպիսով, Սլովենիայում Գյուղատնտեսության և անտառային տնտեսության նախարարության մասնակցությամբ, 1997 թ.-ին ստեղծվել է Սլովենիայի զբոսաշրջային ագարակների միությունը, որը հանդիսանում է ոչ կառավարական և ոչ կոմերցիոն կազմակերպություն: Սույն միության ստեղծման նպատակը հետևյալն է.

- բարձացնել ագրարային տուրիզմի տուրապրանքի որակը,
- բարելավել գյուղական բնակավայրերի պայմանները,
- ապահովել զբոսաշրջիկների հոսք դեպի գյուղական բնակավայրեր,
- նպաստել գյուղական շրջանների զարգացմանը և պահպանել գյուղացու եզակի արհեստներն ու ժողովրդական սովորույթները:
- բարձացնել գյուղական զբոսաշրջության կողմից առաջարկվող տուրապրանքի որակը:

Միությանը մասնագիտական օգնություն են ցուցաբերում գիտահետազոտական ինստիտուտները, հատկապես Ցելե քաղաքի Գյուղատնտեսական և անտառտնտեսության ինստիտուտը, որտեղ և գտնվում է Միության ղեկավարման կենտրոնը: Միջինում Սլովենիայի զբոսաշրջության մեջ ներգրավված ագրոֆերմաների ծանրաբեռնումը կազմում է տարեկան 75 օր: Դրա հետ մեկտեղ, այն ագրոֆերմաները, որոնք գտնվում են զբոսաշրջային կենտրոնների, բուժառողջարանների և լեռնադահուկային կենտրոնների անմիջապես հարևանությամբ, զբաղված են տարեկան ավելի քան 150 օր:

Կիպրոսն առաջատար տեղ է զբաղեցնում հանգստի մասսայական ուղղությունների շարքում, սակայն այստեղ էլ ագրարային զբոսաշրջությունը ցուցաբերել է զարգացման աննախադեպ տեմպեր:

Կիպրոսում ագրարային զբոսաշրջության զարգացումը կապվում է հետևյալ հանգամանքների հետ.

- կղզու հեռավոր լեռնոտ շրջաններում ստեղծվել են բարձրակարգ զբոսաշրջային ենթակառուցվածքներ,
- զբոսաշրջության սեզոնայնությունը երկարաձգվել է, քանի որ ագրարային զբոսաշրջությունը նպաստում է այդ հիմնախնդրի որոշ չափով դրական լուծմանը,
- զբոսաշրջային մեծ հոսքերի հաշվին գյուղերում առաջանում էին նոր աշխատատեղեր:

Ագրոտուրիզմի զարգացումը նպաստեց կիպրոսյան գյուղի ազգային կերպարի, մշակութային ժառանգության պահպանությանը և բարենպաստ ազդեցություն ունեցավ շրջակա միջավայրի պահպաման գործում: Ագրարային զբոսաշրջության զարգացումը կատարվում է ոչ միայն Եվրոպայում և հանգստի համար մասսայականություն վայելող երկրներում, այլև այնպիսի երկրներում, որոնք չունեն հաստատուն գյուղատնտեսական մասնագիտացում, օրինակ՝ Սինգապուր, Մալազիա, Շրի-Լանկա և այլ երկրներ:

1997թ. UNWTO-ն (United Nations World Tourism Organization) առաջարկեց տալ զբոսաշրջության տարողունակության սահմանում [7]: Զբոսաշրջության տարողունակությունն այն մարդկանց քանակությունն է, որը կարող է միաժամանակ այցելել նպատակակետ՝չհանգեցնելով շրջակա միջավայրը ֆիզիկական, տնտեսական և սոցիալ-մշակութային քայքայման, ինչպես նաև՝այցելուների բավարարվածության աստիճանի անկման: Գյուղական զբոսաշրջությունը ներգրավում է երկրի բնական, պատմամշակութային և սոցիալական ժառանգության ռեսուրսները: Զբոսաշրջության հետևանքով դրանց վրա առաջացած ցանկացած բացասական ազդեցություն բացասաբար է անդրադառնում նաև երկրի զբոսաշրջային արդյունաբերության վրա: Տնտեսական, սոցիալական ոլորտներում և շրջակա միջավայրի պահպանության երկարաժամկետ գործընթացները պետք է գերակայեն այնպիսի կարճաժամկետ նվազումներից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ որևէ երկարաժամկետ զարգացումներին: Զարգացող ագրարային զբոսաշրջային գործունեությունը հարկավոր է ուղղորդել դեպի բնության, շրջակա միջավայրի, պատմամշակութային և սոցիալական ժառանգության պահպանությանը, վերարտադրությանն ու զարգացմանը:

Կայուն զբոսաշրջության հայեցակարգի հիմքում ընկած է թողունակության հասկացությունը: Դա որևէ զբոսաշրջային օբյեկտի առավելագույն ծանրաբեռնվածությունն է, որը վնաս չի հասցնում տեղական ռեսուրսներին, բացասաբար չի անդրադառնում զբոսաշրջիկների տպավորությունների վրա, չի առաջացնում սոցիալ-տնտեսական խնդիրներ տեղի բնակչության հետ:

Ագրոտուրիզմը սերտորեն կապված է տեղի բնակչությանը տեղական զբաղվածության ապահովման հնարավորություններով:

Կայուն զբոսաշրջության գլխավոր տնտեսական ներգործություններց մեկն այն է, որ պետության բյուջեում կայուն պարբերությամբ ավելանան արտարժույթի հոսքերը, ինչն էլ կնպաստի երկրում գործարար հնարավորությունների

ընդլայնմանը և զբաղվածության մակարդակի բարձրացմանը:

Ընդունող երկիրը, կիրառելով զբոսայգիների, ազգային պարկերի և այլ պահպանվող տարածքների այցելավճարներ, ինչպես նաև՝ վաճառելով հատուկ հավատարմագրեր սեզոնային որսով և ձկնորսությամբ զբաղվելու համար, ստանում է ուղղակի ֆինանսական մուտքեր երկրի բնապահպանական խնդիրների լուծման համար:

Կայուն զբոսաշրջությունը կարող է խթանել երկրում ենթակառուցվածքների բարելավմանը՝ ջրամատակարարման, կոյուղու, ճանապարհների, էլեկտրացանցերի, հեռախոսային ցանցերի, հանրային տրանսպորտի համակարգի աշխատանքներին: Սրանք և՛ զբոսաշրջային նպատակների համար են ծառայում, և՛ տեղի բնակչության (հատկապես գյուղական համայնքներում) կենսամակարդակի ամենավառ ցուցանիշն են հանդիսանում:

Օգտագործված գրականություն

1. Ա.Զ., ՀՀ զբոսաշրջության ոլորտում ինովացիոն գործունեության կառավարման հիմնախնդիրները, Ատենախոսություն, Երևան, 2014, էջ 32-48
2. «Գյուղական զբոսաշրջություն» ուսումնական ձեռնարկ, Երևան 2015
3. Գալյան Ժաննա, էկոտուրիզմը բնության հատուկ պահպանվող տարածքներում, Երևան, «Լուսակն» հրատ., 2007թ., էջեր 8-12
4. Дурович А.П., Организация туризма. Издание третье, стереотипное. Минск, ООО «Новое знание», 2006, стр. 30
5. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունված 2003թ. դեկտեմբերի 17-ին, ՀՀՊՏ 2004/6 (305) 29.01.04, Հոդված 9
6. «Գյուղական զբոսաշրջություն» ուսումնական ձեռնարկ, Երևան 2015
7. ՍԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությանը՝ UNWTO (UNWTO - United Nations World Tourism Organization), URL: www.unwto.org ՀՀ-ն անդամակցում է UNWTO-ին 1997թ.-ին՝ լիիրավ անդամի կարգավիճակով:
8.

СЕРГЕЙ АСАТУРЯН. МИРОВОЙ ОПЫТ АГРОТУРИЗМА*. Агротуризм – это вид деятельности, играющий важную роль в жизни народов, это мощное экономическое средство, бизнес по развлечению и обслуживанию людей, который в то же время способствует международному признанию страны на основе ее исторической, культурные и местные особенности.*

SERGEY ASATURYAN. WORLD EXPERIENCE OF AGRO-TOURISM. *Agro-tourism is a type of activity that is important in the lives of peoples, it is a powerful economic means, a business to entertain and serve people, which at the same time contributes to the international recognition of the country based on its historical, cultural and local features.*

ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սերգեյ Ասատուրյան

Երևանի «Հայբուսակ» համալսարանի տնտեսագիտության ինստիտուտ

Մուտքագրված է 10.05.22, հաստատված է տպագրության 23.06.22

Ամփոփագիր. *Այն երկրները, որոնք աշխարհագրորեն սահմանակից են, ունեն փոխկապակցված պատմական զարգացում և իրար մոտ ազգային առանձնահատկություններ, գրեթե առանց բարդույթների ձևավորում են տարածաշրջանային փաթեթներ: Նմանատիպ փաթեթները հիմնականում ընդգրկում են երկրի ծայրամասերի այցելավայրերը, փոքր քաղաքներն ու մերձքաղաքային համայնքները, ինչը գյուղական զբոսաշրջության զարգացման հիմնական գրավականն է:*

Հիմնաբառեր՝ *Ագրարային զբոսաշրջություն, համայնքային էկոզբոսաշրջություն, էթնոզբոսաշրջություն, հյուրատուն:*

Ագրարային զբոսաշրջությունը գյուղական համայնքներում եկամտաբերության լրացուցիչ աղբյուր է համարվում, և ճիշտ կազմակերպման պարագայում՝ հրաշալի միջոց է գյուղական համայնքների կայուն զարգացման համար: Ոչ մասնագիտական մոտեցման արդյունքում առաջանում են շրջակա միջավայրի շահագործման հետ կապված մի շարք խնդիրներ:

Զբոսաշրջային գործունեություն իրականացնելու հետևանքով առաջացած հողային կոշտացումից փոխվում է բուսական և կենդանական կազմը և այլն: Այս ամենի պատճառ են դառնում նաև այցելուների ոչ ճիշտ պահելաձևը, օրինակ՝ այցելուներն երթուղու նպատակակետին հասնելու համար շատ հաճախ շեղվում են հիմնական ճանապարհից և իրենց համար փնտրում ավելի մատչելի ուղիներ: Հարկ է նշել, որ չի խրախուսվում զբոսաշրջային ծառայություններ մատուցող հաստատությունների կառուցումը կուսական բուսականությամբ հարուստ շրջաններում:

Գյուղական տարածքի սանիտարական կարգավիճակի վրա ազդեցությունը անխուսափելի է: Զբոսաշրջիկների կողմից թափված աղբն ու թափոններն առաջացնում են սանիտարական մեծ խնդիրներ: Առաջանում են օրգանական և անօրգանական թափոններ: Օրգանական թափոնները հնարավոր է վերամշակել և գյուղական տարածքներում օգտագործել որպես պարարտանյութ, իսկ անօրգանական թափոնների դեպքում խնդիրն այլ է: Անհրաժեշտ է զբոսաշրջիկներին արգելել բնության մեջ աղբ թափելը (գարեջրի շշեր, ծխախոտի տուփեր, պոլիէթիլենային տոպրակներ, կապրոնե շշեր, սննդի մնացորդներ և այլն):

Այսպիսով, զբոսաշրջության այս տեսակի կազմակերպման ժամանակ գյուղական տարածքների ոչ պատշաճ շահագործումը կարող է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունենալ: Դրանից խուսափելու

համար՝ անհրաժեշտություն է առաջանում հանգիստ կազմակերպելուն զուգընթաց ձեռնարկել նաև ծրագրեր, որոնք, միաժամանակ, ուղղված կլինեն շրջակա միջավայրի պահպանմանն ու չաղտոտմանը:

Ագրարային զբոսաշրջության զարգացման համար առիթ է հանդիսանում այլ երկրի կենցաղի, մշակույթի, սովորույթների հետ մերձենալու ձգտումները: Ընդհանուր կենցաղավարության ժամանակ առավել ակնհայտ են դառնում մշակութային առանձնահատկությունները: Առօրեական շփման մեջ այդ առանձնահատկությունները դառնում են ակնհայտ, և օտարերկրացիները, զբոսաշրջիկները սկսում են հասկանալ, որ գոյություն ունեն վարքագծի, ապրելակերպի, մտածելակերպի այլ ձևեր, որոնք էապես տարբերվում են իրենց սովորականից:

Զբոսաշրջության ոլորտի գործընթացներում՝ միջմշակութային շփման ժամանակ, զբոսաշրջիկները միմյանց մասին որոշակի պատկերացումներ են կազմում, փոխադարձաբար կանխատեսում զրուցակցի վարքագիծը, ինչը հեշտացնում է օտարների շփումը՝ լեզուների, խոհանոցի, հագուստի, հասարակական վարվելաձևի կանոնների ծանոթացման և յուրացման ցանկության առաջացումը:

Զբոսաշրջությունը, որպես տնտեսության ճյուղ, ոչ միայն կրում է տնտեսության մեջ ընթացող գործընթացների ազդեցությունը, այլև ունենում է էական դերակատարություն ինչպես երկրրի, այնպես էլ առանձին տարածաշրջանի տնտեսության զարգացման վրա: Ներկայումս զբոսաշրջության ոլորտում առկա են.

- ոլորտում մատուցվող ծառայությունների ծավալի աճ,
- մրցակցության նպատակային ուղղվածություն,
- զբոսաշրջության վրա տնտեսական, սոցիալ-մշակութային գործոնների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության աճ,
- զբոսաշրջային ապրանքի և ընտրված ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճ, ինչը հանգեցնում է ոլորտում նորարարությունների ներդրման անհրաժեշտությանը՝ ապահովելով ոլորտի ընդհանուր զարգացումը [1]:

Այն երկրները, որոնք աշխարհագրորեն սահմանակից են, ունեն փոխկապակցված պատմական զարգացում և իրար մոտ ազգային առանձնահատկություններ, գրեթե առանց բարդույթների ձևավորում են տարածաշրջանային փաթեթներ: Նմանատիպ փաթեթները հիմնականում ընդգրկում են երկրի ծայրամասերի այցելավայրերը, փոքր քաղաքներն ու մերձքաղաքային համայնքները, ինչն էլ գյուղական զբոսաշրջության զարգացման հիմնական գրավականն է: Տարածաշրջանային տուրերի կազմակերպման հետ կապված սահմանամերձ շրջաններում ի հայտ են գալիս մի շարք խոչընդոտներ, օրինակ, սահմանային անցակետերի սակավությունը, թույլ զբոսաշրջային ենթակառուցվածքները և այլն:

Տարածաշրջանային տուրփաթեթների մրցունակության բարձրացման համար ագրոտուրիզմը մեծ դեր կարող է ունենալ: Մրցունակության բարձրացումը պայմանավորված է նաև սեզոնայնությամբ, ինչը գյուղական զբոսաշրջությունը հնարավորինս երկարաձգում է իրեն բնորոշ գործընթացներով, ավանդույթների և իրադարձությունների կազմակերպումով: Ագրոտուրիզմի մեջ առավել քան կարևորվում են ազգային կոլորիտը և ազգի արժեհամակարգը, ինչին հաղորդակից դառնալու ամենահավաստի ճանապարհը գյուղական զբոսաշրջիկ լինելն է:

Ագրարային տուրիզմը որքան էլ հետաքրքրություն է առաջացնում օտարերկրացիների համար, այնուամենայնիվ, Հայաստանի գյուղերի բնակիչները այնքան էլ տեղեկացված չեն դրա մասին, ոմանք նույնիսկ պատկերացում չունեն, թե ինչպես կարող են սկսել իրենց բիզնեսը և իրենց տունը դարձնել հյուրատուն: Այստեղ կարևոր է պետական աջակցությունը:

Գյուղի բնակիչը պետք է հասկանա, որ ապրելով իր առօրյա կյանքով ու կենցաղով, կարող է այն դարձնել տուրիստական «ապրանք»: Թեև թվարկած անհարմարություններին՝ օտարերկրյա տուրիստները բավականին հետաքրքրված են նույնիսկ մեր գյուղերի աղքատ կյանքով:

Չնայած այն բանին, որ նրանք դժվարությամբ են հասնում Հայաստանի հեռավոր գյուղեր ճանապարհների ոչ բարվոք լինելու պատճառով, այնուամենայնիվ, հենց որ տեսնում են գյուղական հին տուն՝ հին թավաներով, ալյումինե բաժակներով, անմիջապես մոռանում են իրենց ճանապարհային տանջանքները:

Հենց նրանք մտնում են պատահական գյուղացու տուն, անմիջապես հանում են տեսախցիկները և նկարում այն ամենը, ինչ կա իրենց շրջակայքում:

Օտարերկրացիներին շատ են հետաքրքրում հայկական չրերը, մուրաբաները, հայկական գաթան, նամանավանդ դրանց պատրաստումը: Ամենից շատ հետաքրքրում է իրենց մասնակցությունը դրանց պատրաստմանը: Օտարերկրացիներին հյուրասիրելով հայկական խոհանոցի համեղ ուտեստները՝ երկրում հնարավոր է զարգացնել խոհանոցային և գյուղական տուրիզմը: Զարկ տալով գյուղական համայնքների զարգացմանը՝ ավելի շատ ես ծանոթանում գյուղական ավանդույթներին: Օրինակ՝ զբոսաշրջիկները, ծանոթանալով արիշտայի պատրաստմանը, ոչ միայն ճանաչում, այլ նաև սիրում են մեր երկիրը:

Ուսումնասիրելով Հայաստանում ագրարային տուրիզմի ներկայիս վիճակը՝ պարզ դարձավ, որ ՀՀ-ում՝ որոշակի շրջաններում, կան տուրիզմի այս տեսակի արդեն բավականին կայացած օրինակներ:

Ներքին Գետաշեն գյուղում գտնվող 1800-ականների ջրաղացը Թաթոյանների ընտանիքը վերածել է իսկական ժամանակի մեքենայի: Նրանք այստեղ այցելող տեղացի և արտասահմանցի զբոսաշրջիկներին ցուցադրում են ջրաղացի աշխատանքը, պատմում դրա ստեղծման պատմությունը:

Ագրոտուրիզմի ոլորտում գրանցած հաջողությունները Թաթոյանները համարում են նաև իրենց գործընկերներինը: Ջրաղացպան Մեժլում Թաթոյանը պատմում է՝ տեղեկանալով ԱԿԲԱ Ֆեդերացիայի և Գերմանիայի բնության պահպանության միության (NABU) համատեղ «Գյուղական տուրիզմի զարգացման» ծրագրի մասին, անմիջապես դիմեցին. արդյունքը սպասեցնել չտվեց [2]:

Ունենալ փոքրիկ արվեստանոց ու զբաղվել կավի թերապիայով. երկար տարիներ այսպիսի ցանկություն է ունեցել Վանաձորի «Բոհեմ» կամերային թատրոնի դերա-սանուհի Ալլա Ավետիսյանը: Հենց այդ ցանկությունն էլ նա հետագայում դարձրել է նոր բիզնեսի սկիզբը:

Նկար 1. Թաթոյանների ջրաղացը՝ Ներքին Գետաշեն գյուղում [3]

Ամեն ինչ պատահական է ստացվել. Ալլայի պլաններում գյուղն ու հյուրատունը չեն եղել: ՄԱԶԾ «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագիրն է առիթ դարձել, որ նա իր սիրած գործը գյուղական բնակավայրում հիմնի: Ու երբ հաստատվել է Ալլայի ներկայացրած կավաբուժության կենտրոնի ծրագիրը, նա սկսել է տարածք փնտրել իր հետագա գործունեության համար: Տարածք ընտրելու նպատակով նա շրջել է Լոռու մարզում: Ծրագրի կարևոր պահանջներից էր այն, որ ընտրվող գյուղը զբոսաշրջության տեսանկյունից քիչ զարգացած լիներ, ու ինքն իր ծրագրով նպաստեր ագրարային զբոսաշրջության զարգացմանը:

Տարածքը ընտրվեց Սանահինում, որովհետև ուսումնասիրությունների

արդյունքում պարզ դարձավ, որ այստեղ հին ժամանակներում զբաղվել են կավով: Սա նաև պատրվակ դարձավ, որ տուրիստները ծանոթանան մեր մշակութային անցյալին, որի միջոցով այն չի մոռացվի:

Արդյունքում, կառուցվեց կավաբուժության կենտրոնը, որը իրենից ներկայացնում է փոքրիկ առանձնատուն՝ կահավորված հայկական ազգային ոճով: Սենյակներից մեկը կավով պրոցեդուրաների համար է նախատեսված: Հիմնադիրը կարծում է, որ կավաբուժությունը էսթետիկ այն պրոցեդուրաներն են, որոնք ուղղված են մաշկային խնդիրների լուծմանը, գումարած՝ կավով թերապիան:

Հետաքրքիր կոլորիտով Կավի տունը, որպես հյուրատուն, 6 մարդու ընդունելու հնարավորություն ունի: Իսկ տան նկուղը վերածվել է արվեստանոցի, որտեղ ցուցադրված են նաև հայկական գյուղի կենցաղում օգտագործված հին իրեր ու գործիքներ: Դրանք անընդհատ համալրվում են. նպատակ կա հայկական գյուղի կենցաղն այս ճանապարհով նույնպես պրոպագանդելու: Հենց այս միջավայրում էլ այցելուներն ու հյուրերն աշխատում են կավով՝ պատրաստելով ցանկացած իր:

Կավի տանը համալրվում է նաև երաժշտական գործիքների հավաքածու, որպեսզի այցելուները և՛ ծանոթանան դրանց, և՛ ուրախ ժամանցի հնարավորություն ունենան:

Նկար 2. Pottery House Armenia կավի-հյուրատունը [4]

Այս տունը բացվել է որպես կավաբուժության և կավագործության կենտրոն, բայց նպատակն այն է, որ այն ավելի շատ լինի մշակութային միջավայր: Այսինքն, երբ ասեն Սանահին, եկեղեցուց բացի, մեր հին ազգային կենցաղավարությունն ու մշակույթը նաև հասկանան: Ծրագրում նաև առկա է հետագայում աշխատարաններ ունենալ, որտեղ կզբաղվեն կարպետագործությամբ և քարի մշակմամբ:

Հիմնադիրը գտնում է, որ Ալավերդիում, մասնավորապես՝ Գեղարվեստի դպրոցում մեծ ներուժ կա, սակայն այն, ինչ սովորում ես, մեծ մասամբ մնում է սիրած զբաղմունքի տիրույթում ու դրանով չես կարողանում գումար աշխատել: Հիմնադրի նպատակն է, որ տեղի երիտասարդները գան, վարպետաց դասեր տան, «վաճառեն» իրենց գիտելիքը, սովորեցնեն հայկական արվեստի ճյուղերը, դրանց տեխնիկան:

Pottery House Armenia-ում հյուրընկալվելով՝ կարելի է պարզապես հանգստանալ գյուղական միջավայրում, համտեսել գյուղի բերքուբարիքը, մերսվել կավով, խոտաբույսերով ու տաք քարերով, «շփվել» կավի հետ ու պատրաստել այն:

Կավի տունն աշխատում է տարվա բոլոր ամիսներին: Ձմռանը, սակայն, կավով մերսման պրոցեդուրաներ չեն արվում՝ անհրաժեշտ ջերմաստիճանի բացակայության պատճառով:

Սանահինի Կավի տանը մեկ օր մնալը մեկ անձի համար արժե 4500 դրամ՝ առանց նախաճաշի: Հավելյալ 2000 դրամ վճարելով՝ կարելի է նաև նախաճաշել: Կավով պրոցեդուրաների արժեքը 1500-18000 դրամ է: Կավագործության կամ կավով «բզբզալու» համար հարկավոր է 1500-5800 դրամ գումար ունենալ՝ կախված աշխատանքից:

Նկար 3 Pottery House Armenia կավի-հյուրատունը [5]

«Տարբեր իրեր, հուշանվերներ ու խաղալիքներ ենք պատրաստելու: Եթե մեր այցելուն ցանկանում է ուղղակի զբաղվել, ինչ-որ բան սարքել, ապա վճարում է 1500 դրամ, եթե իր պատրաստածն ուզում է վերցնել, ապա եւս 1000 դրամ է վճարում: Իսկ եթե, օրինակ, պատրաստում ենք մի բան, որը հարկավոր է նաեւ թրծել (սպասք եւ այլն), արդեն գումարի չափը փոխվում է», - ասում է Pottery House Armenia-ի հիմնադիրը [6]:

Pottery House Armenia-ն ունի ապագայի հետ կապված հետևյալ ծրագրերը.

Լոռիում և նրան հարակից շրջաններում զբաղվել կավի հումքի վերամշակումով,

Կավից սպասք և զանազան կենցաղային օգտագործման իրեր պատրաստել ու վաճառել,

Օգտագործելով տեղի խոտաբույսերի բազմազանությունը՝ օճառի արտադրություն սկսել,

Առաջիկայում Կավի տան բակում բացօթյա փոքր սրճարան կգործի, որտեղ նաեւ հայկական գյուղի ուտեստներ կմատուցվեն (ավելուկ, լոբի եւ այլն):

Օձունում հիմնադրված է նաև Home of Aghasi հյուրատունը, որն իրենից ներկայացնում է հասարակ գյուղական ընտանիք (որտեղ առկա է 4 սերունդ): Զբոսաշրջիկը կարող է գիշերել խոտի դեզի վրա, ցորեն աղալ երկանքով, օգնել տանտերերին հավաքել հատապտուղներ, ինչպես նաև ՝ ծառերից միրգ: Home of Aghasi հյուրատանը մեկ գիշերակացը արժե 6000-24000 դրամ կախված անձերի քանակից [7]:

Ագրոտուրիզմի հետաքրքիր զարգացում են մտածել Arm Bee Honey Farm հյուրատան հիմնադիրները, որոնք առաջարկում են գիշերել փայտաշեն տնակներում, հետևել և մասնակցել մեղրի քամման գործընթացին և իհարկե վայելել մաքուր և անարատ մեղրը: Հյուրատունը գտնվում է Ալավերդի քաղաքին հարակից տարածքում: Հյուրատանը գործում է հետևյալ գնացուցակը՝

2 տեղանոց համարը՝ 12000-15000 դրամ, որը իր մեջ ներառում է անարատ մթերքներից պատրաստված նախաճաշ:

Նկար 4. Home of Aghasi հյուրատան հարդանոցը [8]

Տուրիզմի այս տեսակի վառ օրինակ է Կալավան համայնքը: Լինելով իր բնակավայրի սիրահարը և միևնույն ժամանակ արտերկրում տեսնելով բազմաթիվ համայնքների հաջողությունները՝ Ռոբերտը որոշում է թողնել նախկին գործունեությունը և ամբողջությամբ նվիրվել իր համայնքի զարգացմանը: Եվ ահա 2013 թվականին նա հիմնում է «Թայմ լենդ» հիմնադրամը՝ նպատակ

ունենալով բացահայտել տեղի մարդկային ու բնական ողջ ներուժը: Տեղի կանայք սկսում են հավաքել գյուղի անտառի հատապտուղներն ու բույսերը, պարզվում է, որ դրանց միջոցով հնարավոր է 120 կերակրատեսակ պատրաստել ու մատուցել հետաքրքրասեր զբոսաշրջիկներին:

Նկարներ 5, 6. Arm Bee Honey Farm հյուրատունը [9]

Գյուղացիները սկսում են նաև վերանորոգել տները՝ դրանք վերածելով հյուրատների, այս տարի օրինակ՝ 7 այդպիսի հյուրատուն է կառուցվում: Ռոբերտի խոսքով այժմ իրենց գյուղի մեծ մասն անհատ ձեռնարկատերեր են, այլ կերպ՝ սա ԱՁ-ների գյուղ է: Նրանք ինքնաբավ են և միմյանց օգնելով քայլ առ քայլ առաջ են գնում, շենացնում են համայնքը, մեծացնում գրավչությունը առանց կողմնակի աջակցության [10]:

Նկար 7. «Կալավանը» [11]

«Նոր Սեմյոնովկա» համայնքային զարգացման հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2019 թվականի փետրվարի 26-ին՝ համայքային զարգացմամբ (մասնավորապես՝ Գեղարքունիքի մարզի Սեմյոնովկա գյուղի) հետաքրքրված մի խումբ կամավորների կողմից: «Նոր Սեմյոնովկա» ՀԿ

առաջնային նպատակն է կանգնեցնել արտագաթը, օգնել համայնքին հաղթահարել մշակույթային, կրթական և սոցիալական անջրպետը և ապահովել համայնքի համաչափ զարգացում: 2020 թվականին ՀԿ-ի անդամների թիվը 26-ն է եղել:

Նկար 8. Ծաղկանց փոնը Սեմյոնովկայում [12]

Կազմակերպությունը ֆինանսավորվում է անդամավճարների և նվիրատվությունների միջոցով: «Նոր Սեմյոնովկա» ՀԿ-ի ստեղծման պահից մեկ տարվա ընթացքում մշակութային, կրթական, ժամանցային և ճանաչողական մի շարք միջոցառումներ է իրականացրել: Մասնավորապես՝ կազմակերպվել են մի շարք ազգային տոնակատարություններ (Ծաղկանց տոն, Բերքի տոն, Գրքի տոն, Տատիկի հեկյաթ, Կոմիտաս Վարդապետին նվիրված միջոցառում):

Գյուղի կանանց համար կազմակերպվել են Մարաշի ասեղնագործության դասընթացներ, գյուղի երեխաների համար՝ մի շարք մշակութային միջոցառումներ, ցուցահանդեսների այցելություններ (DigiTec Expo), գյուղաբնակների հետ կազմակերպվել են բազմաթիվ մոտիվացնող հանդիպումներ, դասընթացներ՝ ինչպես սեփական ռեսուրսներն օգտագործելով եկամուտներ ստանալ և չլքել գյուղը:

Օգտագործված գրականություն

1. Ոսկանյան Ա.Ձ., Զբոսաշրջությունը որպես տարածաշրջանային տնտեսության զարգացմանը նպաստող ոլորտ, 2013

Համացանցային կայքեր

2. https: //www.google.com/
3. http: //www.armbanks.am/
4. https: //www.google.com/
5. https: //www.google.com/

6. https: //www.google.com/
7. https: //www.booking.com/
8. https: //www.booking.com/
9. https: //www.google.com/
10. https: //www.booking.com/
11. https: //hetq.am/
12. https: //hetq.am/

SERGEY ASATURYAN. DEVELOPMENT OF AGRO-TOURISM IN THE REPUBLIC OF ARMENIA. *Countries that are geographically bordering, have interconnected historical development, close national features, and form regional packages almost without complexes. Such packages mainly cover the suburbs, small towns and suburban communities, which is the main guarantee for the development of rural tourism.*

СЕРГЕЙ АСАТУРЯН. РАЗВИТИЕ АГРОТУРИЗМА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ. *Страны, имеющие общие границы, а также взаимосвязанное историческое развитие, близкие национальные особенности, образуют региональные турпакеты. Такие турпакеты в основном охватывают пригороды, малые города и пригородные поселки, что является основным залогом развития сельского туризма.*

ԱՈՒԹՍՈՐՍԻՆԳԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աննա Հարությունյան

ԵՀՀ Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ինստիտուտ

Մուտքագրված է 12.04.22, հաստատված է տպագրության 23.06.22

Ամփոփագիր. *Համաշխարհային տնտեսությունը բարդ, անընդհատ փոփոխվող երևույթ է, որի վրա ազդում են հսկայական թվով գործոններ՝ սկսած աշխարհաքաղաքական գործընթացներից մինչև գիտական և տեխնոլոգիական առաջընթացի զարգացումը: Դեռ անցյալ դարասկզբին պարզ դարձավ, որ «ոչ մի ֆիրմա չի կարող ինքնաբավ լինել»: Հենց այդ ժամանակից էլ գործառույթների մի մասի փոխանցումը մասնագիտացված կազմակերպությունների կամ երկրների դարձել է ընկերությունների և երկրների արդյունավետ գործունեության անհրաժեշտ պայման, մրցունակությունը բարձրացնելու գործիք:*

Հիմնաբառեր: *IT աութսորսինգ, բիզնես գործընթացների աութսորսինգ*

Համաշխարհային տնտեսության ժամանակակից փուլում կարևորվում է միջազգային գործարարության ուսումնասիրումը: Չնայած գոյություն ունեցող ռեսուրսային մասնագիտացման, բազմաթիվ միջազգային կազմակերպություններ ավելացնում են ապրանքների և ծառայությունների արտահանումը, որը պահանջում է նոր գիտելիքներ համաշխարհային շուկաներ մուտք գործելու նոր ձևերի մասին: Միևնույն ժամանակ արտահանման և ներմուծման գործառույթների ընդլայման, ինչպես նաև կապիտալի հոսքի ավելացման պայմաններում անհրաժեշտ է ուսումնասիրել բազմաթիվ ծառայություններ, որոնք ապահովում և երաշխավորում են արտահանման մասշտաբների ընդլայնում:

Ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների ընդլայնումը հաճախ դժվար է բազմաթիվ պատճառներով, որոնք լայնորեն ուսումնասիրվել են: Այդ նպատակին հասնելու լավագույն ուղիներից մեկը կարող է լինել աութսորսինգի կիրառումը: Աութսորսինգը դիտարկվում է որպես արդյունավետ և մրցունակ կազմակերպությունների ստեղծման ժամանակակից մեթոդաբանություն: Աութսորսինգի նպատակը առաջատար տեխնոլոգիաների, արտաքին ռեսուրսների և հնարավորությունների օգտագործումն է՝ միջազգային շուկաներում առավելություններ ձեռք բերելու և մրցունակութնունը պահպանելու համար:

«Աութսորսինգ» տերմինը առաջացել է անգլերեն «outside resource using» հասկացությունից, ինչը թարգմանաբար նշանակում է արտաքին ռեսուրսների օգտագործում: Աութսորսինգը ենթադրում է երրորդ երկների կամ կազմակերպությունների ներգրավում կազմակերպության որոշակի խնդիրների լուծման նպատակով՝ օգտագործելով արտաքին ռեսուրսներ և

նոր տեխնոլոգիաներ: Մինչև XX դարի 90-ականների սկիզբը «աութսորսինգ» տերմինը գոյություն չուներ աշխարհի ոչ մի լեզվում: Ինչպես ռուս, այնպես էլ արտասահմանյան հեղինակների բազմաթիվ գիտական աշխատություններում և հրապարակումներում կան «աութսորսինգ» հասկացության բավականին մեծ թվով սահմանումներ: Ինչպես նշվեց վերևում, այս հասկացությունը և շատ գիտական հրապարակումների բոլոր սահմանումները մեկնաբանվում են անգլերեն «աութսորսինգ» բառի թարգմանությունից: Օ.Բորզունովան բնութագրում է աութսորսինգը որպես ընկերության գործունեությունը կազմակերպելու միջոց՝ կենտրոնանալով գործունեության առանցքային ոլորտի վրա և պայմանագրի հիման վրա ոչ հիմնական գործառույթները փոխանցելով արտաքին մասնագիտացված ընկերություններին [3]: Բ.Անիկինը առաջարկում է հաշվի առնել աութսորսինգը բազմաթիվ առումներով և տալիս է այս տերմինի 14 սահմանումներ: Թվարկենք դրանցից մի քանիսը [4].

- «Երրորդ կողմի ընկերությունների ծառայություններից օգտվելն իրենց առաջադրանքները կատարելու համար»,
- «Սեփական բիզնես գործընթացից հրաժարվելը և այլ կազմակերպություններից այս բիզնես գործընթացի իրականացման համար ծառայությունների գնումը»,
- «Արտաքին ռեսուրսների ներգրավում սեփական խնդիրները լուծելու համար (օրինակ՝ նախագծերի մշակում)» և այլն:

Գործնական աութսորսինգի ձևավորման սկիզբը կարելի է համարել XX դարի սկիզբը, երբ մեքենաշինության երկու խոշոր հսկաներ՝ Հենրի Ֆորդի և Ալֆրեդ Սլոունի մրցակցության հետևանքով պարզ դարձավ, որ նույնիսկ ամենահզոր և կայուն կազմակերպությունները չեն կարող ինքնուրույն զարգանալ և դիմակայել մրցակցությանը [1]: Այս դեպքում նպատակահարմար է արտադրության կամ բիզնեսի որոշ գործընթացներ փոծանցել մասնագիտացված կազմակերպություններին, ինչի հետևանքով կարելի է կրճատել և՛ աշխատաժամանակ և՛ ինքնարժեք: Մասնավորապես General Motors ընկերությունը ինչպես կազմակերպության ներսում, այնպես էլ դրսում, նեղ մասնագիտացված արտադրության կոոպերացման շնորհիվ մի քանի տարվա ընթացքում գրավեց մեքենաշինության գրեթե ամբողջ շուկան: Աութսորսինգի զարգացման հիմքը կազմակերպությունների կամ երկրների մրցակցության դիմակայումն է միջազգային շուկաներում: Գործնական աութսորսինգը համաշխարհային տնտեսության զարգացման արդյունքն է, որը թույլ է տալիս մուտք գործել նոր շուկաներ, դիմակայել մրցակցությանը՝ օգտագործելով արտաքին բոլոր հնարավորությունները:

Աութսորսինգի էությունը և առանձնահատկությունները լիովին ընկալելու և հասկանալու համար՝ անհրաժեշտ է ներկայացնել համաշխարհային շուկայում աութսորսինգի դրսևորման հիմնական ձևերը [2, 6]՝

- տեղեկատվական տեխնոլոգիաների աութսորսինգ՝ ITO – տեղեկու-

թյունների բազայի մշակում, համապատասխան տեղեկատվական ծրագրային ապահովում և խորհրդատվություն,

- բիզնես գործընթացների աութսորսինգ՝ BPO - այս դեպքում բիզնեսի կամ արտադրության որոշակի գործընթացներ փոխանցվում են արտաքին գործընկերներին՝ օգտագործելով նրանց բոլոր ռեսուրսները, նորագույն տեխնոլոգիաները:

Այս երկու ձևերի դրսևորումը կապված են որոշակի օբյեկտիվ գործոններից: IT-աութսորսինգի օգտագործման կարևորագույն պատճառներց մեկը հանդիսանում է տեղեկատվական ոլորտի մշտական դինամիկ զարգացումը, տեղեկատվության անընդհատ հավաքագրման և մշակման անհրաժեշտությունը: Բիզնես գործընթացների աութսորսիգի կիրառումը կապված է հիմնական ռեսուրսների բացակայության, մրցակցության դիմակայման, ռիսկի և պատասխանատվության հետ: Դրսևորման ձևերին զուգահեռ ընդունված է օգտագործել աութսորսինգի ամբողջական կամ մասնակի ձևերը: Ձևերի ընտրությունը կապված է կազմակերպության ռազմավարական նպատակների, պլանավորման և ցանկալի արդյունքների հետ: Ամբողջական աութսորսինգի օրինակ է աշխատողների մասնագիտական վերապատրաստումները, նոր մասնագետների կամ ղեկավարների ներգրավումը: Մասնակի աութսորսինգի օգտագործման որոշումը կայացվում է այն ժամանակ, երբ անհրաժեշտ է իրականացնել նոր արտադրատեսակների մշակում, ստորաբաժանումների ստեղծում, նորագույն տեխնոլոգիաների կիրառում:

Ֆիրմաների միջև երկարաժամկետ համաձայնագրերը հնարավորություն են տալիս զարգացնել արտադրությունը, ապահովել որակի ավելի բարձր չափանիշներ և մուտք գործել նոր շուկաներ: Համագործակցության համաձայնագրերի օգնությամբ ընկերությունները կարող են պաշտպանվել նոր մրցակիցների ի հայտ գալուց, իրականացնել նոր արտադրանքի թողարկում և իրացում: Ժամանակակց գործարար հարաբերություններում ակնհայտ է, որ կառավարման պատվիրակումը աութսորսինգի տեսքով դառնում է մրցակցային պայքարում հաջողության հասնելու գործոն:

Համաշխարհային շուկայում կառավարման գործառույթների փոխանցման գործընթացը խթանում է նոր տեխնոլոգիաների և որակյալ մասնագետների ներգրավմանը, հնարավորություն է տալիս արագ արձագանքել փոփոխություններին և կայացնել ճիշտ որոշումներ, ինչպես նաև երբեմն նվազեցնել արտադրական ծախսերը:

Մի շարք երկրների պրակտիկան ցույց է տալիս, որ միջազգային առևտրի ծավալները աութսորսինգի հիման վրա հասնում են խոշոր մասշտաբների՝ կրճատելով կազմակերպությունների համախառն ծախսերը: Այժմ այն հանդիսանում է հիմնական բիզնես ռազմավարություն ինչպես փոքր, այնպես էլ խոշոր ընկերությունների համար: Աութսորսինգը հնարավորություն է տալիս ապահովել կայուն արտահանում երկար ժամանակահատվածում:

Ընդ որում աութսորսինգի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս իրացնել միջազգային շուկայում ոչ միայն պատրաստի արտադրանքը, այլ նաև ծառայությունները: Այնպիսի երկրներում ինչպիսիք են Հնդկաստանը, Չինաստանը, Ֆիլիպինները և Մեքսիկան աութսորսինգը դարձել է զարգացման հիմնական գործոն [7]: Աութորսինգային ծառայությունների համաշխարհային շուկայի ծավալները համաձայն 2020թ.-ի տվյալների հատել են 1 տրիլիոն $-ի սահմանը, որից 60%-ը բաժին է ընկնում IT-աութսորսինգին: Այն աճում է տարեկան 5%-ով: Մոտավորապես մինչև 40%-ը բաժին է ընկնում բիզնես գործընթացների և գիտելիքների աութսորսինգին, որը աճում է տարեկան միջինում 10%-ով [7]: Ամերկյան Gartner հետազոտական ընկերության տվյալներով 2022թ.-ին աութսորսինգի համաշխարհային շուկան գնահատվում է 3, 4 տրիլիոն $: Հաշվի առնելով աութորսինգային ծառայությունների շուկայի ծավալների սրընթաց աճը՝ աութսորսինգի տնտեսական էության և նպատակի ուսումնասիրությունը, որպես միջազգային առևտրային ծառայության նորագույն ձև այսօր դարձել է շատ կարևոր ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Առաջադեմ զարգացող ընկերությունների օրնակի վրա կարելի է եզրահանգել, որ աշխատանքային հարաբերությունների այս տեսակը տարեցտարի գրավում է շուկայի էլ ավելի մեծ մասնաբաժին:

Օգտագործված գրականություն

1. Վ. Լ. Կիրակոսյան, Միջազգային բիզնես//Ուսումնական ձեռնարկ, Երևան 2012:
2. Алдерс Р. ИТ аутсорсинг. Практическое руководство. Пер. с англ. М.: Альпина Бизнес Букс, 2004. - 300 с.
3. Борзунова О. Перекладываем работу на чужие плечи: договор аутсорсинга / О. Борзунова // Кадровая служба и управление персоналом предприятия. - 2009. - № 11. - С.31- 33.
4. Аникин Б.А., Рудая И.Л. «Аутсорсинг и аутстаффинг : высокие технологии менеджмента» Учеб. пособие. М.: ИНФРА -М, 2006.
5. Данилова Е.В. Торговля услугами// Управление международным обменом товаров, услуг и капитала. М.: Издательский дом «Высшее образование и наука». Под ред. Э.Э. Батизи. 2004.
6. Календжян С.О. Аутсорсинг и делегирование полномочий в деятельности компаний. М. Дело, 2003.
7. Мониторинг, приминение и пазвитие аутсорсинга в России и за рубежом, 2020.
8. Business Process Outsourcing: Strategic Development of Internationally Traded Service Industries throughout Ireland. Report commissioned by Enterprise Ireland. Price Water House Coopers. 2002.

АННА АРУТЮНЯАН. ЗНАЧЕНИЕ И ОСОБЕННОСТИ АУТСОРСИНГА. *Мировая экономика - сложное, постоянно изменяющееся явление, подверженное влиянию огромного количества факторов, начиная от геополитических процессов и заканчивая развитием научно-технического прогресса. Еще в начале прошлого века стало ясно, что «ни одна фирма не может быть самодостаточной». Именно с того времени передача части функций специализированным организациям стало необходимым условием эффективной деятельности компании, инструментом повышения ее конкурентоспособности.*

ANNA HARUTYUNYAN. THE IMPORTANCE AND FEATURES OF OUTSOURCING. *The world economy is a complex, ever-changing phenomenon, which is influenced by a huge number of factors, from geopolitical processes to the development of scientific and technological progress. At the beginning of the last century it became clear that no firm can be self-sufficient. Since then, the transfer of some of the functions to specialized organizations or countries has become a necessary condition for the effective operation of companies and countries and tool to increase competitiveness.*

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Լուսյա Մկրտչյան

ԵՀՀ Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ինստիտուտ

Մուտքագրված է 04.06.22, հաստատված է տպագրության 23.06.22

Ամփոփագիր. *Ձեռնարկատիրության դերի աստիճանական բարձրացմանն ուղղված պետական շարունակական աջակցությունը կնպաստի սոցիալ-տնտեսական և տարածաշրջանային կայուն զարգացմանը: Սա պահանջում է տնտեսվարող սուբյեկտներին աջակցելու համար համապատասխան ենթակառուցվածքի ձևավորում և կառավարում, ֆինանսական ներդրումների հնարավորությունների ընդլայնում և օտարերկրյա ներդրումային տնտեսական գործունեության ընդլայնում..*

Հիմնաբառեր. *ձեռնարկատիրական գործունեություն, սկսնակ գործարար, տեղեկատվական տեխնոլոգիաներ, նորամուծական ներուժ, ներդրումային գործընթաց*

Պետության շարունակական աջակցությունը ձեռնարկատիրական գործունեության դերի աստիճանական բարձրացմանը կնպաստի երկրի սոցիալ-տնտեսական ն տարածաշրջանային կայուն զարգացմանը: Այդ նպատակով գործարար սուբյեկտների համար անհրաժեշտ է.

- աջակցության ենթակառուցվածքների ստեղծում և ամրապնդում.
- ֆինանսական ն ներդրումային հնարավորությունների ընդլայնում.
- նորարարական և արտաքին տնտեսական գործունեության ընդլայնում:

Ներկայումս աշխարհում գոյություն ունի ձեռնարկատիրության վերաբերյալ համընդհանուր սահմանում: Ամերիկյան գիտական և ուսումնական գրականության մեջ տրվել են ձեռնարկատիրության բազմաթիվ սահմանումներ, որոնք բնութագրում են ձեռնարկատիրությունը քաղաքական, տնտեսական, հոգեբանական, կառավարման ն այլ տեսակետերից:

Պրոֆ. Ռոբերտ Խիզրիչը ձեռնարկատիրությունը սահմանում է որպես ինչ-որ նորի ստեղծման գործընթաց, իսկ ձեռնարկատիրոջը՝ որպես մարդու, ով ծախսում է անհրաժեշտ ժամանակ և ուժեր, իր վրա է վերցնում ֆինանասական, հոգեբանական ն սոցիալական ռիսկ, և ձեռնարկատիրական գործունեությունից ստանում է շահույթ:

Ըստ անգլիացի տնտեսագետ Ալան Հոսկինգի՝ ձեռնարկատեր է այն անձը, ով նախաձեռնում է բիզնեսը, զբաղվում դրա կառավարմամբ, ամբողջ պատասխանատվությունը կրում է իր վրա և ինքնուրույն կայացնում որոշումներ: Նրա փոխհատուցումը հանդիսանում է ձեռնարկատիրությունից ստացված եկամուտը և բավարարվածության զգացումը: Սակայն կրում է սնանկության դեքում ամբողջ կորուստի ռիսկը:

Այսպիսով ձեռնարկատիրությունը հենվում է ինքնուրույն նախաձեռնության,

պատասխանատվության, ն ձեռնարկատիրական նոր գաղափարների, ինչպես նան նորարարության վրա:

Որպես ձեռնարկության հիմնական սոբյեկտ, ձեռնարկատերը համագործակցում է սպառողի, պետության ն վարձու աշխատողի հետ: Ասվածից հետևում է, որ ձեռնարկատերը հիմնական սուբյեկտն է, բայց ոչ միակը, հետնաբար, նա իր գործունեությունը կազմակերպելիս պետք է հաշվի սանի սպառողի տրամադրությունը, ցանկությունը, հետաքրքրությունները, սպասելիքները:

Պետության դերը, որպես ձեռնարկատիրության սուբյեկտ, կարող է լինել տարբեր՝ կախված պետության առջև դրված նպատակներից: Մասնավորապես, պետությունը կարող է հանդիսանալ.

Ձեռնարկատիրության արգելակ, երբ ստեղծվում է ծայրահեղ անբարենպաստ դրություն ձեռնարկատիրության համար:

Կողմնակի դիտորդ, երբ պետությունը չի խանգարում, բայց և չի օժանդակում ձեռնարկատիրության զարգացմանը:

Ձեռնարկատիրական գործունեության արագացուցիչ, երբ պետությունը մշտապես ակտիվ գործունեություն է ծավալում ձեռնարկատիրության զարգացման համար:

ՀՀ-ում ձեռնարկատիրությամբ զբաղվելու ցանկություն և կարողություն ունեցող յուրաքանչյուր անձ պետք է իմանա, թե որ բնագավառում և ինչ պայմաններում կարող է ծավալել իր գործունեությունը: ՀՀ-ում գործող «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» օրենքի համաձայն ձեռնարկատիրությամբ արգելվում է զբաղվել զենքի, զինամթերքի, թմրանյութերի արտագրության, հեղինակային իրավունքի շնորհմամբ, պետական շքանշանների, կնիքների պատրաստման, դրա մահատման, ոսկու ստեղծման, պետական արխիվների ն արխիվային ծառայությունների կազմակերպման և այլ ոլորտներում [1]:

Ձեռնարկության պետական աջակցության հիմնական ուղղություններն են.

- իրավական բարենպաստ դաշտի ձևավորումը
- ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը
- աջակցող ենթակառույցների ստեղծմանը և զարգացմանը նպաստելը
- տեղեկատվական և խորհրդատվական օգնությունը
- արտաքին տնտեսական գործունեության խթանումը
- նորարարական գործունեության և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությունը
- բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը
- կադրերի պատրաստումը և վերապատրաստումը

Ձեռնարկության պետական աջակցությունը իրականացնում և մշակում է ՀՀ կառավարությունը սահմանված կարգով: Ծրագրի իրականացման

ֆինանսավորումը նշվում է պետական բյուջեում՝ առանձին սաղով:

Ծրագիրը մշակվում է սույն օրենքով սահմանված հիմնական ուղղություններին համապատասխան՝ ելնելով տվյալ ժամանակահատվածում զարգացման գերակայություններից՝ ներառյալ այդ ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծումը [2]:

ՀՀ-ում յուրաքանչյուր տարի մշակվում են ձեռնարկատիրական գործունեության աջակցության ծրագրեր: Այսպես փոքր և միջին ձեռնարկատիրության պատմությունը ՀՀ-ում առանձնանում է յուրահատուկ զարգացումներով, որոնք նշանակալի ազդեցությունն են թողնում երկրի տնտեսության գրեթե բոլոր ոլորտների վրա: Կարևորելով դրա դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում:

Որպես ՓՄՁ-ին ուղղված ՀՀ կառավարության կողմից իրականացող հետևողական տնտեսական քաղաքականության տրամաբանական արդյունք՝ կարձանագրվի ՓՄՁ-ն բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ՝ նշանակալի դեր խաղալով երկրի ՀՆԱ-ի, հարկաբյուջետային ցուցանիշների ձևավորման գործում:

Ձեռնարկատիրության զարգացման միտումների հետ մեկտեղ ՓՄՁ-ի հետազոտությունների և վարչական մոնիտորինգի արդյունքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնք պայմանավորված են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով.

Սկսնակ գործարանների համար ֆինանասական (վարկային) միջոցների անմատչելիություն՝ պայմանավորված ֆինանսական (վարկային) ռեսուրսների բացակայությամբ, ինչը լուրջ խնդիր է հատկապես արտադրության ոլորտում գործող ՓՄՁ սուբյեկտների համար,

Սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների և ֆինանսական միջոցների բացակայություն:

Գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններ:

Տեղեկատվական հոսքերի բացակայություն, դրանց ընկալման, մշակման ու փոխանակման խնդիրներ, որոնց հետ անմիջականորեն կապված են ՓՄՁ սուբյեկտների կառավարման հարցերը:

Շուկայական և մասնավորապես արտարժութային ռիսկերից ապահովագրման և դրանք կառավարելու հետ կապված բարդություններ, ինչը հատկապես կապիտալի ֆինանսավորման ծրագրեր, սկսնակ գործարանների ձեռնարկությանն աջակցություն, գործարար սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղմանն աջակցություն և այլն: Այսպիսով, ձեռնարկատիրության պետական աջակ-

ցությունն անհրաժեշտ է ձեռնարկատիրական գործունեության արդյունավետ իրականացման, շահույթի մեծացման, նորամուծությունների իրականացման և, վերջապես, տնտեսության գարգացման համար:

Գործարար սուբյեկտների աջակցության համապատասխան խնդիրներ է ստեղծում արտադրության ոլորտում գործող ՓՄՁ սուբյեկտների համար:

Տեղեկատվական տեխնոլոգիաների անմատչելիություն և դրանց կիրառման հնարավորությունների, ոչ բավարար մասնագիտական հմտությունների և վարձի առկայություն:

Առավել կարևոր է ուշադրություն դարձնել սկսնակ գործարարի ուղղակի վարկավորման և ֆինանսավորման պետական աջակցության ծրագրերի վրա, որը կիրականացվի, ելնելով հետևյալ առաջնահերթություններից՝

ա/ նոր արտադրության կազմակերպում կամ արտադրության ընդլայնում,

բ/ ներմուծմանը փոխարինող, արտահանվող կամ դրա ներուժն ունեցող արտադրություն,

գ/ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ կամ նորարարությունների ներդրմամբ արտադրություն,

դ/ լրացուցիչ աշխատատեղերի ստեղծում,

ե/ հումքի և ռեսուրսներ ապահովվածության անհրաժեշտություն:

Կարևոր է հատկապես ընդգծել ներդրումների դերը: Ըստ Լ.Գիտմանի և Մ. Ջոնկի «Ներդրում» եզրույթը նշանակում է ձեռք բերել արժեթղթեր և պարտատոմսեր՝ որոշ ֆինանսական արդյունքներ ստանալու նպատակով [3]. Այսինքն ներդրումները ապահովում են որոշակի մեխանիզմ՝ երկրի տնտեսական գրգացման ն ֆինանսավորման համար, և այն գործիք է, որով կարելի է ներդնել գումար՝ հույս ունենալով պահպանել կամ ավելացնել նրա արժեքը կամ ապահովել եկամուտի դրական մեծություն:

Հաշվի առնելով վերը նշված հիմնախնդիրները՝ ձեռնարկատիրության պետական աջակցությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝ ՓՄՁ սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում, ֆինանսական և ներդրումային աջակցություն, վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրեր, ուղղակի վարկավորման և կապիտալի ֆինանսավորման ծրագրեր, սկսնակ գործարանների ձեռնարկությանն աջակցություն, գործարար սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջ մղմանն աջակցություն և այլն:

Այսպիսով ձեռնարկատիրության պետական աջակցությունն անհրաժեշտ է ձեռնարկատիրական գործունեության արդյունավետ իրականացման, շահույթի մեծացման, նորամուծությունների իրականացման և վերջապես, տնտեսության զարգացման համար:

Օգտագործված գրականություն

1. «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական ընկերության մասին ՀՀ օրենքը» ՀՀ ՓՍՁ պետական աջակցության ծրագիր 2010թ
2. «ՓՄՁ պետական աջակցության ծրագիր 2010թ.»
3. Ս. Մելքումյան, Վ Հակոբյան, Ձեռնարկատիրությունը ՀՀ-ում, Երևան, 2008., էջ 6

LUSYA MKRTCHYAN. THE ISSUES OF GOVERNMENT SUPPORT TO ENTERPRISE: PROSPECTS OF DEVELOPMENT IN RA. *Continued state support for the gradual increase in the role of entrepreneurial activity will contribute to socio-economic and regional sustainable development. This requires: Formation and management of an appropriate infrastructure to support business entities, Expansion of financial investment opportunities for business entities, Expansion of foreign investment economic activity of business entities.*

ЛЮСЯ МКРТЧЯН. ВОПРОСЫ ГОСУДАРСТВЕННОЙ ПОДДЕРЖКИ ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА: ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ В РА*. Дальнейшая государственная поддержка постепенного повышения роли предпринимательской деятельности будет способствовать социально-экономическому и региональному устойчивому развитию. Это требует. Формирование и управление соответствующей инфраструктурой для поддержки субъектов предпринимательства, Расширение возможностей финансовых вложений субъектов хозяйствования, Расширение внешнеэкономической деятельности субъектов предпринимательства.*

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հայկ Պետրոսյան

ԵՀՀ «Ռուլին» Ակադեմիա

Մուտքագրված է 05.05.22, հաստատված է տպագրության 25.06.22

Ամփոփագիր. *Ժամանակակից կրթության տեսության ամենաարդիական հարցերից է ուսուցման ռազմավարությունները, հատկապես դրանց դիտարկումը կոմպետենտային մոտեցման տեսանկյունից: Հոդվածում ներկայացված փորձարարական ուսուցման ռազմավարությունների էությունը, բնութագրերը, նախագծման և իրականացման գործընթացը:*

Հիմնաբառեր՝ *ուսուցման ռազմավարություններ, փորձարարական ուսուցում, անձնական փորձ, ուսուցման ցիկլ, ուսումնառողների տիպեր:*

Փորձի վրա ուսուցման (experiential learning) գաղափարը հիմնված է Դեյվիդ Կոլբի (David A. Kolb) առաջատար մոդելի վրա, որն առաջին անգամ ձևակերպվեց 20-րդ դարի 80-ական թվականներին: Կոլբի փորձարարական ուսուցման մոդելը (1984) հետազոտության համար ապահովում է գործունեության լայն շրջանակ ընտրելու հիմք: Կոլբը հիմնվելով Դյուիի, Լևինի և Պյաժեի հետազոտությունների վրա, պնդեց, որ ուսուցումը ներառում է ցիկլ՝ բաղկացած 4 գործընթացներից, որոնցից յուրաքանչյուրը պետք է առկա լինի, որպեսզի գործընթացը լինի առավել ամբողջական: [2]

Դեյվիդ Կոլբի և նրա Քասե Վեսթերն Ռեսերվի համալսարանի (Case Western Reserve) գործընկերոջ մոդելի արդյունավետության հետազոտական հավաստումն է ստացել մեծահասակների կրթության ոլորտում: Հարց է ծագում, թե որը կարելի է համարել մեծահասակների կրթություն, քանի որ մեր պարագայում, սովորաբար, այս տեսակի կրթություն է համարվում պրակտիկ աշխատողների որակավորումների բարձրացումը: Հարցի պատասխանը կարելի է ձևակերպվել հաշվի առնելով UNESCO-ի սահմանումը: Այդ սահմանումը հնարավորություն է ընձեռում ենթադրել, որ փորձի ուսուցման մոդելը կարող է հաջողությամբ օգտագործվել մանկավարժական կրթության բոլոր մակարդակներում:

Ուսուցման ցիկլը սկսվում է որոշակի տեսակի փորձի մեջ ուսումնառողի անձնական ներգրավվածությունից (նկ. 1): Ուսումնառողն արտացոլում է այս փորձը տարբեր տեսանկյուններից, փորձելով գտնել դրա իմաստը: Հետադարձ կապի արդյունքներից ելնելով, ուսումնառողը որոշ տրամաբանական եզ-

րակացություններ է անում (վերացական հայեցակարգավորում) և իր սեփական եզրակացություններին կարող է ավելացնել ուրիշների տեսական մոտեցումները: [1]

Այս եզրակացություններն ու կառուցվածքներն ուղղորդում են որոշումներն ու գործողությունները (ակտիվ փորձեր), որոնք հան¬գեց¬նում են նոր կոնկրետ փորձի:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարդիկ հստակ նախապատվություն են տալիս ցիկլի փուլերից որևէ մեկին համապատասխան վարքին. Պրակտիկ գործողություններին կամ տեսականացմանը (ընդորում, դա վերաբերվում է ինչպես ուսումնառողներին, այնպես էլ դասավանդողներին):



Նկ. 1. Ուսուցման ցիկլը

Կոլբի-ի գաղափարները զարգացնելով անգլիացի հոգեբաններ Պ. Հոնեյը և Ա. Մամֆորդը նկարագրել են ուսուցման տարբեր ոճեր, ինչպես նաև մշակել են ուսուցման նախընտրելի ոճի բացահայտման թեստ (Honey Mumford Preferred Learning Style Test): Որպես կանոն, փորձառական ուսուցման ընդհանուր ցիկլում մարդիկ սկսում են սովորել իրենց նախընտրած ոճով: [3] Հետազոտողներն առանձնացրել են ուսման հետևյալ չորս ոճերը՝ «ակտիվիստներ», «մտածողներ», «տեսաբաններ» և «պրագմատիկներ» (նկ. 2):



Նկ. 2. Ուսումնառողների տիպերը Դ. Կոբլի ցիկլին համապատասխան

Նրանցից յուրաքանչյուրին բնորոշ է իր ուժեղ և թույլ կողմերը, վարքի իր առանձնահատկությունները, ուսուցման գործընթացին և մյուս մասնակիցների ներկայացվող պահանջները: Մարդիկ, ովքեր նախընտրում են այս կամ այն ոճը «մաքուր» ձևով հանդիպում են բավականին հազվադեպ, որպես կանոն, յուրաքանչյուր ուսումնառողի մոտ շատ թե քիչ առկա են բոլոր ոճերի տարրեր: Բայց գերակայող միտումները որոշում են ուսուցման առանձնահատկությունները և անձի արձագանքն ուսուցման որոշակի մեթոդներին:

Ուսուցման պլանավորման ժամանակ պետք է հիշել, որ խմբում հաստատ կլինեն մարդիկ, ովքեր ձգտում են ուսուցման տարբեր ոճերի: Ուստի, անհրաժեշտ է պարապմունքներն այնպես կազմակերպել, որպեսզի մասնակիցների մոտ հետաքրքրություն առաջացնել ամբողջական ուսուցման ցիկլը կազմող բոլոր չորս փուլերով անցնելու համար, պրակտիկ ուսուցումից մինչև պրակտիկա:

Դ. Կոլբի մոդելի սխեման կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից: Օրինակ՝ փորձարարական ուսումնական ցիկլում գործունեության տարբեր տեսակներ տեղավորելու համար պետք է հաշվի առնել հենց ուսումնական առարկաների տարբերությունները: Կոլբը գտնում է, որ հումանիտար և հասարակագիտական առարկաները հիմնված են կոնկրետ փորձի և ռեֆլեքսիվ դիտարկման վրա, մինչդեռ բնական գիտություններն ու մաթեմատիկան հիմնված են ռեֆլեքսիվ դիտարկման և վերացական հայեցակարգման վրա: Գիտությանն առնչվող մասնագիտություններն ընկած են վերացական հայեցակարգման և ակտիվ փորձարարության, իսկ հասարակագիտականը՝ ակտիվ փորձարարության և կոնկրետ փորձի ոլորտներում: Այս բացատրությունը հաստատել է Բիգլանը (1973), երբ նա խնդրեց ֆակուլտետի աշխատակիցներին խմբավորել տարբեր առարկաներ նմանությունների հիմքի վրա: Բիգլանը հայտնաբերեց երկու չափումներ՝ «անորոշկայուն» և «մաքուր-կիրառական», որոնք համապատասխանում են Կոլբի չորս չափումներին՝ կոնկրետվերացական և ռեֆլեքսիվակտիվ:

Այն դեպքում, երբ դասընթացն ուղղված է ուսուցման ցիկլի երկու բևեռին, ապա ընտրությունը կարող է որոշել դասավանդողը: Օրինակ, վերացական մաթեմատիկայում դժվար է ընտրել օրինակներ, որոնք ներկայացնում են կոնկրետ փորձ և ակտիվ փորձարարություն: Այնտեղ, որտեղ ուժեղ է հետադարձ կապի ուժը, դժվար է գտնել փորձարարությանն ուղղված առաջադրանք:

Կոլբի մոդելը հենց հիմք է հանդիսացել փորձարարական ուսուցման ռազմավարությունների մշակման համար:

Ռազմավարության փոփոխությունն արտահայտված է մոդելներում. «ուսուցում փորձի հիման վրա աշխատավայրում» (Boud and Walker, 1991); «ուսուցում կյանքի փորձի և զարգացման արդյունքների միջև կապերի կիրառմամբ» (Merriam, Yang, 1996); «կառուցվածքային-կազմակերպական ուսուցում փորձի հիման վրա» (Dennison and Kirk, 1990), սովորելով ուսուցում գործընկերների

փորձի հիման վրա:

Պրակտիկայում ուսուցման ռազմավարությունները (on-job instruction) մշակված է Կոլբի մոդելի հիմքի վրա: Շվեդական դիդակտ Կլաս Մելլանդերը (Klas Mellander) ավելի լիարժեք զարգացրեց Կոլբի գաղափարները և ներկայացրեց ուսուցման ցիկլը հետևյալ կերպ.

- *Մոտիվացիա*. հոգեբանական պատրաստվածություն և ընկալունակություն:
- *Տեղեկատվություն*. փաստերն ու տվյալները վերածվում են տեղեկատվության:
- *Մշակում*. տեղեկույթը վերածվում է փորձի և հասկացման:
- *Եզրակացություններ*. «խորաթափանցության» պահը, երբ փորձը և հասկացումը վերածվում են գիտելիքի:
- *Կիրառում*. գիտելիքները վերափոխվում են հմտությունների և մոտեցումների:
- *Հետադարձ կապ*. հետագա մտորումներ և կատարելագործում: [4]

Մելլանդերի մոդելում գիտակցումը կարող է տեղի ունենալ առանց բառային արտահայտության, թաքնված գիտելիքներով, որոնք ձեռք են բերվել, բայց որոնք ունեն լոկ սահմանափակ կիրառություն, եթե այն հնարավոր չէ փոխանցել: Մելլանդերի մոդելում ուսումը պետք է բաղկացած լինի հետևյալ փուլերից.

- ***Իմանալ (ինչ).*** Դուք գիտեք, որ դրա մասին գիտեիք նախկինում,
- ***իմանալ (ինչպես).*** ինչպես եք դա իմացել,
- ***իմանալ (ինչու).*** Դուք հասկանում եք, որ դա կարևոր է, ինչու պետք է անել այդ եղանակով,
- ***հետաքրքրվել (ինչու).*** Դուք հետաքրքրվում եք, թե ինչու պետք է անեք այս կամ այն գործողությունները:

Հասակակիցների աջակցությամբ ուսուցումն առավել հաճախ օգտագործվում է ղեկավար կադրերի որակավորման բարձրացման ծրագրերում: ‹‹Առաջնորդություն գործընկերների աջակցության վրա հիմնված›› (PAL), տարբեր կազմակերպությունների ղեկավարների ուսուցման ծրագրեր են: Հետազոտողների՝ առաջնորդության հաջողության եզրակացություններից մեկն այն է, որ գոյություն չունի հաջողակ առաջնորդ դառնալու միակ հավաստի եղանակ, սակայն բոլոր հաջողակ առաջնորդների ընդհանրությունն այն է, որ նրանք իրենց ամենօրյա գործունեությունն ու վարքը ստորադասում են գլոբալ հայեցակարգի և երկարաժամկետ նպատակների համատեքստին: Այսինքն, առօրյային գործունեությունը երկարաժամկետ ռազմավարական շահերին ենթարկելու, դրանք կազմակերպության հայեցակարգերին համապատասխանեցնելու և ադմինիստրատորն արդյունավետ գործող ղեկավարի վերածելու ընդունակությունը: Հետազոտողները խոսում են առաջնորդի այնպիսի ներուժի առկայության մասին, ինչպիսին է «մտածել ավելի բարձր

կարգի հասկացություններով»:

Ուսուցման ռազմավարությունը կայանում է նրանում, որ ուսումնառող ղեկավարներն ուսումնասիրում են գործընկերների փորձը դիտումների, հարցումների, հարցազրույցների միջոցով: PAL-ի հիմնական առանձնահատկությունն այն է, որ ղեկավարները կամ տնօրեններն իրենք են օգնում միմյանց դառնալ ավելի որակյալ առաջնորդներ:

Ուսուցման գործընթացում դրված հիմնական նպատակները ձևակերպվում են հետևյալ կերպ.

- վերլուծել Ձեր և Ձեր գործընկերների որպես առաջնորդների վարքը,
- հասնել ավելի մեծ մասշտաբի մտածողության,
- սովորել ապավինել գործընկերների փորձին և ընտրել ինչն առավել կարևոր է Ձեզ համար:

Ուսուցման ընթացքում 12-18 հոգանոց խմբում անց է կացվում վեց ընդհանուր հանդիպում (տևում է մեկ ամբողջ աշխատանքային օր) մինչև 6 շաբաթ ընդմիջումով: Անկետավորումն իրականացվում է այնպիսի հարցերի ընտրությամբ, որոնք հարցվողին չեն մղի նախապես ծրագրավորված որևէ մտահանգման կամ եզրակացության: Նպատակը գործընկերների գործողությունների էությունը պարզելն է ու մեկնաբանելը: Հավաքված տեղեկույթը վերլուծվում և մեկնաբանվում է առաջնորդության հայեցակարգի համատեքստում: Հավաքված տվյալների հիման վրա կառուցվում է հետագա գործունեության սեփական մոդելը: Այն քննարկվում է դասընթացի մասնակիցների ընդհանուր ժողովում:

PAL-ի ելակետն այն դրույթն է, որ «գոյություն չունի ղեկավարման միակ ճիշտ եղանակ»: Ուսունառողների ուշադրությունը սևեռվում է սեփական վարքին քննադատական մոտեցման վրա: Դիտարկումն ու փոխադարձ հարցումները թույլ են տալիս ականատես լինել գործընկերների գործունեությանը, տեսնել նրանց ներսուզումն ամենօրյա աշխատանքում: Ուսուցման այսպիսի ռազմավարությունը խթանում է ավելի լայն մտածելակերպի զարգացմանը՝ թույլ տալով տեսնել սեփական մասնագիտական գործունեությունը, հայելային արտացոլված գործընկերների գործունեության մեջ: Ռազմավարությունը հիմնված է երեք մեթոդի վրա՝ դիտում, հարցազրույց և հայեցակարգի իմաստավորում: Ծրագրի ընթացքում ղեկավարները տիրապետում են իրենց և գործընկերների վերաբերյալ տեղեկատվության հավաքման, վերլուծության և համադրության հմտություններին:

Դիտման և հարցազրույցի կիրառումը որպես հետազոտության ուսուցման մեթոդիկա սեփական և գործընկերների վարքի վերլուծության ժամանակ թույլ է տալիս վերացարկվել կոնկրետ հանգամանքներից: PAL-ի համար բնորոշ է սովորական պայմաններում աշխատող մասնագետի դիտարկումը, որը հնարավորություն է տալիս ավելի լավ պատկերացում թե ինչին պետք է ձգտել:

Ուսուցման «Կյանքի հմտություններ» ռազմավարությունները դիտվում են

որպես համակարգված մանկավարժական գործընթաց, որն օգնում է ձեռք բերել նոր տեղեկատվություն և հմտություններ, որոնք կարող են կիրառել կյանքի անմիջական իրավիճակներում, այդ թվում՝ աշխատանքային իրավիճակներում: Ուսուցումը Ձեր տեսակետները վերանայելու հնարավորություն են ընձեռում:

Ուսուցումը հնարավորություն է տալիս ամրակայել մասնագիտացված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հմտությունները, օրինակ՝ խորհրդատվություն, օգնության ցուցաբերելու համակարգի փոփոխություն, մասնագիտական աշխատանք կատարելը, կյանքի տարբեր իրավիճակներում ինքնաօգնություն:

Արդյունավետ ուսուցումը հնարավորություն է տալիս ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կիրառել առօրյա կյանքում և աշխատանքում: Առավել զարգացում է ստացել առողջապահության ոլորտում, սոցիալական աշխատանքի ոլորտի մասնագետների պատրաստման գործընթացում, սոցիալական մանկավարժների և դաստիարակների, գործնական հոգեբանների ծրագրերում:

Դասավանդողի առանցքային դերը հրահանգիչն է, որն ունակ է ստանձնել խորհրդատուի դիրքորոշում:

Հրահանգիչն ունակ է համախմբել խումբը և ստեղծել ուսումնական բարենպաստ միջավայր:

Հրահանգիչը հասկանում է մեծահասակների ուսուցման նպատակներն ու նախասիրությունները և ի վիճակի է ստեղծել նրանց պահանջմունքները բավարարող դասընթաց:

Հրահանգիչը հրաշալի տիրապետում է ակտիվ ուսուցման տարբեր մեթոդների, որոնք նպաստում են գործնական հմտությունների ձեռքբերմանը:

Հրահանգիչն ունակ է դասընթացներ մշակել և պլանավորել դրանց ուսումնառողների պահանջմունքներին և ուսուցման պայմաններին համապատասխան:

Հրահանգիչը գիտելիքները փոխանցում է տարբեր մեթոդիկաների միջոցով, ներառյալ կոնկրետ պլանների զարգացման ուղղությամբ աշխատանքը և կյանքի ռազմավարությունները (կոնկրետ իրավիճակներում գործողությունների ընտրության ռազմավարություններ):

Հրահանգչական ուսուցման արդյունքը «մշակված կարողությունների վերափոխումն է գործնական գործողությունների»: Ուսուցումը սովորեցնում է կյանքի իրավիճակներում և աշխատավայրում դնել խնդիրներ և գտնել դրանց լուծման ուղիներ: Ուսուցման գործընթացում ուսումնառողներն իրենք են նախապատրաստվում հրահանգչական և խորհրդատվական գործունեության, այդ թվում՝ իրենց համար:

Փորձի հիմքով ուսուցման ռազմավարությունների մեկ այլ տարբերակ է «կատարելով սովորել» ռազմավարությունները (Action Learning):

«Կատարելով սովորել» ռազմավարությունները հիմնված են Ռ. Ռեվա-

նսի ուսման փիլիսոփայության վրա, որն արտածել է դինամիկ շուկայի պայմաններում ֆիրմաների կամ կազմակերպության գոյատևելու բանաձևը.

ՈՒսուցման արագություն = Փոփոխության արագություն = Գոյատևում:

Ուսուցման արագությունը պետք է լինի ոչ պակաս, քան փոփոխության արագությունը, ուսման արդյունքը դիտարկվում է որպես պրոդուկտ, որն ունի գին: Ուսուցումը հիմնվում է խնդիրների լուծման փորձի աճի վրա: Ուսուցման ընթացքում կարևոր է նրա «մշակութային տեսանկյունը»: Այս ռազմավարություններում ուսուցման էությունը կայանում է հարցերի դրվածքում և դրանց պատասխանները որոնելու կարողություններում, հարցի պատասխանն իրական գործողություն է:

Այսպիսով, ուսուցման հիմնական նպատակը մասնագետների վարքի փոփոխություններն են, նրանց փոփոխության կարողության զարգացումը: Գործողությունների ուսուցման առանձնահատկությունն այն է, որ լուծվում են ոչ միայն «սեփական», այլև «ուրիշների» խնդիրները, այսինքն՝ ուսուցում մասնակցության միջոցով, մասնակիցները սովորում են ուրիշների փորձից:

Օգտագործված գրականություն

1. Adelsberge H. Справочник по по информационным технологиям в образовании и тренингах, Springer -Verlag Berlin, 2003.
2. Simulation-Based Interprofessional Education Guided by Kolb's Experiential Learning Theory, Clinical Simulation in Nursing, Volume 10, Issue 5, May 2014, Pages e241-e247
3. Модель Колба и стили обучения... https: //chevalry.livejournal.com/67167.html
4. Honey Mumford Preferred Learning Style Test, https: //studybayhelp.co.uk/blog/honey-and-mumford-learning-style/
5. The Power of Learning: Fostering Employee Growth: https: //www.goodreads.com/author/show/1928570.Klas_Mellander

ГАЙК ПЕТРОСЯН. *СТРАТЕГИИ ОБУЧЕНИЯ В СФЕРЕ ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ. Одним из наиболее актуальных вопросов теории современного образования являются стратегии обучения, особенно рассмотрения их с точки зрения компетентностного подхода. В статье представлен сущность экспериментальных стратегий обучения, характеристика, процесс проектирования и реализации.*

HAYK PETROSYAN*. TRAINING STRATEGIES IN VOCATIONAL EDUCATION.* ***One of the most pressing issues in the theory of modern education is learning strategies; especially considering them from the point of view of a competency-based approach.The article presents the essence of experimental learning strategies, characteristics, design and implementation process.***

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Կարինե Պապիկյան

Երևանի Հայբուսակ համալսարան

Մուտքագրված է 04.05.22, հաստատված է տպագրության 25.06.22

Ամփոփագիր. *Ներկայացված են նախագծային գործունեության տեսական հիմնադրույթներ, որոնք կարող են օգնել տարրական դասարանների ուսուցչին՝ հենց այդ տարիքից նախագծային ուսուցում իրականացնել: Այն հնարավորություն կտա կրտսեր դպրոցականներին ազատ ու ինքնուրույն ստեղծագործել, որոնողական աշխատանք կատարել, ձեռք բերած գիտելիքները կիրառել պրակտիկայում:*

Հիմնաբառեր. *Նախագիծ, արդիականացում, հիմնախնդիր, ինքնուրույնություն, որոնողական աշխատանք:*

Ժամանակակից հանրակրթական դպրոցում նախագծային գործունեությունը սովորողների գործունեության արդյունավետ տեսակներից է: Ուսումնական նախագծերը նպաստավոր պայմաններ են ստեղծում սեփական հնարավորությունները ճանաչելու և զարգացնելու համար, դրանք ձեռք բերած գիտական գիտելիքները վերածում են գործողությունների:

Նախագծային ուսուցումը /ՆՈՒ/ սովորողի ինքնուրույն, որոնողական աշխատանքի կարևոր բաղադրիչ է եղել բոլոր ժամանակներում, սակայն ներկայումս դրան ավելի հստակ ու կոնկրետ պահանջներ են ներկայացվում:

ՀՀ հանրակրթական դպրոցներում նախագծային ուսուցումն առավել կարևորվեց և գործողության մեջ դրվեց 2021 թվականին ՀՀ-ի կառավարության հաստատած «Հանրակրթության պետական նոր չափորոշչով», ինչպես նաև լրամշակված առարկայական ծրագրերով:

«Հանրակրթության պետական նոր չափորոշիչ»-ում հանրակրթության տարրական ծրագրի շրջանավարտի ակնկալվող 35 վերջնարդյունքների թվում են նաև այնպիսի վերջնարդյունքներ, որոնք հիմնարար են ՆՈՒ համար՝

դրսևորել տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանալ անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին.

- հասկանալ դրված խնդիրը, մշակել և կատարել քայլեր այն լուծելու համար.
- համատեղ կամ ինքնուրույն իրականացնել պարզ հետազոտական աշխատանքներ, անել եզրակացություններ՝ հիմնվելով ստացված տվյալների և դիտարկումների վրա, փաստերն օգտագործի իր գաղափարները հիմնավորելու համար և ներկայացնի ստացված արդյունքը պարզ գիտական բառապաշարով [1]:

Սրանք պահանջներ են՝ վերջնարդյունքների տեսքով: Այդ իսկ պատճառով սովորողների համար նախագծային գործունեություն կազմակերպելու կա-

րողությունը ժամանակակից ուսուցչի կարևոր գործառույթն է: Որոշ ուսուցիչներից դեռևս օգտագործում են նախագծերի մեթոդի միայն մասեր՝ առանց բավարար տեղեկատվություն ունենալու մեթոդի /տեխնոլոգիայի/ կառուցվածքի, նախագծերի աշխատանքի ձևերի, նախագծային առաջադրանքների տեսակների, նախագծի բովանդակության և, իհարկե, դրա կազմակերպման առանձնահատկությունների մասին: Եթե ուսուցիչն ունի բոլոր անհրաժեշտ տեղեկությունները կրտսեր դպրոցականների նախագծային գործունեության վերաբերյալ, ապա նա կկարողանա իր աշխատանքում արդյունավետ օգտագործել ՆՈՒ-ը:

ՀՊՉ-ում հստակեցվում է նաև, որ «հանրակրթական դպրոցի ուսումնական պլանը ներառում է երկու բաղադրիչ՝

1) պետական բաղադրիչ.

2) դպրոցական բաղադրիչ, որից խմբակներին և նախագծերին հատկացվող բաղադրիչը՝ սովորողի ընտրությամբ:

Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է ուսումնական հաստատության կողմից սահմանված առարկաներին, պետական բաղադրիչով սահմանված առարկաներին և խմբակներին, ուսումնական նախագծերին՝ սովորողների ընտրությամբ:

Փաստաթղթի հաջորդ բաժիններում սահմանվում են նաև հանրակրթական ծրագրի ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի և ուսումնական գործունեության կազմակերպման տեսակների (խմբակ, ուսումնական նախագիծ) իրականացման համար նախատեսված նորմատիվային ծավալները (դասաժամ)» [1]:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ նախագծային աշխատանքները կարելի է իրականացնել թե՛ պետական բաղադրիչի /ուսումնական առարկաների/, թե՛ դպրոցական բաղադրիչի /խմբակների/ տիրույթում: Իսկ այստեղ շատ կարևոր է ուսուցչի արհեստավարժությունը, ՆՈՒ կազմակերպելու կարողությունը:

ՆՈՒ-ը անհրաժեշտ է շեշտադրել հենց տարրական դպրոցից: Ճիշտ է, այն կրտսեր դպրոցականների համար փոքր-ինչ բարդ է և խնդրահարույց: Բայց դա հնարավոր է, անգամ եթե դրանք պարզ նախագծեր են կամ էլ միայն նախագծի գործունեության տարրեր, որտեղ սովորողն ուղղակի կիրառում է այն գիտելիքները, որոնք ձեռք է բերել տարրական դպրոցում:

ՆՈՒ մեծապես նպաստում է կրթության արդյունավետության և որակի բարձրացմանը, ապահովում է հետագա հաջողությունը, քանի որ դրա արդյունքում բացահայտվում է, թե սովորողը որքան «գիտելիք է ձեռք բերել և կիրառել գործնականում /այլ ոչ թե որքան կարող է ձեռք բերել/»:

Վ.Գուզեևը իրավացիորեն նշում է, թե «...ՆՈՒ-ը խրախուսում և ամրապնդում է աշակերտների կողմից իրական գիտելիքը, ընդլայնում է ինքնուրույնության, որոնողական աշխատանքի, գիտելիքները գործողության

մեջ դնելու շրջանակը ինքնորոշման, ստեղծագործական և կոնկրետ մասնակցության գործընթացում»: Հաշվի առնելով ՆՈՒ-ի բոլոր առավելությունները, իրատեսական և նպատակահարմար է այն օգտագործել արդեն դպրոցական կրթության առաջնային օղակից [2]:

Անկախ նրանից, թե ուսումնական նախագիծն ինչ բովանդակություն և ուղղվածություն ունի, այն արդյունքները, որ մասնակիցները ձեռք են բերում, անգնահատելի են. Դրանք կարող են լինել շատ արժեքավոր հետազոտական հմտություններ, արդյունավետ հաղորդակցության կարողություններ, թիմային և համագործակցային աշխատանքի հմտություններ:

«ՆՈՒ առավել արդյունավետ է, երբ դուրս է գալիս «դասարանային» և դպրոցական մակարդակից և գնում է դեպի համայնք: Սրանք վերառարկայական կապեր են, որոնք այսօր շեշտադրվում ու խրախուսվում են կրթության համակարգում: Ակնհայտ է ուսումնական մեթոդի և քաղաքացիական ակտիվության կապը. այն առավելապես երևում է այն նախագծերում, որոնց մասնակիցները փորձում են անդրադառնալ համայնքային հիմնախնդիրներին: Սովորողները տեղեկանում են, թե որտեղից են ծագում համայնքային տարատեսակ խնդիրները և պատասխանատվություն են կրում իրենց համայնքի հանդեպ: Կոտրվում է շրջապատի հանդեպ անտարբերությունը, և տեղը գալիս է համայնքի հանդեպ սեփականության զգացումը՝ ես իմ համայնքի մասն եմ և հավասարապես պատասխանատվություն եմ կրում թե՛ ձեռքբերումների և թե՛ այն բացասական երևույթների համար, որ շրջապատում տիրում է» [3]:

Նախագծային վրա հիմնված ուսուցումը արդիական հիմնախնդրների լուծմանն ուղղված ստեղծագործական աշխատանք է, որի նպատակները որոշում են սովորողները և դրան հասնում են իրենց համար նոր տեղեկատվության ինքնուրույն ձեռքբերման ու յուրացման գործընթացում. Արդյունքում ստեղծվում է իրական կամ իդեալական արդյունք, որը տարբերվում, առանձնանում է օբյեկտիվ կամ սուբյեկտիվ նորույթով: Նախագծային ուսուցումը արդյունավետորեն լուծում է կրթության երկու հիմնախնդիր՝

1. անձի բացահայտում և զարգացում,
2. անձի մասնագիտական ինքնորոշում և հետագա ուղու ընտրություն:

Նախագծային ուսուցումը նպատակաուղղված է հետևյալ մանկավարժական խնդիրների լուծմանը՝

ա/ սովորողների հիմնարար գիտելիքների և կարողությունների կիրառմանը, որոնք ձեռք են բերվել անձնական, ընտանեկան և սոցիալական տարբեր հիմնախնդիրների որոնման և լուծման ճանապարհին,

բ/ ինքնուրույն ճանաչողական գործունեության խթանմանը, երբ սովորողները հետաքրքրված են առաջադրված հիմնախնդրի լուծման ուղիներ փնտրելու, նոր տեղեկույթյուն ձեռքբերելու և գործունեության նոր եղանակներ յուրացնելու գործում,

գ/ բարդ թեմաների ուսումնասիրումը տարբեր գիտությունների դիտան-

կյուններից, որը կվերացնի ուսումնական առարկաների միջև եղած պատնեշ-սահմանները, սովորողներին ցույց կտա տարբեր երևույթների ու գործընթացների միջև գոյություն ունեցող կապերն ու կապակցությունները՝ կրթության գործընթացն ավելի մոտեցնելով իրական կյանքին,

դ/ սոցիալական կարևոր ու նշանակալից հիմնախնդիրների լուծմանը, սովորողներին մասնակից դարձելուն, որն էլ իր հերթին ձևավորում է տարբեր մասնագիտական հետաքրքրություններ, սոցիալական կոմպետենցիաներ և բազմաթիվ անձնային որակներ:

Ստեղծագործական նախագծերը հնարավորություն են տալիս մոդելավորել իրական կյանքից վերցված ցանկացած պրակտիկ գործունեություն, որպեսզի սովորողները հատուկ մասնագիտական դերերում հանդես գան /դիզայներ, հետազոտող, լուսանկարիչ, լրագրող, օպերատոր ևն/: Նախագծի թեմայի արդիականությունը, հիմնախնդրի ընդգրկուն և շարունակական լինելը, ինչպես նաև համագործակցային աշխատանքը սովորողների հետաքրքրությունների և հնարավորությունների բացահայտման ու զարգացման բարենպաստ պայմաններ են ստեղծում: Այսպես, օրինակ, դիզայների մասնագիտական գործունեությունը մեծապես կապված է պատվիրատուների դիզայներական ստեղծագործական պատվերների հետ /գովազդային ապրանքներ, հուշանվերներ, զարդեր և այլն/, այդ պատճառով ուսումնական առարկաների դասերին և խմբակներում ՆՈՒ առավելապես ուղղված է սովորողների մասնագիտական կողմնորոշմանը:

Սեփական նախագծերի իրականացումը կօգնի սովորողներին գիտակցաբար ընտրել աշխատաշուկայում պահանջված և ինքնաճանաչման վրա հիմնված մասնագիտություն:

Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներում նախագծային գործունեության կազմակերպման պահանջներն են՝

Կենտրոնացնել ուսուցիչների աշխատանքը սովորողների հետաքրքրությունների և մասնագիտական կարևոր որակների բացահայտման վրա:

Կարևորել նախագծային գործունեության անձնական, հասարակական և մանկավարժական նպատակները՝ հաշվի առնելով սովորողների շահերն ու կարիքները, որոնք ուղղված են ձեռքբերումների մակարդակի բարձրացմանը:

Համապատասխանեցնել նախագծերը գիտության ու տեխնիկայի ժամանակակից ձեռքբերումներին, կրթության և սոցիալ-տնտեսական առաջընթացին:

Ինտեգրել կրթական ռեսուրսները: Ուսումնական առարկաների և նախագծերի բովանդակության փոխադարձ կապ, փոխգործունեություն՝ ուղղված նոր գիտելիքների ձեռքբերմանն ու հմտությունների, արժեքների ու դիրքորոշումների ձևավորմանը: Սովորողների զարգացման ապահովում:

Ինտեգրել նախագծային գործունեության կառուցատարրերը: Ճանաչողական, հաղորդակցական, հուզակամային բաղադրատարրերի միասնացում գործնական խնդիրների ստեղծագործական լուծման համար:

Համապատասխանեցնել նախագծային գործունեության բովանդակությունը սովորողների տարիքին, առանձնահատկություններին, կրթական հնարավորություններին, գիտական, մեթոդական, նյութատեխնիկական աջակցության մակարդակին:

Ապահովել նախագծային գործունեության մատչելիությունը: Յուրաքանչյուր սովորողի, այդ թվում՝ նաև ԿԱՊԿՈՒ երեխաների հետաքրքրություններին, հնարավորություններին, առանձնահատկություններին համապատասխան կրթական տարածքի ընդլայնում՝ հիմնված հանրակրթական, լրացուցիչ և մասնագիտական կրթական այլ հաստատությունների ու կառույցների փոխգործակցության վրա [4]:

Նախագծային աշխատանքը նպաստում է՝

- համընդհանուր արժեքների դաստիարակմանը (սոցիալական գործընկերություն, հանդուրժողականություն, երկխոսություն).
- պատասխանատվության զգացում, ինքնակարգապահություն, մեթոդական աշխատանքի և ինքնակազմակերպման ունակություն;
- աշխատանքը որակով և արդյունավետ կատարելու ցանկություն,
- և, ամենակարևորը, մասնակցությունը նախագծային աշխատանքներին զարգացնում է անհատի հետազոտական և ստեղծագործական տվյալները. ինքնորոշման և նպատակադնելու, տեղեկատվական տարածքում տարբեր դիրքերից նավարկելու կարողությունները:

Նախագծի վրա աշխատելու գործընթացում սովորողը զարգացնում է նաև բազմաթիվ վերառարկայական հմտություններ՝

- ժամանակակից լեզվով ասած՝ պատճառահետևանքային կապեր հաստատելը, հասկանալ իր առջև դրված խնդիրը և լուծման ուղիներ որոնելը, անհրաժեշտ տեղեկատվության որոնումը (հանրագիտարաններում, գրադարաններում, համացանցում), մեծահասակների աջակցությամբ (ուսուցիչ, ծրագրի ղեկավար, մասնագետ) բացակայող տեղեկատվության որոնումը, տեղեկատվության կառուցվածքի համակարգում՝ կարևորելով հիմնականը, տարբերակելով առաջնայինը երկրորդականից [1],
- համագործակցային - մասնակիցների հետ փոխգործակցություն, խմբի մեջ փոխադարձ օգնություն ցուցաբերել ընդհանուր խնդիրների լուծման, փոխզիջումային լուծումներ գտնելու գործում,
- հաղորդակցական - ուրիշներին լսելու և հասկանալու, երկխոսություն վարելու, հարցեր տալու, քննարկումներին մասնակցելու, արտահայտվելու ունակություն,
- փորձարարական – աշխատանքի, աշխատատեղի կազմակերպում, անհրաժեշտ նյութերի, գործիքների ու սարքավորումների ընտրություն, միայնակ կամ թիմով հետազոտական աշխատանքների իրականացում, տացված արդյունքների հիման վրա եզրակացությունների ձևակերպում

և հիմնավորում,

- ռեֆլեկտիվ - սեփական գործունեության ընկալում (դրա ընթացքը և միջանկյալ արդյունքները), ինքնագնահատում,
- ներկայացում - բանավոր հաղորդագրության կառուցում կատարված աշխատանքի, խոսելու ժամանակ տեսանելիության տարբեր միջոցների ընտրություն և այլ հմտություններ,
- մասնագիտական ճիշտ եզրույթներ օգտագործելով արդյունքը գիտական պարզ բառապաշարով ներկայացնելու կարողություն:

Չպլանավորված հարցերի պատասխաններ:

Ուսումնական նախագիծը սովորողի դիտանկյունից՝

Հնարավորություն է՝

- ինքնուրույն կամ խմբով ինչ-որ բան անելու, սեփական կարողությունները առավելագույնս օգտագործելով,
- ինքնադրսևորվելու, ինքնարտահայտվելու, ուժերը փորձելու, գիտելիքները կիրառելու, օգտակար լինելու, ձեռք բերված արդյունքը հրապարակավ ցուցադրելու:

Ուսուցչի դիտանկյունից ուսումնական նախագիծն ուսուցման տեխնոլոգիա է, մեթոդ, միջոց, եղանակ, որի նպատակն է ուսուցանել նախագծման ողջ գործընթացը, այսինքն՝ հիմնախնդիրը որոշակի կոնկրետ իրավիճակներում դիտարկելով լուծման տարբերակներ որոնել [4, 5]: Վերջին հաշվով, ուսումնական նախագծերի պատրաստումն ու պլանավորումը թե՛ սովորողներին, թե՛ ուսուցիչներին հնարավորություն է տալիս զբաղվել ինքնակրթությամբ ինչպես իրենց առարկայի, այնպես էլ հարակից առարկաների և տեղեկատվական տեխնոլոգիաների շրջանակներում:

Օգտագործված գրականություն

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, Երևան, 2021թ.
2. https: //www.arlis.am/documentview.aspx?docid=149788, 22.05.2022:
3. Глушкова Н. Ю., Креативные проекты как способ формирования ключевых компетенций обучающихся по ФГОС, Всероссийский семинар “Как научить школьника проектной деятельности?”, 11.02.2021.
4. Շագաֆյան Ալեքսանդր, Նախագծային ուսուցում, Կրթություն ամենուր և բոլորին, https: //www.youtube.com/watch?v=PFc6sbAZSzk, 8.06.2022:
5. Рагозинская Н. И., Колобякина Т. П., Педагогическое проектирование в инновационной деятельности учителей начальных классов // Учитель, № 3, 2004.
6. Кравец Т. Н., Телеганова М. В., Спутай С. И., Младшие школьники проводят исследование // Начальное образование, № 2, 2005.

КАРИНЕ ПАПИКЯН. ПРОЕКТНОЕ ОБУЧЕНИЕ В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ. *Представлены теоретические принципы проектной деятельности, которые могут помочь учителю начальных классов в реализации проектного обучения с этого возраста. Это даст возможность младшим школьникам свободно и самостоятельно творить, заниматься научно-исследовательской работой, применять полученные знания на практике.*

KARINE PAPIKYAN. ***PROJECT TEACHING IN ELEMENTARY SCHOOL.*** *Theoretical principles of project activity that can help the elementary school teacher to implement project teaching from that age are presented. It will enable primary school students to create freely and independently, to do research work, to apply the acquired knowledge in practice.*

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ - ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մարգարիտա Մակոյան

ԵՀՀ «Ռոսլին» արվեստի և հումանիտար գիտությունների ակադեմիա

Մուտքագրված է 024.04.22, հաստատված է տպագրության 25.06.22

Ամփոփում. *Հոդվածում ներկայացված են երեխաների միջև կոնֆլիկտների առաջացման պատճառները խաղային գործունեության մեջ: Խաղի ընթացքում երեխաների միջև ձևավորվում են փոխարաբերություններ, տեղի է ունենում փոխներգործություն:*

Բանալի բառեր: *Կոնֆլիկտ, կոնֆլիկտի բաղադրիչները, խաղ, առաջատար գործունեություն, ներգործության եղանակներ*

Հոգեբանական բառարանում կոնֆլիկտը ներկայացված է որպես սուբյեկտների ևընդդիմախոսների հետաքրքրությունների, նպատակների, դիրքորոշումների, կարծիքների բախում: Այն դիտարկվում է որպես հակադարձ միտումների, ձգտումների, դրդապատճառների բախում, որի հետևանքով անձը ապրում է պրոբլեմային իրավիճակ: Կոնֆլիկտը դժվար լուծելի հակասություն է՝ սերտորեն կապված հուզական ապրումների հետ [4]: Տարբերվում են երկու տիպի կոնֆլիկտներ՝ արտաքին եւ ներքին: Յա. Ա.Անցուպովը Ա.Շիպիլովը առանձնացնում են կոնֆլիկտների առաջացման չորս խումբ պատճառներ՝ օբյեկտիվ, կառավարա-կազմակերպչական, սոցիալ-հոգեբանական եւ անձնական: Բազմաթիվ ուսումնասիրողներ /Յա. Կոլոմինսկի, Բ. Ժիզնևսկի և այլոք/ համարում են, որ մանկական տարիքում կոնֆլիկտների մեծ մասը տեղի է ունենում խաղերում, ու դա պայմանավորված է նրանով, որ երեխաների համար խաղը առաջատար գործունեություն է: Խաղը նպաստավոր պայմաններ է ստեղծում երեխայի ինտելեկտուալ զարգացման համար, ինչպես նաեւ ապահովում է մտածողության անցումը ակնառուպատկերավոր ձեւից բառային-տրամաբանական մտածողության տարրական ձևերին [1]: Կոնֆլիկտների առաջացման պատճառները բացահայտելիս հաշվի են առնում այն, որ խաղը, ինչպես նաև համատեղ գործունեության այլ տեսակներ, ունեն որոշակի հաղորդակցա-կազմակերպչական հիմք: Դրանք գործունեության մի շարք կազմակերպչական խնդիրներ են, ինչպիսիք ընդհանուր խաղի թեմայի ընտրությունն է, նրա մասնակիցների կազմի որոշումը, դերերի բաշխումը և այլն: Յա. Կոլոմինսկին և Բ. Ժիզնևսկին առանձնացրել են կոնֆլիկտների առաջացման յոթ հիմնական պատճառ, դրանք են՝

1. «Խաղի քանդում» - երեխաների այնպիսի գործողություններն են, որոնք ընդհատել կամ դժվարացրել են խաղի ընթացքը, օրինակ՝ խաղային կառուցվածքների, խաղային իրադրության, նաև պատկերացվող խաղային

իրավիճակի խախտումը:

2. «Խաղի ընդհանուր թեմայի ընտրություն» - այդ դեպքում վեճն առաջանում է այն պատճառով, թե կոնկրետ, որ համատեղ խաղն էին պատրաստվում խաղալ:

3. «Խաղի մասնակիցների կազմը» - վեճի առարկան այն հարցն է, թե ում ներառեն խաղի մեջ, ում՝ ոչ

4. «Դերերի բաշխումը» - տվյալ կոնֆլիկտը երեխաների միջև առաջանում են այն պատճառով, թե ով պետք է կատարի առավել գրավիչ, կամ ընդհակառակը, պակաս գրավիչ դերը:

5. «Խաղալիքների բաշխում» - խաղալիքների, խաղային առարկաների բաշխման պատճառով առաջացող վեճերը:

6. «Խաղի սյուժեի պատճառով»- վիճում են նրա համար, թե ինչպես պետք է անցնի խաղը, նրանում խաղային իրավիճակները, կերպարներն ինչպիսին պետք է լինեն և ինչպիսին պետք է լինեն այս կամ այն կերպարների գործողությունները:

7. «Խաղային գործողությունների ճշտության պատճառով» - վեճ է այն մասին, թե խաղում այս կամ այն երեխան ճիշտ կամ սխալ է գործում:

Անհրաժեշտ է նշել, որ Դ. Էլկոնինը կարծիք է հայտնել թե՝ փոքրիկների միջև կոնֆլիկտներն ավելի հաճախ առաջանում են խաղալիքների պատճառով, միջին նախադպրոցական հասակի երեխաների մոտ՝ դերերի պատճառով, իսկ ավելի մեծ հասակում՝ խաղի կանոնների պատճառով [2]:

Ինչպես ցույց են տվել հետազոտությունները, կրտսեր նախադպրոցականների մոտ կոնֆլիկտների մինչև 75%-ն առաջանում է խաղալիքների պատճառով, միջին նախադպրոցական հասակում՝ դերերի բաշխման պատճառով, իսկ խաղային գործողությունների ճշգրտության պատճառով կոնֆլիկտները մեծանում են նախադպրոցական հասակի վերջում:

Դրա հետ մեկտեղ ստացված տվյալները ցույց են տալիս նաև այն, որ խաղալիքների և դերերի պատճառով կոնֆլիկտները չեն անհետանում նույնիսկ ավագ նախադպրոցականների մոտ: Դրանք շարունակում են կոնֆլիկտի պատճառ հանդիսանալ միանալով կոնֆլիկտների նոր տեսակներին՝ խաղի ընդհանուր թեմայի ընտրության, մասնակիցների կազմի որոշման, խաղային սյուժեների հստակեցմանը: Ավելին, 5-6 տարեկան հասակում դիտարկվում է որոշակի հետընթաց, այսինքն այդպիսի կոնֆլիկտների թվի նոր, կրկնակի մեծացում՝ որպես կոնֆլիկտներ խաղը քանդելու պատճառով կամ խաղալիքների պատճառով: Հնարավոր է՝ դա կապված է խաղի զարգացման ոչ բավարար մակարդակի հետ, մանկապարտեզներում աշխատանքի ժամանակակից պրակտիկայում նրա նկատմամբ ուշադրության թուլացմամբ, ինչը նշվում է համապատասխան գրականության մեջ /«Խաղը և նրա դերը նախադպրոցական հասակում երեխայի զարգացման գործում», 1975/ [3]:

Հետազոտություններում առանձնացվել են խաղային կոնֆլիկտի մյուս

մասնակիցների վրա երեխաների ներգործության հետևյալ եղանակները.

1. «Ֆիզիկական ներգործություն» - այնպիսի գործողություններ են, երբ երեխաները, հատկապես փոքրիկները, հրում են մեկը մյուսին, կռվում են, ինչպես նաև խլում են խաղալիքները, ցիրուցան անում դրանք, զբաղեցում են ուրիշի տեղը և այլն:

2. «Անուղղակի ներգործություն» - այս դեպքում երեխան ներգործում է մրցակցի վրա այլ անձանց միջոցով: Օրինակ բողոք դաստիարակին, լացը, ճիչը՝ մեծահասակի ուշադրությունը գրավելու նպատակով:

3. «Հոգեբանական ներգործություն» - եղանակներ են, որոնք հասցեագրված են անմիջապես նրան, բայց դա իրականացվում է լացի, գոռոցի, ոտքերով գետնին հարվածելու, ծամածռությունների և այլնի մակարդակում, երբ երեխան չի բացատրում իր հավակնությունները, իսկ մրցակցի վրա որոշակի հոգեբանական ճնշում է գործում:

4. «Խոսքային ներգործություն» - տվյալ դեպքում ներգործության միջոց է հանդիսանում արդեն խոսքը, բայց դա գլխավորապես տարբեր ցուցումներն է մրցակցին, թե նա ինչ պետք է անի կամ նա ինչ չպետք է անի: Դա արտահայտվում է որպես «Տուր», «Գնա», սեփական գործողությունների յուրօրինակ ընդգծում՝ «Ես բժիշկը կլինեմ», խաղընկերոջ կողմից պահանջվող գործողության կատարումից հրաժարում, ինչպես նաև կոնկրետ պատասխան պահանջող հարցեր, օրինակ՝ «Ինչ ես արել մեքենան»: Վերջին դեպքում հասակակիցը նաև պետք է որոշակի գործողություններ կատարի, բայց արդեն ոչ առարկայական, այլ խոսքային:

5. «Սպառնալիքներ ու պատժամիջոցներ» - այստեղ ներառվում են այնպիսի հայտարարություններ, որոնցում երեխաները նախազգուշացնում են մրցակցին՝ նրանց գործողությունների հնարավոր բացասական հետևանքների մասին, օրինակ՝ «Իսկ ես կպատմեմ», խաղը քանդելու սպառնալիքներ՝ «Ես ձեր հետ չեմ խաղա», ընդհանուր առմամբ հարաբերություններն ընդհատելու սպառնալիքներ՝ «Ես քո հետ այլևս ընկերություն չեմ անում», ինչպես նաև սպառնալից տոնով արտաբերված տարբեր բառեր ու արտահայտություններ. «Դե՛», «Ուրեմն այդպե՛ս», «Հասկացա՞ր» և այլն:

6. «Փաստարկներ» - այստեղ ներառվում են այնպիսի հայտարարություններ, որոնց օգնությամբ երեխաները փորձում են բացատրել, հիմնավորել իրենց պահանջները կամ ցույց տալ մրցակիցների պահանջների ոչ օրինաչափությունը: Դրանք հետևյալ հայտարարություններն են՝ «Ես առաջինն եմ», «Դա իմն է», իր ցանկությունների մասին հայտարարելը՝ «Ես նույնպես ուզում եմ», խաղում իր դիրքին դիմում՝ «Ես ուսուցչուհի եմ ու գիտեմ ինչպես է պետք սովորեցնել», հռետորական հարցեր՝ «Ինչո՞ւ ես դու ամեն ինչ ջարդել», «Ինչի՞ համար ես դու այստեղ եկել», որոնցում հստակորեն դիտվում է խաղընկերոջ գործողությունների բացասական գնահատականը, ինչպես նաև իր գործողությունների ու մրցակիցների գործողությունների ուղղակի

գնահատականներն /«Դու չես կարողանում խաղալ», «Ես ավելի լավ գիտեմ ինչպես է պետք բուժել»/ ու տարատեսակ վիրավորական մականուններ այլն: Ընդհանուր առմամբ միջին նախադպրոցական տարիքը նշվում է, որպես երեխաների համատեղ խաղի զարգացման որոշակի բեկումնային պահ: Այստեղ առաջին անգամ նշվում է բացահայտ ճնշման միջոցների նկատմամբ կոնֆլիկտային իրավիճակում մրցակիցների վրա «խոսքային ներգործության» եղանակների գերակշռությունը: Այլ կերպ ասած, կոնֆլիկտը՝ որպես որոշակի եղանակով ֆիզիկական ուժի կիրառմամբ բաց առճակատում, ավելի շատ է դառնում խոսքային վեճ, այսինքն իրենց ցանկությունների իրականացման գործընթացում երեխաների վարքագծի որոշակի «ընտելացում» է տեղի ունենում: Սկզբում տեղի է ունենում ֆիզիկական գործողությունների միախառնում խոսքի հետ, այնուհետև ներգործության խոսքային եղանակները բարդանում են ու ներկայանում են տարբեր տեսակի հիմնավորման, գնահատականների տեսքով, ինչն իր հերթին վիճելի հարցերի քննարկման ու լուծման փոխընդունելի տարբերակի հայտնաբերման ճանապարհ է բացում:

Օգտագործված գրականություն

1. Выготский Л.С. Игра и ее значение в психическом развитии ребенка/ Л.С. Выготскиы/Психология дошкоьлника: хрестоматия. М.; Академия, 2000
2. Коломинский Я. Л., Жизневский Б.П. Социально – психологический анализ конфликтов между детьми в игровой деятельности. <<Вопросы психологи>>, -1990
3. Эльконин Д.Б. Игра и психическое развитие / Психическое разжитие в детских возрастах / под ред. Д.И. Фольдштейна. - М .: изд-во, МОДЕК, 2001
4. 4.
   Проблема Конфликта В Западной Социологии /Отв. Ред. А. Г. Здравомислова, Нижний Новгород, 1994.

***МАРГАРИТА МАКОЯН**. ПРИЧИНЫ КОНФЛИКТОВ МЕЖДУ ДЕТЬМИ. В статье описываются причины образования конфликтов между детьми во время игровой деятельности. Во время игры между детьми образовываются взаимоотношения, имеет место взаимодействие.*

***MARGARITA MAKOYAN**. CAUSES OF CONFLICTS BETWEEN CHILDREN. The article describes the reasons for the formation of conflicts between children during play activities. During the game, relationships are formed between children, there is interaction. Keyword; Conflict, components of conflict, game, primary activeity, ways of interaction.*

ՍԹՐԵՍԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՔՈՓԻՆԳ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվա Հովհաննիսյան
ԵՀՀ «Ռոսլին» Ակադեմիա,ՀՊՄՀ Հոգեբանության ամբիոն
Մուտքագրված է 02.05.22, հաստատված է տպագրության 25.06.22

Ամփոփագիր. *Քննարկվում են հոգեբանության արդիական խնդիրներից «սթրես» և «քոփինգ» մարտավարությունները: Հոգեբանության զարգացման ներկա փուլում գիտնականները «քոփինգը» համարում են դժվարությունները հաղթահարելու միջոց, կյանքի հրատապ խնդիրները լուծելու մարդու պատրաստակամություն:*

Հիմնաբառեր: *սթրես, քոփինգ, «քոփինգ» մարտավարություն, քոփինգ՝ «կենտրոնացած խնդիրի վրա», քոփինգ՝ «կենտրոնացած հույզերի վրա»*

Ժամանակակից հասարակության մեջ մարդկային կյանքը ենթադրում է իր գոյությունն ու զարգացումը ծայրահեղ անորոշության պայմաններում: Առօրյա կյանքում մարդը անընդհատ բախվում ենք տարբեր տեսակի դժվարությունների և դրանց հաղթահարման համար տարբեր գործողություններ է ձեռնարկում: Այս առումով, առանձնահատուկ նշանակություն ունեն անձի կողմից արդյունավետ ռազմավարությունների գործադրմանը, հարմարվողականությանն ու զարգացմանը վերաբերող հարցերը: Հոգեբանական գիտության մեջ կյանքի դժվարին իրադարձությունները անձի կողմից հաղթահարելու գործընթացները սովորաբար նշվում են որպես հարմարվողական (ադապտիվ) վարք, քոփինգ մարտավարություն կամ քոփինգ վարք: «Քոփինգը» գիտակցական բանական վարք է, որն ուղղված է սթրեսային իրավիճակի վերացմանը: Դրա գործառույթներն անմիջականորեն կապված են մարդու արտաքին և ներքին բարեկեցության պահպանման, ֆիզիկական և հոգեկան առողջության և սոցիալական հարաբերությունների բավարարման հետ: Քոփինգ վարքագիծը կախված է ոչ միայն սուբյեկտի անձից, նրա մտքերից, զգացմունքներից և գործողություններից, այլև ինքնին իրավիճակից, որը կարող է դրսևորվել վարքային, հուզական և ճանաչողական մակարդակի վրա:

Անձի կողմից կյանքի սթրեսային իրավիճակների հաղթահարման խնդիրը ուսումնասիրվում է գիտության տարբեր ոլորտներում՝ կենսաբանության բժշկության հոգեֆիզիոլոգիայի և հոգեբանության մեջ: Ներկայումս այն ամենաակտուալ խնդիրներից է: Այս խնդրի նկատմամբ կայուն հետաքրքրությունը կապված է բնական, էկոլոգիական, սոցիալական և այլ ոչ բարենպաստ պայմանների՝ անձի վրա ունեցած նեգատիվ ազդեցության աճով: Այս առումով առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերել քոփինգի հոգեբանական ձևերի ուսումնասիրությունը՝ որպես անձի հաջող ադապտացիայի գործոն ժամանակակից աշխարհում:

Ժամանակակից մարդու կյանքը կապված է սթրեսի և սթրեսակայունության հետ, որոնք իրենց արտացոլումն են գտնում ամենօրյա կյանքում: Սթրեսը իրենից ներկայացնում է օրգանիզմի ոչ սպեցիֆիկ, հարմարվողական ռեակցիան շրջապատող միջավայրի ոչ բարենպաստ փոփոխությունների նկատմամբ [6]:

Սթրեսը էմոցիոնալ և ֆիզիկական լարվածության վիճակ է, որն առաջանում է դժվար և անկառավարելի իրավիճակներում: Գիտական լեզվով ասած սթրեսը մարմնի ֆիզիկական, հոգեկան, էմոցիոնալ և քիմիական պատասխան ռեակցիան է այն ամենի նկատմամբ, որոնք բարկացնում են, վախեցնում կամ վտանգ են ներկայացնում մարդու համար [2]: Սթրեսակայունությունը որակ է, որը մարդուն թույլ է տալիս հաղթահարել իր հոգեկանի վրա ազդող տարբեր տեսակի ծանրաբեռնվածություն՝ ինտելեկտուալ, էմոցիոնալ կամ կամային: Ի շնորհիվ այս որակի կարելի է ոչ միայն հասնել դրված նպատակներին, այլ նաև պահպանել առողջությունը [6]:

Կյանքի ընթացքում մարդն առճակատվում է դժվարությունների հետ, որոնք կանխորոշված են առօրյա կյանքի իրավիճակներից: Եվ դրանք հաղթահարելու համար մարդը պետք է գիտելիք ունենա ջանքերի իրագործման հնարավոր ուղիների մասին և ինչպես գրել է Լազարուսը «մարդը պետք է հավատա որ ունի դրանք» [4] :

Հոգեբանության զարգացման ներկա փուլում գիտնականները դիտարկում են մարդու կողմից դժվարությունները հաղթահարելու խնդիրը այնպիսի երևույթների բացահայտման միջոցով ինչպիսին է «քոփինգը » [8] :

Քոփինգ (անգլերեն to cope- հաղթահարել կառավարել) ասելով հասկանում ենք անընդհատ փոփոխվող կոգնիտիվ և վարքային փորձերը, որոնք անում է մարդն իր որոշակի ներքին և արտաքին պահանջմունքները բավարարելու համար: Այդ պահանջմունքները գնահատվում են որպես սթրես կամ գերազանցում են մարդու՝ դրանք հաղթահարելու ունակությունները:

Քոփինգ վարքը վարքի մի ձև է, որը արտացոլում է կյանքի խնդիրները լուծելու անհատի պատրաստականությունը: Դա վարքաձև է ուղղված հանգամանքներին հարմարվելուն և ենթադրում է միջոցներ ուղղված էմոցիոնալ սթրեսի հաղթահարմանը [2]: Քոփինգը մարդու ռեակցիաներն են որոնք օգնում են վերականգնել հավասարակշռությունը սթրեսորների ազդեցության ժամանակ: Մարտավարությունները կլինեն ադապտիվ եթե նպաստեն հավասարակշռության հաստատմանը և հետագայում վնասակար էֆեկտների նվազեցմանը և վերացմանը: Գիտական գրականության մեջ քոփինգ տերմինը լայն իմաստով օգտագործվում է նկարագրելու համար սուբյեկտի և ներքին ու արտաքին բնույթի խնդիրների փոխազդեցությունը: Իսկ ավելի նեղ իմաստով սահմանվում է որպես գործողությունների մարտավարություն ուղղված իրավիճակի պայմաններին հարմարվելուն: Քոփինգի հիմնական խնդիրն է ապահովել և պահպանել մարդու բարեկեցությունը, ֆիզիկական և հոգեկան առողջությունը և բավարարվածությունը սոցիալական հարաբերություններից [9]:

Ժամանակակից դինամիկ, դժվարություններով լի կյանքի պայմաններում

մարդը բախվում է նոր խնդիրների, առաջադրանքների հետ, որոնք հանգեցնում են կոնֆլիկտների և ճգնաժամային իրավիճակների: Դրանց հաղթահարման որակից մեծապես կախված կլինեն զարգացման ուղղությունը, հոգեսոմատիկ առողջության վիճակը և սոցիալական հարմարվողականությունը [3]:

Ներկայումս «քոփինգ» հասկացության մեկնաբանման երեք մոտեցում կա: Առաջին մոտեցումը այն մեկնաբանում է Էգոյի դինամիկայի տեսանկյունից, որպես հոգեբանական պաշտպանության եղանակներից մեկը, որն օգտագործվում է լարվածությունը մեղմելու համար: Այս մոտեցումը չի կարելի անվանել համատարած, առաջին հերթին այն պատճառով, որ կան աջակիցներ, ովքեր հակված են քոփինգը նույնացնել դրա արդյունքի հետ:

Երկրորդը սահմանում է քոփինգը անհատականության հատկությունների առումով՝ որպես սթրեսային իրադարձություններին որոշակի ձևով արձագանքելու համեմատաբար կայուն նախատրամադրվածություն: Այնուամենայնիվ, քանի որ դիտարկված մեթոդների կայունությունը շատ հազվադեպ է հաստատվում էմպիրիկ տվյալների միջոցով, այդ հասկացողությունը նույնպես մեծ աջակցություն չի գտել հետազոտողների շրջանում: Եվ, վերջապես, երրորդ մոտեցման համաձայն, քոփինգը պետք է ընկալվի որպես դինամիկ գործընթաց, որի առանձնահատկությունը որոշվում է ոչ միայն իրավիճակը, այլև կոնֆլիկտի զարգացման փուլը, սուբյեկտի բախումը արտաքին աշխարհի հետ [7]: Ֆունկցիոնալ ադեկվատ, հարմարվողական հաղթահարման կամ ակտիվ քոփինգ վարքի ձևավորման կարևոր բաղադրիչներից է «խնդիրների համակարգված լուծում» մարտավարությունը: Վարքագծային այս մարտավարությունը նպաստում է խնդրի այլընտրանքային լուծումների լայն շրջանակի առաջացմանը և հետագա դիտարկմանը: Որոշ հետազոտողներ կարծում են, որ խնդիրների ակտիվ լուծումը ճանաչողական-վարքային գործընթաց է, որի արդյունքում ձևավորվում է անձնավորության ընդհանուր սոցիալական կոմպերենտությունը [11]: Ոչ ադապտիվ վարքի ձևավորման ժամանակ առաջնորդող քոփինք մարտավարությունը «փախուստն» է: Դրա օգտագործումը պայմանավորված է քոփինգ ռեսուրսների և խնդրի լուծման ակտիվ հմտությունների ոչ բավարար զարգացմամբ: Այնուամենայնիվ, «փախուստ» քոփինգ մարտավարությունը կարող է լինել ադեկվատ կամ ոչ ադեկվատ՝ կախված կոնկրետ սթրեսային իրավիճակից, անհատի տարիքից և անձնավորության ռեսուրսների համակարգի ներկայիս վիճակից [10]:

Մ.Պերրեզն իր ուսումնասիրություններում նշել է, որ սթրեսը ավելի արդյունավետորեն են հաղթահարում (միաժամանակ բացահայտելով հոգեկան առողջության ավելի բարձր ցուցանիշներ) այն մարդիկ, ովքեր ավելի հաճախ են առաջնորդվում իրավիճակի օբյեկտիվ նշաններին և բնութագրերին համապատասխանող վարքի կանոններով(վերահսկելիություն, փոփոխականություն, իրադարձության բացասական նշանակություն) [12]:

Կ. Մատենին առաջարկել է, որ քոփինգը կարելի է դիտարկել սթրեսային իրավիճակի վրա գործառնական և կանխարգելիչ ազդեցությունների և անձի

դրան տրված արձագանքի տեսանկյունից: Սթրեսի օպերատիվ կառավարումը ներառում է գործող սթրեսորների նկատմամբ ռեակցիան վերացնելու կամ նվազեցնելու փորձ: Կանխարգելիչ հաղթահարումն իրենից ներկայացնում է սթրեսորի ազդեցության կանխում, կա՛մ իրավիճակի պահանջները ընկալելիս ճանաչողական գնահատման փոփոխմամբ, կա՛մ դիմադրողականության, սթրեսակայունության բարձրացմամբ: Հեղինակը կարծում է, որ կանխարգելիչ հաղթահարումը ներառում է այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են.

- սթրեսորներից խուսափելը՝ կենսապայմանները և գործողությունները կարգավորելով.
- իրավիճակի պահանջների մակարդակի օպտիմալացում անձին.
- սթրես առաջացնող վարքի փոփոխություն;
- սթրեսը հաղթահարելու համար անձնական ռեսուրսների զարգացում:
- Սթրեսի գործառնական հաղթահարման ժամանակ նրանք առանձնացրել են վարքի հետևյալ դասերը.

Գործող սթրեսորների և սթրեսի նշանների վերահսկում -- իրավիճակի գնահատում և համապատասխան անհատականորեն նախընտրելի քոփինգ մարտավարության ընտրություն;

«Հարձակում» սթրեսորների վրա -- սթրեսորների ուղղակի վերացման հնարավորության որոշում (խնդիր լուծում, անհայտ ինֆորմացիայի հայթհայթում և այլն);

Ռեսուրսների կազմակերպում -- սթրեսը հաղթահարելու արդյունավետ ջանքերի մոբիլիզացիա.

Սթրեսորների ազդեցության նկատմամբ դիմացկունություն -- նրանց նկատմամբ դիմադրողականության մեծացում՝ նրանց ընկալելի նշանակության ճանաչողական վերագնահատմամբ, կամային ջանքերով և այլն:

Գրգռման կրճատում -- մտավոր լարվածության նվազեցում վիճակի շտկման մեթոդների միջոցով:

Գ.Վեբերը կարծում է, որ հոգեբանական սթրեսի քոփինգ մարտավարությունների հիմնական «պահեստը» պարունակում է հետևյալ ձևերը.

- խնդրի իրական (ճանաչողական կամ վարքային) լուծում;
- սոցիալական աջակցության որոնում;
- իրավիճակի վերագնահատում սեփական անձի օգտին.
- պաշտպանություն և խնդրի մերժում .
- խուսափում և փախուստ;
- կարեկցանք սեփական անձի նկատմամբ;
- ինքնագնահատականը իջեցում
- հուզական արտահայտում [1]:

Պ. Վոնգը և գործընկերները մշակեցին սթրեսը հաղթահարելու հայեցակարգ, որն իր մեջ ներառում է կանխարգելիչ, ինքնափոխման, էքզիստենցիալ և հոգևոր մարտավարություններ՝ մարդու ակտիվ ռեակցիաներ, որոնք կախված են նրա խորհրդանշելու, կանխատեսելու, ինքնավերլուծման, հոգևոր դրսևորման,

ինքնազարգացման և ինքնակատարելագործման կարողությունից [5]:

Ի. Մալկինան իր աշխատություններում առանձնացրեց երեք հիմնական չափանիշ, որոնց հիման վրա կառուցվում են քոփինգ մարտավարության բոլոր դասակարգումները.

Հուզական / խնդրահարույց.

Հույզի վրա կենտրոնացած քոփինգ - ուղղված է հուզական արձագանքի կարգավորմանը:

Խնդիրի վրա կենտրոնացած քոփինգ՝ ուղղված է խնդիը հաղթահարելուն կամ սթրեսի պատճառած իրավիճակի փոփոխմանը:

Ճանաչողական / վարքային.

«Թաքնված» ներքին քոփինգը խնդրի ճանաչողական լուծումն է, որի նպատակը սթրես առաջացնող տհաճ իրավիճակի փոփոխումն է:

«Բաց» վարքագծային քոփինգ- կենտրոնացած է վարքագծային գործողությունների վրա՝ վարքագծում նկատվող քոփինգ մարտավարությունների օգտագործմամբ:

Հաջողված/ անհաջող.

Հաջող քոփինգի համար օգտագործվում են կառուցողական ռազմավարություններ, որոնք, ի վերջո, հանգեցնում են սթրեսի պատճառած դժվարին իրավիճակի հաղթահարմանը:

Անհաջող քոփինգի դեպքում՝ օգտագործվում է ոչ կառուցողական ռազմավարություն, որը խոչընդոտում է ծանր իրավիճակի հաղթահարմանը [5]:

Մեր հետազոտության հիմնախնդիրը ուսանողների հոգեբանական սթրեսի տարբեր պատճառների ուսումնասիրությունն է, որոնց շարքում քննությունը, որպես սթրեսի գործոն, գրավում է առաջին տեղերից մեկը: Ուսանողների քննություններին նախապատրաստվածության աստիճանը պայմանավորված է նրանց հուզական ոլորտի առանձնահատկություններով, քննության շրջանում հաջողության հասնելու և լավ արդյունքներ ցուցաբերելու դրդապատճառների կառավարման ունակություններով:

Քննության ընթացքում սթրեսի մակարդակի բարձրացումը ուժեղ ազդեցություն է ունենում մտավոր և սոմատիկ առողջության, աշխատանքային կարողությունների, ճանաչողական, հուզական և ֆիզիոլոգիական գործընթացների ցուցիչների վրա:

Մեր հետազոտության նպատակն է բացահայտել՝ այս շրջանին բնորոշ սթրեսային իրավիճակում ո՞ր քոփինգ ռազմավարություններն են ուսանողները առավել կիրառում՝ խնդրի լուծում, սոցիալական աջակցության որոնում, թե՞ փախուստ (խուսափում):

Քոփինգ ռազմավարությունների առանձնահատկությունները ուսումնասիրելու համար հետազոտության ընտրանք են ընտրվել Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Հայոց լեզու և գրականություն բաժնի իգական սեռի 30 ուսանող:

Ուսումնասիրության համար օգտագործվել է Դ. Ամիրխանի «Սթրեսի հաղթահարման ռազմավարությունների ցուցիչ» թեստը, որի միջոցով խնդիր ենք



դրել բացահայտել փորձարկվողների սթրեսային իրավիճակում ընտրած քոփինգ ռազմավարությունները: Հետազոտության վերլուծության արդյունքները ներկայացված են Գծապատկեր 1-ում, որից պարզ երևում է, որ. հետազոտվողների մեծ մասը (81%) օգտագործում է «խնդրի լուծում» քոփինգ ռազմավարությունը: Նրանք պլանավորում են գործողությունները և պատկերացնում են խնդրի լուծման ընթացքը: Նախապես ունենալով գործողությունների ներքին պլանավորում և խնդրի լուծման հնարավոր մի քանի տարբերակներ՝ փորձում են ուշադիր համեմատել և ընտրել նախընտրելի տարբերակը, և ոչ թե իմպուլսիվ կերպով գործել արտաքին դրդապատճառների ազդեցության տակ:

«Սոցիալական աջակցության որոնում» քոփինգ ռազմավարությունը երկրորդն է (11%): Փորձարկվողները նշել են, որ մերձավորների աջակցությանը դիմում են կախված խնդրի բովանդակությունից, տրամադրությունից, իրավիճակից և այլ գործոններից:

«Փախուստ» հաղթահարման ռազմավարությունը օգտագործել են հետազոտվողների 8% -ը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը հաստատեց, որ կյանքի դժվար իրավիճակների հաղթահարումն ապահովվում է ուսանողների անձնական ռեսուրսների մոբիլիզացմամբ, որոնք դրսևորվում են որոշակի քոփինգ ռազմավարությունների և ճանաչողական գործողությունների միջոցով՝ փորձելով լուծել ծագած խնդիրները, կառավարել իրավիճակը, այլ ոչ թե խնդրից խուսափել:

Եզրափակելով, հարկ է նշել, որ տարատեսակ սթրեսային իրավիճակները, իրադարձության անորոշությունը անձի համար կարող են լինել իրավիճակի օբյեկտիվորեն տրված հանգամանքների հետևանք, կամ դրա սուբյեկտիվ մեկնաբանության, որը կապված է մարդու անձնական բնութագրերի, փորձի կամ լուծման հմտությունների բացակայության հետ: Կյանքի դժվար իրավիճակների հաղթահարումն ապահովվում է անձնական ռեսուրսների մոբիլիզացմամբ, որոնք դրսևորվում են որոշակի քոփինգ մարտավարությունների և ճանաչողական գործողությունների միջոցով: Այս մարտավարությունների բնույթը մեծապես կախված է անձնական բնութագրերից, կյանքի փորձից և այլ հոգեբանական գործոններից, որոնք որոշում են հաղթահարման գործընթացի անհատական ինքնությունը: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ գոյություն ունի հարաբերություն կյանքի դժվարությունների նկատմամբ մարդու վերաբերմունքը ձևավորող անձնային կառույցների, և սթրեսի պայմաններում մարդու ընտրած քոփինգ մարտավարության միջև: Քոփինգը, քոփինգ մարտավարությունն այն է, ինչ անում է մարդը սթրեսը հաղթահարելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Бодров В.А. Проблема преодоления стресса. Часть 3. Стратегии и стили преодоления стресса // Психол. журн., 2006. Т.27. №3, էջ 106-116.
2. Карташова К.С. Психология стресса, Учебно-методическое пособие Красноярск СФУ 2012, էջ 30
3. Коломейцев Ю.А.-Основные научные подходы к копинг-поведению (совладающему поведению)
4. Крюкова, Т.Л. Методология исследования и адаптация опросника диагностики совладающего (копинг) поведения // Жур-л практического психолога. – М: 2007. - №3., էջ 82-92.
5. Малкина-Пых И.Г. Психосоматика: Справочник практического психолога. – М.: Изд-во Эксмо, 2004., էջ 992
6. Мещеряков Б., Зинченко В. Большой психологический словарь
7. Нартова-Бочавер С.К. «Coping behavior» в системе понятий психологии личности // Психол. журн., 1997. Т.18. №5. էջ 20-30.
8. Останина, Н.В. Подходы к классификации копинг-поведения в научной литературе // Известия Рос. гос. Пед. Ун-та им. А.И. Герцена № 70-2 2008, էջ 127-131.
9. Церковский, А.Л. Современные взгляды на копинг-проблему
10. Ялтонский В.М., Сирота Н.А., Чазова А.А. и др. Особенности базисных копинг-стратегий в структуре копинг-поведения молодых врачей и студентов Медицинского института // Обозрение психиатрии и мед. психологии им. Бехтерева. – 1996. – № 3-4., էջ145-147.
11. D'Zurilla T.J., Chang E.C., Nottingham E.J., Faccini L. Social problem-solving deficits and hopelessness, depression, and suicidal risk in college students and psychiatric inpatients // J. Clin. Psychol. – 1998. – Vol. 54, № 8.
12. Perrez M., Reicherts M. Stress, coping, and Health. A Situation-Behavior Approach. Theory, Methods, Applications. – Seattle, 1992.

ОВАННИСЯН ЕВА. ФОРМИРОВАНИЕ И ОССОБЕННОСТИ КОППИНГ СТРАТЕГИЙ СТРЕССА. *В статье рассматривается одна из актуальных проблем психологии-понятия «стресс и копинг». На современном этапе развития психологии ученые рассматривают «копинг» как средство преодоления трудностей, отражающее готовность человека решать жизненные проблемы.*

HOVHANNISYAN YEVA. *FORMATION AND FEATURES OF STRESS COPING STRATEGIES.* ***The current problems in psychology - the concepts of "stress and coping" are discussed in the article.*** *In modern times, the instability of economic, political and social conditions leads to an increase in a person's stressful situations, as he/she constantly faces various types of socio- psychological difficulties.*

ՕԺՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արևիկ Խուգեյան

ԵՀՀ «Ռոսլին» արվեստի և հումանիտար գիտությունների ակադեմիա

Մուտքագրված է 02.05.22, հաստատված է տպագրության 25.06.22

Ամփոփագիր. *Ներկայումս երեխաների օժտվածության խնդիրների ուսումնասիրությունները ենթադրում են հասկանալ և հաշվի առնել ժամանակակից երեխաների զարգացման առանձնահատկությունները: Ժամանակակից հասարակության կրած տեղեկատվական հսկայածավալ ներհոսքն անդրադառնում է աճող սերնդի հոգեկան և ֆիզիկական, հուզական զարգացման վրա, ինչի արդյունքում հատկապես տուժում է երեխաների խոսքը:*

Հիմնաբառեր. *խոսքի խանգարումներ, օժտվածություն, խոսքային դժվարություն, մտածողություն:*

Այսօր ստեղծված են երեխաների մտավոր և ստեղծագործական ներուժի բացահայտման մեծ հնարավորություններ: Երեխաներն ավելի շատ տեղեկատվության են տիրապետում, քան անցած հազարամյակի իրենց հասակակիցները, հեշտությամբ օգտվում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներից, դրանք կիրառում ըստ անհրաժեշտության: Միևնույն ժամանակ շատ հետազոտողներ ուշադրություն են դարձնում ժամանակակից երեխաների խոսքի զարգացման դժվարություններին:

Երեխաների բազմակողմանի, լիարժեք և ներդաշնակ զարգացման ցուցանիշ է համարվում խոսքը: Շնորհիվ խոսքի ձևավորվում և զարգանում են երեխայի հոգեկան այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են ընկալումը, ուշադրությունը, երևակայությունը, հիշողությունը: Խոսքը համարվում է հաղորդակցման ձև և մտածողության գործիք: Կենտրոնական նյարդային համակարգի լիարժեք աշխատանքի, տեսողության և լսողության օրգանների աշխատանքի, ինչպես նաև մեծերի և հասակակիցների հետ հաղորդակցման շնորհիվ է ձևավորվում երեխայի խոսքը: Հենց նախադպրոցական տարիքում է, որ ինտենսիվ զարգանում են խոսքի բոլոր կողմերը, դրա ձևերն ու գործառույթները: Խոսքի յուրաքանչյուր խանգարում կարող է հանգեցնել երեխայի գործունեության և վարքի վրա, նրա հնարավորությունների և օժտվածության բացահայտման վրա: Խոսքի խանգարումների խնդրին անդրադարձել են մեծաթիվ հետազոտողներ, սակայն, պետք է նշել, որ օժտված երեխաների խոսքի խանգարումների վերաբերյալ տվյալները բավական սակավ են: Սովորաբար, նախադպրոցական տարիքում օժտված են կոչվում այն երեխաները, ովքեր իրենց հասակակիցներից տարբերվում են ինտելեկտի և խոսքի զարգացման բարձր մակարդակով: Այս երեխաները մեծահասակներին ուղղում են իրենց տարիքի ոչ հարիր հարցեր, անում են բարձր կարգի դատողություններ, համեմատություններ, վերլուծություններ:

Նրանք, որպես կանոն, գիտեն շատ բանաստեղծություններ, անգիր կարող են արտասանել գրքից հատվածներ: 3-4 տարեկանում գիտեն այբուբենը, 5 տարեկանում կարողանում են կարդալ, հաճույքով խաղում են խոսքային խաղեր: Այս երեխաները հետաքրքրասեր են, խոհեմ և հասկացող: Նրանք տարբերվում են իրենց հասակակիցներից իրենց խոսքով, մտքի և տրամաբանության ճկունությամբ: Ինչպես նշում է Վայլանդը, օժտվածությունը և զարգացած ինտելեկտի մակարդակը մենք սովորաբար չափում ենք բանավոր հաղորդակցման միջոցով. եթե երեխան ունի զարգացած խոսք, հարուստ բառապաշար, հարցերին պատասխանում է արագ, անկաշկանդ ու ճիշտ, նշանակում է նա օժտված երեխա է: Իսկ այն երեխան, ով լռակյաց է, չի պատասխանում հարցերին, երբեմն թվում է, թե չի էլ լսում, մենք ասում ենք, որ նա ունի զարգացման հապաղում: Եթե նույնիսկ նա լուծում է բարդ խնդիրներ, կատարում է մտածական բարդ գործողություններ, սկզբնական շրջանում դա մեզ կարող է անհանգստացնել [14]:

Կարելի է արդյոք օժտված համարել այն երեխաներին, ովքեր ունեն զարգացման, մասնավորապես խոսքի դժվարություններ: Ինչպե՞ս են հարաբերվում օժտվածությունը և երեխայի խոսքի ու մտածողության զարգացման դժվարությունները: Եթե այս երկու կողմերին նայենք տարբեր տեսանկյուններից, ապա կստացվի, որ օժտված պետք է համարենք միայն այն երեխաներին, ովքեր հաջողություններ են գրանցում զարգացման բոլոր ոլորտներում: Այս դեպքում խոսքի զարգացման դժվարություններ ունեցող երեխաները բացառվում են օժտվածների շարքից, և օժտված են համարվում միայն գերազանց զարգացած խոսք ունեցող երեխաները: Միևնույն ժամանակ գրականության մեջ նկարագրված են դեպքեր, երբ հասուն տարիքի օժտված մարդիկ մանկության տարիներին ունեցել են խոսքի խնդիրներ: Նույնիսկ գոյություն ունի Էնշտեյին համախտանիշ հասկացությունը: Այս համախտանիշ ունեցող մարդիկ փոքր տարիքում ախտորոշվել են որպես աուտիստիկ սպեկտորի խանգարում կամ մտավոր հետամնացություն ունեցող երեխաներ [10]: Երբեմն օժտված երեխաների խոսքը կարող է հապաղել: Մ.Գրոսն իր հետազոտություններում անրադարձել է նմա դեպքի, երբ երկու եղբայրներ ընդհանրապես չեն խոսել մեկը մինչև 18, մյուսը մինչև 21 ամսական դառնալը: Եղբայրների մայրը մանկաբույժի կողմից տեղեկացվել է երեխաների հնարավոր մտավոր հետամնացության մասին: Ավել ուշ պարզվել է, որ նրանց մոտ՝ Ջոնաթանն ունի 170 IQ, իսկ Քրիստոֆերը՝ 200: Նման դեպքերում, երբ խոսքը հանկարծակի է ի հայտ գալիս, արտահայտվում է միանգամից ձևավորված երկբառանի կամ կարճ նախադասությունների ձևով, այլ ոչ՝ առանձին բառերով:

Երբեմն օժտված երեխաները, զգալով իրենց խոսքային առավելությունները հասակակիցների նկատմամբ, մանկապարտեզում կամ դպրոցում կարող են թաքցնել իրենց ունակությունները և խոսել այնպես, ինչպես իրենց հասա-

կակիցները: Այս երեխաներից որոշներն ունեն երկու տեսակ բառապաշար. մեկը տան համար, մյուսը՝ մանկապարտեզի կամ դպրոցի [8]

Օժտված երեխաների մոտ ի հայտ են գալիս բնավորության ինչպես դրական, այնպես էլ բացասական դրսևորումներ, զարգացման դժվարություններ՝ խոսքի զարգացում, տարածության մեջ կողմնորոշում, սոցիալականացում, պարզ, նույնիսկ հասարակ թեստերի կատարման դժվարություններ, ագրեսիա և այլն [7]:

Ե.Ի. Շեբլանովան նշում է, որ հաճախ օժտված երեխաների ինտելեկտուալ հնարավորությունները և խոսքը չեն համընկնում, այդ պատճառով աշակերտը երբեմն չի կարողանում ձևավորել սեփական՝ հասակակիցներից շատ տարբերվող մտքերը և թողնում է դասը չիմացող աշակերտի տպավորություն: Մանկապարտեզում և դպրոցի տարրական դասարաններում այս երեխաները հանդիպում են ընթերցանության և գրելու դժվարությունների: Մեր օրերում պետք է նախատեսել օժտվածության բացահայտման համալիր մոտեցման կիրառում՝ կարևորելով հատկապես խոսքի զարգացման բաղադրիչը [5]:

Օժտված երեխաների խոսքի զարգացման դժվարությունները տարբեր են: Իր ուսումնասիրություններում Մ.Դիքսոնը առանձնացրել է այդ դժվարությունների հետ կապված մի քանի գործոններ.խոսքի հնչյունների արտաբերում, սեփական մտքերն արտահայտելու համար համապատասխան բառապաշարի ընտրություն, ագրամատիզմ [11]:

Օժտված երեխաների խոսքային դժվարությունները կարող են շատ ուշ ի հայտ գալ, քանի որ նրանց մյուս առավելությունները ժամանակավորապես կոմպենսացնում կամ քողարկում են այդ: Խոսքի շատ հմտություններ ավելի են բարդանում քանի որ երեխան մեծանում է: Օրինակ, 8 տարեկանում պահանջվող հմտությունները երեխան ձեռք է բերում ավելի վաղ, ասենք, 5 տարեկանում:

Խոսքի դժվարություններ ունեցող շատ երեխաները չեն կարող հաղթահարել դրանք ինքնուրույն, անհրաժեշտ խոսքի հմտությունները չեն ձեւավորվում ժամանակին, և երեխան սկսում է հետ մնալ ուսուցման գործընթացում: Մասնագետի ժամանակին օգնությունը ոչ միայն կօգնի երեխային հաղթահարել խոսքային դժվարությունները, այլև կբարձրացնի նրա ինքնագնահատականը և կբացահայտի թաքնված հնարավորությունները:

Խոսքային դժվարություններ ունեցող երեխաներն ունեն նաև դժվարություններ ուսումնական գործընթացում: Մ.Թոլն առանձնացրել այդ դժվարությունների մի քանի տեսակ. դժվարություններ բանավոր խոսքի և մանր մոտորիկայի հետ, ունեն նաև կազմակերպական դժվարություններ:

Այս երեխաները երբեք չեն խոստովանում իրենց օժտվածությունը, քանի որ ունեն ուժեղ և թույլ կողմեր, և թեստային առաջադրանք կատարելիս մեկը մյուսին լրացնելով, ցուցաբերում են միջին արդյունք:

Օժտվածությունը կորում է դժվարությունների համատեքստում, մանկավ-

արժներն ու ծնողները չեն անում ոչինչ՝ օժվածությունը բացահայտելու և զարգացնելու համար [6]:

Ներկայացնենք 5-6 տարեկան 220 երեխայի հետ անցկացված հետազոտության արդյունքները, որոնք իրականացվել են՝ պարզելու համար օժտված երեխաների խոսքի զարգացման դժվարությունների տեսակները [2]: Երեխաների 70% –ի մոտ նկատվում է խոսքի դժվարություն՝ կապված հնչարտասանության հետ՝ խոսքային ապարատի նորմալ իներվացիայի դեպքում/դիսլալիա/, իսկ 13%-ի մոտ հնչարտասանության խնդիրը կապված էր իներվացիայի խանգարման հետ /դիզարթրիա/: Հետազոտվող 6% օժտված երեխաներ ունեն բառիմաստի ընկալման և քերականական կառույցի ճիշտ ձևավորման խնդիր: Սա կապված է նաև աղքատ բառապաշարի և քերականական կառույցների կիրառման չիմացության հետ: Ուսումնասիրվող երեխաներից մեկի մոտ նկատվել է կակազություն:

Այսպիսով, և՛ օժտված երեխաները, և՛ իրենց հասակակիցներն ունենում են կարող են ունենալ խոսքի զարգացման միևնույն դժվարությունները: Դրանք տարբեր են լինում իրենց բնույթով. առավել քիչ ստեղծագործ երեխաների մոտ խոսքի խնդիրն ավելի խորն է:

Օժտված երեխաները հանդիպում են լուրջ դժվարությունների հուզական, սոցիալական զարգացումների անհամապատասխանության պատճառով: Նրանց բնորոշ է յուրահատուկ, չկրկնվող կարծիքներ արտահայտել, լուծումներ առաջարկել: Օժտված լինելը երբեմն խանգարում է այդ երեխաներին դրական հարաբերություններ հաստատել ինչպես մանկավարժների, այնպես էլ հասակակիցների հետ: Մենք՝ մանկավարժներս, պետքէ խորագետ ձևով ընկալենք և արժևորենք յուրաքանչյուր երեխայի օժտվածության դրսևորում, որպեսզի անփութորեն չկոտրենք ապագա էյնշտեյններին, էդիսոններին կամ մոցարտներին:

Օգտագործված գրականություն

1. *Андреева А.Д.* Современный дошкольник: возрастные нормы и жизненные реалии // Психолог в детском саду. – 2010. – № 2. – С. 3–17.
2. Е.С. Белова *И*сследование одаренных дошкольников с трудностями в развитии речи, Теоретическая и экспериментальная психология • 2012 • Т. 5 • № 3 • С. 5–16 5
3. *Матюшкин А.М.* Концепция творческой одаренности // Вопросы психологии. – 1989. – № 6. – С. 29–33.
4. *Щебланова Е.И.* Неуспешные одаренные школьники.– М.: Обнинск: ИГ–СОЦИН, 2008. – 212 с.
5. *Щебланова Е.И.* Одаренность как психологическая система: структура и динамика в школьном возрасте. Автореф. дисс. …докт. психол. наук. – М., 2006.
6. *Baum S.* The gifted learning disabled: A paradox for teachers // Preventing School Failure. – 1990. – Vol. 34. – P. 11–14.

7. *Fetzer E.A.* The gifted/learning-disabled child: A guide for teachers and parents // Gifted Child Today. – 2000. – Vol. 23. – N 4. – P. 44–50.
8. *Gross M.U.M.* Exceptionally gifted children. – London: Routledge, 1993.
9. *Gross M.* Small poppies: Highly gifted children in the early years // Roeper Review. – 1999. – Vol. 21. – N 3. – P. 207–214.
10. *Sowell T.* The Einstein syndrome: Bright children who talk late. – N.Y.: Basic Books, 2001. – 256 p.
11. The work of a speech language pathologist (interview with Maria Dixon) // Twice-exceptional Newsletter. – September-October 2008. – Issue 30. – P. 8–10.
12. *Toll M.F.* Gifted learning disabled: A kaleidoscope of needs // Gifted Child Today. – 1993. – Vol. 16(1). – P. 34–35.
13. *Torrance E.P., Caropreso E.J.* Assessment of preschool giftedness: intelligence and creativity. – Harrisburg: Pensylvanian Depatment of Education, 1999.
14. *Wayland S.* Why is it so difficult to get treatment for language disorders // Twice-exceptional Newsletter. – September-October 2008. – Issue 30. – P. 3–7.

АРЕВИК ХУГЕЯН. ТРУДНОСТИ РЕЧЕВОГО РАЗВИТИЯ ОДАРЕННЫХ ДЕТЕЙ. *В настоящее время изучение вопросов детской одаренности предполагает осмысление с учетом особенностей развития современных детей. Огромный поток информации, которую несет современное общество, влияет на умственное, физическое и эмоциональное развитие подрастающего поколения, в результате чего особенно страдает детская речь.*

AREVIK KHUGEYAN. DIFFICULTIES FOR THE SPEECH DEVELOPMENT OF GIFTED CHILDREN. *At present, the study of child endowment issues presupposes understanding, taking into account the peculiarities of the development of modern children. The huge influx of information carried by modern society affects the mental, physical and emotional development of the growing generation, because of which children's speech suffers especially.*

ԾՆՈՂՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁԻ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Վահան Մելիքսեթյան

ԵՀՀ «Ռոսլին» արվեստի և հումանիտար գիտությունների ակադեմիա

Մուտքագրված է 04.05.22, հաստատված է տպագրության 25.06.22

Ամփոփագիր. *Ուսումնասիրված է ծնողների փոխհարաբերության ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ զարգացման վրա: Կատարվել է տեսամեթոդական վերլուծություն, որի ընթացքում ընդհանրացվել են հոգեբանական գործոնների հետազոտության խնդիրները, ինչպես նաև՝ երեխայի անձի զարգացմանը նպաստող պայմանների ստեղծման առանձնահատկությունները: Պարզվել է ընտանիքում տիրող փոխհարաբերությունների մշակույթը, կառավարման ոճը, համակարգվել և ներկայացվել են այն ներընտանեկան խնդիրները, որոնք կարող են խոչընդոտել երեխայի անձի ներդաշնակ զարգացմանը:*

Հիմնաբառեր: *ընտանիք, կոնֆլիկտ, երեխայի անձ, անձի ձևավորում, ներդաշնակ զարգացում, վարքային նորմ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ելնելով թեմայի արդիականությունից, կարող ենք փաստել, որ ծնողների փոխհարաբերություններն ազդում են երեխայի անձի զարգացման վրա: Ծնողների կայացրած յուրաքանչյուր որոշում ազդում է երեխայի անձի վրա, կապված նրանից, թե ծնողներն ինչպես են երեխային նախապատրաստում դրան: Եվ, իհարկե, ծնողների փոխհարաբերություններում մեծ նշանակություն ունի երկրի վիճակը, սոցիումը և այլն: Այս թեման դեռ բավարար քանակությամբ ուսումնասիրված չէ և հարկավոր է շատ ուսումնասիրություններ և հետազոտություններ կատարել, որպեսզի կարողանանք հստակ պատասխան տալ այն հարցին, թե ինչպես կարող է ծնողների փոխհարաբերություններն ազդել երեխայի անձի ներդաշնակ զարգացման վրա: Ընտանիքն այն միջավայրն է, որտեղ ձևավորվում է նրա անձը, ինչպես նաև ընտանիքի հանդեպ վերաբերմունքը և այլն: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել ծնող-երեխա, ծնող-ծնող փոխհարաբերություններին: Երեխայի զարգացման և դաստիարակության գործընթացում կարևորվում են ընտանեկան դաստիարակության պայմանների, երեխայի հետ ծնողների փոխազդեցության բնույթով: Ժամանակակից ընտանիքների հոգեբանա-մանկավարժական ուսումնասիրություններում կարևորվել է ընտանիքում ծնող-երեխա փոխհարաբերությունների բնույթը:

Ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրները կունենան արդյունավետ լուծում և արդի պայմաններում երեխայի անձի զարգացման ու

ձևավորման գործընթացի վրա ընտանիքի ազդեցությունը կլինի արդյունավետ, եթե ընտանիքում ստեղծվեն մանկավարժական պայմաններ և նպաստեն անձի ձևավորմանն ու զարգացմանը:

Մեթոդներ

Աշխատանքի հիմնական մեթոդներն են հայ և արտասահմանյան մասնագետների աշխատությունների մանրակրկիտ ուսումնասիրությունն ընտանիքում տիրող մթնոլորտի և դրա ազդեցությունը երեխայի հոգեկանի վրա, իր բոլոր նրբերանգներով, և ուսումնասիրության արդյունքում ստացված գիտելիքների մշակումը և ընդհանրացումը: Աշխատանքի կիրառական նշանակությունը պայմանավորված է փաստացի ճշգրիտ մեթոդների կիրառմամբ, որոնք թույլ կտան ճիշտ կազմակերպել ընտանեկան դաստիարակությունը, բարելավել ծնող-երեխա հարաբերությունները և ընտանիքը դարձնել առավել առողջ:

Կարևոր է իմանալ հասարակության դիրքորոշումները և, որպեսզի ավելի պարզ պատկերացում ունենայինք *ընտանիք* կառույցի դերի և նշանակության մասին երեխայի անձի դաստիարակության մեջ, իրականացվել է ուսումնասիրություն՝ պարզելու, թե ընտանիքներն ինչպիսի պատկերացումներ և դիրքորոշումներ ունեն ընտանեկան դաստիարակության, ընտանեկան արդի վիճակի, ընտանեկան կյանքի և առհասարակ *ընտանիք* կառույցի վերաբերյալ՝ համաձայն կազմած հարցաշարի:

Արդյունքներ

Ուսումնասիրության համար թիրախային խումբ է ընտրվել 25-50 տարեկան ՀՀ քաղաքացիներ: Ուսումնասիրությունն անցկացվել է շուրջ 90 ընտանիքներում: Ստացված արդյունքերից պարզվում է, որ այսօր ընտանիքների մեծամասնությունը մտահոգված է իր երեխայի ճակատագրով, ինչը միանշանակ գովելի է, քանի որ վերջին ժամանակներում բացասական երևույթները ավելացել են՝ ազդելով *ընտանիք* կառույցի վրա:

Այդ խնդիրներից կարևորների մեջ կարելի է առանձնացնել *ծնողի և երեխայի միջև առկա անջրպետը*, որը ազդում էր նրանց անկեղծ շփման վրա:

Չնայած որ բոլոր ընտանիքներում էլ երեխան սիրված էր, գտնվում էր ընտանիքի անդամների ուշադրության կենտրոնում, բայց քանի որ ծնողների մեծ մասը չէին տիրապետում երեխայի հետ շփման մշակույթին, դաստիարակության մեթոդներին ու ձևերին, հարաբերությունները տարերային էր:

Այս հարցով մտահոգված՝ ուսումնասիրված բոլոր ընտանիքներում ունեցել ենք շատ հետաքրքիր զրույց-քննարկումներ. «Ինչպե՞ս երեխաների նկատմամբ հարգանք դրսևորել», «Ինչպիսի՞ գործոններ կարող են ներազդել երեխայի անձի ներդաշնակ զարգացման վրա», «Ինչպե՞ս եք երեխայի մեջ սերմանում «ճիշտ և սխալ», «լավ և վատ» գաղափարները» և այլ նմանատիպ հարցեր:

Սոցիալական հարցման վերլուծության հարցաշար

Հաճա՞խ են Ձեր ընտանիքում կոնֆլիկտներ առաջանում և որո՞նք են դրանց առաջացման պատճառները:

Ընտանիքում ո՞վ է զբաղվում երեխայի դաստիարակությամբ:

Հնարավո՞ր է ունենալ կարգապահ երեխա, եթե ընտանիքում ապրող մեծահասակների միջև կան տարաձայնություններ:

Ի՞նչ հաճախականությամբ եք այցելում դպրոց:

Երեխայի դաստիարակչական աշխատանքներն իրականացնելիս կդիմե՞ք որևէ մեկի:

Ինչպիսի՞ գործոններ կարող են ներազդել երեխայի անձի ներդաշնակ զարգացման վրա:

Ձեր երեխան սուտ խոսու՞մ է, որո՞նք են դրա պատճառները:

Ինչպե՞ս եք երեխայի մեջ սերմանում «ճիշտ և սխալ», «լավ և վատ» գաղափարները:

Երեխային սովորեցնո՞ւմ եք ընդունված վարքային չափանիշները,

Բարկանում կամ պատժո՞ւմ եք նրան ստի կամ սխալի համար:

Քննարկում

Աշխատանքի հիմնական նպատակն էր՝ ուսումնասիրել, թե ինչպես են ծնողների փոխհարաբերություններն ազդում երեխայի անձի ներդաշնակ զարգացման վրա: Հիմնական խնդիրներն էին ՝ իրականացնել տեսամեթոդական վերլուծություն, որտեղ պետք է ընդհանրացնել հոգեբանական գործոնների հետազոտության խնդիրները, պարզել ընտանիքում տիրող փոխհարաբերությունների մշակույթը, կառավարման ոճը, համակարգել և ներկայացնել այն ներընտանեկան խնդիրները, որոնք կարող են խոչընդոտ դառնալ երեխայի անձի ներդաշնակ զարգացման գործընթացում:

Ծնող-երեխա հարաբերությունների հիմնական բնութագիրը

Դաստիարակության հիմնական ինստիտուտն ընտանիքն է: Այն ամենը, ինչ ձեռք է բերում երեխան ընտանիքում, ազդում է նրա ողջ հետագա կյանքի վրա: Այստեղ են դրվում երեխայի անհատականության հիմքերը: Յոթ տարեկանում նա արդեն գրեթե ձևավորված անհատականություն է: Ծնող-երեխա փոխհարաբերրությունը միջանձնային վերաբերմունքի, կողմնորոշումների և ակնկալիքների ընդհանուր համակարգ է տարիքային զարգացման ողջ ընթացքում, որը որոշվում է համատեղ գործունեության և ընտանիքի անդամների միջև հաղորդակցության միջոցով:

Մասնագետները տարբերակում են ծնող-երեխա բարեհաջող և անբարեհաջող փոխհարաբերություններ: Ծնող-երեխա փոխհարաբերությունները հաջողված են համարվում, երբ երեխան լավ է զգում իրեն ընտանիքում, նրան սիրում են, հարգում են: Ծնող-երեխա անբարեհաջող հարաբերությունները

զարգանում են այն ընտանիքներում, որտեղ անհանգիստ, անտարբեր և դաժան ծնողներ են:

Ընտանիքում փոխհարաբերությունները կախված է բազմաթիվ պատճառներից՝ ծնողները հուզականորեն տարբեր են, երեխաների հետ շփվելու փորձ չունեն, քանի որ այն ձեռք է բերվում երեխայի զարգացմանը զուգընթաց և այլն:

Կան տարբեր տեսակի փոխհարաբերություններ.

Համագործակցություն - երբ բավարարված են ընտանիքի բոլոր անդամների հիմնական պահանջմունքները:

Դաշնակցային հարաբերությունները հիմնված են բոլոր կողմերին բավարարող ընդհանուր օգուտ ստանալու վրա:

Մրցակցություն - երբ ընտանիքում յուրաքանչյուրը ձգտում է ամեն ինչում առաջինը լինել, ամեն գնով հասնել սեփական նպատակներին:

Առերեսում - երբ ընտանեկան հարաբերություններում գերակշռում է ուրիշներին գերակայելու, սեփական առավելությունը ցույց տալու ցանկությունը:

Անտագոնիզմ - երբ ընտանեկան փոխհարաբերություններում կողմերը համաձայն չեն փոխզիջման:

Երեխա-ծնող հարաբերությունների տարբեր դասակարգումներ կան:

Հիպոխնամք - երբ երեխան մնացել է ինքն իր հույսին:

Հիպերխնամակալություն – երբ երեխան գերպաշտպանված է, անկախությունից զրկված, ամեն ինչ արգելված է:

Մոխրոտի տիպի դաստիարակություն – երբ երեխան էմոցիոնալորեն մերժված է, նրան չեն սիրում:

Կոշտ դաստիարակություն - երբ ամենափոքր խախտման համար երեխան պատժվում է:

Ե.Վ. Կրուտիխի հետազոտությունից պարզում ենք, որ լիարժեք և ոչ լիարժեք ընտանիքներում դաստիարակությամբ հիմնականում զբաղվում են մայրերը: Այդ իսկ պատճառով էլ դաստիարակությունը միակողմանի է: Հայրերի հետ հուզական կապը թույլ է կամ բացակայում է: Ընտանիքներում գերիշխում է նաև երեխաների հետ շփվելու ավտորիտար ոճը: Ոչ լիարժեք ընտանիքներում այս ոճը զուգորդվում է երեխայի հուզական մերժման հետ: Ծնողը նրան ընկալում է որպես անհաջողակ, կյանքին չհարմարված: Մայրը ցուցաբերում է զայրույթ, գրգռվածություն, անվստահություն, անհարգալից վերաբերմունք երեխայի նկատմամբ:

Ամբողջական ընտանիքներում հարաբերությունները կրում են ավտորիտար-սիմբիոտիկ բնույթ: Նրանք ապրումակցում են երեխային, ցուցաբերում են գերհսկողություն, զրկում են նրան անկախությունից, պաշտպանում են դժվարություններից, դրսևորում են խիստ կարգապահություն: Այսպիսով, ամբողջական ընտանիքներում ծնողներն ավելի հանդուրժող են իրենց

երեխաների թերությունների նկատմամբ: Միայնակ ծնողների ընտանիքներում երեխաներին սահմանվում է ուժեղացված վերահսկողություն, շփման մեջ անհամապատասխանություն, ծնողների կողմից բնավորության որոշակի գծերի մերժում և շատ բարձր անհանգստություն:

Դաստիարակությունը ծանր աշխատանք է: Նրանում, ինչպես ցանկացած այլ գործընթացում, հնարավոր են սխալներ, անհաջողություններ, պարտություններ: Ընտանեկան դաստիարակությունը կյանք է, որը պետք է լինի ներդաշնակ ու երջանիկ:

Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները եվ դրանց ազդեցությունը երեխայի անձի ձեվավորման վրա

Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ: Կոնֆլիկտային հարաբերություններով ընտանիքներում նյութական և կրթական անհրաժեշտությունը, նորմերի իմացությունն ի զորու չեն կանխելու պարբերաբար ծագող անախորժությունները: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում լարվածություն, տհաճ հոգեվիճակներ, սթրեսներ [5]:

Փորձենք ներկայացնել ուսումնասիրության արդյունքում բացահայտված ընտանեկան կոնֆլիկտների տեսակներն ու դրանց հիմնական պատճառները:

Կոնֆլիկտ ամուսնական զույգի միջև

Կին-տղամարդ հարաբերություններում կոնֆլիկտի պատճառ կարող են լինել հոգեբանական անհամատեղելիությունը, զույգերից մեկի *ծանր* բնավորությունը, սեռական անբավարարվածությունը, դավաճանությունը, աշխարհընկալման և արժեհամակարգի անհամապատասխանությունը, կնոջ անկարողությունը՝ լուծելու կենցաղային հարցերը, ֆինանսական խնդիրները և այլև: Կոնֆլիկտը կարող է պայմանավորված լինել նաև ընտանեկան հարաբերությունների ճգնաժամով:

Սա նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ երեխան ականատես է լինում ծնողների վեճերին կամ բռնության տեսարաններին: Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի, վախի զգացումով, լինում մեկուսացված ու անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային, հոգեսոմատիկ և այլ հիվանդություններ:

Հարկ է նշել, որ որոշ երեխաների համար էլ կոնֆլիկտը դառնում է սովորական երևույթ, և հետագայում, հասուն տարիքում, նրանք այդ նույն անտարբերությունը դրսևորում են շրջապատող մարդկանց, երևույթների նկատմամբ, դառնում են սառնասիրտ, ունենում ապրումակցման ցածր մակարդակ: Այս երեխաների ծնողները, տարված լինելով հարաբերություններ

պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր, կատարում է անընդունելի արարքներ, դրսևորում է հակասոցիալական վարքագիծ:

Կոնֆլիկտ ծնող-երեխա հարաբերություններում

Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը՝ ծնողի կողմից երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում:

Երեք տարեկանի ճգնաժամի պատճառը գոյություն ունեցող հակասությունն է երեխայի պահանջմունքների և դրանց բավարարման միջև: Երեխաներն այս շրջանում դառնում են կամակոր, համառ, ամեն ինչ անում են պահանջվածին հակառակ, բացասական վերաբերմունք են ցուցաբերում մեծահասակների նկատմամբ, թեպետ պետք է նշել, որ երեխայի նեգատիվիզմը ոչ բոլորի նկատմամբ է դրսևորվում. այն խիստ ընտրողական բնույթ է կրում և ուղղված է մասնավորապես նրանց դեմ, ովքեր փորձում են ճնշել իր ազատությունը: Մեծահասակները պետք է իմանան, որ երեք տարեկանի ճգնաժամն անցողիկ երևույթ է և վկայում է այն մասին, որ երեխան պատրաստվում է անցնել հաջորդ տարիքային փուլ [1]:

Ծնողների տեղեկացվածությունը, նրանց հանդուրժողականությունը թույլ չեն տալիս, որ ծնող-երեխա հարաբերություններում նվազի ջերմությունը, անջրպետ առաջանա: Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով:

Դեռահասությունն ինքնին համարվում է ճգնաժամային տարիք, և այս տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը [4]: Այս տարիքային փուլում հաճախ է առաջանում «հայրեր և որդիներ» խնդիրը: Մի դեպքում, դեռահասը սկսում է համեմատել *իդեալական ծնողի* իր պատկերացումներն իրական ծնողների հետ և տեսնում է, որ հսկայական տարբերություն կա *իդեալական* և *իրական* ծնողների միջև: Մյուս դեպքում, դեռահասը, որի մոտ սկսվել է ֆիզիկական բուռն զարգացման և սեռական հասունացման գործընթաց, սկսում է իրեն մեծ համարել և բոլորից պահանջել, որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի: Բոլոր դեռահասները, առանց բացառության, ունեն այդ ձգտումը: Այն ծնողները, ովքեր շարունակում են դեռահասին վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են լուրջ խնդիրներ:

Կոնֆլիկտ երեխա-երեխա հարաբերություններում

Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի պատճառները մի քանիսն են: *Առաջին* պատճառը երեխայի հանդեպ ուշադրության պակասն է: Որպես կանոն, ընտանիքում երկրորդ երեխայի ծնունդն առաջնեկի մեջ առաջացնում է մերժված, անտեսված լինելու զգացողություն, ինչն էլ կարող է վերածվել ատելության ինչպես ծնողի, այնպես էլ քրոջ կամ եղբոր նկատմամբ: Երկրորդ երեխայի ծնվելուց հետո ծնողներն առավել ուշադիր պետք է լինեն առաջնեկի նկատմամբ, նրա մեջ ձևավորեն դրական վերաբերմունք նորածնի նկատմամբ: Միայն ծնողից է կախված երեխա-երեխա հարաբերությունների բնույթը:

Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի առաջացման *երկրորդ* պատճառը ծնողի կողմից երեխաների միջև սեռային խտրություն դնելն է: Հայկական ընտանիքներում նորմալ է տղա-աղջիկ երեխաներին բաժանել ծնողների միջև: Մայրերը սովորաբար սիրում են տղա երեխաներին՝ տալով նրանց արտոնություններ, իսկ հայրերը նմանատիպ վերաբերմունք են դրսևորում աղջիկների հանդեպ: Երեխան դեռևս վաղ տարիքից հասկանում և զգում է ծնողի վերաբերմունքն ու սկսում է հակակրանք զգալ եղբոր կամ քրոջ նկատմամբ:

Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ

Եթե համեմատենք *ընդլայնված* և *բջջային* ընտանիքները, ապա կտեսնենք, որ ընդլայնված ընտանիքներում առաջանում են այնպիսի կոնֆլիկտներ, որոնք ուղղակի չեն կարող առաջանալ բջջային ընտանիքներում: Հայկական իրականությունում ընդունված ավանդույթ է, երբ տղան ամուսնանում և իր կնոջ հետ ապրում է հայրական ընտանիքում, որտեղ, բացի ծնողներից, ապրում են նաև եղբայրները, քույրերը և այլ հարազատները: Որքան բազմանդամ է ընտանիքը, այնքան դժվար է ապահովել բարիդրացիական մթնոլորտ:

Բազմաթիվ ընտանիքների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտը հիմնականում առաջանում է հարսների և սկեսուրների միջև: Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության և խառնվածքի անհամատեղելիությունը և այլն: Կոնֆլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը [3]:

Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն, երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում,

վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը: Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, չշփվող, դաժան, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամփոփ, ընկճված ու անտարբեր:

Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ հանգել ենք այն եզրակացության, թե ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները, միանշանակ, բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական: Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են: Ուստի, յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

ա. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում՝ դրանց արագ լուծում տալ,

բ. ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար, բարի դրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

Եզրակացություն

Ուսումնասիրելով ընտանիքները և դրանցում առկա խնդիրները, ծանոթանալով ընտանեկան դաստիարակության նրբություններին, երեխաների ընտանեկան դաստիարակության գործում մանկավարժական պայմանների դերի կարևորությանը, ունենք որոշ կարծիքներ և առաջարկություններ:

Երեխայի և առհասարակ՝ անհատի ձևավորման ու կայացման գործում ընտանիքի դերը, ընտանեկան դաստիարակությունը խիստ կարևոր նշանակություն ունեն, սակայն ցավով պետք է նշենք այն, որ մեր ուսումնասիրությունների արդյունքում մենք ևս մեկ անգամ համոզվեցինք, որ ծնողն անտեղյակ է առաջին հայացքից մանր թվացող, բայց կարևորագույն հարցերից. ինչպե՞ս դաստիարակել, ու՞մ դիմել, ինչու՞ այսպես և ոչ այնպես, որոնց պատասխանները կարող ենք տալ մենք՝ մանկավարժներս՝ համապատասխան գործողություններով ու քայլերով: Բացի անտեղյակությունից ծնողների մեծամասնությունը նաև չի տիրապետում ծնող-երեխա շփման մշակույթին՝ հանդես է գալիս միայն պահանջատիրոջ դերում՝ չհարգելով երեխային, նրա իրավունքները, հաշվի չառնելով այն, որ պահանջը բխում է հարգանքից, ինչին անդրադարձել է Ա. Ս. Մակարենկոն, որն արժանի է հիշատակության. ‹‹հարգանք և պահանջկոտություն երեխայի նկատմամբ, եթե չես հարգում նրանից, ոչինչ պահանջելու իրավունք չունես»:

Ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրները կունենան արդյունավետ լուծում, երբ՝

- երկրում մշակվի սոցիալական կայուն քաղաքականություն,
- կարգավորվեն բնակչության զբաղվածության և գործազրկության հարցերը,
- մշակվեն արտագնացության, բնակչության տեղաշարժը կասեցնելու հստակ ծրագրեր,
- ամրապնդվի ընտանիք-դպրոց կապը, ծնողը տեղեկացված լինի ընտանեկան դաստիարակության նրբություններին:

Թվարկված առաջարկությունների իրագործման խնդիրը բոլորինս է. այս ողջ գործընթացին պետք է մասնակից դառնան քաղաքական, բժշկական, լրատվական, մանկավարժական և այլ կառույցներ, որոնք ուղղակի, թե անուղղակի առնչություն ունեն ընտանիք սոցիալական կառույցի հետ [2]: Իսկ ահա ծնողներին և, ընդհանրապես, ընտանիքներին կառաջարկենք երեխաներին դաստիարակելուց առաջ հիշել, որ իրենց կատարած ողջ աշխատանքը, եթե ոչ այսօր, ապա վաղը ամբողջովին գործելու են իրենց դեմ՝ դրական, թե բացասական առումներով, և որպեսզի վատ արդյունքի համար հետադարձ հայացք չկատարեն, առաջարկում ենք հարցին մոտենալ մեծ պատասխանատվությամբ:

Հետազոտության արդյունքում կատարել ենք հետևյալ եզրահանգումները.

Հետազոտության առաջին խնդիրն էր իրականացնել տեսամեթոդական վերլուծություն, որտեղ պետք է պարզել երեխայի անձի զարգացման համար նպաստավոր պայմանների առանձնահատկությունները:

Հանգել ենք այն եզրակացության, թե երեխայի անձի ներդաշնակ զարգացման համար հարկավոր է ընտանիքում ստեղծել բարենպաստ պայմաններ, ընտրել ճիշտ մեթոդներ երեխայի դաստիարակության համար, երեխային տալ սեր և հոգատարություն, ընտանիքում տիրի ջերմություն, ընտանիքի անդամները հարգեն միմյանց և երեխային ընդունեն որպես անձ, որը կարող է իր կարծիքն արտահայտել:

Կարևոր նշանակություն ունի ընտանիքում կառավարման, դաստիարակության ոճը: Կախված նրանից, թե ընտանիքի համար որ ոճն է դոմինանտ, երեխայի մոտ կզարգանա համապատասխան անձնային որակներ:

Աշխատանքի հաջորդ խնդիրն էր համակարգել և ներկայացնել ներընտանեկան խնդիրները, որոնք խոչընդոտում են երեխայի անձի զարգացմանը:

Կարելի է փաստել, թե ամուսինների միջև ամուսնական կյանքի անբավարարվածությունը, ամուսնական հարաբերություններում կոնֆլիկտների հաղթահարման ուղիների ոչ ճիշտ ընտրությունը, ընտանեկան դաստիարակության վերաբերյալ ոչ ճիշտ վերաբերմունքը բացասական ազդեցություն են ունենում երեխայի անձի ներդաշնակ զարգացման գործում:

Հղումներ

1. Բեժանյան Ս., Ծնող-երեխա բացասական հարաբերությունների երեխա բացասական հարաբերությունների պատճառները և դրանց հաղթահարման միջոցները սոցիալական մանկավարժի աշխատանքում, ՎՊՀ, 2018, Պրակ Ա, էջ 283-290:
2. «Ծնողի դպրոց» ծնողավարման, կրթական և հոգեբանական աջակցության կենտրոն» ՀԿ, «Կարգապահ երեխա՝ միֆ, թե՞ իրականություն» UNICEF Armenia, 2020, 115 էջ:
3. Հարությունյան Ն.Կ., Ղազարյան Ա.Փ., Ղուկասյան Լ.Հ., Հ 422 «Սոցիալական մանկավարժություն» (բուհական ձեռնարկ), Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 338 էջ:
4. Միրզոյան Վ. Խ., Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ, Գիտական տեղեկագիր, 2014, Պրակ Բ, էջ 223-231:
5. Նալչաջյան Ա. Ա., «Ընտանիքի հոգեբանություն», Դասագիրք միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի համար: Ե., «Զանգակ», 2001, 128 էջ:

VAHAN MELIKSETYAN. THE INFLUENCE OF PARENTS' RELATIONSHIP ON THE HARMONIOUS DEVELOPMENT PROCESSES OF THE CHILD'S PERSONALITY. *The main purpose of the work is to study how the parent-child relationship affects the harmonious development of the child's personality. In modern times, the parent-child relationship is at a higher level and, as a result of research, we can state that when there is love, tolerance, respect, mutual understanding in the family, the child's personality develops harmoniously. The main objectives of the study are:* ***a****. to carry out visual-methodological analysis, during which it is necessary to generalize the problems of research of psychological factors, as well as the peculiarities of creating favorable conditions for the development of the child's personality,* ***b****. to find out the culture of relations and management style within family, and* ***c****. to coordinate and present those problems in the family that may be an obstacle to the harmonious development of the child's personality.*

ВАГАН МЕЛИКСЕТЯН. ВЛИЯНИЕ ВЗАИМООТНОШЕНИЙ РОДИТЕЛЕЙ НА ГАРМОНИЧНОЕ РАЗВИТИЕ ЛИЧНОСТИ РЕБЕНКА. *Изучено влияние взаимоотношений родителей на гармоничное развитие личности ребенка. Проведен видеометодический анализ, в ходе которого были обобщены проблемы исследования психологических факторов, а также особенности создания условий, способствующих развитию личности ребенка. Уточнялась культура отношений в семье, стиль ведения, согласовывались и представлялись внутрисемейные проблемы, которые могли бы помешать гармоничному развитию личности ребенка.*

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՇԱՐԺԻՉ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արսեն Զազյան

Երևանի Հայբուսակ համալսարան

Մուտքագրված է 024.04.22, հաստատված է տպագրության 25.06.22

Ամփոփագիր. *Շարժիչ գործողությունների ուսուցումը ֆիզիկական դաստիարակության մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում: Տեխնիկայի բարդությունից կախված՝ շարժիչ գործողությունները կարող են ուսուցանվել ամբողջությամբ կամ մաս-մաս՝ համապատասխան մեթոդների կիրառմամբ: Մեթոդը ճանաչողական միջոցների, մոտեցումների և հնարքների ամբողջությունն է, որն ուղղված է ուսանողի ֆիզիկական որակների զարգացմանն ու անհատականության ձևավորմանը: Մարզման տարբեր փուլերում շարժիչ գործողությունների ուսուցման մեթոդի ընտրությունը կախված է յուրացված շարժիչ գործողությունների բարդությունից և ուսանողների ֆիզիկական պատրաստվածությունից:*

Հիմնաբառեր. *ֆիզիկական դաստիարակություն, շարժիչ գործողություններ, շարժիչ հմտություններ, ֆիզիկական որակներ, ֆիզիկական վարժություններ, մեթոդներ, ուսուցման գործընթաց, մեթոդական հնարքներ:*

Շարժիչ գործողությունները դրանք շարժումների շարք են, որոնք ուղղված են շարժիչ խնդիրների լուծմանը: Շարժիչ գործողություններին տիրապետելը անհրաժեշտ է ցանկացած գործունեության մեջ: Սակայն, միայն ֆիզիկական դաստիարակության բնագավառում է դրանց ուսումնասիրումը հանդիսանում կրթության առանցքը, քանի որ այստեղ շարժիչ գործունեությունը հանդես է գալիս և՛ որպես օբյեկտ, և՛ որպես միջոց, և՛ որպես կատարելագործման նպատակ: Ֆիզիկական դաստիարակության մեջ ուսուցումը առանձնահատուկ է: Առանձնահատկության էությունը նրանում է, որ որքան շատ շարժական հմտությունների է տիրապետում մարդը, այնքան հեշտ հաղթահարելի են դառնում շարժման նոր ձևերը:

Կոնկրետ առաջադրանքները, կապված ֆիզիկական վարժությունների կատարման տեխնիկայի ուսուցման և ֆիզիկական որակների դաստիարակության հետ, լուծվում են առանձնահատուկ մեթոդների օգնությամբ:

Շարժիչ տեխնիկայի հիմնական օղակը շարժիչ առաջադրանքի կատարման մեթոդի ամենակարևոր մասն է [2]: Շարժումները, որոնք բարդ շարժիչ գործողությունների մաս են կազմում, համեմատաբար հազվադեպ են կատարվում խիստ հաստատուն արագությամբ և արագացումով [2]: Գիտնականների մի մասը կարծում է, որ շատ մեթոդներ, որոնք կիրառվում են ֆիզիկական դաստիարակության և սպորտի բնագավառներում, իրականում հեռու են կատարյալ լինելուց: Ֆիզիկական դաստիարակության մեջ օգտագործվող մեթոդների կատեգորիան սովորաբար արտացոլում է ֆիզկուլտուրային-սպորտային գիտության և իրական պրակտիկայի զարգացման մակարդակը [4]:

Մասնագիտական գիտելիքներն ու շարժիչ գործողությունները՝ որպես ֆիզիկական դաստիարակության ուսուցման առարկաներ, պահանջում են դասավանդման որոշակի մեթոդների տիրապետում: Դասավանդման տարբերակները շատ են, սակայն, և ոչ մեկը ունիվերսալ չի: Ուսուցման մեթոդների բնութագրերի իմացությունը թույլ է տալիս ճիշտ կողմնորոշվել այդ մեթոդների բազմազանության մեջ և ընտրել ամենաարդյունավետ կրթական խնդիրների լուծման համար [1]: Ֆիզիկական դաստիարակության մեթոդների ներքո հասկացվում են ֆիզիկական վարժությունների կիրառման եղանակները: Ֆիզիկական վարժությունները այնպիսի շարժիչ գործողություններն են, որոնք ուղղված են ֆիզիկական դաստիարակության առաջադրանքների իրականացմանը [7]: Նշենք, որ համաձայն դասագրքային սահմանման, մեթոդը, դա մանկավարժի գործողությունների համակարգ է, որը մշակվել է՝ հաշվի առնելով մանկավարժական օրինաչափությունները, որի նպատակային կիրառումը թույլ է տալիս կազմակարպել ուսանողի տեսական և գործնական դասապրոցեսը: Այն ուղղված է ուսանողի ֆիզիկական որակների զարգացման և անհատականության ձևավորման վրա: Ուսուցման առաջադրանքներին և պայմաններին համապատասխան, յուրաքանչյուր մեթոդ իրականացվում է մեթոդական հնարքների օգնությամբ: Մեթոդական հնարքը դա մեթոդի իրականացման միջոց է՝ ըստ կոնկրետ ուսումնական առաջադրանքի: Հետևաբար, ամեն մի մեթոդի ներսում օգտագործվում են տարատեսակ հնարքներ: Որքան հարուստ է մեթոդական հնարքների բազան, այնքան լայն է մեթոդի կիրառման շրջանակը: Մեթոդների հատուկ համակարգն ու դասի կազմակերպման ձևերը, որոնք ուղղված են մանկավարժական խնդիրների լուծմանը, կոչվում է մեթոդիկա: Օրինակ՝ կարելի է խոսել բուհերում ուժային կարողությունների զարգացման, շարժիչ գործողությունների ուսուցման և ֆիզիկական դաստիարակության մեթոդների մասին: Մեթոդաբանությունը հնարավորության դեպքում պետք է տեղի ունենա գործողությունների որոշակի հաջորդականության իրականացման ճշգրիտ կարգաձև, որը կնպաստի մանկավարժական խնդիրների լուծմանը: Ուսանողների վրա դասախոսի ազդեցության մեթոդների շարքը, որոնց ընտրությունը որոշվում է գիտական որոշակի հայեցակարգով, ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման տրամաբանությամբ, կրթությամբ և զարգացմամբ, սահմանվում է որպես մեթոդական մոտեցում: Օրինակ՝ շարժիչ գործողություններ սովորելիս առկա է երկու հակադիր մոտեցման հնարավորություն՝ վերլուծական (անալիտիկ) և ամբողջական (ինտեգրալային):

Ներկայումս, ֆիզիկական կուլտուրայի տեսության մեջ կան մեթոդների մի քանի դասակարգումներ, որոնք առաջարկվել են Լ.Պ.Մատվեևի [2], Բ.Ա.Աշմարինի [1], Վ.Պ.Լուկյանենկոյի [6] և այլոց կողմից: Գիտամեթոդական գրականության մեջ առավել լայնորեն ներկայացված են հետևյալ դասակարգումները.

- ըստ ուսումնաճանաչողական գործունեության բնույթի՝ տեսական և

գործնական,

- ըստ հաղորդման աղբյուրի և կրթական տեղեկատվության ընկալման բնույթի՝ խոսուն, տեսողական, գործնական,
- ըստ ֆիզիկական դաստիարակության գործընթացի որոշակի ասպեկտների՝ շարժիչ գործողությունների ուսուցանում, ֆիզիկական որակների զարգացում, անձի դաստիարակություն,
- ըստ ազդող գործոնների առանձնահատկությունների (զգայական, շարժողական, ֆիզիոլոգիական և հոգեբանական ազդեցություններ),
- ըստ մարզումային ներգրավվածության՝ (ֆիզիկական որակների դաստիարակում, շարժման ուսուցում, զգայարանների բարելավում, անձի մտավոր հատկանիշների և վարքագծի ձևավորում),
- ըստ այլ մեթոդների հետ կապվածության՝ ոչ հատուկ (ընդհանուր մանկավարժական) և հատուկ (գործնական),
- ըստ լուծվող խնդիրների բնույթի՝ գիտելիքների և շարժիչ հմտությունների ձևավորում, շարժիչ հմտությունների բարելավում և ֆիզիկական ունակությունների զարգացում, անձի դաստիարակում:

Ֆիզիկական դաստիարակության մեթոդների փոխկապակցված դասակարգումների միասնական համակարգ ստեղծելու համար առաջարկվել է կիրառել ամբողջական գործունեության մոտեցում: Այս մոտեցումը թույլ է տալիս արտացոլել արհեստավարժ գործունեության բոլոր կառուցվածքային բաղադրիչներն ու փուլերը.

- կրթական-դաստիարակչական գործընթացի ձևավորում և դրա գոյության պայմանների ապահովում (1 փուլ),
- պլանավորված, ուղղակի ազդեցության իրականացում անձի վրա (2 փուլ),
- մանկավարժական գործընթացի արդյունքների վերլուծություն և գնահատում (3 փուլ):

Համապատասխան թվարկած փուլերի, հնարավոր է նշել մեթոդների հետևյալ խմբերը՝ նախագիծ, մանկավարժական ազդեցություններ, վերահսկողություն: Իր հերթին, մեթոդների առանձնացված խմբերից յուրաքանչյուրում կարելի է առանձնացնել առանձին ենթախմբեր, տեսակներ և մեթոդների տարատեսակներ:

Մի շարք հեղինակներ առաջարկում են մեթոդների դասավանդման համակարգը բաժանել վերարտադրողական և արտադրողական մեթոդների: Շարժիչ գործողությունների ուսուցման գործընթացին արտադրողական մեթոդները հարմարեցնելու տեսական հիմքը նրանց համար եղել է Պ.Կ.Գալպերինի տեսությունը, ով նշում էր, որ դասավանդողի ջանքերը պետք է ուղղված լինեն ոչ թե «շարժումը բեմադրելուն», այլ ուղղորդվեն դեպի գործողությունների կողմնորոշիչ հիմքի ձևավորում, ինչն էլ որոշում է կատարման որակը [5]: Հետևաբար, շարժիչ գործողության յուրացման գործընթացում ոչ միայն ներգրավված է մարդու հենաշարժիչ համակարգը, այլև նրա բարձր մտավոր

գործընթացները(ընկալում, մտածողություն, արտացոլում և այլն): Այսպիսով, կարելի է դիտարկել հետադարձ կապ: Այն է՝ շարժիչ գործողությունների ուսուցման ընթացքում զարգացնելով ուսանողների մտավոր ունակությունները, դասավանդողն ազդում է շարժիչ գործողությունների զարգացման վրա, որն էլ կորոշի շարժիչ գործողության կատարման անհատական տեխնիկայի ձևավորման որակը: Այսպիսով, մեթոդների յուրաքանչյուր խմբում կարելի է առանձնացնել համապատասխան ենթախմբեր, մեթոդների տեսակներ և տարատեսակներ:

Կոնկրետ մեթոդի ընտրությունը գործնականում կախված է մի շարք գործոններից և պայմաններից: Մասնավորապես նրանց ընտրությունը որոշվում է.

- կրթության և դաստիարակության առաջադրված խնդիրներով,
- ուսումնական նյութի բովանդակությամբ, օգտագործվող միջոցներով, մասնակիցների հնարավորություններով՝ հաշվի առնելով տարիքը, սեռը, առողջական վիճակը, պատրաստվածության աստիճանը և այլն,
- դասավանդողների հնարավորություններով՝ հաշվի առնելով նրանց փորձառությունը, տեսականորեն և գործնականորեն պատրաստվածության մակարդակը, աշխատանքի ոճը, անձնական որակները և այլն,
- ժամանակով, որով առաջնորդվում է դասավանդողը(առանձին դասերի կառուցվածքը և դրանց մասերը),
- շարժիչ գործողություններ սովորելու և ֆիզիկական կատարողական զարգացման փուլերով,
- արտաքին պայմանների առանձնահատկություններով, որի ընթացքում անցկացվում են պարապմունքները (օդի ջերմաստիճան, քամու արագություն, սարքավորումների վիճակ, մարզագույքի քանակ):

Հեղինակների միաձայն կարծիքով մեթոդների և՛ ոչ մի տեսակ չի կարող ճանաչվել միակը և հիմնական: Ամեն մեթոդ, չնայած որ հանդես է գալիս առանձնակի ընդգծված բնույթով, արդարացնում է իրեն միայն նեղ մասնագիտական կիրառմամբ՝ լինելով անփոխարինելի այլ մեթոդների համեմատությամբ:

Անդրադառնանք շարժիչ գործողությունների ուսուցման գործընթացին: Շարժիչ գործողությունների ուսուցման գործընթացում առանձնացնում են երեք փուլեր, որոնք միմյանցից տարբերվում են ինչպես մասնակի խնդիրներով, այնպես էլ մեթոդային առանձնահատկություններով.

- նախնական ուսուցման փուլ (ներածական, շարժման առաջնային ուսուցում),
- խորացված ուսուցման փուլ (շարժիչ հմտությունների ձևավորում, մանրամասն խորը ուսուցում),
- համախմբման և հետագա կատարելագործման փուլ(շարժիչ հմտությունների ձևավորում, շարժիչ հմտությունների ձեռքբերում):
- Առաջնային փուլում նպատակ է դրվում սովորեցնել շարժիչ տեխնիկայի հիմունքները, հասնել դրա իրականացմանը՝ գոնե մոտավոր ձևով: Դրա

համար պահանջվում է լուծել հետևյալ խնդիրները.

- ստեղծել իմաստային և տեսողական պատկերացում շարժիչ գործողությունների և դրա կատարման վերաբերյալ,
- վերստեղծել գործողություններ կատարելու նախկին փորձը,
- սովորեցնել այդ գործողության տեխնիկայի մասերը (էլեմենտներ),
- կանխել կամ անմիջապես վերացնել սխալ շարժումներն ու գործողության տեխնիկայի կոպիտ աղավաղումները:

Այս խնդիրները լուծվում են հերթականությամբ:

Ընդհանուր պատկերացումը ստեղծվում է ուսուցանվող շարժման ցուցադրության ճանապարհով:

Կատարելով շարժիչ առաջադրանքն առաջին անգամ, կարելի է այն սովորել մաս-մաս: Դրա համար մասնակի-կառուցողական մեթոդն է կիրառվում: Որքան բարձր է ուսանողի ֆիզիկական պատրաստվածության աստիճանը և շարժիչ հմտություններին տիրապետելու կարողությունը, այնքան արագ է ընթանում բարդ շարժիչ գործողություններ սովորելը: Այս դեպքում կարելի է օգտվել ամբողջական-կառուցողական մեթոդից: Եթե ուսանողի որակները չեն համապատասխանում գործողություններին, ապա կիրառում են ֆիզիկական որակների զարգացումը խթանող նախապատրաստական վարժություններ: Եթե ուսուցանվող գործողությունն իր համար օժանդակ տարրեր չի գտնում նախկինում ձևավորված շարժիչ ֆոնդում, ապա դրանք պետք է ստեղծվեն առաջատար վարժությունների օգնությամբ, որոնք հիմնված են շարժիչ փորձի վրա և առնչվում են ուսուցանվող գործողությանը:

Ուսուցման առաջին փուլում գործողության յուրացումը կարող է առաջանալ սխալների տեսքով (ավելորդ շարժումներ, աղավաղված տատանում, ռիթմի խախտում), որի պատճառները գործողությունների անբավարար ներկայացվածությունն են, կարողությունների վատ զարգացումը, վախը հոգնած վիճակից և այլն: Շարժիչ գործողության նախնական ուսուցման տևողության փուլը կախված է ուսուցանվող գործողության բարդության աստիճանից, ուսանողների պատրաստվածության մակարդակից, նրանց անհատական հնարավորություններից, ինչպես նաև անձի հմտությունների դրական ազդեցությունն օգտագործելու կարողությունից: Նախնական ուսուցման փուլը կարելի է համարել ավարտված, երբ ուսանողն ունակ է կատարել շարժիչ գործողությունն առանց սխալների:

Խորացված ուսուցման փուլի նպատակն է ձևավորել շարժիչ գործողություն կատարելու ունակությունը՝ նախատեսված տեխնիկական պահանջների շրջանակում: Փուլի հիմնական խնդիրներն են.

- խորությամբ հասկանալ գործողությունների շարժումների օրինաչափությունները,
- պարզաբանել գործողության տեխնիկան՝ ուսանողի անհատական հատկանիշներին համապատասխան՝ ըստ իր տարածական, ժամանակային և դինամիկ բնութագրերի,

- բարելավել շարժման ռիթմը,
- ստեղծել նախադրյալներ գործողության փոփոխական իրականացման համար:

Այս խնդիրները կարող են լուծվել զուգահեռաբար, այսինքն՝ միաժամանակ:

Ուսման արդյունավետությունն այս փուլում հիմնականում կախված է մեթոդների ճիշտ և օպտիմալ ընտրությունից, հնարքներից, ուսումնական միջոցներից՝ նույն միջոցների և մեթոդների կիրառման հետ մեկտեղ՝ ինչ ուսուցման առաջին փուլում: Գործողության գործնական իրականացումը ամբողջական վարժության մեթոդով գնալով ավելի կարևոր է դառնում:

Գործողության բաժանումը մասերի դառնում է միայն օժանդակ հնարք: Չեն կորցնում իրենց իմաստը նաև տեղեկատվության փոխանցման մեթոդները: Սակայն, բացատրությունները, հրահանգները և դիտողությունները դասակարգվում են: Գործողության կատարման հետ կապված, սեփական մկանային զգացումների ի հայտ գալով, հնարավոր է օգտագործել իդեոմոտորային վարժությունների մեթոդը: Այս փուլում օգտագործվում են տարատեսակ համալիր միջոցներ.

- ֆիզիկական վարժություններ մկանային համակարգի և ամբողջ օրգանիզմի ամրապնդման համար՝ հաշվի առնելով ուսումնասիրված գործողության առանձահատկությունները,
- հիմնական վարժություններ, որոնք նախապատրաստում են գործողությունների յուրացումը՝ դրա իմիտացիայի կամ մասնակի վերարտադրության ձևով:

Խորացված ուսուցման փուլի տևողությունը կախված է վերապատրաստման համար տեխնիկական պահանջների ծավալից, այնուհետև ներգրավվածների նախորդ շարժիչ փորձից: Վերապատրաստման երկրորդ փուլն ավարտվում է այն պահին, երբ մարզվողը պատրաստվում է ճիշտ կատարել շարժման հիմնական օրինաչափությունը և տեխնիկայի մանրամասները ամբողջական շարժման մեջ՝ ուշադրության հատուկ ֆիքսմամբ: Հենց այդ ժամանակ է հարկավոր անցում կատարել հաջորդ փուլ: Երրորդ փուլը ներառում է շարժիչ հմտությունների ձեռքբերում: Այս փուլի նպատակն է շարժիչ կարողությունները վերածել հմտության, որն ունի դրա գործնական կիրառման հնարավորությունը: Հիմնական խնդիրներն այստեղ կլինեն հետևյալը.

- հասնել գործողության կատարման միասնության և ավտոմատիզմի,
- կատարելության պահանջվող աստիճանի հասցնել տեխնիկայի անհատական հատկանիշները,
- ապահովել գործողության փոփոխական օգտագործում՝ կախված կոնկրետ գործնական հանգամանքներից:

Ուսուցման երրորդ փուլում օգտագործվող միջոցների և մեթոդների համալիրը հիմնականում մնում է նույնը, ինչ երկրորդ փուլում, սակայն, փոխվում են նրանց դերն ու հարաբերությունները: Մեծանում է գործողությունների փոփոխականությունը և դրանց ինտենսիվությունը: Այդ նպատակով խորհուրդ

է տրվում օգտագործել սովորած գործողությունների վրա հիմնված խաղեր և մրցույթներ: Գործողության բազմակի կրկնությունը խթանում է շարժիչ ունակությունների զարգացումը: Այս գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար օգտագործում են հատուկ մեթոդաբանական հնարքներ, որոնք միտված են ֆիզիկական որակների բարձրացմանը, մասնավորապես՝ գործողությունների կատարում.

- վարժություն լրացուցիչ կշիռներով, որից հետո փոխարինել առանց կշիռների կատարման,
- նախորդ վարժությունների արդյունքում ստեղծված հոգնածության վիճակում,
- խաղի կամ մրցակցության պատճառով առաջացած հուզական լարվածության վիճակում:

Իդեոմոտորային վարժությունները օգտագործվում են որպես գործողություն կարգավորելու միջոց: Խորհուրդ է տրվում ուշադրությունը կենտրոնացնել միայն ամենակարևոր կամ թերի յուրացված առաջադրանքի լուծման որակի վրա: Այս փուլում ակտիվորեն օգտագործվում է զուգակցված ազդեցության մեթոդը, որի իմաստը կայանում է նրանում, որ գործողությունների կատարումը համընկնում է ֆիզիկական որակների դրսևորման համար բարձրացված պահանջների հետ, օրինակ՝ ուժի, արագության, դիմացկունության և ճկունության: Ուսուցանվող գործողությունների մեծ մասը ավելի բարդ գործողությունների մաս է կազմում, ուստի ուսուցումը չի դադարում նույնիսկ գործողությունը հմտության մակարդակի հասցնելուց հետո: Յուրացված գործողության տեխնիկան շարունակում է կատարելագործվել, երբ այն կատարվում է ավելի բարդ գործողությունների այլ տարերրի հետ համատեղ:

Այսպիսով, շարժիչ հմտությունների հիման վրա ձևավորվում են շարժիչ ունակություններ: Շարժիչ գործողության կատարյալ տիրապետման նպատակին հասնելու համար անհարեշտ է կիրառել մեթոդներ, ինչպես սովորած վարժությունը ֆիքսելու, այնպես էլ դրա հնարավոր փոփոխության համար: Այս փուլը կարող է շատ երկար տևել բաձր որակավորում ունեցող մարզիկների պատրսատման գործընթացում, քանի որ ֆիզիկական որակների զարգացման մակարդակի փոփոխությունը ինքնին պահանջում է շարժման բովանդակության ուղղում ոչ միայն ձևով, այլև ժամանակային պարամետրով: Վերոհիշյալի հետ կապված նպատակահարմար է դիտարկել շարժիչ գործողությունների ուսուցման մեթոդները: Ինչպես արդեն նշվեց, ֆիզիկական դաստիարակության և սպորտի տեսության ու մեթոդիկայի վերաբերյալ ուսումնական գրականության մեջ [2] ֆիզիկական դաստիարակության մեթոդները բաժանված են երկու մեծ խմբերի.

- հատուկ մեթոդներ (բնորոշ են միայն ֆիզիկական դաստիարակության գործընթացին),
- ընդհանուր մանկավարժական մեթոդներ (կիրառվում են կրթության և դաստիարակության բոլոր դեպքերում):

Ըստ այս դասակարգման, ֆիզիկական դաստիարակության հատուկ մե-

թոդները ներառում են խիստ կանոնակարգված մեթոդներ, խաղային մեթոդ, մրցակցային մեթոդ: Խիստ կանոնակարգված վարժությունների մեթոդները մանկավարժական մեծ հնարավորություններ են տալիս, քանի որ թույլ են տալիս իրականացնել մասնակիցների շարժիչ գործունեությունը խստորեն սահմանված ծրագրում, խստորեն կարգավորել ծանրաբեռնվածությունը ծավալի և ինտենսիվության առումով, ինչպես նաև կառավարել դրա դինամիկան՝ կախված մասնակիցների հոգեֆիզիկական վիճակից և լուծվող խնդիրներից, ճշգրիտ բաշխել հանգստի ընդմիջումները ծանրաբեռնվածությունների մասերի միջև, ընտրովի զարգացնել ֆիզիկական որակները, ցանկացած տարիքային խմբերի դասերին օգտագործել ֆիզիկական վարժություններ, արդյունավետորեն տիրապետել ֆիզիկական վարժությունների տեխնիկային և այլն:

Ֆիզիկական դաստիարակության պրակտիկայում խիստ կանոնակարգված վարժությունների մեթոդները բաժանվում են երկու ենթախմբերի.

- շարժիչ գործողությունների ուսուցման մեթոդներ,
- ֆիզիկական որակների դաստիարակության մեթոդներ:

Շարժիչ գործողության կառուցվածքի յուրացման միջոցներն ուսուցման գործընթացում բաժանվում են.

- վարժությունների մաս-մաս ուսուցման,
- վարժությունների ամբողջական ուսուցման,
- զուգակցված գործողության:

Բաժանարար-կոնստրուկտիվ մեթոդը նախատեսում է շարժման առանձին մասերի ուսուցում՝ դրանց հետագա միացմամբ: Այս մեթոդը կիրառվում է ուսուցման սկզբնական փուլերի հետևյալ դեպքերում.

- բարդ-կոորդինացիոն շարժիչ գործողություններ ուսուցանելիս, երբ այն ամբողջական ուսումնասիրելու հնարավորություն չկա,
- եթե վարժությունը բաղկացած է մեծ թվով տարերրից, որոնք օրգանապես քիչ են փոխկապակցված,
- եթե վարժությունն իրականացվում է այնքան արագ, որ ամբողջական կատարմամբ անհնար է ուսումնասիրել և կատարելագործել դրա առանձին մասերը,
- երբ գործողության ամբողջական կատարումը կարող է վտանգավոր լինել, եթե դրա տարրերը նախապես չուսումնասիրվեն,
- երբ ուսման մեջ անհրաժեշտ է ապահովել արագ հաջողություններ՝ ուսումնական գործունեության նկատմամբ հետաքրքրությունը պահպանելու, ինքնավստահություն ձևավորելու համար:

Վերոհիշյալ խնդիրները լուծելիս անհրաժեշտ է պահպանել մի շարք կանոններ: Կանոնների համաձայն, նպատակահարմար է սկսել մարզվել շարժիչ գործողության ամբողջական կատարմամբ, այնուհետև անհրաժեշտության դեպքում դրանից առանձնացնել տարրեր, որոնք պահանջում են ավելի մանրակրկիտ ուսումնասիրություն: Բացի այդ, անհրաժեշտ է վարժությունները բաժանել այնպես, որ ընտրված տարրերը լինեն համեմատաբար անկախ կամ

քիչ փոխկապակցված: Կարճ ժամանակում պետք է ուսումնասիրել ընտրված տարրերը և առաջին իսկ հնարավորության դեպքում համեմատել դրանք: Ընտրված տարրերը պետք է ուսումնասիրվեն տարբեր ձևերով:

Այսպիսով, կախված տեխնիկայի բարդությունից, շարժիչ գործողությունները կարող են ուսուցանվել ամբողջությամբ կամ մաս-մաս: Մարզման տարբեր փուլերում շարժիչ գործողությունների ուսուցման մեթոդի ընտրությունը պայմանավորված է յուրացված շարժիչ գործողության բարդությամբ, ինչպես նաև ուսանողի ֆիզիկական պատրաստվածությամբ:

Օգտագործված գրականություն

1. Ашмарин Б.А., Теория и методика физического воспитания, М.: Просвещение, 1990, с.75-76
2. Матвеев Л.П., Теория и методика физической культуры, М.: Фис, 1991, с.34, с.39
3. Курамшин Ю.Ф., Теория и методика физической культуры, М.: Советский спорт, 2010, 464с.
4. Максименко А.М., Теория и методика физической культуры, М.: Физическая культура, 2005, 5.1, 5.2., 544с.
5. Гальперин П.Я., Формирование умственных действий и понятий, М. 1965, 51с.
6. Лукьяненко В.П., Физическая культура: основы знаний, Советский спорт, 2005, 224с.
7. Бочкарева С.И., Физичеакя культура: учебно-методический комлпекс, -М.: Изд. Центр ЕАОИ, 2011, с.30.

АРСЕН ЗАЗЯН. МЕТОДЫ ФИЗИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ В ДВИГАТЕЛЬНЫХ ДЕЙСТВИЯХ. *Обучение двигательным действиям занимает центральное место в физическом воспитании. В зависимости от сложности техники, двигательным действиям можно обучать в целом или по частям используя соответствующие методы. Метод представляет собой совокупность познавательных средств, подходов и приемов, направленных на развитие физических качеств учащегося и формирование личности. Выбор метода обучения двигательным действиям на разных этапах обучения зависит от сложности осваиваемого двигательного действия и физической подготовленности обучающихся.*

ARSEN ZAZYAN. METHODS OF PHYSICAL EDUCATION IN MOBILE ACTIVITIES. *Mobile training an essential part of physical education. Depending on the complexity of the technique, mobile skills may be taught as a whole or a part of appropriate techniques. The choice of mobile training methods at different stages of training depends on the complexity of the acquired skills and the physical training of the students.*

МЕТОДИЧЕСКИЕ ПОДХОДЫ ПРЕПОДАВАНИЯ ЭКОЛОГИИ В СОВРЕМЕННОМ МЕДИЦИНСКОМ ВУЗЕ

Марине Налбандян

Ереванский университет Айбусак, Медицинский институт

Поступила 17.04.22, принята к печати 25.06.22

Абстракт: *В статье раскрыты наиболее важные задачи преподавания экологии в медицинском вузе. Освещены особенности специфической методологии преподавания экологии. Представлена сущность экологической подготовки студента медицинского вуза. Предложены подходы и стратегии по повышению эффективности экологической подготовки студентов. Описаны организационно-педагогические условия подготовки студентов: содержательно-целевые, рефлексивные и методико-инструментальные. Сформулированы основы формирования экологической компетенции студентов.*

Ключевые слова: *экология, медицина, методология, компетенции, студенты*

Введение

Формирование экологического мировоззрения является важным фактором в образовании студентов медицинских вузов. В последнее время в медицинской практике укрепились такие понятия, как экологически зависимые и экологически обусловленные болезни. Отсутствие достаточных знаний о закономерностях влияния окружающей среды на здоровье человека и отсутствие умения правильно оценивать санитарно-эпидемиологическую обстановку могут вызвать у врача определенные трудности в распознании болезней, понимании их патогенеза, в установлении диагноза, тактике лечения и проведении профилактических мероприятий.

Выпускник высшего медицинского заведения должен иметь знания в области медицинской экологии, видеть причины экологической зависимости болезни, если таковые существуют, владеть базой знаний по устранению возникших в организме нарушений. Кроме того, подобные знания дают каждому медицинскому работнику навыки экологического воспитания населения.

В числе наиболее важных задач преподавания экологии в медицинском вузе обычно выступают:

Изучение вопросов взаимодействия между экологическими факторами окружающей среды и здоровьем населения;

Изучение экологии экосистем, популяций, сообществ, обращая внимание студентов на существующую зависимость состояния здоровья населения и уровня заболеваемости от факторов окружающей среды конкретного региона и в целом в мире;

Ознакомление с экологическими и медицинскими характеристиками ат-

мосферы, гидросферы, биосферы, литосферы;

Обоснование зависимости здоровья от факторов, характеризующих образ жиани, включающих вредные привички, занятия спортом и физкультурой, рацион питания и использование современных диет, режим труда и отдыха, экологические условия на рабочих местах, а также в медицинских учреждениях, и т.д.

Ознакомление с основными патологиями и болезнями, обусловленными нарушениями экологического баланса окружающей среды, загрязнением и климатическими индикаторами здоровья населения.

Для успешной организации преподавания и результативности обучения необходимо, чтобы студенты, приступая к изучению медицинских аспектов экологии, имели бы достаточные знания по анатомии, физиологии, патофизиологии, биохимии и биофизических процессах, происходящих в человеческом организме.

Медицинская экология наполнена специальной методологией, новыми концепциями, которые активно разрабатываются. Эта современная дисциплина является одним из направлений экологии человека, сфокусированной на факторах экологического состояния окружающей среды, ее деградации, энергетического состояния экосистемы. Ухудшающаяся из года в год экологическая ситуация в мире является одной из главных причин роста заболеваемости населения. Грубые нарушения экологического статуса, воздействие негативных факторов деградированной природной среды приводят к неблагоприятным изменениям медико-демографических показателей, изменению структуры заболеваемости. Меняется патоморфоз инфекционных заболеваний, что проявляется отклонениями от их классического течения, вызванными влиянием различных экологических факторов, изменением иммунологической активности, вирулентности микроорганизмов. Ухудшение экологической ситуации сопровождается увеличением нагрузки на иммунную систему. В настоящее время определение иммунологических сдвигов является наиболее достоверным методом выявления начальных проявлений патологического влияния повреждающих факторов среды на организм, что важно в практической деятельности врача.

Место иммунологии в экологии человека определяется тем, что различные загрязнения среды и повреждающие воздействия влияют, прежде всего, на иммунную систему, как эволюционно более молодую, выполняющую основную барьерную функцию по сохранению внутреннего антигенного гомеостаза. Основные направления экологии человека методологически связаны с иммунологическими концепциями. Загрязнение среды обитания приводит к напряжению защитно-приспособительных реакций организма, которые выходят за пределы компенсаторных возможностей человека, создавая факторы риска развития многих заболеваний. [1]

Сущность экологической подготовки студента медицинского вуза состоит в том, что она является одновременно подсистемой двух систем профессионального образования – экологического и медицинского. Особенность экологической подготовки студента медицинского вуза заключается в том, что она должна быть представлена целенаправленным, специально организованным педагогическим процессом в образовательной деятельности вуза, представляющим собой динамическую педагогическую систему [2].

Результаты и обсуждение

Специфика экологической подготовки студентов медицинского вуза при изучении дисциплин естественнонаучного цикла, в частности экологии, биологии должен предусматривать особенности изучения дисциплин для формирования общекультурных и профессиональных компетенций, вариативные модели профессионального экологического образования. Методологический подход должен включать: компетентностный подход к определению требований к результатам экологической подготовки, личностно-деятельностный подход к моделированию познавательного процесса, рефлексивный подход как основа организации рефлексивного обучения в процессе экологической подготовки будущих врачей.

Курс дисциплины медицинской экологии должен также рассматривать изучение биологических маркеров, обусловливающих отклонение здоровья от нормы, определение зависимости различных заболеваний от факторов окружающей среды. Многобразие и сложность взаимосвязи функциональных систем организма с эндогенными и экзогенными природными факторами приводит к необходимости рассмотрения проблемы адаптации как одной из фундаментальных медико-биологических проблем современности и обуславливает ее методическое значение в экологическом образовании врачей.

Эффективность экологической подготовки студентов медицинского вуза определяется рядом организационно-педагогических условий: содержательно-целевыми условиями, рефлексивно-процессуальными, методико-инструментальными.

Необходимость экологической подготовки студентов медицинского вуза обусловлена рядом обосновательных положений. Во-первых, в мире углубляются экологические проблемы, что порождает новые экологические риски здоровью людей, поэтому требуется постоянное обновление экологической подготовки врачей. Другим важным обоснованием является рассмотрение рефлексивной парадигмы как условие для переосмысления и перестройки сознания, деятельности и общения как комплексного отношения к окружающему миру. Третьим обстоятельством обоснования необходимости экологической подготовки является ситуационный уровень экологизации медицинских

знаний, слабое развитие представлений о связи медицинских дисциплин с экологией, отсутствие достаточных навыков построения межпредметных аналогий и обобщений.

Рефлексивный подход является системообразующим теоретико-методологическим подходом, позволяющим выделять во внутреннем процессе образования, основанном на ценностном осмыслении следствий и опыта взаимодействия общества и природы, который помогает вовлекать студентов в образовательный процесс. На основе данного подхода студенты обучаются, проявляя себя как ответственные субъекты, анализируют причины, порождающие экологические проблемы, на основе личностно-смысловой заинтересованности, индивидуальных способностей и способностей к саморазвитию.

Формирование экологической компетенции студентов основываются на концептуальных задачах: формирование профессионально-экологических знаний и развитие ценностно-смысловых ориентаций.

Формирование современных глубоких профессионально-экологических знаний предусматривает расширение имеющихся объёмов предоставляемых тематических направлений, включая такие специфические темы как:

Город как экосистема (деформация биоценоза в городе, десинхронизация биологических ритмов, деформация видовой среды, шумовое загрязнение)

Патогенные механизмы действия химических факторов на организм человека (множественная химическая чувствительность, химическая интоксикация, деинтоксикация ксенобиотиков)

Окружающая среда и продолжительность жизни

Наследственность и окружающая среда (повреждения ДНК и мутации)

Мониторинг окружающей среды (биологическое и медицинское значение рекреационных ресурсов, нормативно-правовая база окружающей среды)

Медицинская геология (влияние геологических факторов, влияние геомагнитных полей на здоровье человека)

Данные темы предлагается включить в учебную программу экологии в вузе.

В процессе формирования ценностных ориентаций у студентов предлагается акцентировать факторы, определяемые психологическими аспектами восприятия экологических рисков и уровня опасности, среди которых можно выделить фактор понимания (зависимость от понимания явления или процесса), фактор происхождения, отражающий различие в восприятии риска в зависимости от источника его формирования- природы или человека.

Для более системного осознания экологических проблем и их воздействия на здоровье предлагается разработать механизмы внедрения экологических знаний в учебные программы изучения дисциплин естественнонаучного цикла, таких как химия, математика, информатика, основываясь на критериях

осознания и переосмысления экологических ценностей, как социальный показатель, понимание предельных влияний экологических рисков для жизни и здоровья человека.

Выводы

Анализируя требования современного мира к более углубленному пониманию экологических процессов и их прямому и косвенному влиянию на здоровье людей, выявляется необходимость проведения экспериментальных методических исследований, направленных на повышение квалификации педагогических кадров и расширение междисциплинарности исследования взаимодействия эколого-медицинских проблем. Для повышения уровня применения и практичности исследований предлагается разработать и апробировать в университете динамическую модель, основанную на компетентном и рефлексивном принципе оценки расширенного образовательного процесса.

Литература

1. Эсаулова Т.А., Бучин В.Н., Бучина А.В. ЭКОЛОГИЧЕСКОЕ ОБРАЗОВАНИЕ В МЕДИЦИНСКОМ ВУЗЕ // Современные проблемы науки и образования. – 2008. – № 6. ;URL: https: //science-education.ru/ru/article/view?id=3258
2. Парахонский А.П. МЕДИЦИНСКИЕ АСПЕКТЫ ЭКОЛОГИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ // Современные наукоемкие технологии. – 2005. – № 6. – С. 47-48; URL: https: //top-technologies.ru/ru/article/view?id=23221

MARINE NALBANDYAN. METHODOLOGICAL APPROACHES TO TEACHING ECOLOGY IN A MODERN MEDICAL INSTITUTE. *The article reveals the most important tasks of teaching ecology in a medical institute. The features of the specific methodology of teaching ecology are highlighted. The essence of ecological education of a medical student is presented. Approaches and strategies to improve the efficiency of environmental education of students are proposed.*

ՄԱՐԻՆԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ: ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈՒՀՈՒՄ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ: *Հոդվածում ներկայացված են բժշկական բուհում էկոլոգիայի դասավանդման կարևորագույն խնդիրները: Առանձնացվում են էկոլոգիական կրթության կոնկրետ մեթոդաբանության առանձնահատկությունները: Ներկայացված է ուսանողի պատրաստվածության էությունը բնապահպանության ու էկոլոգիայի ոլորտներում:*

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЦИКЛ СТИХОТВОРЕНИЙ «АРМЕНИЯ» ОСИПА МАНДЕЛЬШТАМА В ПЕРЕВОДЕ ВАН ЦЗЯСИНЯ

Марианна Балоян

Ереванский университет «Айбусак», Чанчуньский университет, Чанчунь, КНР

Поступила 18.05.22, принята к печати 28.06.22

И перед тем я все-таки увидел
Библейской скатертью богатый Арарат…
О. Мандельштам

Резюме. *Исследованы переводы самого «непереводимого» поэта Осипа Мандельштама на китайский язык, понимание многочисленных, разнообразных «подтесктов» Мандельштама, восприятие и «борьбу» поэта и переводчика, ибо «переводчик в прозе есть раб, переводчик в стихах — соперник» [1].*

Ключевые слова: *художественный перевод, Маньдельштам, Ван Цзясинь, художественные средства выразительности, Армения.*

Цель работы - исследовать переводы поэзии Мандельштама Ван Цзясинем на китайский язык, главным образом цикла стихотворений про Армению, выявить степень достоверности перевода, а также показать уже начавшийся процесс популяризации Армении и армянской культуры в Китае, к чему немалые усилия прилагает образовавшаяся в Китае самая на сей день молодая армянская община.

Метод исследования – сопоставительный анализ оригинала и перевода, сделанного через язык-посредник, в данном случае, английский язык.

Актуальность нашего исследования заключается в необходимости доведения до китайского читателя знаний про Армению, формирования в сознании китайца образа Армением, пусть посредством русской поэзии с одной стороны, и осведомление армянского читателя о литературных процессах в современном Китае, с другой стороны. Перед Армении и встала серьезная проблема сохранения элементов культурной идентичности, и, безусловно, выражаем надежду на поддержку нашего государства в распространении армянской культуры во всем мире.

Выделяют следующие основные проблемы перевода художественного текста:

Труднопереводимость отдельных лексем тескта.

Влияние на перевод личности переводчика.

Неясные критерии оценки качества художественного перевода, под этим подразумевается восприятие читателем текста перевода. Единых критериев по этому вопросу не существует.

Полная передача предметно-логического содержания, стилистических элементов языка.

В отличие от перевода художественного текста, художественный перевод, по определению Т. Казаковой, предполагает творческое преобразование подлинника с использованием всех необходимых выразительных возможностей переводящего языка, сопровождаемого более полной передачей литературных особенностей оригинала. {2}

Стихотворения Мандельштама, а точнее некоторые из них были переведены на китайский язык с русского известным современным китайским писателем, переводчиком, профессором Пекинского педагогического университета Лю Вэньфеем, по праву считавшимся популяризатором русской литературы. Лю были переведены ранние стихи Мандельштама, а именно, стихи из циклов «Камень», «Tristia», некоторые стихотворения 1921-1925 годов. Лю Вэньфей в статье «Перевод и изучение русской литературы в Китае», опубликованном в журнале НЛО за 2004 год, N5, выделяет среди характерных черт изучения русской литературы в Китае тенденции политизации: «В Китае, согласно официальной трактовке, литература является частью надстройки и «оружием» идеологии. Компартия и правительство социалистического Китая всегда стремятся, чтобы литература служила их целям» {3}. Лю не обратился к переводам стихотворений позднего Мандельштама, к Воронежским тетрадям, к циклу «Век мой, зверь мой».

В этом контексте наше внимание привлек современный китайский поэт, литературный критик переводчик Ван Цзясинь [4]. Ван Цзясинь (王家新 Wang Jiaxin - 1957г.) известный современный китайский поэт, профессор Народного университета Китая, глава Международного писательского центра, член правления Учёного сообщества китайской поэзии при союзе писателей Китая. Автор семи поэтических сборников, десяти книг критических эссе и множества поэтических переводов иностранных поэтов (в том числе русских) на китайский язык. Его детство пришлось на период истории Китая, известного как «Большой скачок». В 1966 году, когда поэту исполнилось девять, в Китае началась Культурная революция. Семья его принадлежала к числу тех, кого считали «буржуазно настроенными» и отправляли на перевоспитание в деревню. Поэтому следующие десять лет своей жизни будущий поэт проводит в колхозе. После окончания школы в 1974 году Ван Цзясиню пришлось также проработать три года на заводе сельскохозяйственной химии в сельской местности. В 1978 году, после смерти Мао Цзэдуна, Ван Цзясинь, наконец полу-

чает возможность поступить на факультет китайской филологии Уханьского университета — одного из десяти лучших ВУЗов страны. Студентом он начал писать стихи, увлекся музыкой и философией. Во время учебы внимание Ван Цзясиня привлекает творчество русских поэтов XX века. Он является автором поэтических сборников «纪念» «В память», «游动悬崖» «Плывя по утесу», «王家新的诗» «Стихи Ван Цзясиня», «未完成的 «Неоконченные стихи», «塔可夫斯基的树» «Дерево Тарковского» и «重写一首旧诗» «Переписывая старое стихотворение», сборников поэтических эссе «人与世的相遇» «Человек лицом к лицу с миром», «夜莺在它自己的时代» «Соловей в свое время», «没有英雄的诗» «Стихи без героя», «为凤凰找寻栖所» «Находя место для феникса», «雪的款待» «Гостеприимство снега», и др. (перевод М.Балоян.)

Ван Цзясинь считается одним из самых значительных современных китайских поэтов последних двадцати-тридцати лет. Наряду с творческой деятельностью, его поэтическая критика, поэтические эссе и поэтические переводы также получили широкою известность. Его произведения были переведены на многие языки.

В своей статье 曼德尔施塔姆的诗歌及其命运 [5] (Поэзия Мандельштама и ее судьба) 俄罗斯的奥维德 «Русский Овидий» (перевод М.Балоян) Ван Цзясинь признался, как ему «открылся» Мандельштам. «В 1992 году, живя в Лондоне, я взял в магазине подержанных книг поэзию Мандельштама в английском переводе (в переводе Джеймса Грина). Я много раз брал ее с собой, чтобы почитать в тускло освещенном лондонском метро, но не думаю, что тогда я действительно проникся ею, и с тех пор я прочитал несколько китайских переводов, но и они меня не воодушевили – «письмо в бутылке», попавшее ко мне в руки, просто было упущено. Но, как говорит сам поэт в эссе «О собеседнике», «море помогает бутылке своей великой силой, - помогает ей выполнить свою миссию, чувство провидения управляет сборщиком бутылок» (перевод Лю Вэньфэй)». Ван Цзясинь имел в виду слова Мандельштама о поэзии: «Мореплаватель в критическую минуту бросает в воды океана запечатанную бутылку с именем своим и описанием своей судьбы. Спустя долгие годы, скитаясь по дюнам, я нахожу ее в песке, прочитываю письмо, узнаю дату события, последнюю волю погибшего. Я вправе был сделать это. Я не распечатал чужого письма. Письмо, запечатанное в бутылке, адресовано тому, кто найдет ее. Нашел я. Значит, я и есть таинственный адресат» [6]. Перечитывая Мандельштама в очередной раз – в переводе – Ван Цзясинь был поражен и глубоко взволнован. Больше всего его удивило стихотворение «Золотистого меда струя из бутылки текла…». Бутылку с письмом было суждено найти именно Ван Цзясиню.

В эссе «Утро акмеизма» 1912г. Мандельштам пишет: «Существовать — высшее самолюбие художника. Он не хочет другого рая, кроме бытия, и когда

ему говорят о действительности, он только горько усмехается, потому что знает бесконечно более убедительную действительность искусства» [7]. Именно в переводе существует поэт.

Обратимся к книге Ван Цзясиня «我的世纪我的野» избранные сочинения, опубликованная в 2016 году. В сборник вошли переводы ранних стихотворений Мандельштама, циклы «Мой век, мой зверь», «Московские тетради», «Воронежские тетради», а также несколько стихотворений из цикла «Армения».

В интервью журнала 搜狐文化Соу Ху Вэнь хуа (культура Соуху) [8] Ван Цзясинь на вопрос, почему он решил перевести Мандельштама (он переводил Цветаеву, Ахматову, Пастернака и др), он ответил, что благодаря переводу он создал поэтическую семью похожих сердец и похожих судеб (у Мандельштама и Цветаевой – прим. М.Балоян). «Узнавание» Мандельштама произошло после «узнавания» Пауля Целана, которого он перевел еще до Мандельштама, и, как отмечает поэт-переводчик, возникла «необходимость» в переводе Мандельштама. Сам Пауль Целан, переводивший Мандельштама, отмечал, что его переводы были важнее его собственных сочинений.

«Их перевод (Мандельштама и Цветаевой – прим. Балоян М.) – еще одно своего рода узнавание, благодаря которому можно ощутить свою судьбу, иной вид существования самого себя» (перевод с кит.яз М.Балоян). Ван Цзясинь неслучайно назвал сборник «Мой век, Мой зверь», не только потому, что именно так называется стихотворение Мандельштама, «Век мой, зверь мой», но и по собственному признанию автора, тем самым он перевел общую судьбу, не только судьбу Мандельштама. Он претерпел на себе еще ребенком все тяготы Культурной революции, он был на «обочине» общества, не доучился до средней школы, себя также называл «маленьким евреем» - перифраз Цветаевой - «все поэты – евреи». Именно страдание, по мнению Ван Цзясиня, объединяло Цветаеву, Мандельштама, Пауля Целана. «Россия произвела своего рода святость из страдания, Китаю также знакомы страдания, но ему не хватает «сакральности» в страдании», отмечает переводчик. Но не страдание создало их поэзию, а жизнь и судьба создали их. Стихи Мандельштама, написанные в ссылке в Воронеже, созданы судьбой, равно как стихи про Армению продиктованы судьбой.

Встреча с Армений – это лучшее и самое светлое, что случилось в трагедии жизни Мандельштама. Обратимся к записным книжкам поэта 1931-1932 годов. «Никто не посылал меня в Армению, как, скажем, граф Паскевич грибоедовского немца… [9] {имеется в виду Иван Иванович Шопен, российский этнограф, историк и политический деятель, в 1829 году от И.Ф. Паскевича он получил поручение составить описание территории вновь завоёванной Восточной Армении. С 1829 года по 1832 год занимался подробным изучением Эриванского и Нахичеванского ханств, которые по Туркменчайскому

договору 1828 года отошли к Российской империи и были переименованы в Армянскую область. В 1830 году он занял должность советника Армянского областного правления, в 1833 году он - председатель Управления по доходам и казённым имуществам Армянской области, а после - чиновник особых поручений главноуправляющего Закавказским краем} я выбрался с соломенной корзинкой в Эривань, в мае 30-го года (в чужую страну, чтоб пощупать глазами ее города и могилы, набраться звуков ее речи и подышать ее труднейшим и благороднейшим историческим воздухом) [10]. Итогом этой «вожделенной» встречи явились цикл стихоторений и проза про Армению. В своих воспоминаниях Н. Мандельштам пишет о встрече Егише Чаренца и Мандельштама в Тифлисе, где Мандельштам прочитал первые стихи об Армении Чаренцу. Выслушав их, Чаренц сказал: «Из вас, кажется, лезет книга».

В цикл про Армению вошли стихотворения «Как бык шестикрылый и грозный…», «Как люб мне натугой, живущий…», «Фаэтонщик», «Армения» и другие. Стихотворения про Армению отличаются особой эмоциональностью, красочностью, музыкальностью, точностью слова. Образ Армении воссоздается сочетанием черт благородной древности, патриархального мирного быта и труда, исторических испытаний, специфического пейзажа и природы, фонетических и графических особенностей языка и речи.

Если основной функцией художественного перевода по сути является создание иноязычного подобия оригинальному произведению, то художественный перевод следует понимать как интерпретацию исходного текста. В этом смысле, особенно сложным нам представляется перевод стихотворений Мандельштама про Армению, понимание, истолкование образа Армении, воспринятого поэтом, применение изобразительно-выразительных средств языка в описании тех или иных явлений армянского быта, нрава, речи…

Ван Цзясинь, как мы полагаем, бросил вызов себе в первую очередь, взявшись, казалось бы, за непосильную работу. В предисловии к книге «我的世纪我的野兽» [11] он пишет, что обращался к разным источникам, исследовал много литературы и исторических хроник.

Рассмотрим стихотворения О. Мандельштама и переводы Ван Цзясиня, проведем сопоставительный анализ оригинала и перевода, сделанного не с языка оригинала, а с английского (русским языком переводчик не владеет), а подстрочный перевод с китайского языка даст нам возможность оценить достоверность, адекватность перевода. Эпиграфом к циклу стало стихотворение «Как бык шестикрылый и грозный». У Ван Цзясиня также цикл начинается этим стихотворением.

Ван Цзясинь:

人们的劳动在这里出现 - *Народный труд здесь появляется*

像一头威风凛凛的六翼公牛。 - *Словно грозный шестикрылый бык.*

而玫瑰在初冬绽开， - И *роза в начале зимы распускается.*

脉管里血液鼓胀 - Сосуды *кровью надуваются.*

Судить о ритмометрическом строе перевода невозможно, так как китайский язык имеет систему тонов, это язык слоговой.

Осип Мандельштам:

Как бык шестикрылый и грозный,
Здесь людям является труд
И, кровью набухнув венозной,
Предзимние розы цветут.

В этом стихотворении у Мандельштама на первый взгляд определяются два понятия – понятие труда и красоты - образ армянского народа, созидательного, трудолюбивого… а роза, как символ красоты. Откуда возник эпитет «шестикрылый»? По мнению Г.Кубатяна, у Мандельштама образ «шестикрылого быка» вырисовывается, скорее всего, под впечатлением увиденного в селе Арени, в церкви св. Богородицы (1321), построенной знаменитым живописцем, а также зодчим и скульптором Момиком, уцелелевшие барельефы четырех евангелистов, а точней – их эмблем, хотя сведений о том, что он там был, нет. Эмблемой Матфея служит бык двукрылый; в левой передней лапе он держит свиток. Но опять-таки, речь идет о двукрылом быке, и Кубатян склонен предполагать, что образ шестикрылого быка совершенно уникален.

В переводе мы видим сравнение шестикрылого быка с народным трудом, переводчик также оставил уникальный мандельштамовский эпитет «шестикрылый». Далее у Мандельштама метафора «И розы, набухнув кровью венозной»… цветут… Ван Цзясинь передал как перечисление действий, «в начале зимы розы распускаются», «сосуды, (脉管 mai guan - сосуды у человека, животного) кровью надуваются»; из-за фактического отсутствия деепричастного оборота в китайском языке, протяженность действия передается с помощью частицы 着 zhe, что отсуствует в тексте перевода.

Зимняя роза возникает у Мандельштама не раз. В том же цикле «Холодно розе в снегу, На Севане снег в три аршина».

Интересен перевод первого стихотворения цикла «Армения».

亚美尼亚，哈菲兹玫瑰的摇篮，
Армения, Хафиза розы колыбель,
你也喂养着一窝野毛孩。
Ты также вскармливаешь диких детей
你的呼吸是乡巴佬教堂的呼吸，
Твое дыханние – это мужицкой (деревеншины) церкви дыхание
耸起八角形公牛似的肩。

Приподнимаешь плечи словно восьмиугольный бык.

У Мандельштама:

Ты розу Гафиза колышешь
И няньчишь зверушек-детей,
Плечьми осьмигранными дышишь
Мужицких бычачьих церквей.

Как мы видим, у Ван Цзясиня личное местоимение «ты», заменено риторическим обращением «Армения», тем самым автор обостряет внимание на предмет обращения и вызывает у читателя определенное отношение к излагаемому, придает большую эмотивность. Стихотворение начинается с универсального символа красоты – розы, однако роза принадлежит Гафизу (Хафизу), А Хафиз Ширази – персидский поэт, и, получается, его роза благоухает ароматом иной культуры. Но все верно. На армянскую словесность издавна оказала влияние персидская поэзия. Интересна метафора «колыбель» у Ван Цзясиня, 摇篮yaolan означает «люлька», «колыбель», в переносном значении эквивалентен слову «колыбель» в русском языке. Далее «зверушки-дети», опеделение часто встречающееся как в поэзии, так и в прозе цикла про Армению. «Зверушки», применимое к детям, для Мандельштама означало живость армянских детей, жизнестойкость нации: «Они как зверьки, лазили по гробницам» («Путешествие в Армению. Севан»). У Ван Цзясиня «дикие дети», как нам кажется, несут другое эмоциональное и смысловое значение… Но и не будем забывать, что задача переводчика посредством «языковых знаков» передать «смысл» текста переводимого языка. Послание две строки, «подтекст» которых в точности раскрыт переводчиком, о значимости для армянского народа церкви, ибо Армения «дышит» церквами, церковь неотделима от бытия народа. Испокон веков христианство, церковь были залогом сохранности армянского народа.

带着赭石火红嘶哑的色调，
С охристо-огненным хриплым тоном
你远远地铺展在山的那边，
Ты далеко по ту сторону горы расстилаешься
而这里的一切就是摆渡—
А здесь вся только просачиваешься,
自由地，浸入一碟清水。
Свободно погружаешься в блюдце с чистой водой.
У Мандельштама:
Окрашена охрою хриплой,
Ты вся далеко за горой,

А здесь лишь картинка налипла
Из чайного блюдца с водой.

Эпитет «охрою», «охристый» – характеризуют окраску Армении. «Далеко за горой» - Мандельштам все же воспринимал Армению целиком именно ту, которая осталась за горой, имеется в виду за Араратом, Западную Армению, а здесь остается лишь небольшая ее часть, отблеск той Армении. У Ван Цзясиня, на наш взгляд, глаголы «просачиваться, погружаться» весьма аллегоричны. Здесь переводчик явно намекает на бегство армян из Западной Армении.

Весь цикл Мандельштама пронизан мотивом противостояния жизни и смерти. С каждым стихотворением, с каждой строфой все больше открывается читателю Армения, ее история, культура, удивляешься точности исторических тезисов. В равной степени и переводчику удалось уместить в одну-две строфы мандельштамовскую концепцию.

Соглано оценке Г. Кубатяна «мандельштамовский цикл обнаруживает необыкновенную для стихотворчества выверенность опорных, концептуальных деталей; за любой деталью стоит увеличительное стекло пристального знания».

В стихотворении «Ты красок себе пожелала», Ван Цзясинь, верно истолковав мандельштамовский текст и всю вложенную в него историческую информацию, местами заменил некоторые метафоры. Примечательна первая строка перевода, где вновь переводчик прибегает к риторическому обращению, 亚美尼亚, отсутсвующему у Мандельштама, подстрочный перевод Ван Цзясиня 你想要狮子吼出的//色彩亚美尼亚, //你从文具盒里抓出了//半打彩笔» - «Ты пожелала львиного рычания красок, Армения, //Ты из пенала достала полдюжины цветных карандашей», далее мандельштамовский образ рыжебородого сардара Ван Цзясинь заменил турецким владыкой, 土耳其酋长tuerqi qiuzhang, и что не менее важно, у Мандельштама Армения «терпела» сардара, у Ван Цзясиня же «чудом уцелела» от турецкого владыки. В третьей строфе символ «трезубца» переводчик дополняет определением, видимо для точности восприятия, понимания метонимии, у него появляется трезубец Посейдона. В последней строфе «Как люб мне язык твой зловещий, // Твои молодые гроба», Ван Цзясинь комментирует мандельштамовское «молодые гроба», в переводе звучит как «молодые могилы», следующим образом: «年轻的坟墓：亚美尼亚大屠杀仅仅发生在曼德尔施塔姆访问亚美尼亚十多年前» «Геноцид армян был чуть более, чем за десять лет до приезда Мандельштама в Армению» (перевод Балоян М.А).

Тематически поэзия Мандельштама повторяет развитие нашей цивилизации: от Древнего Рима, Греции, Христианского мира вплоть до современного ему периода.

У Мандельштама, как справедливо отметил К. Ф. Тарановский, в плане

содержания нет ничего немотивированного, случайного или построенного на автоматических ассоциациях т. н. сюрреалистического типа. Для поэтики Мандельштама характерна строгая мотивированность всех элементов поэтического высказывания не только в плане выражения и в семантических явлениях, но и в плане содержания на самых высших его уровнях.

По образному выражению И. Бродского «Поэзия есть высшее достижение языка, и анализировать ее — лишь размывать фокус. Это тем более справедливо в отношении Мандельштама, который представляет собой крайне одинокую фигуру в контексте русской поэзии, именно резкость его фокуса объясняет обособленность». {12}. Но тем не менее мы попытались провести сопоставительный анализ стихотворений Мандельштама и переводов Ван Цзясиня.

Таким образом, исследование показало, что переводы Ван Цзясиня в достаточной степени достоверны, близки к мандельштамовскому тексу, переводчик создал «подобие» (Казакова Т.А.) мандельштамовских стихов, при этом сохранив личность поэта, поэтичский стиль, верно уловив художественную функцию мандельштамовского слова, Ван Цзясинь смог достигнуть заданного уровня эквивалентности, переведенного и исходного текстов. Подстрочный перевод дал нам возможность определить степень понимания мандельштамовских интерпретаций образа Армении Ван Цзясинем.

Говоря о своих переводах, Ван Цзясинь, отмечает, что поэт, переводящий стихотворение, должен обладать не только индивидуальностью, но и «жертвенностью», которая является «главной чертой зрелого человека» и «главным требованием к любому (творческому) переводу». Переводя, поэт должен оставаться верным оригиналу, находить эквиваленты, а не заменять. И, в завершение, вспомним слова переводчика, утверждавшего, что жизнь стихотворения заключается в переводе. Считавшему себя адресатом той «бутылки», брошенной в море, Ван Цзясиню, можно смело утверждать, удалось «оживить» Мандельштама для китайского читателя.

Литература

1. Русские писатели о переводе XVIII-XX вв.: [Сборник статей] // [Под ред. Ю. Д. Левина и А. В. Федорова]; - Ленинград. 1960. - 696 с.
2. Т.А. Казакова. Художественный перевод. С-Пб.2006г – 544с.
3. «НЛО» 2004 N 5 https: //magazines.gorky.media/nlo/2004/5/perevod-i-izuchenie-russkoj-literatury-v-kitae.html дата обращения: 18.06.2022
4. Ван Цзясинь: https: //ru.wikipedia.org/wiki/Ван_Цзясинь дата обр. 21.06. 22
5. 曼德尔施塔姆的诗歌及其命运 (Поэзия Мандельштама и ее судьба) эл.ресурс: https: //www.zgnfys.com/m/a/nfwx-41268.shtml дата обращения: 18.06.2022.

6. О.Мандельштам «О собеседнике» http: //mandelshtam.lit-info.ru/mandelshtam/articles/o-sobesednike.htm дата обращения: 18.06.2022.
7. О.Мандельштам. Утро акмеизма. https: //web.stanford.edu/class/slavic272/materials/declarations/mandelstam_utro1913.pdf дата обращения: 20.06.2022.
8. О.Мандельштам. Стихотворения, проза, записные книжки. Ереван 1989. С.381.
9. Большая Советская Энциклопедия. **Error! Hyperlink reference not valid.** дата обращения: 22.06.2022.
10. 王家新我的世纪我的野兽。曼德尔施塔姆 诗选 广州 2016。Wang Jiaxin. Mandelshtam's selected poems. 2016 г. Guang Zhou 2016.
11. Г.И. Кубатян. «От слова до слова. Комментарии к циклу О.Мандельштама «Армения»// Вопросы литературы 2005.г.: https: //voplit.ru/article/ot-slova-do-slova-kommentarij-k-tsiklu-o-mandelshtama-armeniya дата обращения: 18.06.2022.
12. И. Бродский «Сын цивилизации»: https: //brodskiy.su/proza/syn-tsivilizatsii дата обращения: 22.06.2022.
13. Г.П. Абрамович. Введение в литературоведение, М. 1979, 352 с.

ՄԱՐԻԱՆՆԱ ԲԱԼՈՅԱՆ. ՕՍԻՊ ՄԱՆԴԵԼՇՏԱՄԻ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԵՐԿԵՐԻ ՇԱՐՔԸ ՎԱՆ ԾՅԱՍԻՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ: *Ուսումնասիրված են ժամանակակից չին բանաստեղծ, թարգմանիչ Վան Ծյասինի կողմից Մանդելշտամի բանաստեղծությունների չինարեն թարգմանությունները: Հատուկ ուշադրություն է դարձված Վան Ծյասինի «我的世纪我的野兽» թարգմանությունների ժողովածուին, որում ներառված են բանաստեղծություններ՝ Մանդելշտամի «Հայաստան» երկերից: Ուսումնասիրությունը պարզել է, որ Վան Ծյասինի թարգմանությունները հարազատ են Մանդելշտամի տեքստին: Պահպանելով բանաստեղծի անհատականությունը, բանաստեղծական ոճը, ճիշտ հասկանալով Մանդելշտամի խոսքի գեղարվեստական գործառույթը՝ Վան Ծյասինը կարողացել է ապահովել դրանց համարժեքության որոշակի մակարդակ: Իսկ փողոցի թարգմանությունը հնարավորություն է տվել որոշել Վան Ծյասինի կողմից Հայաստանի կերպարի Մանդելշտամի մեկնաբանությունների ըմբռնման աստիճանը:*

MARIANNA BALOYAN. ***OSIP MANDELSTAM'S CYCLE OF POEMS "ARMENIA" IN TRANSLATION BY WANG JIAXIN****. The translations of Mandelstam's poems into Chinese by Wang Jiaxin, a contemporary Chinese poet and translator is studied. The main attention is paid to the Wang Jiaxin's collection of translations "我的世纪我的野兽" , ("My Century, My Beast"), which includes poems from Mandelstam's cycle "Armenia". The study showed that Wang Jiaxin's translations are sufficiently authentic and close to Mandelstam's text, the translator created a "likeness" of Mandelstam's poems, while preserving the poet's personality and poetic style, correctly catching the artistic function of Mandelstam's words, Wang Jiaxin managed to provide a certain level of equivalence. The underlining translation enabled us to determine the extent of Wang Jiaxin's understanding of Mandelstam's interpretations of Armenia.*

ՀԱՅ-ԲԱՍԿՅԱՆ ՑԵՂԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՕՏԱՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Երան Խաչատրյան

ԵՀՀ Ռոսլին Ակադեմիա

Մուտքագրված է 15.05.22, հաստատված է տպագրության 28.06.22

Ամփոփագիր. *Հոդվածում փորձ է կատարվել հավաքելու և ի մի բերելու հայ-բասկյան ցեղակցության վարկածի կողմնակից օտար հեղինակների գործերը:*

Հիմնաբառեր. *Հնդեվրոպական լեզվաընտանիք, հայ- բասկյան առնչություններ, հայ-բասկյան ցեղակցության վարկած, Բասկերի ծագման թուբալյան տեսություն, բասկերեն ստուգաբանական բառարան*

Բրիտանացի լեզվաբան, տասնյակ գրքերի և ուսումնասիրությունների հեղինակ (այդ թվում՝ «Էտրուսկների հայկական ծագումը», Լոնդոն-1861 և «Էտրուսկերենի և բասկերենի աղբյուրները», Լոնդոն-1886) Ռոբերտ Էլիսը գրում է. «... *ոչ միայն Էտրուրիայում, այլև Կապադովկիայում, Փռուգիայում, Մյուսիայում, Թրակիայում, Իլիրիայում և Ռաետիայում և որտեղ էլ որ հաստատվել են հնագույն ժողովուրդները, անպայման կհայտնաբերվի հայոց լեզուն*»:

Եվրոպայում խոսվող լեզուների մեծ մասը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին, որն աշխարհի խոշորագույն լեզվաընտանիքներից մեկն է: Այս լեզվաընտանիքի մեջ մտնում են 15 լեզվախմբեր կամ ճյուղեր, այդ թվում և հայոց լեզուն՝ որպես նրա առանձին ճյուղ:

Բասկերենն Արևմտյան Եվրոպայում խոսվող միակ լեզուն է, որը համարվում է մեկուսացված և չի պատկանում հնդեվրոպական կամ որևէ այլ լեզվաընտանիքի: Ավելի քան երեքհազարամյա պատմություն ունեցող բասկ ժողովուրդն ապրում է իսպանական Ալավա, Գիպուսկոա, Բիսկայա և ֆրանսիական Սուբերոա կամ Սուլ և Նավառա նահանգներում:

Աշխարհում ապրում է մոտ մեկ միլիոն բասկ, որոնք տարբերվում են Արևմտյան Եվրոպայի ժողովուրդներից իրենց լեզվով ու մշակույթով: Բասկերի ու նրանց լեզվի ծագումնաբանության հարցը հետաքրքրել է շատ գիտնականների: Առաջարկվել են բասկերենի ծագման տարբեր վարկածներ, որոնք համարյա բոլորն էլ մերժվել կամ անտեսվել են: Դրանցից մեկն էլ բասկերի հայկական ծագման վարկածն է, որն առաջ է քաշվել օտարազգի գիտնականների կողմից և ունի հարյուրամյակների պատմություն:

Որպես գիտական խնդիր, հայ-բասկյան առնչությունների հարցը ծագել է 16-րդ դարի կեսերին: Դեռևս 16-17-րդ դարերում բասկերի պատմագրության հիմնադիրներ Էստեբան դե Գարիբայը, Անդրես դե Պոսան և Բալտասար դե Էչավեն բասկերի հայրենիքը համարում էին Հայաստանը, փորձելով դա ապացուցել հայերենի ու բասկերենի տեղանունների զուգահեռների միջոցով:

Այնուհետև այս խնդրին անդրադարձան իսպանացի, գերմանացի, բասկ, ֆրանսիացի գիտնականներ՝ Էստորնես Լասա, Էստեբան դե Գարիբայ, Ֆիդել

Ֆիտա ի Կոլոմեր, Ամադոր դե Լոս Ռիոս, Բալթասար դե Էչավե, Գասպար Էսկոլանո, Ռոբեր Դեզելյուս, Անդրես դե Պոսա, Յոզեֆ Կարստ և ուրիշներ:

19-րդ դարի կեսերին արվեցին երկու լեզուների միջև համեմատությունների ու նմանությունների լուսաբանման առաջին քայլերը: Իսպանացի լեզվաբան Գիսասոլան առաջարկել է մոտ քսան բառի համեմատություն, անգլիացի լեզվաբան Դոջսոնը՝ մոտ հիսուն, գերմանացի գիտնական Կարստը կատարել է ավելի քան չորս հարյուր բառի համեմատություն, և այլն: Այս համեատությունները կատարելիս ուսումնասիրողները նկատի են ունեցել երկու լեզուների միջև առկա հնչյունաբանական և քերականական ընդհանրություններն ու հաճախ՝ նույնությունները, փորձելով դրանք հիմնավորել նաև պատմական, ազգագրական, մարդաբանական, առասպելաբանական նմանություններով ու փաստերով:

Այս ամենի արդյունքում ձևավորվել է հայ-բասկյան ցեղակցության վարկածը:

Դժբախտաբար, ստացված և ստացվող արդյունքները հաճախ իրարամերժ են: Բանն այն է, որ խնդրով զբաղվող գիտնականները ապրել են տարբեր ժամանակներում, պատկանել տարբեր լեզվաբանական դպրոցների, կիսել տարբեր հայացքներ, գոյություն ունեցող նմանությունները բացատրել յուրովի, հաճախ անտեղյակ լինելով մյուս լեզվաբանների ուսումնասիրություններից ու եզրակացություններից: Բասկերենի ծագման մասին ձևավորված երկու խոշոր տեսությունները՝ Ալարոդյան (Յոզեֆ Կարստ) և Հաբեթական (Ն.Մառ), ժամանակի ընթացքում մերժվել ու մոռացության են մատնվել: Այժմ հայ-բասկյան բազմաթիվ զուգահեռներ ու համեմատություններ ցրված են տարբեր աղբյուրներում, չարժանանալով պատշաճ ուշադրության: Բասկերի և նրանց լեզվի ծագմանը վերաբերող վարկածների մեծ մասը հավաքել է արգենտինացի բասկագետ Էնրիկե դե Գանդիան, դրանք ներկայացնելով իր «Բասկ ժողովրդի նախաարիական ծագումը» գրքում: Ըստ այս գրքի, ժամանակի ընթացքում տարբեր հեղինակների կողմից բասկերը կապվել են քաղդեացիների, հայերի, վրացիների, իբերների (Պիրինեյան թերակղզու հնագույն բնակիչները), թուրանական ժողովուրդների հետ, համեմատություններ են արվել բասկերենի և աքքադերենի, սանսկրիտի, հայերենի, վրացերենի, ուգրո-ֆիննական և այլ լեզուների միջև:

Բասկագիտության ձևավորման ու զարգացման առաջին փուլից սկսած մինչև մեր օրերը հայկական տարրը այդ գիտության անբաժանելի մասն է կազմում:

Պիրինեյան թերակղզում հայկական տարրի գոյության մասին առաջին գրավոր վկայությանը հանդիպում ենք հռոմեացի պատմիչ Գայուս Սալուստիոս Կրիսպուսի (մ.թ.ա. 86- մ.թ.ա. 34) «Յուգուրտինյան պատերազմի մասին» աշխատության մեջ, որտեղ հեղինակը պատմում է, որ սկզբում Աֆրիկայում ապրում էին բարքեր ու օրենքներ չունեցող դաժան, վայրենի մարդիկ: Բայց երբ Հերկուլեսը Իսպանիայում մահացավ, տարբեր ցեղերից կազմված նրա զորքը ցրվեց: Մարերը, պարսիկներն ու հայերը նավերով անցան Աֆրիկա ու զբաղեցրին մերձծովյան տարածքները:

Հայաստան անունը առաջին անգամ առաջ է քաշել իսպանացի գիտնական Խուան Մարգարիտ ի Պաուը (1421-1484): Ըստ այս պատմագրի՝ բասկերի նախնիները բնակվել են Կոլխիդայի ու Հայաստանի միջև: Ի դեպ՝ Կոլխիդայի տարածքում հնում գտնվել է Հայասա ազգի հնագույն հայկական պետական կազմավորումը:

Հայերին իր աշխատություններում հիշատակում է բասկերի երեք հիմնական պատմագիրներից մեկը՝ Էստեբան դե Գարիբայը (1533-1599), ով եղել է հռչակավոր բանահավաք, Ֆիլիպ 2-ի ժամանակագիրը և պալատի արխիվավարը: Նրա աշխատություններից շատերը մնացել են անտիպ, որոնցում հիշատակում է Արարատը, Արաքսը, Կորդուքը և հայկական շատ այլ տեղանուններ, հայտնելով այն միտքը, թե բասկերը գաղթել են Հայաստանից, հիմնելով Իսպանիայի առաջին բնակավայրը՝ Կանտաբրիան: Ըստ նրա Նոյի թոռը՝ Թուբալ նահապետն ու իր ուղեկիցները, բնակեցնելով Պիրինեյան լեռնալանջերից մինչև Ֆրանսիա ընկած տարածքները կոչել են հայկական անուններով, որոնց հետքերը պահպանվում են մինչ օրս: Նա գրում է. «...շատ հաճախ, կարդալով Պտղոմեոսի և այլ հեղինակների գրքերը, նկատել եմ, որ Կանտաբրիայում այնքան շատ են հայկական տեղանունների հետ զուգադիպող բնակավայրերի, լեռների, հարթավայրերի անունները, որ դրանք կարելի է զարմանահրաշ ու առեղծվածային համարել: Ուստի ինքս էլ սկսեցի հավատալ որոշ մարդկանց պնդումներին, թե բնակավայրերի անունների տեսակետից աշխարհում չկա մի այլ երկիր, որն այնքան նման լինի Հայաստանին, որքան Կանտաբրիան...» [1]: Գարիբայը գրում է, որ կանտաբրիայի լեզուն անխառն է ու կատարյալ, ընդհանրություններ ունի հայոց լեզվի հետ և ոչ մի կապ՝ հունարենի, քաղդեերենի, լատիներենի, եբրայերենի, ֆրանսերենի, բուրգունդերենի, անգլերենի, գերմաներենի, հունգարերենի, թուրքերենի, արաբերենի հետ:

Բասկերի մյուս նշանավոր պատմագիրը՝ Անդրես դե Պոսան (1530-1595) ևս համոզված է, որ բասկերի հայրենիքը Հայաստանն է: 1587 թ. Բիլբաոյում լույս է տեսնում նրա «Իսպանիայի հնագույն լեզվի, բնակավայրերի ու գավառների մասին» աշխատությունը: Նրանում մանրակրկիտ նկարագրված են Իսպանիայի հնագույն բնակիչներն ու նրանց լեզուները, սկսած համաշխարհային ջրհեղեղի ու բաբելոնյան աշտարակաշինության տարիներից: Ըստ այս պատմագրի՝ Հայաստանից ու Սենաարի դաշտերից Իսպանիա եկած բասկերը բերել են նաև իրենց լեզուն: Նա նաև ստուգաբանում է արմենների՝

հայերի անունը. «Արմեններն իրենց անունը ստացել են Արամից, և այն նշանակում է վեհ ազգ, ոչ սովորական բարքերով» [2]:

Բասկերի պատմահայրերից երրորդը՝ Բալթասար դե Էչավեն (1558-1623) դարձյալ նշում է, որ բասկերի հայրենիքը Հայաստանն է: 1607թ. Էնրիկե Մարտինեսի տպագրատանը լույս է տեսնում Բալտասար դե Էչավեի «Ճառեր բասկերենի հնության մասին» աշխատությունը, որտեղ ներկայացվում է սեփական լեզվի ծագումն ու զարգացումը, հպարտ ու տարեց կնոջ կերպարով, ով բողոքում է, որ ինքը, լինելով առաջինը, որով խոսում էին Իսպանիայում, մոռացվում է, ու ընդունվում են այլ, անծանոթ լեզուներ: Երբեմն խոսելով ողջ Իսպանիայի անունից, անդրադառնում է Գիպուսկոա և Բիսկայա նահանգներին, որոնք հավատարիմ են մնացել իրեն: Գրքում պաշտպանվում է այն տեսակետը, որ բասկերենը կամ Կանտաբրիայի լեզուն Նոյ նահապետի թոռ Թուբալի ու իր հետնորդների լեզուն է, ովքեր, գաղթելով Հայաստանից, դարձել են Իբերյան թերակղզու առաջին բնակիչները, ու հետևաբար, բասկերենը եղել է այնտեղ առաջին խոսակցական լեզուն:

Գրքի երկրորդ գլուխը մանրամասնորեն նկարագրում է Թուբալի ու իր ընտանիքի գաղթը Հայաստանից ու Իսպանիայում նրանց հաստատվելը: Ահա մի հատված երկրորդ գլխից՝ «...Ապա պատվիրելով պատրաստվել ճամփորդության, նախապատրաստելով այդ ճամփորդության համար անհրաժեշտ ամեն ինչ, վերցնելով սուրբ նահապետ Նոյի օրհնությունը, Թուբալը մեկնեց իր ողջ ընտանիքով, կովերի, ոչխարների ու այլ ընտանի կենդանիների խմբերով, այնքան, որ իր կարծիքով կբավականացնեին՝ Իսպանիայի շրջանում նոր բնակչության սկիզբ դնելու համար, նոր վայր՝ ուր գնում էին իրենց բնական ու սիրելի հայրենիք ՀԱՅԱՍՏԱՆԻՑ, ոչ առանց արցունքների թողնելով այնտեղ մնացողներին, որոնք մեր մոտ ազգականներն էին, թեև մի փոքր այլ լեզվով էին խոսում: Շատ այլ բաների հետ միասին այնտեղ թողեցինք մեր չորս մասունքները՝ Հայաստանը, Կորդուքը, Արաքսը և Արարատը կամ Արալարը, որի նմանը գտանք այստեղ՝ Կանտաբրիայում ու անվանեցինք Արալար, գորշ լեռ, որի վրա ուտելիքներ էին աճում, ինչպես և Կորդուքում էր, որտեղ մնացել էր Նոյի տապանը, որպես պահապան...»: Բասկյան Արալար տեղանունը նա ստուգաբանում է որպես «արոտավայր և լեռ, որտեղ ոչխարներ են բուծում», բասկ. ara-արու ոչխար և larri-արոտավայր, որ համապատասխանում են հայերեն առն - արու, արու ոչխար և լեառն- լեռ հոմանիշներին: Էչավեի աշխատության ենթագլուխներից մեկը նվիրված է հայ-բասկյան տեղանուններին՝ «Հայկական անունները Կանտաբրիայում» վերնագրով: Նա գրում է. «Եթե Արմենակ դքսության բնակիչներին հարցնեք, թե որտեղացի են, ապա նրանք, լինելով բասկ, իմ լեզվով կպասխանեն՝ արմենակ, որը նույնն է, թե հայաստանցի, որտեղից էլ գալիս է նրանց ծագումը»:

Բասկերենում գոյականի հոգնակին կազմվում է k մասնիկի օգնությամբ, արմենակ նշանակում է հայեր՝ Armen-a-k, ինչպես որ Հայք բառը բառացիորեն նշանակում է հայեր, քանի որ հայերենում ք-ն կազմում է որոշ գոյականների

հոգնակին:

Հաջորդ հեղինակը, ով անդրադարձել է հայ-բասկյան առնչություններին, 17-րդ դարի իսպանացի գիտնական Գասպար Էսկոլանոն է: 1610թ Էսկոլանոն Վալենսիա քաղաքի մասին իր պատմության մեջ (Décadas de la historia de Valencia) դարձյալ գրում է, որ համաշխարհային ջրհեղեղից հետո Թուբալ նախահայրը Հայաստանից իր ընտանիքով հաստատվել է Իսպանիայի արևելքում: Ըստ Էսկոլանոյի՝ հենց հայերն են եղել ներկայիս Իսպանիայի առաջին բնակիչները: Էսկոլանոն ճշգրտորեն նկարագրում է այն կոնկրետ վայրերը, որտեղ ըստ լեգենդի թաղված են Իսպանիայի առաջին հայ բնակիչները: Այսօր այդ վայրերը իրենցից ներկայացնում են եկեղեցիների մի շարք Կատալոնիայում և սրբազան վայրեր են համարվում դեռևս հին ժամանակներից: Այս առիթով սփյուռքահայ հասարակական գործիչ, արևելագետ-աղբյուրագետ, Պորտուգալիայի պատմության ակադեմիայի թղթակից անդամ Ռոպեր Կյուլպենկյանը իր «Հայ-պորտուգալական հարաբերությունների պատմություն» գրքում գրում է. «Կասբար էսքոլանո, որ 1610-ին գրեց Վալանսի պատմութունը, կարծիք կհայտնի, թե ...Թուպալ և իր մարդիկ հայերեն կխոսեին... և այն հայերը, որոնք ջրհեղեղեն ետք այստեղ ցամաք ելած էին, ու բնակություն հաստատած, հսկաներու սերունդ մըն էին, դատելով ոսկորներու մեծութենե, զորս տակավին կարելի է գտնել Քաթալոնիո Լոպրիկաթ գետին վտակներու մեջ... ոսկորներեն շատերը պահպանված են Սեն-Քյուքյուֆայի վանքը, Պենթիո վանականներու մենաստանին մեջ, Ժորանոյի կամ Նոթռ-դամ-տել- Քոլլ կամ Քոլլատոյի մեջ, Վիքի վրա, 3 մղոն բարձրությամբ» [4]:

Հայաստանի մասին հերթական հիշատակությանը հանդիպում ենք պատմաբան, Նավառայի թագավորության ժամանակագիր Ժոզեֆ դե Մորետի (1615-1687) «Նավառայի թագավորության տարեգիրք» աշխատության մեջ. «Հայաստան աշխարհը եբրայերեն կոչվում է Արարատ, և այն տեղը, որ ժողովուրդն ասում է, թե տապանը կանգ է առել Հայաստանի լեռներում, եբրայերեն տեքստում գրված է՝ Արարատի լեռներում»: Մորետի գրքում խոսվում է Արալար լեռան մասին, Արմենիայի և գասկոնական Արմենյակ (Armengnak)անվանումների մասին:

Բասկերի ծագման թուբալյան տեսությունը պաշտպանվում է նաև այլ հեղինակների կողմից՝ Գրիգորիս Մայանս (1699-1781), Մանուել դե Լառամենդի (16901766), Գաբրիել դե Էնաո (1611-1704), և այլք: 19-րդ դարում, երբ բասկերի ազգային ինքնագիտակցությունը վերելք ապրեց, ձևավորվեց panvasquismo (համաբասկայնություն) կոչվող երևույթը: Ժխտվում էր ցանկացած տեսակետ, ըստ որի բասկերի ու նրանց լեզվի ծագումը կապվում էր որևէ այլ երկրի, ժողովրդի, լեզվի հետ: Համաբասկայնության հետևորդները համոզված էին, որ Ադամը խոսել է բասկերեն, և որ աշխարհի մնացած բոլոր լեզուները կամ ուղղակիորեն ծագում են բասկերենից, կամ կրում են նրա ազդեցությունը: Մադրիդում հրատարակված Բասկերի երկրի պատմա-աշխարհագրական

բառարանում (Diccionario historico-geografico del Pais Vasco, 1812) առանց լուրջ հիմքերի ժխտվել են հայ-բասկյան տեղանունների զուգահեռները: Այս ամենի հետ մեկտեղ, սակայն, բասկերի հայկական ծագման տեսակետը շարունակում է մնալ գիտնականների և հոտազոտողների ուշադրության կենտրոնում:

Իսպանացի քաղաքական գործիչ, ինէաբան, գրող Խուան Բաուտիստա դե Էռոն (1773-1854) իր աշխատություններում նշում է, որ բասկերի նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհն է, տալիս է Առմենիա (Arrmenia), Asia, Asirio տեղանունների ստուգաբանությունը [4, 5] :

Նույնիսկ այն հեղինակները, ովքեր պաշտպանել են բասկերի վրացական կամ իբերյան ծագման տեսակետը, դարձյալ չեն կարողացել խուսափել հայ-բասկյան տեղանունների քննությունից: Այդպիսի հեղինակներից են կատալանցի գիտնական Ֆիդել Ֆիտա ի Կոլոմերը (1835-1917) և իսպանացի գրող, ինէաբան, պատմաբան Աուրելիանո Ֆեռնանդես-Գեռան (1816-1894): Ֆիդել Կոլոմերը, քննության առնելով բասկ-վրացական զուգահեռները, կանգ է առնում հայկական որոշ աշխարհագրական անունների վրա՝ Արաքս, Արագոն, Արգա, և այլն: Աուրելիանո Ֆեռնանդես-Գեռան իր «Կանտաբրիա» աշխատության մեջ խոսում է Ուրումեա, Արարատ, Արաքս, Ատուրիա (Տիգրիս գետի վտակներից) տեղանունների մասին:

20-րդ դարում, երբ բասկագիտությունը զարգացման նոր փուլ մտավ, բասկերենի ուսումնասիրմամբ սկսեցին զբաղվել այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են ֆրանսիացի լեզվաբան, հայագետ Անտուան Մեյեն, գերմանացի լեզվաբան, պրոֆեսոր Հուգո Շուխարդը, գերմանացի ասուրագետ, հնագետ, մարդաբան Հուգո Վինկլերը, հոլանդացի լեզվաբան Էուգենիուս Մարիուս Ուլենբեկը, անգլիացի գիտնական Էդուարդ Սպենսեր Դոջսոնը և ուրիշներ: Դոջսոնը հավանաբար առաջին բասկագետն է, ով որոշ չափով տիրապետել է հայոց լեզվին: 1893-1907թթ. նա հրապարակել է մի շարք ուսումնասիրություններ, որոնցից ամենաուշագրավը, թերևս 1894թ. “Euskera” (Բասկերեն լեզու) հանդեսի մայիսի 1-ի համարում տպագրված «Բասկերեն բառեր հայերենում» վերնագրով հոդվածն է, որում հեղինակը ներկայացրել է առօրյա գործածական բառերի հայ-բասկյան համընկնումների մի հետաքրքիր ցանկ: Հետագայում ուսումնասիրությունների որակով և համեմատությունների քանակով Դոջսոնին գերազանցեց գերմանացի հայագետ Յոզեֆ Կարստը: Տիրապետելով հայերենին և բասկերենին, որպես հիմնաքար ունենալով համեմատական հնչյունաբանական օրենքները Կարստը կատարեց մի շարք համեմատություններ, եզրահանգելով, որ էվոլուցիայի ընթացքում [3, 4, 5] իր ուսումնասիրած բոլոր բառերը յուրովի կիսում են նույն ստուգաբանությունը: Իր կյանքի վերջին տասը տարիների ընթացքում նա անխոնջ աշխատեց, սակայն ցավոք, վախճանվեց՝ չհասցնելով հրապարակել «Էսսե բասկերի, իբերների ու հարակից ժողովուրդների մասին» իր վերջին գիրքը: Կարստի աշխատանքները շուտով պարուրվեցին խորհրդավոր լռությամբ, Բասկերի երկրի համալսարանների գիտնականների կողմից մոռացության մատնվեցին:

Կարստի աշխատություններում բազմիցս անդրադարձ է արվել այն մասին, որ ալարոդյանները (ինագույն հայկական ցեղ), և բասկերը նույն են ռասայով ու լեզվով: Այս մասին հատկապես խոսվում է "Alarodiens et ProtoBasques: Contribution a l'ethnologie comparée des peuples asianiques et liby-hespériens" («Ալարոդյաններ և նախաբասկեր») խորագրով գրքում, /հիշենք, որ Հերոդոտն ուրարտացիներին կոչում էր Alarodians/ որում նա կարծիք է հայտնում, թե Կովկասից մինչև Պիրենեյներ տարածված ցեղերը դուրս են եկել Հայաստանի տարածքից: Գիրքը ֆրանսերեն հրատարակվեց Վիեննայում, մեծ իրարանցում առաջացնելով գիտական աշխարհում: Կարստը ներկայացրել է ավելի քան երեք հարյուր բասկ-հայկական բառային համընկնումներ ու մեծ թվով հնչյունաբանական ու քերականական նմանություններ, հատկապես հոլովման ու խոնարհման համակարգերում: Նա հանգում էր այն եզրահակացության, որ թե բասկերենը և թե հայերենը alarodiyskim կոչվող լեզվական տեսակի երկու տարբերակներ են: Զուտ լեզվաբանական նյութով չբավարարվելով, Կարստն օգտվել է նաև մարդաբանական ու ազգագրական տվյալներից: Նա առաջին գիտնականն է, ով ուշադրություն է դարձրել բասկերի արմենոիդ լինելու փաստին: Հետաքրքիր է, որ Կարստը հանգել է այս եզրակացություններին բացառապես իր ուսումնասիրությունների հիման վրա, առանց նախկին աշխատանքների մասին տեղեկություն ունենալու:

Բասկերի հայկական ծագման վարկածի հիմքերն ամրապնդեց իսպանացի գիտնական, ակադեմիկոս Ամադոր դե լոս Ռիոսը: 1922թ. նա հրատարակեց իր «Իբերյան լեզվի հուշարձանն ու գանձը» 660 էջանոց աշխատությունը՝ հայ-բասկյան տեղանվանական բազմաթիվ զուգահեռներով: Աշխատության երրորդ գլուխը կոչվում է «Իբերներ կամ բասկեր», որտեղ շարադրված են Հայաստանին վերաբերվող նյութերը: Ի դեպ, այստեղ մեջբերված տեղանունների մեծ մասը հեղինակը վերցրել է հենց հայկական սկզբնաղբյուրներից (Խորենացի, Եղիշե, Փարպեցի), դրանով էլ տարբերվելով իր նախորդ հետազոտողներից:

Հաջորդ կարևոր աշխատությունը 1927թ. Սարագոսայում լույս տեսած Բեռնարդո Էստորնես Լասայի (1907-1999) «Ռոնկալի հովիտը» գիրքն է: Բասկ երիտասարդ բանասեր Բեռնարդո Էստորնես Լասան, ով զբաղվում էր բասկերի բանահյուսությամբ հետագայում դարձավ նշանավոր գիտնական, ակադեմիկոս: Նավառայի Իսաբա գյուղում բանահավաքությամբ զբաղվելիս նա գրի է առել տեղական մի լեգենդ, ըստ որի Իսաբան հիմնադրվել էր հայերի կողմից, ովքեր բասկերի նախնիներն էին ու Նավառայի առաջին բնակիչները:

Ըստ լեգենդի՝ բասկ ժողովրդի առաջնորդի անունը եղել է Haitor (Այտոր): Haitor բառը բասկերենում նշանակում է «Հայից սերված»: Այտորը իր յոթ որդիների հետ եկել էր Armenia (Հայաստան) կոչվող երկրից ու նրանց պատվին Նավառայում հիմնադրել էր յոթ բնակավայր: Իսաբա բառը նշանակում է «նախնյաց հետք»: Գյուղում կա մի ճանապարհ, որ կոչվում է Erminia (Արմենիա): Բասկերեն haitoren seme նշանակում է «ազնվազարմ», որը

բառացի թարգմանվում է «հայի որդի»: Ուրեմն Բասկերի երկրում հնում ազնվազարմ էին համարվում Հայթոռի ժառանգները: Լեգենդը նաև ասում է, որ բասկերի հայ նախնիները գիտեին մետաղի, հատկապես երկաթի ու պղնձի վերամշակման, ցորենի մշակման գաղտնիքները: Հայթոռ կամ Այտոռ անունն առաջին անգամ գործածել է բասկ լրագրող, լեզվաբան, արձակագիր Ժոզեֆ Ավգուստին Չահոն (1811-1858) իր «Այտոռի լեգենդը» վիպակում, որը հայերեն թարգմանվել է Վահան Սարգսյանի կողմից, իսկ Արտուրո Կամպիոնի 1896թ –ին գրած «Այտորի դստեր երգը» բանաստեղծությունը հայերեն է թարգմանել Հովի. Հովիաննիսյանը:

Իսպանացի բանասեր, լեզվաբան, պատմաբան Անտոնիո Տոբարը (1911-1985), ով պաշտպանել է բասկերենի անհայտ ծագման լեզու լինելու տեսակետը, չի խուսափել բասկերի հայկական ծագման վարկածին անդրադառնալուց: Իր «Առասպելաբանությունն ու գաղափարախոսությունը բասկերենի մասին» աշխատության մեջ նա մի առանձին գլխով անդրադառնում է Հայաստանին: «Բասկերը գրում են իրենց երկրի մասին» գլխում Տոբարը ցույց է տալիս, որ բասկերի հայկական ծագման տեսակետը ձևավորվել է հենց բասկերի մոտ, հետագայում դուրս գալով Բասկերի երկրի սահմաններից: Տոբարն այս վարկածը դիտարկել է զուտ առասպելաբանական շրջանակներում, երբևէ չզբաղվելով հայերեն-բասկերեն բառային համեմատություններով, թեև, ձեռնամուխ էր եղել բասկերեն ստուգաբանական բառարանի (Diccionario etimológico vasco) կազմմանը, հավանաբար կկարողանար այնտեղ զետեղել հայ-բասկյան զուգահեռների զգալի մի շերտ, եթե տարաժամ մահը չխանգարեր մեծ գիտնականին: Նրա սկսած գործը շարունակեց բասկ լեզվաբան Մանուել Ագուդը: Այժմ բասկերեն ստուգաբանական բառարանի տարբեր հատորներում ցրված են հայ-բասկյան բառերի զանազան զուգահեռներ, դիտարկվելով դրանք պատահական նմանություններ:

Բասկերենի անկախ լեզու լինելու տեսության պաշտպաններից է հայտնի լեզվաբան, բասկերենի և հին իսպաներենի մասնագետ Լուիս Միչելենան (1915-1987): Նա ունի բազմաթիվ բասկերեն բառերի ստուգաբանություններ, որոնք ի մի են բերված Խուան Խոսե Արբելայսի «Բասկյան ստուգաբանությունները Լուիս Միչելենայի աշխատություններում» 1977թ Սան Սեբաստիանում լույս տեսած գրքում: Երբ 1968թ. ֆրանսահայ մտավորական Արամ Գնթունին զրուցում է Միչելենայի հետ հայ-բասկյան առնչությունների շուրջ, Միչելենան մի դիտարկում է անում՝ հայ լեզվաբանների աշխատություններն անմատչելի են Հայաստանի սահմաններից դուրս: Այսինքն, հայ և օտարազգի գիտնականներն աշխատում են առանց միմյանց աշխատանքներին տեղյակ լինելու, դա էլ հանդիսանում է հիմնական պատճառներից մեկը, որ ժամանակի ընթացքում առաջ քաշված տեսությունները կամ անտեսվում են, կամ հերքվում: Չի կատարվում բավարար թարգմանական աշխատանք, տարբեր լեզուներով չեն լուսաբանվում հայտնի լեզվաբանների աշխատություններն ու տեսակետները: Մեկ անգամ ևս հիշենք, զրույցը տեղի է ունեցել 1968թ, սակայն այս մտայնությունն

արդիական է նաև մեր օրերում: Գնթունու մեջբերումը զրույցից. «Դուք Աճառյան անունով աշխարհահռչակ լեզվաբան մը ունիք, մենք ինչպես տեղյակ ըլլանք Աճառյանի հայերեն լեզվով գրված միտքերուն…»:

1996-ին ամերիկացի Դեյվիդ Օ'Քիֆին համացանցում «Բասկերենի հնդեվրոպական արմատները» խորագրով էջ է բացել, կատարելով սիրողական մակարդակի ուսումնասիրություններ: Օգտվելով երկլեզու բառարաններից, նա հավաքում է հայերեն-բասկերեն բառաֆոնդային համընկնումները, երբեմն տալով բառերի սխալ ստուգաբանություններ:

Հայ-բասկյան առնչությունների շրջանակներում կարևոր ուսումնասիրություններ ունի ֆրանսիացի գիտնական, Ռոբեր Դեզելյուսը: «Հայաստանը Շումերի դուստր» գրքում, որի վրա աշխատել է մի քանի տասնամյակ, նա բասկերին կոչում է «արևմտյան շումերներ», համաշխարհային քաղաքակրթության անկյունաքար համարելով շումերա-հայ-բասկյան մշակույթը:

Վստահաբար կարող ենք ասել, որ գիտնականների և նրանց աշխատությունների ցանկն ավելին է, քան զետեղված է այս հոդվածում: Սա պարզապես հայ-բասկյան ցեղակցության վարկածի կողմնակից օտար հեղինակների գործերը հավաքելու և ի մի բերելու մի փորձ է: Նշենք նաև, որ քիչ չեն հայ հեղինակները, ովքեր զբաղվել են այս խնդրի լուսաբանմամբ, և որոնք արժանի են ուսումնասիրության և անդրադարձի առանձին հոդվածով:

Օգտագործված գրականություն

1. Վահան Սարգսյան, Բասկերի ծագման առեղծվածը եւ Հայկական լեռնաշխարհը, Եր. «Ասողիկ», 2000 թ
2. Esteban de Garibay, "Compenido Historial", 1571
3. Andres se Poza, De la Antigua Lengua, Poblaciones y Comarcas de las Espanas, Vizcaya, 1587
4. Կյուլպենկյան, Հայ-պորտուգալական հարաբերություններ, Եր., 1986
5. Alfabeto de la lengua primitiva de España, Madrid, 1806.
6. El mundo primitivo o Examen filosófico de la antigüedad y cultura de la nación bascongada, Madrid, 1815

YERAN KHACHATRYAN. THE ISSUE OF ARMENIAN-BASQUE KINSHIP IN THE WORKS OF FOREIGN AUTHORS. *The article tries to collect the works of foreign authors supporting the Armenian-Basque hypothesis.*

ЕРАН ХАЧАТРЯН. ВОПРОС АРМЯНО-БАССКОГО РОДСТВА В РАБОТАХ ЗАРУБЕЖНЫХ АВТОРОВ*. В статье предпринята попытка собрать работы зарубежных авторов, поддерживающих армяно-баскскую гипотезу.*

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՅԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ԵՌԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նաիրա Բալայան

Երևանի Հայբուսակ համալսարան,

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ

Մուտքագրված է 05.05.22, հաստատված է տպագրության 28.06.22

Ամփոփագիր *- Ֆրանսահայ անվանի գրող Նշան Պեշիկթաշլյանի անունը սովորաբար աղերսվում է երգիծանքին հետ, սակայն նրա եռագրությունը, ինչպես նաև մի քանի այլ վեպ, առանձնանում են աստվածաշնչյան թեմաներին առնչվող իմաստասիրական լրջմիտ խորհրդածություններով: Հայ գրականության մեջ առաջին անգամ սուրբգրային թեմաների գեղարվեստական այլաբանությանը գրողը դիմել է լայնակտավ ձևով. պատկերելով մարդու մեղսավոր գործունեությունը՝ մեղք, սեռական կիրք, այլասերություն, ագահություն՝ Պեշիկթաշլյանը փորձել է գտնել մեղքերի մեջ թաղված մարդկության փրկության ճանապարհը և որպես ապաշխարության դեղատոմս՝ առաջադրել է անվերապահ ու անանձնական սերը: Այդ նպատակի համար նա իր գլխավոր կերպարներին ընտրել է Աստվածաշնչից՝ Քրիստոս, Աստվածամայր, Մարիամ Մագթաղենացի: Դիմելով խորհրդանիշների, արքետիպների և միֆերի օգնությանը՝ գրողը նոր հայացքով է դիտարկել աստվածաշնչյան դեմքերն ու դեպքերը՝ դրանով իսկ արտացոլելով հենց իր՝ հեղինակի կենսափիլիսոփայությունը ու կարևորելով նաև մարդկության փրկության ճանապարհին հայերի դերի վճռորոշ նշանակությունը: Այսօր, երբ համաշխարհային գրականության մեջ Հիսուսի գրական կերպարի առաջադրումը այլևս նորություն չէ, այս հոդվածը կարևորում է Պեշիկթաշլյանի եռագրության դերը՝ որպես այս թեմայով հայ գրականության պատմության մեջ արժանի նախադեպ:*

Հիմնաբառեր *- Նշան Պեշիկթաշլյան, քնարավեպեր, Հիսուս, Մարիամ Մագթաղինացի, Աստվածամայր, արքետիպ, խորհրդանիշ, մեղք, փրկություն:*

Ներածություն

Սփյուռքահայ ստեղծագործող Նշան Պեշիկթաշլյանի գրական հարուստ ժառանգությունը ընդգրկում է չափածո և արձակ բանաստեղծություններ, պոեմներ, առակներ, մանրապատումներ, նորավեպեր, պատմվածքներ, վիպակներ ու վեպեր, թատերգություններ, դիմանկարներ, թատերագիտական ուսումնասիրություններ: Պոլսում ծնված, այնտեղ միջնակարգ կրթություն ստացած Պեշիկթաշլյանը 1922 թ.-ից՝ Փարիզ տեղափոխվելուց հետո, իրեն ամբողջովին նվիրում է գրականությանը: Հինգ տասնամյակից ավելի նա գրում, հրատարակում է բազմաթիվ ստեղծագործություններ, աշխատակցում է սփյուռքահայ զանազան հանդեսների, խմբագրում շատ պարբերականներ՝ «Ազատ օր» «Ազդակ», «Ակոս», «Բագին», «Սփիւռք», «Հայրենիք», «Ալիք», «Մարմարա», «Անահիտ», «Անդաստան», «Զուարթնոց», «Մենք», «Յառաջ» և այլն:

Պեշիկթաշլյանը՝ որպես գրական-հասարարական անհատականություն,

իր փորձառությունը ստացել է Պոլսի գրական-մշակութային միջավայրում: 1920-ական թվականներից արդեն Նշան Պեշիկթաշլյան անունը սկսում է շրջանառվել սփյուռքահայ գրական անդաստանում նախ՝ որպես նոր բանաստեղծ, ապա՝ արձակագիր՝ առավելապես կապված երգիծանքին:

Ն. Պեշիկթաշլյանի գրական աշխարհայացքի հայեցակետերի վրա, անշուշտ, իր ներգործությունն է ունեցել ֆրանսահայ գաղութում հեղափոխիչ դերով հանդես եկած «Մենք» խմբակը, որում ակտիվ մասնակցություն ունեցած ժամանակի նշանավոր «Փարիզի տղաքի»՝ Շահան Շահնուրի, Զարեհ Որբունու, Շավարշ Նարդունու, Վազգեն Շուշանյանի, Նիկողոս Սարաֆյանի ու այլոց կողքին իր բարձր գեղագիտությունն է առաջադրել և Նշան Պեշիկթաշլյանը՝ անխախտ պահելով օտար հողում ազգային դիմագիծը պահելու, մայրենի լեզուն չմոռանալու, իր արմատներին հավատարիմ մնալու սկզբունքները: Գրական կյանքի նվիրյալները հայրենասիրական այս հիմքի վրա առաջ քաշեցին իրենց տեսլականը. գրականության միջոցով ուծացման վտանգին դիմահար կանգելը: Նշան Պեշիկթաշլյանը գրել է անընդհատ (անշուշտ, պատճառը նաև այն է, որ գրողը մամուլում հրատարակվելիք նյութերի բազմազանության և հաճախ տպվելու պահանջներին է տուրք տվել), հրապարակվել գրեթե ամեն օր: Փոքր ծավալի արձակ գործերը՝ ֆելիետոններ, ակնարկներ, պատմվածքներ, դիմանկարներ, երգիծական և քնարական մանրապատումներ, Նշան Պեշիկթաշլյանի աշխարհայացքի հայեցակետերն արտացոլող գողտրիկ ստեղծագործություններ են, որոնք հրապարակվել են ոչ միայն մամուլում, այլև տպագրվել են առանձին գրքերով ու ժողովածուներով՝ նրա անունը ճանաչելի դարձնելով ողջ հայ գրական աշխարհում:

1928-1929 թթ. և 30-ականների սկզբին մամուլում տպվում են նրա մի քանի արձակ գործեր՝ «Լուսին եւ նշխար», «Տէսիլներ», «Նարդոս», «Ձիթենի» (վերջին երկուսը Ռապպի քնարավեպի առաջին և երկրորդ գլուխներն էին՝ տպված 1928 թ. և 1929 թ.), 1928-1934 թթ. հրատարակվում են Ն. Պեշիկթաշլանի՝ հայ գրականության մեջ նորամուծություն համարվող քնարավեպերը և հրաշավեպերը՝ Ավետարանի և բյուզանդական շրջանի պատմությանը վերաբերող թեմաներով. հրատարակվում են «Սիդոննա», «Ռապպի», «Մեղքի քարը (Կաաբա)» քնարավեպերը որպես եռագրություն (ընդ որում, վերջինս գրքով հրատարակվում է մոտ երեք տասնամյակ անց): 1942 թ. հրատարակվում է «Լուլուտի» հրաշավեպը, որը ևս բյուզանդական կայսրության ժամանակաշրջանին վերաբերող ստեղծագործություն է, հետագա տարիներին՝ 50-ականներին, ավելի հասուն ու նոր որակի գաղափարական ընդգրկումներ ունեցող այլ ստեղծագործություններ, հետո՝ 1957 թ.-ին, տպագրվում է «Յիսուսի դիմանկարը» պատմական վեպ անվանվող ստեղծագործությունը: Նշան Պեշիկթաշլյանը նորամուծություն արեց ոչ միայն ձևի՝ ժանրերի առումով, քանի որ հրաշավեպեր և քնարավեպեր, որպես այդպիսիք, հայ գրականության պատմության մեջ չկային, այլև բովանդակության և մանավանդ գրական հերոսների առումով՝ աստվածաշնչյան դեմքերին օժտելով մարդկային

տարատեսակ գծերով, ընդհուպ՝ մեղսավոր արատներով, ավելին՝ Հիսուսին պատկերելով մեղքերով բեռնավորված:

***

Նշան Պեշիկթաշլյանի վիպական հոլովույթում իրենց քնարականությամբ ու էպիկական պատումի միահյուսմամբ առանձնակվող հրաշավեպերում և քնարավեպերում բյուզանդական շրջանի պատմական իրողություններ են, աստվածաշնչյան պատումների հետ նմանություններ, սուրբգրային ալյուզիաներ, միֆական բազմաթիվ տարրերի ու արքետիպերի առկայություն, որոնք վեպերը յուրահատուկ ստեղծագործություններ են դարձնում: Վեպերում ակնառու է ևս մի ստվար շերտ՝ հեղինակի՝ կրոնի և նրանից ածանցվող իմաստաբանական քննաբանումները, քրիստոնեական պատգամների ու բարոյախոսության հայեցակետերը և այլն: Հատկապես առանձնանում է Քրիստոսին՝ իբրև գլխավոր հերոսի, իբրև մարդկային ամենատարբեր հատկանիշներով սովորական մարդ-կերպար ընտրելու նորարարությունը: Ճիշտ է, սկսած միջնադարից մշակույթի տարբեր ոլորտներում առանձնանում է Քրիստոսին պատկերելու միտումը, սակայն հիմնականում նա կերպավորվում է կրկին իբրև սուրբ, իբրև Աստված, իսկ «Միջնադարը…մարդու ինքնաճանաչողությունը բխեցնում էր Աստծո ճանաչողությունից» [1, 6]:

Նոր ժամանակներում արդեն փոխվում է գրողների հայացքը. «Այն, ինչը Միջնադարում փակված էր և մարդու գիտակցությունից դուրս մղված, մարդու համար (այսօրվա-ծնթ՝ Ն.Բ.) ձեռք է բերում կարևորագույն արժեք, քանի որ նրա գիտակցության մեջ տեղի է ունենում Քրիստոսի միֆո-կերպարի վերաշրջում, ուր Նա բացահայտվում է նոր տեսանկյունից՝ լուսավորելով մարդու ներքին-անհատական մարդկային աշխարհը, որին այդ տեսակետից չի մոտեցել ոչ մի ձեռք» [1, 6], - գրում է Հ. Էդոյանը: Պեշիկթաշլյանը, իր վեպերում ընտրելով Քրիստոսին որպես վիպական հյուսվածքի գլխավոր դերակատար, կերպարին տալիս է նոր բնույթ, նոր հատկանիշներ, որոնք ընդլայնում, անգամ վերափոխում են հերոսի սուրբգրային առանձնահատկությունները՝ բացահայտելով հեղինակի մտասևեռման նշանակությունը:

Անշուշտ, հարկ է ընդգծել նաև 20-րդ դարասկզբին Եվրոպայում մեծ տարածում գտած խորհրդապաշտական գրական ուղղության դերակատարումը Պեշիկթաշլյանի՝ այս թեմայով գրական ստեղծագործություններում: Նրա «Սիդոննա», «Ռապպի» («Նարդոս» և «Ձիթենի»), «Կաաբա» եռագրությունը, «Հիսուսի դիմանկարը», «Լուլուտի» վեպերը պատումի էպիկական խորքերով, խորհրդանիշների մեծ բազմազանությամբ աչքի ընկնող, հարուստ քնարականությամբ առլեցուն երկեր են: Ստեղծված լինելով որպես թերթոն ժանրի վեպեր՝ նրանցում ակներև են և՛ արկածային պատումի տարրերը, և՛ ընթերցողին գրավելու համար արված սիրային լայնախորհուրդ տեսարանները, և՛ անգամ պագշոտ տեսիլները: «Իր կազմաբանությամբ թերթոն

վեպը բաց համակարգ է, որը հնարավոր է դարձնում ժանրի փաստորեն բոլոր ներժանրային կաղապարների իրացումը: Թերթոն վեպի այսօրինակ ունիվերսալիզմը գրական-գեղարվեստական գործընթացում միշտ կենսունակ լինելու պերճախոս վկայությունն է, որը պայմանավորված է նաև մշտատև ընթերցողական պահանջարկի երևույթով» [1, 221-222]:

Պեշիկթաշլյանի վեպերին անդրադարձել են ժամանակակիցները, ոչ միայն ընդգծել նրանց հարուստ ու գեղեցիկ լեզուն, գունագեղ համեմատություններն ու հեղինակի արվեստի ոճը, այլև դիտարկել թերությունները, որ գեղարվեստական գեղագիտության տեսակետից վնաս են հարցնում վեպերի գրական արժեքայնությանը: Այս առումով հատկապես նշելի է Արշակ Չոպանյանի գրականագիտական, խիստ գնահատականներ պարունակող ստվար աշխատանքը, որ անաչառ ու առարկայական վերլուծություն է՝ թեպետ սուր քննադատությամբ, բայց դրանում ևս շեշտվում է վեպերի՝ հայ գրականության մեջ նախադեպ և առանձնահատուկ, գեղարվեստական ուրույն արժանիքներով օժտված լինելը:

Վեպերը «հենված» են Աստվածաշնչի վրա. նրանք նկարագրում են Հիսուսի կյանքն ու գործունեությունը գեղարվեստական պատկերավորման այլաբանությամբ, ինչպես նաև աստվածաշնչյան պատումի որոշ դրվագների գեղարվեստական ընդլայնմամբ ու դիպաշարին նոր էպիկական ընթացք ու բովանդակություն հաղորդելով: Ուշագրավ է, որ Պեշիկթաշլյանը գեղարվեստական ամբողջացման հասնելու համար օգտագործել է ոչ միայն սուրբգրային պատումի դիպաշարային տարրեր, այլև հարուստ աստվածաշնչյան բառային ֆոնդ՝ երբեմն անգամ առանց որևէ փոփոխությունների մեջբերելով դրանք ու հաճախ էլ դիտավորությամբ ժամանակավրիպումություն ստեղծելով հերոսների բառերի և աստվածաշնչյան դեմքերի խոսքերի միջև:

Բոլոր վեպերում աներկբայորեն զատորոշվում է գրողի գեղարվեստական մտահոգությունը՝ ստեղծել իրականություն, որտեղ մարմնականի ու հոգևորի բախումը թեժ զարգացումներով կանխորոշելու է մարդկության հոգևոր առողջացումը: Մարդկությանը հուզող հավերժական այս խնդիրը իր վեպերում Պեշիկթաշլյանը դիտարկում է Հիսուսի երկրային կյանքի հայտնի և հորինված մի քանի դրվագներով՝ փորձելով Քրիստոսի միջոցով ճանաչելու մարդկության սեփական եսը: «Երկարատև երազներից արթնացած մարդը իր աչքերով Քրիստոսի մեջ փնտրում է ինքն իրեն, իր «ես»-ի արդարացումը՝ ձգտելով Նրա մարդկային կողմի միջոցով ճանաչել և գիտակցել ինքն իրեն որպես այս-աշխարհային գոյություն՝ կանգնած տարածության մեջ, իր ճակատագրին դեմ-միայնակ, աշխարհի «օտար ուժերի» խաչմերուկում, ընտրության առջև՝ դառնալով արվեստի և գրականության կենտրոնական դեմքը, որը ծավալվում է, մեծանում, հասնում բարձրակետին և սկսում նահանջելը» [2, 4-5]:

Հիսուսի մեջ տեսնելով մարդուն, նրա մարդկային բնույթից առթված հոգեղեն ցանկությունները՝ Պեշիկթաշլյանը կրոնի ու հոգևոր կյանքի մղումները դիտարկում է բարություն անելու, մեղսավոր հոգիներին փրկելու, մաքրագործվելու

հավիտենական ընթացքի մեջ: Հեղինակի այս նպատակայնությունն է պատճառը, որ «Սիդոննա», «Ռապպի», «Լուլուտի» վեպերում, ի հակակշիռ քրիստոնեական սրբազան պատվիրանների, հերոսները թաղված են ստախոսության, նախանձի, ստոր ու քստմնելի արարքների, աշխարհիկ զեխ գինարբուքների, սեռական տարբեր ցանկությունների, զանազան այլ մեղքերի ծովում: Հեղինակը չի խորշում անգամ արտասովոր պագշոտ ձևերով, տարօրինակ սիրային վայելքներով տեսարաններից, որոնցում պատկերվում է Հիսուսը Մարիամ Մագթաղինացու հետ: Նմանօրինակ գեղարվեստական մոտեցումը կապված է, անշուշտ, գրողի գեղարվեստական հայեցակարգին, նրա կենսափիլիսոփայությանը, գրականության մեջ Քրիստոսի բնույթի նոր մեկնաբանմանը: «Մշակույթի համակարգի կառուցվածքը, ուղղվածությունը և նրա իմաստային ինքնությունը կախված է Քրիստոսի ընկալման և մեկնաբանման բնույթից: … Քրիստոսի կերպարը ժամանակի մեջ անշարժ չէ, նա «քայլում է» մարդու հետ համաչափ՝ երբեք չլքելով նրան և չդառնալով նրա համար վերացական «դիմակ»: ..Թե ինչ-պես է մարդը (ստեղծագործողը-Ն.Բ) պատկերացնում Քրիստոսին՝ դրանով էլ պայմանավորված է նրա մտքերի, զգացմունքների և ներքին որոնումների հոսքը, նրա կյանքի ձևը, աշխարհի մոդելը…» [3, 28]:

Հիսուսի կերպարի մեջ դնելով մարմնական գայթակղությունների մղումներ՝ հեղինակը նրան դիտարկում է ոչ թե որպես մարդեղացած Աստված, այլ տառապանքով մաքրված մարդ, որը իր կենսափորձով ու աստվածաբանական խորհրդածություններով գնում է դեպի աստվածացում:

Եռագրության առաջին՝ «Սիդոննա» վեպում հերոսների ընտրությունը սահմանափակ է. գլխավոր հերոսներ Սիդոննայի և Էմմանելի հանդիպման, սիրահարության, ֆիզիկական մերձեցումների, բարոյահոգեբանական տարբեր զրույցների պարբերույթում ուրվագծվում է երկու միֆական միստերիաների հատումը, որ միախառնված է և դեռ չորոշարկված: Սիդոննան՝ հին միստերիալ մտածողության կրողը, և Էմմանելը՝ նոր միստերիայի կրողը՝ աշխարհի վերափոխման ու բարոյապես առողջացման ջատագովը, սիրային հարաբերություններում, մարմնական վայելքների ըմբոշխնումից հետո պիտի հասկանան, որ սեփական եսի ու հետևաբար աշխարհի վերափոխման համար պետք է աստվածային մաքրագործող սերը: Հիսուսի Էմմանուել անվան հետ անթաքույց զուգորդումը, բառային ալյուզիաները աստվածաշնչյան խոսակցություններին մատնում են Նշան Պեշկիթաշլյանի բուն նպատակը՝ սերը որպես մարդասիրության ու փրկության առհավատչյա դիտարկելը: Վավաշոտ ու չքնաղագեղ Սիդոննան, որ բոլոր տղամարդկանց խոնարհեցնում էր մեն մի հայացքով, Մարիամ Մագթաղինացու արքետիպն է: Նա չի ճանաչում սերը և իր հին միստերիալ կարգից պիտի անցնի նորին միայն ու միայն այդ սիրո միջոցով: Մարմնական սիրո վայելքից հետո ճանաչելով ոգեղեն սերը՝ Սիդոննան տառապանքներից հետո է միայն հասնելու աստվածային սիրո, որով կփրկվի աշխարհը. «Սիրով, Էմմա՛նէլ, միայն սիրով կարելի է քիչ մը բարեփոխութիւն յուսալ» [4, 117]: Աստվածային լուսավոր սեր, որ փրկելու

է աշխարհը. դա, ըստ գրողի, այնքան պարզ է, որ անգամ մարդկային մեղսավոր եսը ունակ է այդ սիրո միջոցով, բազմաստիճան խոկումների ու ապաշխարանքների շարունակական ընթացքով մաքրագործման:

Նույն գաղափարական հարցադրումն է նաև «Բապպի» վեպի առաջին և երկրորդ գլուխներում: Առաջին գլխում մեղսավոր կանանց արքետիպն է՝ Մարիամ Մագթաղենացին՝ Մերեեմը, և Հիսուս Քրիստոսը՝ Բապպին՝ Եշուան: Պարականոն գրականության մեջ այլ ուղղություն ստացած, ինչպես նաև բազմաթիվ տարընթերցումների առիթ հանդիսացած աստվածաշնչյան՝ Քրիստոսի ոտքերը լվանալու, նարդոսի յուղով օծելու, մազերով սրբելու ու ներում ստանալու պատումը Նշան Պեշիկթաշլյանը ստեղծաբանել է որպես սիրավեպ, որին ագուցված են իր՝ հեղինակի իմաստասիրական լայնահուն խոհաբանությունները, բնության ու սիրային տեսարանների քնարական գեղեցիկ նկարագրությունները: Հերոսների պոռթկուն ու կրքաշատ սիրային զեղումները ընդգծում են հեղինակի միտումնապաշտությունը. աստվածային նախասկիզբ ունեցող Եշուան մարդեղանում է՝ տրվելով Միրիամի գայթակղություններին: Աշխարհիկի ու հոգևորի սերտաճումը Պեշիկթաշլյանը հյուսել է բազմաթիվ հղանցքներով առ Երգ երգոցը, երբեմն անգամ սոսկ գեղարվեստորեն սքողելով երգերգոցյան կրկնությունները: Եշուայի և Մերեեմի վայրկենական սիրահարությունն ու աշխարհիկ սերը և դրանց վայելումը պատկերվում են խորհրդապաշտության դիրքից: Առհասարակ, հեղինակի ողջ ստեղծագործական աշխարհում մեծագույն դեր է հատկացված խորհրդանիշերին, և դրանց մեկնությունը կրկին ապացուցում է, որ գրական երկի արարումը ինչպես ստեղծաբանական, այնպես էլ ներզգացողական գործընթաց է: «Գրական տեքստում խորհրդանիշի արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ հարաբերությունների անսահմանության դրանց արտահայտումը ամրակայվում է հենց իրենով (խորհրդանիշ): Այս առումով խորհրդանիշը սեղմում է տեղեկությունը և թույլ է տալիս համեմատաբար փոքր համատեքստում ստեղծել արհեստական իրականություն, փորձարկում անել, որի արդյունքում ստացվում է գեղարվեստական ստեղծագործություն» [5, 17], - գրում է ռուս տեսաբաններից Անդեենկոն: Պեշիկթաշլյանի հերոսների՝ զանազան խորհրդանշաններով կառուցված հարաբերությունների գեղարվեստական ամբողջացումը հենված է կրկին մարմնականի ու հոգևորի հակասության հենքին: Նարդոսի բույրը, որ խորհրդանշորեն ներկա է ամբողջ պատումի մեջ, մատնանշում է սիրո գաղափարի հավիտենականությունը, նրա աստվածային էութենաբանությունը:

Հաջորդ գլխում ևս պատումը զարգանում է միֆոլոգիական այլաբանությամբ՝ ցուցադրելով հեղինակի գաղափարական նույն սևեռվածությունը: Այս վեպում ևս աչքի է զարնում խորհրդանշանների առատությունը. խաչված Բապպիի մտատեսիլում ձիթենուց ճոճվում են առաքյալները և նայում մերկ Մերեեմին. Եուդայի դավաճանությունը ցանկասիրությունից է ծնվում, մյուս առաքյալները ևս Մերեեմի մարմինն են տենչում: Ծառի արքետիպը, որ բարու ու չարի կենաց ծառն է նաև մատնանշում, Պեշիկթաշլյանի վեպում ստացել է նոր իմաստային

լուծում. Քրիստոնեական հավատի ծառի խորհրդանշանը կտրվում է. մարդկությունը, որ տառապում է ցանկասիրության ախտով, մնալու է նույնը, քանի որ չի ձգտում փոփոխության ու չի տեսնում այն աստվածային սերը, որով պիտի գնա մաքրագործման: «Կը տեսնէ աշխարհը որ կ՚ ընթանայ միեւնոյն ճամբէն, հին ճանապարհէն, նոր անունով սրբացուցած ամէն հեթանոսութիւն, անաստուածութիւն» [6, 105]: Կտրված ձիթենու արմատների վրա երևացող Մերեեմի պատկերը հեղինակը հակադրում է խաչված Քրիստոսին՝ փորձելով չարի ու բարու հավերժական պայքարի այս փուլում արձանագրել մեղսավորի, ցանկասիրության մարմաջի ժամանակավոր հաղթանակը:

Իր ընդարձակ վերլուծության մեջ անդրադառնալով այս վեպերին՝ Ա. Չոպանյանը գտնում է, որ աստվածաբանական իմաստասիրություն քարոզող ու տոփական խաղերի նկարագրություններ պարունակող վեպերի գեղարվեստականությունը բավական հակասական է: Թեև նա Պեշիկթաշլյանի գործերը համադրում է եվրոպական գրողների ստեղծած գրական պատկերներին և գեղարվեստականության առումով վեր դասում վերջիններս, այդուհանդերձ համարում է, որ «վիպակներուն անվիճելիօրեն գեղեցիկ մասերը, իրենց տեսակին մէջ՝ զմայլելի էջեր են եւ անկորուստ պիտի մնան մեր նոր գրականութեան բարձրագոյն արտադրութեանց շարքին մէջ» [7, 116]:

Մարդկային էության հարցերը կրոնի տեսանկյունից քննելու կերպն է երևակվում նաև եռագրության վերջին «Կաաբա» գրքում (գիրքը 1933 թ. հատվածաբար տպագրվել է «Յառաջ»-ում, հետո՝ 1934-1935 թթ., «Հայրենիք» ամսագրում և 1960թ. Արդեն ամբողջովին, որպես թերթոն՝ «Սփիւռք» շաբաթաթերթում), որում մարդկային մեծագույն մեղքը՝ Աբելի սպանությունը, Նշան Պեշիկթաշլյանը քննում է տարատեսակ հարցադրումներով՝ ոչ ծավալուն մեկնաբանություններով հասնելով մեղսավոր մարդկային էության հոգեվերլուծության, համադրելով կրքի ու սիրո առաջին դրսևորումները խղճի ու ամոթի համատեքստում: Եղբայրասպանության միֆական պատումը, միֆական կերպարի միտումնավոր շրջանառելը միտված են գրողի բարոյախոսումության ելակետերին, ըստ որոնց պատճառաբանում են զգացականի ու մտավորի, սիրո ու կենդանական բնազդի հակասությունները: «Միֆի «վերադարձը» տեղի է ունենում որպես կանոն հիմնականում վեպի կառուցվածքային տիրույթում: Օրինաչափություններից մեկն էլ այն է, որ շատ հաճախ գեղարվեստական տեքստերում միֆոլոգեմների դերը կատարում են այլ գեղարվեստական տեքստերից փոխառնված միտումնավոր, նպատակային հղումները, մեջբերումները և վերաձևակերպումները» [8, 39], -գրում է Ալվարդ Սեմիրջյանը: Պեշիկթաշլյանը միֆական պատմությունը ծառայեցնում է իր հայեցահամակարգին, գտնում, որ մարդկային միայնակության խնդիրը ծնվում է աշխարհաճանաչողության, ինքնագիտակցության խորքերում, և մարդկային անհուն տառապանքից ազատվելու ելքը աղոթքի զորությունն է, թեև մարդկային բազմաթիվ մեղանչումները մեղքի գիտակցումը միշտ արթուն են պահում:

Բյուզանդական շրջանի մասին ստեղծագործություններում առանձնանում

է «Լուլուտի» վեպը, որը Պեշիկթաշլյանը գրել է 1940 թ. և տպագրել 1942 թ.: Վեպը Երկրորդ համաշխարհային պատերազմի ու առհասարակ պատերազմ երևույթի անմիջական արձագանքն է: Ճիշտ է, հրաշավեպ կոչվող այս գործում բաղիյուսված են հեքիաթի, վեպի, քնարական բանաստեղծության ժանրային առանձնահատկությունները, սակայն այն ուշագրավ ստեղծագործություն է դառնում հենց թեմատիկ ընդգրկվածության շնորհիվ, կոմպոզիցոն շրջանակների հմուտ դրվագաբանմամբ, իրապատում ու հրաշապատում դիպաշարային առանձնահատկություններով: Բազմաճյուղ գործողությունները ընթանում են երկու՝ մարդկանց ու գերբնական արարածների տարբեր աշխարհներում. բյուզանդական իրականությունը գրողը պատկերել է լատինական բառերի, անունների օգտագործումով, հագուստի ու զարդերի, պալատների ու սովորական տների ու այգիների պատկերավոր նկարագրություններով: Վեպի առանցքում դարձյալ մարդկային մեղսավոր հոգու մեջ անթեղված բարու ու չարի պայքարն է, որը կրկին հակադրամիասնությունների ձևով է հանդես գալիս՝ զվարթուններ ու սատանիկներ, աղավնեծաղիկ ու դիվածաղիկ և այլն: Հերոսուհին՝ Լուլուտին, հրաշագեղ աղջիկ է, որի հոգում բույն են դրել սնափառությունը, մեծամտությունն ու հպարտությունը: Դիպաշարի ընթացքում նա փախչում է հայրական տնից, որպես հարճ գերեվարվում Լոքա զորավարի կողմից, այնուհետև նրան խլում է Հիմաեակոս կայսրը: Ի վերջո դեպքերը Լուլուտիին դարձնում են թագուհի: Դիպաշարային նման վայրիվերումները Պեշիկթաշլյանը կիրակել է իր նպատակային եզրահանգման համար: Մարիամ աստվածամոր, Մարիամ Մագթաղինացու արքետիպերը մեկտեղող Լուլուտիի՝ մոր արքետիպը արտացոլող կերպարը մեղսավոր արատներից գնում է դեպի մաքրազերծում և սրբագործում: Այս կերպարը, անտարակույս, առնչություններ ունի և՛ Սիդոննայի, և՛ Մերեեմի կերպարների հետ, քանզի ելակետը հեղինակի՝ մարդկային աշխարհի վերափոխման, խաղաղության ձգտումների գաղափարաբանական սևեռումներն են: Պատերազմի և խաղաղության նուրբ սահմանագիծը պահելու համար գրողը բարձրացնում է հատկապես կնոջ՝ որպես մոր դերակատարման կարևոր խնդիրը: ««Մայր»-ը այս կապակցությամբ ցույց է տալիս ոչ միայն որդիության հարաբերություն, այլև էգոյի բարդ հոգեկան իրավիճակը» [9]: Պատերազմի սանձազերծման մեջ տեսնելով սիրո բացակայությունը՝ Պեշիկթաշլյանը համայն աշխարհի փրկության ճիգերի մեջ կարևորում է հատկապես կնոջ՝ մոր մեծագույն դերակատարումը, նրա սիրելու, աշխարհին քրիստոնեական մարդասիրության դիրքերից նայելու կարողությունը. Լուլուտին այս ամենի պատգամախոսն է. «Պարգեւել խաղաղութիւն՝ տառապանքէն մրրկած հոգիներուն: Ընծայել խաղաղութիւն՝ ցաւէն երկրաշարժուած մարմիններուն: Ձգտիլ նաեւ որ խաղաղութիւն ըլլայ երկրի վրայ. խաղաղութիւն ամենեցուն: Որքան ատեն որ պատերազմ կայ՝ ապացոյց է որ սէր չկայ, ու որքան ատեն սէր չկայ՝ չկայ նաեւ քրիստոնեութիւն» [10, 211]: Որդուն պարտադրաբար սպանելուց հետո Լուլուտին, իր մեջ խտացնելով մոր միֆոլոգիական խորքերը,

ստանձնում է խաղաղության ծաղիկը՝ Աղավնածաղիկը, մարդկությանը հոտոտել տալու առաքելությունը, դառնում հանուր աշխարհի մայրը՝ խաղաղություն քարոզող յուրատեսակ մունետիկ: Ավետարանական շատ արտահայտություններ գրողը վեպում հղել է իր իմացաբանական եզրահանգումների համար: Աշխարհի խաղաղ գոյատևման, մարդու՝ միայնակ չմնալու և ապրումակցման, պատերազմին մշակույթով ոչ ասելու յուրօրինակ ստեղծագործություն է այս վեպը, որի գաղափարական ընդհանրացումը այն է, որ աշխարհի խաղաղության համար յուրաքանչյուր մարդ ունի իր հոգում դրված բարության աղավնածաղկի հունդը, որը ծիլ է տալիս միայն մոր սրտում, և միայն մարդու բարի կամքից է կախված խաղաղության բերկրանքն զգալու կարողությունը:

Վեպի էպիկական ընթացքը ընդմիջարկում է Պեշիկթաշլյանի գույժը՝ գրեթե կանխատեսական մտահոգությունն առ այն, որ գերբնական արարածները՝ սատանիկները, մահիկի խորհրդանշանով արդեն գրավում են աշխարհի մի մասը: Վեպի այլ շերտ էլ ակներև է դարձնում գրողի հայրենասիրական նկրտումները. բացառիկ համարելով հայերի դերն աշխարհում՝ նա ընդգծում է հայության դերակատարումը խաղաղության հաստատմանը միտված պայքարի գործում. հերոսների՝ Արմայիսի, Արմայի, Արմենաքի և այլ անուններ, Արմենիայի մասին Սիսակի և քեռի Գուրգենի զրույցը՝ Արմենական ասուլիսը, փաստում են հեղինակի հայրենասիրական դիտարկումն այն մասին, որ հայերը նույնպես խաղաղության պայքարում ունեն իրենց առաքելությունը, և այպանելի է այն, որ հայերը, լինելով բյուզանդական կամ այլ երկրների տիրակալներ, չեն հոգացել Հայաստանի՝ իրենց բնօրրանի բարօրության ու հզորացման մասին:

Նշան Պեշիկթաշլյանի՝ աստվածաշնչյան թեմաներով վիպագրությունը, ի թիվս մյուս ստեղծագործությունների, արտացոլում է Կարոտի ու Նահանջի գրականության միտումները ու նաև դառնում է նյութական հարաբերություններով պայմանավորված բարոյական արժեզրկումների, հոգևոր արժեքների նվաստացման, հակակրոնական պառակտիչ ազդեցության դեմ մշակութային դիմակայություն: Նշան Պեշիկթաշլյանի վեպերի այս անդրադարձը նոր մեկնաբանություն է հավելում Հիսուսի վերաբերյալ գրական-մշակութային ուսումնասիրություններին, որոնց հեղինակները այսօր էլ խոր ու անթաքույց հետաքրքրությամբ ուշադրության կենտրոնում են պահում Քրիստոսի միֆո-կերպարը և աստվածաշնչյան այլ կերպար-մարդկանց:

Օգտագործված գրականություն

1. Հենրիկ Էդոյան, Շարժում դեպի հավասարակշռություն, Համատեքստ-2005, Երևան, Եր. համալս. հրատ., 2006, 307 էջ: //http: //ysu.am/files/105506.pdf
2. Գրիգոր Հակոբյան, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Էջմիածին, 560 էջ:
3. Հենրիկ Էդոյան, Շարժում դեպի հավասարակշռություն, Գարուն, Երևան, 2005, թիվ 1, 51 էջ// http: //tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Garun1967/2005/1.pdf
4. Նշան Պեշիկթաշլեան, Սիդոննա, Փարիզ, 1928, 128 էջ:

5. Авдеенко И. А., Символ и художественный образ, Филологические науки. Вопросы теории и практики, № 1 (31) 2014, часть 1, Из. «Грамота», Тамбов, ст. 15-18, // https: //www.gramota.net/articles/issn_1997-2911_2014_1-1_02.pdf
6. Նշան Պեշիկթաշլեան, Բապպի, Կ. Պոլիս, 1931, 106 էջ:
7. «Անահիտ», Փարիզ, 1931, Գ տարի, թիվ 1-2, սեպ.-դեկ., էջ 116:
8. Ալվարդ Սեմիրջյան-Բեքմեզյան, Միֆը 20-րդ դարի գրականության մեջ
9. Эрих Нойманн, Великая Мать, КДУ, 2012, Москва // https: //libcat.ru/knigi/nauka-i-obrazovanie/psihologiya/418885-5-erih-nojmann-velikaya-mat.html#text
10. Նշան Պեշիկթաշլեան, Լուլուտի, Փարիզ, 1942, 257 էջ:

НАИРА БАЛАЯН. ХУДОЖЕСТВЕННАЯ АЛЛЕГОРИЯ БИБЛЕЙСКИХ СЮЖЕТОВ В ТРИЛОГИИ НШАНА ПЕШИКТАШЛЯНА. *Имя известного французско-армянского писателя Ншана Пешикташляна обычно ассоциируется с сатирой, но его трилогия, так же как и другие его романы, связаны с проблемами человечества, обозначенные в Библии: грех, половая страсть, извращение, жадность, покаяние и спасение. Впервые в армянской литературе писатель обратился к художественной аллегории библейских тем, пытаясь найти путь спасения погребенного в грехах человечества, к тому же выбрал своих главных героев из Библии: Христа, Богородицу, Марию Магдалину.*

Прибегая к помощи символов, архетипов и мифов, писатель по-новому взглянул на библейские фигуры и события, отразив тем самым собственную, авторскую биофилософию и подчеркнув решающее значение армян на пути спасения человечества. Сегодня, когда в мировой литературе Иисус как литературный персонаж уже не представляет новшества, в данной статье подчеркивается роль трилогии Пешикташляна как достойного прецедента в истории армянской литературы на эту тему.

NAIRA BALAYAN. THE ARTISTIC ALLEGORY OF BIBLICAL PLOTS IN NSHAN PESHIKTASHLYAN'S TRILOGY. *The name of the famous French-Armenian writer Nshan Peshiktashlyan is usually associated with satire, but his trilogy, as well as his other novels, are connected with the problems of mankind marked in the Bible: sin, sexual lust, perversion, greed, repentance and salvation. For the first time in Armenian literature the writer turned to the allegory of biblical themes, trying to find the way of salvation of mankind buried in sins, moreover, he chose his main characters from the Bible: Jesus, the Mother of God, Mary Magdalene.*

Using symbols, archetypes and myths, the writer looked at the biblical figures and events in a new way, thus reflecting his own, author's bio-philosophy and emphasizing the crucial importance of Armenians on the road of humanity's salvation. Today, when Jesus as a literary character is no longer a novelty in world literature, this article emphasizes the role of Peshiktashlyan's trilogy as a worthy precedent in the history of Armenian literature on this subject.

THE REFLECTION OF THE HEDONISTIC WORLDVIEW IN THE WORKS OF THE "LOST GENERATION" AUTHORS

Lilit Ohanyan, Viktoria Babayan

YHU «Roslin» Academia

accepted 05.05.22, approved for publication 06.25.22

Abstract. *The article provides an overview of hedonism as reflected in the works of the Lost Generation authors, F. S. Fitzgerald, E. M. Remarque and E. Hemingway, in particular. During the research time, there was an increase in hedonistic sentiments against the backdrop of epidemics, war and efforts by mankind to cope with the consequences caused by the disasters. The article draws parallels with the present withal.*

Key words: *Lost Generation, hedonism, jazz age, post-war society, pandemic, carnival culture*

Over the last few years, culturologists have especially emphasized the growth of hedonistic sentiments in modern postmodern society. The restrictions in various spheres of human activity caused by the COVID-19 pandemic, the regular drawing of historical parallels with the Spanish flu pandemic, in its turn, led to interest rise in the realities of the 1920s. Identification of hedonistic ideas in the works of Lost Generation writers is an extent but little-studied issue at the interdisciplinary field of Philology, Cultural studies, Art history and Philosophy.

Traditionally hedonism is perceived as a philosophical and ethical doctrine, and its supporters believe that the meaning of life and the highest good is pleasure in all its manifestations. It is opposed to asceticism. The desire for pleasure in hedonism is considered to be the main driving force of a person {1}. This idea has been around since the 4th century BC. According to a school of thought created by Aristippus of Cyrene, a student of Socrates, hedonism is the idea that the ultimate goal of all our actions in life is to pursue pleasure and avoid pain. Aristippus did not believe in the idea of delayed gratification and he always advocated for people to simply get pleasure from what is present and available. He was completely against the idea of suffering in the present in order to get something that only might be pleasurable in the future. There is some wisdom in this idea because truly, tomorrow is not promised to any of us.

Epicurus, who is considered the father of modern-day hedonism, redefined what hedonism was. In addition, to do that he had to start by redefining a certain word – pleasure. For Aristippus, pleasure was a state of ecstasy and excitement and for Epicurus; pleasure was a state of tranquility.

Philosophers of the 17th-18th centuries contrasted the religious interpretation of morality with its hedonistic perception. As a result, hedonism began to be perceived as a desire for the simplest pleasures that were considered in society as signs of immoral behavior. Such trends were objectively due to the change of

the "dark" medieval paradigm by the "gallant" worldview of the Renaissance and Modern times. The revival of the philosophical viewpoint to the study of hedonism is associated with the name of I. Bentham (1748-1832), who is also one of the founders of the utilitarian movement in philosophy, oftentimes identified with hedonism.

Hedonistic sentiments arose in European and American society after the First World War, which found its reflection in the works of the authors the Lost Generation. In a broad sense, the term "Lost Generation" referred to all American writers who came of age experiencing The Great War. This led to their physical, spiritual and moral trauma. In narrower sense, this concept refers to American and European authors who worked between the two world wars (in particular, E. Hemingway, F. S. Fitzgerald, E. M. Remarque). For the first time, the expression first was published as an epigraph ("We are all a lost generation") of E. Hemingway՝s novel "The Sun Also Rises" (1926). Gertrude Stein, an American novelist, poet, playwright, coined the term after she heard it from a garage owner while she was getting her car fixed. The owner had yelled at an unteachable mechanic, telling Stein those who had served in WWI were a "lost generation".

One of the cultural definitions synonymous with the "lost generation" is the "jazz age" or "jazz era". The concept, brought in by F.S. Fitzgerald, refers to period of American history from the end of WWI to the beginning of the Great Depression in 1929.The writer himself, by the word jazz, did not mean only the musical direction popular in the 1920s in the USA. In his "Echoes of the Jazz Age" Fitzgerald writes; "The word "jazz", which no one now considers obscene, first meant "sex", then a dance style and, finally, music" {2}.

A. Stepanova, a Russian philologist, writes, "F.S. Fitzgerald not only gave a spectacular name and cultural characteristics to this era (which is based on "momentary joy", "feverish hedonism", "withering thirst to live- today, immediately, here and now" and, at the same time, "a sense of the decay of the past of the world order, as if blown up by the war", the feeling of " the split connections of times and the unexpectedly arising vacuum between different generations"), but also emphasized two important points in it: the carnival (America started a large-scale carnival) and interrelation between the WWI and the lost generation {3}.

The Lost Generation writers often wrote about exaggerated experiences from their own lives. Generally, these experiences revolved around WWI and the years following it. They used common themes in their writings such as the pointing out the ridiculous, frivolous and materialistic lifestyles of the very rich, the breakdown of traditional gender roles, or the death of the American Dream. Perhaps no novel better demonstrates all of the themes than F.S. Fitzgerald's classic novel "The Great Gatsby", published in 1925. The novel is somehow saturated with hedonistic colors: "At least once a fortnight a corps of caterers came down with several hundred feet of canvas and enough colored lights to make a Christmas

tree of Gatsby's enormous garden. On buffet tables, garnished with glistering hors-d'oeuvres, spiced baked hams crowded against salads of harlequin design and pastry pigs and turkeys bewitched to a dark gold. In the main hall a bar with a real brass rail was set up, and stocked with gins and liquors and with cordials so long forgotten that the most of his guests were too young to know one from another" {4}. This passage shows the luxury of the parties held at the Gatsby mansion, apparently the American analogue of the "A Feast in Time of Plague".

Remarque's novels, focusing on post-war times, are imbued with a hedonistic spirit: descriptions, dialogues, characters' goals, storytelling style – all shrouded in a hedonistic atmosphere. The storylines revolve around traumatized characters in one way or another who, despite their many hardships, strive to get the best out of life. In the novel "Three Comrades" destinies of three friends who have recently returned from the front and have nothing, who are trying to start a new life, and an incurable girl are intertwined. This company seeks to enjoy life, plunges headlong into feelings that have no future and finds bright moments in the hopelessness surrounding their lives.

In the context of this survey, the dialogue from the novel about different ways of achieving pleasure is notable:

-"A Blues", said he to me.

- "Wonderful. Wouldn't you like to dance it?"

-"No, " I replied.

–"Pity!"

- "You ought to try once, Robby, " said Pat.

–"I'd sooner not".

- "But why not?" asked Breuer.

–"I don't care for it, " I replied unamiably.

–"I never learnt. Never had time. But you dance, I can amuse myself here all right.... I showed her the glass. "This is a kind of dancing too." {5, 211}.

Another quote from the same novel is an entertaining dialogue about the predominance of primacy of the physical aspects of human life over the spiritual component, where an obvious hedonistic message is manifested: "Lenz hung a small black figure on a thin chain around my neck.

- Thus! This is against misfortunes threatening from above. And against everyday troubles.

-This is Otto's gift! Six bottles of rum that are twice your age...." Lenz eyed the row of bottles covetously... We all sniffed.

– "Fantastic, Otto!"

–"Outside the poets, there are not words to describe it. It's too good for this murky hole, " said Lenz {5, 167}.

Ernest Hemingway wrote about the abundant consumption of alcoholic beverages in Europe in 1920s. "In those days wine was considered as useful as food;

in addition it gave feeling of happiness, well-being and joy. Wine was drunk neither for snobbery, nor for the sake of posture. It was not a cult either. Drinking was just a necessity, and I would not dine without wine, cider or beer" {6}. Early works of the Noble Prize winner in literature E. Hemingway ("The Sun Also Rises", "Farwell to Arms") are saturated with moral and philosophical arguments about war and peace, pain and pleasure, often flowing from one to another. Hemingway's characters, as well as Remarque's, are persistently searching for possible psychological mechanisms for overcoming post-war traumas, which often turn into hedonistic outlooks on life. Abel Isaakovich Startsev, a Russian writer and literary critic, analyzing the novel "The Sun Also Rises", linking the constant search for entertainment of former participants in the war with the inability to adapt in a post-war peaceful society, wrote: "The characters – almost all former front-line soldiers – are persistently looking for entertainment, partly to forget the past. They are devastated, it's hard for them to be themselves" {7}. In the novel "Three Comrades" the opposite viewpoint is slipped relating to the possibility of overcoming the post-war devastation with the help of everyday alcohol consumption among some representatives of this generation".

–"I put cognac, gin and two glasses on the table".

–"And to yourself?" asked Gottfried.

–"I do not drink". "What? Why would it?"

- "Because this damned drunkenness no longer gives me any pleasure".

Lenz looked at me for a while. "Our child is not all there, Otto", he said a little later {5.55}

Deduced from the display of hedonistic positions in the works of Lost Generation authors, as well as the parallels between the COVID-19 and the Spanish flu, in 2020 a fake parody letter was created on behalf of F.S. Fitzgerald, which was published in Mc Sweeney's humorous online publication and subsequently became widespread on social media. In this letter, Fitzgerald, restricted with quarantine, allegedly, wrote: "...the streets are empty. It seems as though the bulk of the city has retreated to their quarters, rightfully so. At this time, it seems very poignant to avoid all public spaces. Even the bars, as I told Hemingway, but he punched me in the stomach, to which I asked if he had washed his hands. He hadn't. He is much the denier, that one. Why, he considers the virus to be just influenza. I am curious of his sources. The officials have alerted us to ensure we have a month's worth of necessities. Zelda and I have stocked up on red wine, whisky, rum, sherry, gin, and lord, if we need it, brandy. Please pray for us". {8}.

All things considered, it may be concluded that in presentation of hedonistic ideas in the works of Lost Generation authors, one can distinguish between descriptive (F. S. Fitzgerald), atmospheric (E. M. Remarque) and ideological-content (E. Hemingway) approaches. Research has found that the process of developing mechanisms to overcome mishaps forced by modern realities, one needs to find

historical parallels and study previous experiences reflected in fiction stories.

References

1. Гедонизм / Большая Советская Энциклопедия, том 6, изд. “Советская энциклопедия”, Москва 1971, стр.180
2. “Tails of the Jazz Age” by F. S. Fitzgerald
3. https: //www.globalgreyebooks.com/tales-of-the-jazz-age-ebook.html#downloads
4. Степанова А. А. Синкопы джазового века в реквиеме Первой мировой: Ричард Олдингтон и Отто Дикс
5. https: //cyberleninka.ru/article/n/sinkopy-dzhazovogo-veka-v-rekvieme-pervoy-mirovoy-richard-oldington-i-otto-diks
6. The Great Gatsby” by F.S. Fitzgerald
7. https: //www.planetebook.com/the-great-gatsby/
8. “Three Comrades” E. M. Remarque, translated from German, Popular Library, New York 1958
9. “A Moveable Feast” E.Hemingway, ebook by: Marcia Brooks, Al Haines, Paulina Chin & the online Distributed Proofreaders Canada team at http: //wwwpgdpcanada.net
10. Старцев Абель, Молодой Хемингуей и “потерянное поколение”/ Эрнест Хемингуей, Собрание сочинений, том 4, изд. “Художественная литература”, Москва, 1968, стр.709
11. Fals claim: This is a 1920 letter from Scott Fitzgerald in quarantine during the Spanish Influenza https: //www.reuters.com/article/uk-factcheck-quarantine-fitzgerald-lette-idUSKBN21733X

ЛИЛИТ ОГАНЯН, ВИКТОРИЯ БАБАЯН. ОТРАЖЕНИЕ ГЕДОНИСТИЧЕСКОГО МИРОВОЗЗРЕНИЯ В ТВОРЧЕСТВЕ АВТОРОВ “ПОТЕРЯННОГО ПОКОЛЕНИЯ” *. Рассматривается отражение темы гедонизма в творчестве писателей потерянного поколения, в частности Ф. С. Фицджеральда, Э. М. Ремарка и Э. Хемингуэя. В изучаемый период наблюдается рост гедонистических настроений в обществе на фоне эпидемий, войны и попыток человечества справиться с последствиями, вызванными данными бедствиями. Проводятся также параллели с современностью.*

ԼԻԼԻԹ ՕՀԱՆՅԱՆ, ՎԻԿՏՈՐԻԱ ԲԱԲԱՅԱՆ - ՀԵԴՈՆԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸՆԿԱԼՄԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԿՈՐՈՒՍՅԱԼ ՍԵՐՆԴԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: *Հոդվածն անդրադառնում է կարուսյալ սերնդի հեղինակների՝ մասնավորապես, Ֆ. Ս. Ֆիցջերալդի, Է. Մ. Ռեմարկի և Է. Հեմինգուեյի, ստեղծագործություններում հեդոնիզմի արտացոլմանը: Հետազոտվող ժամանակաշրջանում՝ համաճարակի, պատերազմի և դրանց հետևանքների հաղթահարմանը նպատակաուղղված քայլերի ֆոնին հասարակության մեջ հեդոնիստական տրամադրությունների աճ է նկատվում: Անց են կացվում զուգահեռներ ժամանակակից իրողությունների հետ:*

ԱՐՎԵՍՏ

ՆՈՐԱՁԵՎ ՀԱԳՈՒՍՏԻ ԲՐԵՆԴԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Անուշ Եղիազարյան
ԵՀՀ Ռոսլին Ակադեմիա, Դիզայնի բաժին
Մուտքագրված է 05.05.22, հաստատված է տպագրության 28.06.22

Ամփոփագիր. *Արդեն մի քանի տասնամյակ նորաձևության արդյունաբերությունը համարվում է նավթի և սննդի արդյունաբերությունից հետո համաշխարհային բիզնեսի երկրորդ մեծ տարածքը: Նորաձևության վիճակի վերլուծությունն այսօր արդիական է, քանի որ այս ոլորտը Հայաստանում բավարար չափով զարգացած չէ և ռիսկի է ենթարկվում բիզնեսի տեսանկյունից: Հոդվածում հաջորդաբար նշվում են նորաձև հագուստի ապրանքանիշի ստեղծման նախադրյալները՝ շուկայավարման շրջանակը, բրենդինգը, ապրանքանիշի ստեղծման գործընթացը, կորպորատիվ ինքնությունը, նորաձևության շուկայի ուսումնասիրությունը:*

Հիմնաբառեր*: նորաձևության արդյունաբերություն, համաշխարհային բիզնես, ապրանքանիշ, նորաձև հագուստ, ոճ, նորաձևության շուկա:*

Նորաձևության արդյունաբերությունը արդեն մի քանի տասնամյակ համարվում է երրորդ խոշորագույն բիզնես ոլորտը ամբողջ աշխարհում նավթարդյունաբերությունից և սննդարդյունաբերությունից հետո: Այսօր նորաձևության իրավիճակի վերլուծությունը շատ արդիական է, քանզի այս ոլորտը Հայաստանում այնքան էլ զարգացած չէ և բիզնեսի տեսանկյունից էլ բավական ռիսկային գոտի է:

Նորաձևության շուկայագիտությունը՝ մարքեթինգը, մի ոլորտ է, որն աշխարհում ունի իր կայուն տեղը և հնարավոր չէ «ժամանակակից նորաձևություն» և «նորաձևության մարքեթինգ» հասկացությունները տարանջատել:

Նորաձևության ոլորտը ամենաբարձր մրցակցային դաշտերից մեկն է արդի շուկայում: Բրենդի կառուցվածքը և կառավարումը (մենեջմենթը) մրցակցող ընկերությունների համար հանդիսանում են հիմնախնդիր:

Բրենդը ամբողջական նկարագիրն է տվյալ ընկերության, նրա իմաստի ու նշանակության արտահայտչաձևը: Այսօր բրենդի կառավարումը իրենից ներկայացնում է բավական բարդ աշխատանքային գործընթաց: Նրա նպատակն է համադրել ժամանակի ընթացքում ստեղծված ֆիզիկական տարրերն ու անգնահատելի արժեքները, որոնց շնորհիվ տվյալ բրենդը առանձնանում է մյուսներից:

Ամենահաջողված սահմանումներից մեկը 1960թ. տվել է Կոտլերը, ասելով, որ բրենդը անվանում է, պայման, ապրանքանշան (լոգոտիպ) կամ դիզայն, որի նպատակն է առանձնացնել արտադրանքը կամ արտադրողի մատուցած ծառայությունները և հանդիսանում է մրցակիցներից տարբերակվելու միջոց [1]:

Բրենդինգը տարիներ շարունակ դիտարկվել է որպես ապրանքանշան (լոգո) և գովազդ: Բայց արդյո՞ք դա այդպես է այժմ….

Բրենդը միայն անվանում կամ ապրանքանշան չէ. այն ամբողջական ինֆորմացիա է և տվյալ ընկերության լիարժեք պատկերը: Սպառողը հաճախ բրենդը ընկալում է ասոցիատիվ և անձնավորում այն: Փորձը ցույց է տվել, որ այդ սպառողը ավելի հաճախ հիմնվում է զգայական՝ էմոցիոնալ դաշտի վրա, քան տնտեսական:

Արտադրական ուղու ճիշտ մուտքը շուկա ապահովելու համար անփոխարնելի են գովազդը, դիզայնը, բիզնես կառավարումը, էլեկտրոնային և տպագրական մեդիան, ինչպես նաև ճիշտ ընտրված արժեքը (արտադրանքի), և թե ինչպես պետք է ցուցադրված լինի հագուստը ու ինչ խանութներում:

Բրենդի ստեղծման ու հաջողության նախադրյալը գրագետ մարքեթինգն է: Լինելով խոշորագույն ու առաջատար բիզնես ամբողջ աշխարհում՝ ընդունված ու տարածված մի ոլորտ է նորաձևության մարքեթինգը: Ցանկացած նոր արտադրանք, որ մտնում է մրցակցային դաշտ, հասարակության վրա թողնում է որոշակի տպավորություն՝ կամ դրական, կամ բացասական:

Կարծիքը ձևավորվում է անխուսափելիորեն, երբ սպառողը տեղեկանում է նրա գոյության մասին: Կարճ ժամանակամիջոցում ձևավորված սպառողական կարծիքը կարող է ճակատագրական դեր ունենալ նորաստեղծ բրենդի համար:

Բրենդի ստեղծման և կառավարման պրոցեսը կոչվում է բրենդինգ: Բրենդինգը յուրահատուկ տպավորություն առաջացնելու միջոց է, որն իր մեծ ներդրումն է կատարում տվյալ արտադրանքի տեղն ու դիրքը ապահովելու համար սպառողական շուկայում: Ամեն ժամանակաշրջանում բրենդը ունեցել է իր դիրքը (brand image): Սակայն «Բրենդինգի» գաղափարի իսկական զարթոնքը սկսվեց 20-րդ դարի երկրորդ կեսից, և դա այն պարզ պատճառով, որ շուկայում հայտնվեցին մեծ քանակությամբ նման արտադրանքներ:

Որպեսզի նոր ձևավորվող բրենդը լինի հաջողված, այն ձևավորողը ինքն իր համար 4 կարևորագույն հարց պետք է բացահայտի՝

- *ՈՒ՞մ համար* - թիրախային սպառողական խմբի սահմանում, որոնց համար ստեղծվում է բրենդը:
- *Ինչի՞համար* - սպառողի շահերը. Ի՞նչ կստանա տվյալ սպառողը՝ օգտվելով հենց այդ բրենդից:
- *Ի՞նչն է նպատակը* – ինչպե՞ս կարելի է օգտագործել տվյալ արտադրանքը:
- *Ո՞ր մրցակցի դեմ է այն ուղղված:*

Միայն այն բանից հետո, երբ կտրվեն այս բոլոր հարցերի պատասխանները, սկսվում է բրենդի ստրատեգիական կազմավորումը:

Նորաձևության տնտեսագիտական մասը, ի տարբերություն նրա սոցիալական իմաստի, կայանում է նրանում, որ ստիպի սպառողին գնել իրեր, որոնք իրեն անհրաժեշտ չեն:

Եթե հագուստը արագ չի մաշվում, ապա արագ է «մաշվում» մեկ այլ բան,

ինչը մենք անվանում ենք նորաձևություն:

Նորաձևության հնեցումը պլանավորված երևույթ է և հանդիսանում է այն հնեցումներից, որոնք մենք հանգիստ խղճով ենք դիտարկում:

Պատմություն, անցյալ ունենալը շատ կարևոր է բրենդի համար:

Guerlain's (1829), Gartier's(1847), Levi's (1853)՝ սրանք անվանումներ են, որոնք մեծ ներդրում են ունեցել նորաձևության ոլորտում բրենդի ձևավորման ու զարգացման գործընթացում: Ermenegildo Zegna-ն իր գործունեությունը սկսել է 1910թ.-ից: Նա ստեղծում է անկրկնելի, շքեղ ու բարձրորակ բրդյա գործվածք, և այժմ համաշխարհային բրենդ է տղամարդու հագուստի, ինչպես նաև աքսեսուարների ոլորտում:

Նորաձևության բրենդը կախված է սպառողի որոշումից՝ կկատարի նա արդյոք կրկին գնումներ տվյալ բրենդից: Ուստի պետք է առաջարկել միշտ նոր, ոճային, որակյալ, հեշտ խնամվող, համարավետ արտադրանք, որի պայմանները ժամանակ առ ժամանակ պետք է կատարելագործվեն: Դիզայները մտովի պատկերացնում է այն սպառողին, ում համար նա աշխատում է, իսկ նորաձևության շուկայագետը հարց է առաջադրում՝ արդյոք այդ սպառողը այն շահութաբեր ու թիրախային շուկան է հանդիսանալու, որի շնորհիվ բիզնեսը կբարգավաճի:

Որպեսզի պատկերացում կազմենք, թե ինչ ուղիով պետք է զարգանա նորաձևությունը Հայաստանում որպես բիզնես և սեփական արտադրողի համար եկամտաբեր ոլորտ հանդիսանա, նախ և առաջ պետք է կատարել շուկայի ուսումնասիրություն, հետազոտել մուլտիբրենդային և մոնոբրենդային խանութներ: Ըստ հետազոտությունների՝ պարզ կդառնա, թե որ տարիքային խումբն է մեզ հետաքրքրելու, որ խմբի չափսերի հագուստն է առավել շուտ սպառվում, հագուստի միջին ձևավորված արժեքը, որքան գումար է (միջինը) ամսական տրամադրում հագուստին մեզ հետաքրքրող սպառողը, ինչպես նաև կատարել տենդենցների վերաբերյալ ուսումնասիրություն, որոշել տվյալ սեզոնի գունապնակը, որը նախընտրում է սպառողը....

Նորաձևության ոլորտը բիզնեսի տեսանկյունից թերևս ամենառիսկային գոտիներից է հայաստանյան շուկայում: Թերևս դա է նաև պատճառը, որ մեզ մոտ գերակշռում են մուլտիբրենդային խանութները: Այսինքն՝ աշխարահռչակ խոշոր բրենդները քանակապես զիջում են, թերևս այստեղ նրանք դեռ չեն գտնում կայուն ու եկամտաբեր շուկա:

Ռիսկերից խուսափելու և միջոցներ խնայելու նպատակով տեղի արտադրողը, որը ուզում է մրցունակ լինել և պահանջարկ ունենալ, պետք է ճիշտ ուղի գտնի իր արտադրանքը առավելագույնս շահավետ տեղաբաշխելու համար: Մեր հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տեղական արտադրողը պետք է համագործակցի մուլտիբրենդային խանութների հետ, իր տեսականին հնարավորինս շատ խանութներում ցուցադրի: Սա կհանգեցնի բավական կարճ ժամանակում բրենդի ճանաչմանը, նամանավանդ եթե այդ բրենդը մասնագիտանա որևէ կոնկրետ արտադրատեսակի մեջ: Դա

կփոքրացնի և՛ ռիսկի գործոնը, և՛ ծախսերի քանակը: Ի սկզբանե սեփական մոնոբրենդային խանութը բավական բարդ խնդիր է, քանզի այդ պարագայում պետք է ներկայացված լինի ամբողջական հավաքածու, իսկ դա մի քանի անգամ կմեծացնի ծախսերը:

Միջազգային չափորոշիչներին համապատասխանելը, գրագետ կառուցված ու նպատակաուղղված գովազդը, յուրօրինակ ֆիրմային ոճը, մատուցման օրի_գինալ ձևը, կայուն որակը այն նախապայմաններն են, որոնք թույլ կտան բրենդին կայանալ ու բարգավաճել և ինչու չէ արդեն իսկ ամբողջական հավա_քածուներով մուտք գործել համաշխարհային նորաձևության դաշտ:

Տեղական արտադրողին պետք է օգնության գա այն քաղաքականությունը, որն ուղղված կլինի ապացուցելու, որ նա պակաս մրցունակ ու պակաս նորաձև չէ: Դա ապահովում են, իհարկե, գովազդը և լրատվամիջոցները: Ստեղծելով արտաքին տեսողականություն, որն ուղղված է կոնկրետ թիրախային սպառողին, ճիշտ կազմակերպված գովազդը գրավում ու հավատ է ներշնչում նրան, լրատվամիջոցներն էլ իրենց հերթին ամրապնդում և առաջ են մղում սպառողին ընտրելու հենց իր համար ստեղծված լավագույն տարբերակը:

Գրականության ցանկ

1. Котлер Ф., Основы маркетинга, издательство Вильямс. 2007, 656с.
2. Холмянский Л.М., Щипанов А.С., Дизайн, М., Просвещение, 1985, 240с.

YEGHIAZARYAN A.K., THE PRECONDITIONS OF CREATING FASHION BRAND CLOTHES. *The industry of fashion has been considered the third greatest business trend in the whole world after the fuel industry and food industry. Today the economic analisys of fashion is very actual as this trend is not so much developed in Armenia and it's also a rather risk zone for business. The article regularly mentions the pre-conditions of creating fashion brand clothes such as marketing of fashion, marketing, branding, and the process of creating the brand and firm style, the market study for fashion marketing.*

ЕГИАЗАРЯН А.К., ПРЕДПОСЫЛКИ СОЗДАНИЯ БРЕНДА МОДНОЙ ОДЕЖДЫ. *Уже несколько десятилетий индустрия моды считается второй крупнейшей областью мирового бизнеса после нефтяной индустрии и пищевой промышленности. Анализ состояния моды сегодня является актуальным, так как эта область в Армении недостаточно развита и с точки зрения бизнеса находится в зоне риска. В статье последовательно указаны предпосылки создания бренда модной одежды-сфера действия маркетинга, брендинга, процесс создания бренда, фирменного стиля, исследование рынка моды.*

ԻՐԱՎՈՒՆՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

[1, 2]Գ. Սաֆարյան, [2]Ն. Շահնազարյան

[1]Երևանի Հայբուսակ համալսարան

[2]ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Մուտքագրված է 15.05.22, հաստատված է տպագրության 30.06.22

Ամփոփագիր՝ *Հոդվածում համգամանորեն քննարկվում է սահմանադրական մոդելների զարգացման միտումներն արդի ժամանակաշրջանում:Հոդվածի նպատակն է հիմնավորել, որ սահմանադրական մոդելն արտացոլում է տվյալ հասարակության իրավագիտակցության և իրավական մշակույթի աստիճանը, պետական կառուցվածքի և կառավարման ձևի տեսականը հիմնական օրենքում: Սահմանադրական մոդելները բազմազան են՝ կապված նրա էությունից ու բովանդակությունից: Հիմնականում լինում են ազատական (լիբերալ) և ավտորիտար, գրված և չգրված, ճկուն և կոշտ և այլն: Սահմանադրական մոդելը՝ հասարակության զարգացման իրավաբանական հետագիծն է:*

Հիմնաբառեր՝ *սահմանադրություն, սահմանադրական մոդել, ավտորիտար, ազատական, գրված, չգրված, ճկուն, իրավագիտակցություն, իրավական մշակույթ, տեսական:*

Սահմանադրական մոդելը բնութագրում է որոշակի սոցիալ-քաղաքական մոտեցում հասարակական հարաբերությունների սահմանադրական կարգավորման բովանդակության և եղանակների, սահմանադրական ինստիտուտների կիրառման նկատմամբ: Դա որոշակի տեսակի սահմանադրության հատկանիշների և սահմանադրական մշակույթի արտահայտումն են [1]:

Սահմանադրական մոդելի հասկացությունը ընդգրկում է բազմաթիվ չափորոշիչներ, որոնց միջոցով տարբերվում են սահմանադրության բնութագրական հատկանիշները [2]: Սահմանադրական մոդելի բավականին լայն է, քանի որ ներառում է հասարակության և պետության կազմակերպման իրավական ձևերը, անհատի իրավական կարգավիճակի հիմքերը, պետական (և ընդհանրապես հանրային) կառավարման սահմանները և մեթոդները, սահմանադրական հարաբերությունների սոցիալական բովանդակությունը (համամարդկային և ազգային արժեքների, ինչպես նաև սոցիալական շահերի հաշվառման տեսանկյունից), այդ հարաբերությունների կայությունը և հարաշարժությունը, սահմանադրության որոշ ֆորմալ-իրավաբանական բնութագրեր:

Սահմանադրական մոդելի հասկացությանը բնորոշ է հետևյալ հիմնական հատկանիշները. առաջին, ծագելով պատմական զարգացման բեկումային փուլում, այս կամ այն սահմանադրական մոդելը հանդսանում է հասարակության

գլխավոր, արմատական պահանջների պատասխան: Սահմանադրական մոդելը արտացոլում է հասարակության իրավագիտակցության մակարդակը և որոշակի աշխարհընկալումները, երկրի սոցիալական և քաղաքական-իրավական զարգացման առանձնահատկությունները:

Երկրորդ, սահմանադրական մոդելը բնութագրվում է օրգանական միասնությամբ: Սահմանադրական մոդելը՝ որոշակի հասարակական հարաբերությունների կարգավորման միասնական համակարգ է: Այն համամարդկային արժեքների տեսանկյունից, կիրառելով դրանք կոնկրետ երկրի առանձնահատուկ պայմանների հաշվառմամբ, ձևավորում է իրավական հիմք՝ հասարակական և պետական, հաստատությունների, հասարակության մեջ տարբեր կոլեկտիվների իրավական դրության, անհատի իրավական կարգավիճակի ամրագրման համար: Նման միասնական դիրքորոշումները կարող են ձեռքբերվել տարբեր ուղիներով, առավել հաճախ հակադիր ուժերի և սոցիալական փոխզիջման արդյունքում: Այդպես է եղել բազմաթիվ երկրներում նոր սահմանադրական մոդելի ստեղծման ժամանակ: Այդպես է եղել նաև Հայաստանի Հանրապետությունում [3]:

Երրորդ, սահմանադրական մոդելը՝ հասարակության զարգացման իրավաբանական հետագիծն է: Այն ոչ միայն և ոչ այնքան ամրագրում է ներկան (դա պարտադիր է), որքան հանդիսանում է կողմնորոշիչ դեպի ապագան:

Չորրորդ, ցանկացած նոր սահմանադրական մոդել, հանդիսանում է սոցիալական ցնսումներից հետո հասարակության կայունացման փաստ [4]: Այս կամ այն մոդելի ընդունումից հետո ստեղծվում են պայմաններ հասարակական հարաբերությունների զարգացման համար: Իհարկե, դա պահանջում է նաև նոր օրենսդրության համակարգի առկայություն:

Անկասկած, սահմանադրական մոդելի հասկացությունը կապված է իրավաբանական, սոցիալ-քաղաքական գործոններից, որոնք որոշիչ դերակատարում ունեն սահմանադրության այս կամ այն մոդելի որաշակիացման համար:

Առաջին սահմանադրական մոդելի ծագումը կապված է Ամերիկայի և Եվրոպայի զարգացած երկրներում ազատ շուկայական տնտեսությունների հաստատման հետ: Դա լիբերալ-կապիտալիստական մոդելն էր: Առաջին սահմանադրությունները պարունակում էին գաղափարներ, հայեցակարգային մոտեցումներ, որոնք արտահայտվել էին Նոր ժամանակների մտածողների կողմից: Նրանց գաղափարների հիմքում ընկած էին ավատական միահեծան կառավարման ձևից հրաժարումը, մարդու բնական իրավունքների ընդունումը: Ժողովրդավարության որոշակի տարրերի ներածումը (կառավարման հանրապետական ձև, խորհրդարանը որպես միակ օրենսդիր մարմին, հավասար ընտրական իրավունք): Այս երեք հարցերը. Իշխանություն, մարդու իրավունքներ և դեմոկրատիա՝ կազմում էին տվյալ ժամանակաշրջանի սահմանադրական մոդելի բովանդակության էությունը:

Հասարակության և իշխանությունների միջև հարաբերությունները կառուցվում էին քաղաքացիական հասարակության հայեցակարգի հիման վրա, այսինքն՝ պետությունը պիտի հարգեր մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ճանաչում էին մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը, իշխանությունների բաժանման սկզբունքը, տեղական ինքնակառավարկման համակարգը: Ֆրանսիական սահմանադրական փաստաթղթերում ճանաչվում էր նաև միահեծանության դեմ պայքարով պարտադրված «մարդանց եղբայրությունը» (արժեքների հայեցակարգը ծագել է հետագայում XIX դարի վերջերում - XX դարի սկզբներում ավստրիական և գերմանական գրականության մեջ, իսկ համամարդկային արժեքների հայեցակարգը միայն XX դարի 30-50-ական թթ): Սահմանադրությունը տարբերակում էր իշխանությամբ «չօտարվող, բնական» մարդու իրավունքները որպես քաղաքական (պետական) հանրույթի անդամի քաղաքացու իրավունքներից: Սոցիալ-տնտեսական իրավունքները (աշխատանքի, հանգստի, թոշակի, կրթության, առողջապահության և այլն) այդ շրջանի սահմանադրություններով չէին նախատեսվում: Սահմանադրությունները որևէ կոլեկտիվ տարրեր (քաղաքացիների միավորումների, հասարակության մեջ դրանց դերի ընդունում) չէին պարունակում: XIX դարի վերջում և XX դարի սկզբում Եվրոպայի, Լատինական Ամերիկայի որոշ երկրներում մարդու իրավունքները, առանձին դեմոկրատական ինստիտուտներ ստացան զարգացում, սակայն հիմնականում առաջին սահմանադրական մոդելը՝ սահմանափակ ժողովրդավարական բնույթի գործիքակազմային լիբերալ-կապիտալիստական տիպի մոդելն է: Այս մոդելին դասվող սահմանադրությունը՝ գործիքակազմային սահմանադրություն է, նրանում հիմնական հատվածը նվիրում էին պետական մարմիններին, դրանց հարաբերություններին, գործունեությանը: Բոլոր դեպքերում տվյալ մոդելը հիմնադրել է սահմանադրականության սկիզբը՝ ունենալով հասարակության, պետության, մարդու և քաղաքացու կարգավիճակի զարգացման համար զգալի նշանակություն [5]:

Առաջին Համաշխարհային պատերազմից հետո (1914-1918թթ) կապիտալիստական երկրներում և 1917թ. ծագած առաջին սոցիալիստական ավտորիտար պետությունում Ռուսաստանի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետությունում, ինչպես նաև Մոնղոլիայում ծագեցին այլ սահմանադրական մոդելներ: Կապիտալիզմի երկրներում նոր մոդելը հասունանում էր դանդաղ: Առաջին ծիծեռնակներ» հանդիսացան 1917թ. Մեքսիկայի և Գերմանիայի սահմանադրությունները (Վեյմարական սահմանադրություն, 1919թ), որոնք ընդունվեցին հեղափոխական իրադարձությունների հետևանքով, իսկ Ավստրիայի 1920 թ. Դաշնային սահմանադրական օրենքները, որոնք հանդիսացան Ավստրո-Հունգարական կայսրության փլուզման արդյունք, ընդունվեցին նաև Չեխոսլովակիայի և Լեհաստանի 1921թ. Սահմանադրությունները: Սոցիալական հարաբերություններին վերաբերվող առանձին նոր դրույթներ առկա էին Չիլլիի

1926թ., Իռլանդիայի 1937թ. Սահմանադրությունների մեջ: Այս սահմանադրութթյուններից որոշները հեռացան սահմանադրական կարգավորման ավանդական օբեկտից (իշխանություն, ինչպես նաև անհատների քաղաքական և անձնական իրավունքներ) և քայլ կատարեցին դեպի սոցիալական պետության հայեցակարգը: 1917թ. Մեքսիկական սահմանադրության մեջ (ուղղումների հսկայական թվով գործում է նաև մեր օրերում) խոսվում էր «ժողովրդի կյանքի տնտեսական, օրենսդրական և սոցիալական մակարդակի անդադար բարելավման վերաբերյալ» (հոդ. 3), պնդվում, «որ պետությունը ուղղորդում է ազգային զարգացումը, ապահովելով դրա ամբողջական բնույթը» (հոդ. 25), խոսվում անհատների, խմբերի և սոցիալական դասակարգերի միջև հարստության և եկամուտների բաշխման (հոդ.25), սոցիալական արդարության (հոդ.28) վերաբերյալ: 1919թ. Վեյմարյան Սահմանադրությունը, որը պատմության մեջ մտավ որպես առաջին եվրոպական սոցիալական սահմանադրություն [6], բացի որոշ սոցիալ-տնտեսական իրավունքներից պարունակում էր նաև մասնավոր սեփականության սոցիալական գործառնության վերաբերյալ ձևակերպումներ,, նախատեսում էր դեմոկրատական ինստիտուտների զարգացումը: Ճշմարիտ է, դա չխանգարեց Գերմանիայում ֆաշիստների իշխանության գալուն: Բացի դրանից, սահմանադրությունը մնաց ֆորմալ գործող նաև նրանց իշխանության ժամանակաշրջանում (փոփոխություններով, որոնք ձևափոխում էին վերջինիս էությունը):

Ավստրիայի 1920թ. առաջին Դաշնային սահմանադրական օրենքը խոսում էր դասակարգային առավելությունների բացառման (հոդ.7), հողային բարեփոխությունների, «աշխատավորության և ծառայողների մասնագիտական պալատների», «աղքատների» հովանավորության (հոդ. 12), էթնիկ խմբերի իրավասարության վերաբերյալ: 1937թ. իռլանդական Սահանադրության մեջ արդեն առկա էր «Սոցիալական քաղաքականության հիմնական սկզբունքները» հատուկ գլուխ, որը կազմված էր մեկ հոդվածից (հոդ. 45): Այդ գլխում և այլ հոդվածներում խոսվում էր, որ «սեփականության իրավունքը պետք է կարգավորվի սոցիալական արդարության սկզբունքին համապատասխան» (հոդ. 43), սակավաթիվ անհատների ձեռքերում սեփականության կենտրոնացման անթույլատրելիության, որ «պետությունը պետք է պաշտպանի հասարակությանը անարդար շահագործումից» (հոդ. 45):

Գլխավորապես, Առաջին Համաշխարհային պատերազմից հետո կապիտալիստական պետություններում ծագեցին նոր սահմանադրական մոդելի տարրեր, որոնք պատկանում էին ապագային: Նշված և որոշ այլ պետությունների սահմանադրութթյուններում դեռ չկային հասարակական կառուցվածքի հիմքերի համալիր կոմպլեքսային կարգավորումներ: Հանգամանորեն չէր խոսվում սեփականության ձևերի, տնտեսական կողմնորոշման, պետական իշխանության բնույթի, քաղաքական կուսակցությունների, այլ հասարակական միավորումների, տեղի ինքնակառավարման վերաբերալ, չնայած այդ շրջանում այն սկսվեց տարածվել բազաթիվ երկրներում: Այս

սահմանադրությունները չէին նախատեսում լիարժեք դեմոկրատական ինստիտուտներ: Այսպես, կանանց ընտրական իրավունքը ոչ միշտ էր իր իրավական ձևակերպում ստանում սահմանադրությունում նույնիսկ դեմոկրատական երկրներում (Ֆրանսիայում դա տեղի ունեցավ միայն Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո 1946թ. [7]: Այս մոդելի սահմանադրություններում միայն նշվում էին որոշ նոր մոտեցումներ և սկզբունքներ: Բոլոր դեպքերում, ակնհայտ է, որ այս մոտեցումները էական տարբերվում են առաջին սահմանադրական մոդելի սկզբունքներից: Դա սոցիալական տարրերով գործիքակազմային լիբերալ-կապիտալիստական մոդել է, հիմնականում, դեմոկարատական բնույթով: Այն իրենից ներկայացնում է դեպի սոցիալական սահմանադրությունը որոշակի քայլ:

Այս մոդելին զուգահեռ ավտորիտար սոցիալիզմի երկրներում՝ ԽՍՀՄ-ում, Մոնղոլիայում, որը այդ ժամանակաշրջանում համարվում էր ինքուրույն պետություն, Առաջին Համաշխարհային պատերազմից հետո ձևավորվեց սկզբունքորեն այլ մոդել: Այդ շրջանում երևան եկան 1918թ. ՌԴՍՀ, 1924թ. և 1936թ. ԽՍՀՄ սահմանադրությունները: Դա ավտորիտար սոցիալիզմի քաղաքական ոչ դեմոկրատական մոդել էր, բացահայտ գաղափարականացված, հենված մարքսիզմ-լենինիզմ սկզբունքների վրա: Տվյալ մոդելը գործիքակազմային էր աննշան աստիճանով: Պետական մարմինների գործունեությանը, հարաբերություններին քիչ նշանակություն էր տրվում: Գլխավոր խնդիրն էր հասարակությունում կոմունիստական կուսակցության ղեկավար դերը:

Խորհրդային սահմանադրություններին համապատասխան յուրաքանչյուր երկրի բնակչություն բաժանվեց աշխատավորության (ամենից առաջ բանվորության, չքավոր գյուղացիների և միջին խավի) և «շահագործողների» (մասնավոր սեփականատերեր և այլն): Շահագործողների դասը ենթակա էր չեզոքացման սոցիալիստական ձևափոխությունների արդյունքում (գործնականում կիրառվում էր նաև հարկադրական միջոցներ, օրինակ, աքսոր, կուլակաթափություն), մասնավոր սեփականումությունը արգելված էր, ենթակա չեզոքացման: Ժողովրդի իշխանության վերաբերյալ թեզը մերժվեց և փոխարինվեց դասակարգային պետության վերաբերյալ թեզով: Հռչակելով աշխատավորության իշխանությունը, պրոլետարիատի դիկտատուրան՝ ԽՍՀՄ 1977թ. Սահմանադրությունը հաստատեց, որ պրոլետարիատի դիկտատուրան դադարել է, պրոլետարիատի դիկտատորայի պետությունը վերաճել հասարակական սոցիալիստական պետության: Տեղական ինքնակառավարումը սկզբունքորեն մերժվում էր, ստեղծվում պետական մարմինների միասնական համակարգ՝ խորհուրդներ՝ որոնք ընտրովի մարմիններ էին, սակայն «շահագործողները քաղաքական իրավուքներից զուրկ էին (ԽՍՀՄ՝ մինչև 1936թ. Սահմանադրության ընդունումը, Մոնղոլիայում՝ մինչև 50-ական թվականների վերջը): Հռչակվում էր պետության և հասարակության մեջ մեկ (միակ) կոմունիստական կուսակցության ուղղորդիչ և ղեկավարող դերը:

Այս դերը ամրագրվեց սահմանադրություններում (ԽՍՀՄ՝ 1936թ, սակայն նախկինում այն փաստացի գոյություն ուներ և ամրագրվեց համապատասխան օրենսդրությամբ): Դրա հետևանքով ԽՄԿԿ հնարավոր չէր հեռացնել իշխանությունից, օրինակ, ընտրությունների միջոցով (գործնականում հեռացումը իրականացվեց 1980 վերջում-1990 սկզբում հակաբռնատիրական դեմոկրատական հեղափոխության ընթացքում հիմնականում խաղաղ ճանապարհով): Այս մոդելի սահմանադրությունները հռչակում էին միակ պարտադիր՝ մարքսիզմ-լենինիզմի գաղափարախոսությունը: Այլ տեսանկյունների քարոզչությունը պատժվում է համապատասխան քրեական օրենսդրությամբ:

Ներկայումս այս մոդելին է դասվում, պահպանված սոցիալիստական երկրների սահմանադրությունները (Հյուսիսային Կորեա, Վիետնամ, Չինաստան, Կուբա, Լաոս) չնայած դրանք բոլորը ունեն իրենց առանձնահատկությունները: Բացի դրանից, 1990-2000թթ. գրեթե դրանցից յուրաքանչյուրում կատարվել են փոփոխություններ, որոնք որոշակի թուլացրել են վերջիններիս ավտորիտար բնույթը (հիմնականում տնտեսության ոլորտում), թույլատրված է մասնավոր ձեռնարկատիրական գործունեությունը, բազմակուսակցությունը (Չինաստանում) [8], «շահագործողները» օգտվում են քաղաքական իրավունքներից, իսկ Չինաստնում 2000թ. սկզբից նրանց ընդունում են Կոմունիստական կուսակցության շարքեր և նշանակում ղեկավար պաշտոնների:

Սահմանադրական չորրորդ մոդելը ծագեց Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո աշխարհում դեմոկրատական շարժման զարգացման իրավիճակում ֆաշիզմի պարտության պայմաններում: Այս մոդելի որոշակի դրույթների վրա իր ազդեցությունը ունեցով ԽՍՀՄ սահմանադրական փորձը: ԽՍՀՄ սահմանադրություններում (հատկապես հետագա) պարունակվում էին որոշ դրույթներ, որոնք այդ շրջանում բացակայում էին Արևմուտքի երկրների հիմնական օրենքներում: Շարադրվածը վերաբերվում է կուսակցության (սակայն միայն Կոմունիստական կուսակցության ղեկավար դերին ամրագրման առումով և այլ հասարակական միավորումների դերին, սոցիալ-տնտեսական իրավունքներին, հասարակության զարգացման մեջ «աշխատավորության» (աշխատանքի մարդու) դերի ընդունմանը, հասարակության զարգացման մեջ պետության դերին, հասարակական արդյունքի բաշխման սկզբունքներին: Ավտորիտար սոցիալիզմի պայմաններում այս դրույթներից շատերը ուղղակի հանդիսանում էին կարգախոսեր: Մարդու դերը հասցվում էր ուղղակի կուսակցական-պետական մեքենայի «պտուտակին» («պտուտակ»՝ Ի. Վ. Ստալինի արտահայտությունը): Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո սահմանադրությունների ստեղծողները սահմանադրական շինարարության սոցիալիստական փորձում տեսան «ռացիոնալ հատիկ» և, հատկապես սոցիալական իրավունքների ճանաչման հարցում;

Ներկայումս տարածում են ստացել ժամանակակից սահմանադրության

սոցիալ-գործիքակազմային դեմոկրատական մոդելների հիմնական գծերը: Այդ գծերը իրենց արտահայտումն էին ստացել 2004թ. Եվրոպական սահմանադրության նախագծի (որը չնդունվեց) մեջ, որի հիմնական հատված կազմում էր տնտեսական և սոցիալական հարցերի կարգավորումը: Նման մոդելի գլխավոր պարամետրերը սեփական ազգային առաձնահատկությունների հաշվառմամբ ընդունում են պետությունների մեծ թիվ, այդ թվում հետխորհրդային և այլ պետություններ, որոնք ծագել են երկրագնդի տարբեր մայրցամաքներում՝ ներառելով Աֆրիկան: Աշխարհի տարբեր երկրներում ավտորիտար ռեժիմների չեզոքացումից հետո ընդունվեցին 60-ից ավելի սահմանադրություններ (որոշ երկրներում կրկնակի), այդ թվում 27՝ հետսոցալիստական պետություններում: Դրա հետ կապված գրականության մեջ առաջադրվում է համաշխարհային սահմանադրական գործընթացում հետսոցիալիստական սահմանադրության վերաբերալ հարցը: Քաղաքագետների, իսկ երբեմն այդ պետությունների ղեկավարների ընդհանուր գնահատականը հետևյալն է. Հետսոցիալիստական սահմանադրությունները՝ լավն են: Սակայն առկա են նաև հակառակ կարծիքները: Լեհասանում միջազգային կոնֆերանսում, որը նվիրված էր հետսոցիալիստական սահմանադրությունների տասնյակ տարիների փորձի վերլուծությանը, բուլղարացի գիտնական Յա. Ռադևը խոսում էր, որ 1991թ. Բուլղարական Սահմանադրությունը «կազմվել է էկլեկտիկ պատճենման ուղիով», դա «սահմանադրական կոկտել է» [9]: Գլխավոր զեկուցող պրոֆեսոր Վ. Սոկոլովի ընդհանուր եզրակացությունը հետևյալն է. «Մեր տարածաշրջանի ներդրումը (խոսք է գնում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հետսոցիալիստական երկրների վերաբերյալ) համաշխարհային սահմանադրականության ինտելեկտուալ զարգացման մեջ ամոթալից քիչ է (shamefully small)» [10]:

Իսկապես, հետսոցալիստական երկրների սահմանադրություններում որևէ սկզբունքային նորություն չկա: Որոշ լրացումներ բոլոր դեպքերում առկա են: Դրանք պայմանավորված են հասարակության անցումային ժրջանի առկայությամբ:

Ժամանակակից հետսոցիալիստական սահմանադրությունների ընդունումով անցում կատարվեց դեպի ժամանակակից սոցիալական, ժողովրդավարական կարգերի: Առաջարկված այլ անվանումներ (հետինդոատրիալ, տեղեկատվական, բաց հասարակություն, դեմոկրատական կապիտաիզ և այլն) դեռ կենսունակ չեն, սակայն հասկանալի է, որ հիմա «առաջադեմ» պետություններում, որտեղ իշխանության գլխում կանգնած կամ երկար ժամանակ եղել են սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, դա բացարձակ այլ կապիտալիստական հասարակություն է, քան XVII դարում - XX դարի առաջին կեսում: Դա սոցիալ-կապիտալիզմ է, որը վերաիմաստավորված ձևով ներառում է ավանդական սոցիալիստական ուսմունքի հիմքեր և կապիտալիզմին հակադիր համարվող որոշ տարրեր (օրինակ, սոցիալական արդարությունը, աշխատավորության իրավունքը, տնտեսական զարգացման

պլանավորումը (կանխատեսումը): Սակայն հասարակությանանցումային շրջանում կատարվում են բազմաթիվ բացասական երևույթներ (բնակչության կենսամակարդակի նվազեցում, աղքատների և հարուստների կտրուկ բևեռացում, կորուպցիայի, հանցագործությունների աճ և այլն) [11]: Նման անցումային շրջանը անխուսափելի է, եթե ցանկանում ենք ապրել ապագան լավագույն հասարակության մեջ: Շատ կարևոր է կարողանալ նվազագույնի հասցնել նման անցման բացասական կողմերը:

Ինչպես նշում է պրոֆեսոր Գ.Հարությունյանը. «Մենք հանգել ենք այն հետևությանը, որ հատկապես հասարակական վերափոխումների պայմաններում սահմանադրականության ձևահեղումները դառնում են անկայունության և սոցիալական կատակլիզմների հիմնական պատճառը: Դրանց հաղթահարումը պահանջում է նպատակաուղղված և շարունակական սահմանադրական ախտորոշման հիման վրա գործուն և համակարգային սահմանադրական մշտադիտարկման առկայություն: Դա թե՛ պատմության դասն է և թե՛ ժամանակի մարտահրավերը, ինչը պահանջում է անհետաձգելի ուշադրություն և համարժեք գործողություն» [12]:

Ընդհանրապես, հետսոցիալիստական սահմանադրությունները արտացոլում են անցումային շրջանի դրական և բացասական կողմերը: Դրանք ներառել են մարդու դարավոր փորձով մշակված համամարդկային արժեքները (սեփականության ձևերի բազմազանություն, գործարարական գործունեության ազատություն, ժողովրդի իշխանություն, պետական իշխանության ճյուղերի տարանջատում, քաղաքացիների սոցիալ-տնտեսական իրավունքներ և այլն), սակայն միևնույն ժամանակ պահպանվել են հնի որոշ տարրեր (պետության ավելորդ ուժեղ կարգավորիչ դերը, մինչև ավտորիտար տարրեր, մարդու և քաղաքացու իրավունքների անբավարար երաշխիքներ, բյուրոկրատիզմ, դատական համակարգի ձևահեղում հասարակական կարծիքի և հասարակական վերահսկողության նտեսում: Նորի և հնի միավորումը սահմանադրական իրավունքի առանձին ինստիտուտներին տվել է յուրօրինակ բնույթ, որը էապես ազդում է սահմանադրական կարգավորումների արդյունավետության վրա: Եվ պատահական չէ, օրինակ՝երեսուն տարվա ընթացքում ազգային Սահմանադրությունը ենթարկվել էական փոփոխությունների, իսկ առաջիկայում նախատեսվում է երրորդ փոփոխությունը: Իհարկե, օրենքները, այդ թվում սահմանադրությունը ենթակա են փոփոխության՝ ըստ ժամանակի պահանջի, սակայն փոփոխությունները պետք է լինեն հիմնավորված, բխեն հասարակության զարգացման օրինաչափություններից և համարժեք լուծումներ տան ներքին և արտաքին մարտահրավերներին:

Օգտագործված գրականություն

1. Հարությունյան Գ. Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Վերահրատարակություն՝ լրամշակումներով: Երևան, 2016, էջ 64-130:

2. Хабриева Т.Я.Чиркин В.Е. Теория современной конститиции. Изд.-во «Норма» М., 2005.
3. Խաչատրյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը: Երևան, 1997:
4. Մանասյան Անահիտ. Սահմանադրական կայունությունը՝ որպես կայուն ժողովրդավարության գրավական: Երևան, «Հայրապետ» հրատ. 2019, էջ 39-96:
5. Ромашов Р.А. Современный конституционализм: теоретико-правовой анализ; дисс. д.-ра. юрид. наук. Санкт-Петербург, 1998.
6. Жалинский А., Рерихм А. Введение в немецкое право.М., 2001, с.26-27.
7. Захарова М, В. Фрабцузская правовая система: теоретический анализ М., 2016:
8. Խաչատրյան Հ/Ա. Չինաստանի ժողովրդական Հանրապետության Սահմանադրությունը. Տեսական-իրավական վերլուծություն: Երևան, 2012:
9. Ten Years of Democratic Constitutionalism in Central and Estern Europe, Lublin, 2001. Էջ 365.
10. Պողոսյան Գ.Ա. Հայ հասարակությունը XXI դարասկզբին: Երևան, 2006:
11. Հարությունյան Մ.Ա. Հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը: Երևան, 2014:
12. Հարությունյան Գ.Գ. Սահմադրական մշտադիտարկում: Երևան, 2016, էջ 76:

ГАРНИК САФАРЯН, НОРИК ШАХНАЗАРЯН. ПРОБЛЕМА НОРМАТИВНОСТИ КОНСТИТУЦИОННЫХ ПОЛОЖЕНИЙ. *В статье обстоятельно обсуждаются проблемы нормативности положений Конституции РА. Цель статьи-обосновать, что все положения Конституции РА, в том числе предисловие, нормы – принципы, нормы – цели по своей сути и содержанию являются нормативными, то есть обязательными конституционно-правовыми нормами поведения, как и другие нормы Конституции. Следовательно, все нормы Конституции РА являются нормативными и обязательными к исполнению.*

GARNIK SAFARYAN, NORIK SHAHNAZARYAN. TENDENCIES OF THE DEVELOPMENT OF CONSTITUTIONAL MODELS. *The tendencies of the development of constitutional models in the modern period* ***is*** *discussed. Constitutional models are various, depending on its essence and content. There are liberal and authoritarian, written and unwritten, flexible and rigid, etc. The constitutional model is the legal trajectory of the development of society.*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

[1, 2]Գառնիկ Սաֆարյան, [2]Նորիկ Շահնազարյան

[1]ԵՀՀ, [2]ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Մուտքագրված է 15.05.22, հաստատված է տպագրության 30.06.22

Ամփոփագիր. *Հոդվածում համգամանորեն քննարկվում է ՀՀ Սահմանադրության դրույթների նորմատիվության հիմնախնդիրները: Հոդվածի նպատական է հիմնավորել, որ ՀՀ Սահմանադրության բոլոր դրույթները, այդ թվում՝ նախաբանը, նորմ – սկզբունքները, նորմ – նպատակները իրենց էությամբ ու բովանդակությամբ նորմատիվ են, այսինքն՝ վարքագծի պարտադիր սահմանադրահիրավական նորմեր են, ինչպես Սահմանադրության մյուս նորմերը: Հետևաբար ՀՀ Սահմանադրության բոլոր նորմերը նորմատիվ են և պարտադիր են կատարման:*

Բանալի բառեր՝ *ՀՀ Սահմանադրություն, սահմանադրության դրույթներ, նորմ – սկզբունքներ, նորմ – նպատակներ, վարքագծի պարտադիր կանոններ, սահմանադրական նորմեր:*

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության իրագործումը կապված է նրա հրահանգավորումների իրավական բնույթի ու առանձնահատկությունների, դրանց նորմատիվության գնահատման հետ: Դրանցից ոմանք, համաձայն մի շարք հեղինակների կարծիքի, իրենց մեծ նշանակությամբ հանդերձ չեն կարող ճանաչվել որպես իրավունքի նորմեր: Դա առաջին հերթին Սահմանադրության այն դրույթներն են, որոնք ամրագրում են իրավունքի սկզբունքները, բնորոշում հիմնական իրավական հասկացությունները իրավական նորմերի գործողության ժամանակային, տարածքային և սուբյեկտիվ սահմանները, դրույթներ են պարունակում նպատակների վերաբերյալ և այլն: Իրավաբանական գրականության մեջ խոսվում է նաև, որ սահմանադրության որոշ դրույթներ, ըստ էության, իրավադրույթներ են, «միայն այլ իրավական դրույթների միջոցներով և միայն նրանց զուգակցմամբ են որոշում հասարակական հարաբերությունների մասնակիցների վարքը» [1]: Այլ խոսքերով, դրանք կվազինորմեր են, քանի որ զուրկ են կարգավորիչ ինքնուրույն բնույթից:

Իրոք, սահմանադրության ոչ բոլոր դրույթներն են սահմանում հասարակական հարաբերությունների մասնակիցների հստակորեն նախորոշված իրավունքներն ու պարտականությունները: Սակայն արդյոք դա նշանակում է, որ դրանք չունեն նորմատիվության հատկանիշ: հաշվի առնելով սահմանադրության իրավաբանական բնույթի առանձնահատկությունը և նրա դերը իրավական կարգավորման մեխանիզմում, այս հարցի պատասխանը, մեր կարծիքով, պետք է լինի հետևյալը, քանի որ Սահմանադրությունն ամբողջությամբ օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով, հետևաբար նրա առանձին դրույթներն ու նորմերը, այդ թվում՝ նորմ-սկզբունքները, նորմ-

նորմատիվները, նույնպես օժտված են բարձրագույն իրավաբանական ուժով և պրակտիկայում դրանք ենթակա են պարտադիր գործադրման:

Իրավունքի մեջ արտահայտված կամքի համընդհանրությունը հանդես է գալիս որպես հասարակական կարգավորման իրավական ձևի նորմատիվություն:

Պարտադիրությունը և իշխանությունը բնորոշում են հանրաքվեում արտահայտված և ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված ժողովրդի կամքը: Դա Սահմանադրության, որպես հիմնական օրենքի, կարևորագույն հատկանիշներից մեկն է: Սահմանադրության, ինչպես ընդհանրապես իրավունքի մեջ, վարքի չափը (մասշտաբը) սոցիալական հիմնավորվածության և սոցիալական անհրաժեշտության, իրավական մոդել է, որը պարտադիր է դառնում անձանց ու կազմակերպությունների համար: Ընդ որում իրավունքի, հետևապես նաև Սահմանադրության, նորմատիվությունը արտահայտվում է վարքի կանոնների այնպիսի հատկությունների միասնականության մեջ, ինչպիսիք են ընդհանրականությունը և պարտադիրությունը:

Իրավունքի ժամանակակից զարգացման պայմաններում տեղի է ունենում նորմատիվության բովանդակության հստակեցում [2]: Իրավունքի կառուցվածքի մեջ ավելանում է ընդհանրացնող դրույթների թիվը, որոնք, որպես այդպիսին, այսինքն առանձին վերցված, զուրկ են նորմի հատկանիշներից ավանդական ըմբռնմամբ: Սակայն դրանք ևս իրենցից ներկայացնում են ամբողջությամբ վերցված իրավական համակարգի օրգանական մասնիկներ, արտահայտում են նրա նորմատիվությունը: Սահմանադրական օրենսդրության մեջ քաղաքացիների և իրավունքի այլ սուբյեկտների վարքի կոնկրետ տարբերակներ սահմանող հրահանգավորումների հետ մեկտեղ պարունակվում են բավականին մեծ թվով իրավական հռչակագրեր, սկզբունքներ, բնորոշումներ, որոնք ունեն իրավաբանական նշանակություն և հատուկ դեր են կատարում իրավական կարգավորման գործում:

Սահմանադրությունը օրենքների ժողովածու չէ և այդ իսկ պատճառով ի վիճակի չէ. ընդգրկել հասարակության մեջ գործող հարաբերությունների ողջ համակարգը՝ այդ հարաբերությունների մասնակից սուբյեկտների կոնկրետ իրավունքների ու պարտականությունների սահմանման ճանապարհով: Այն ինտեգրում է հասարակական հարաբերությունները և միաժամանակ «խոշորացնում» իրավունքներն ու պարտականությունները, ձևափոխելով դրանք որպես սուբյեկտների առանձին տեսակների վարքի ընդհանրացված գնահատականների: Նման հրահանգավորումները տեղափոխում են հասարակական հարաբերությունների զարգացումը որոշակի իրավաբանական շրջանակների մեջ և ստեղծում այդ զարգացման ղեկավար սկզբունքները: Նման սահմանադրական հրահանգավորումների նորմատիվությունը նրանում է, որ դա հասարակական հարաբերությունների կարևորագույն կատեգորիայի համար առավել ընդհանրացված, պետության

և պետական հարկադրանքի հնարավորությամբ ապահովված անձանց կամ կազմակերպությունների հնարավոր կամ պատշաճ վարքի իրականորեն գոյություն ունեցող մասշտաբների համակարգ է:

Սահմանադրության մեջ ընդհանուր դրույթների, սկզբունքների, բնո_ րոշումների առկայությունը ոչ միայն չի զրկում այն նորմատիվությունից, այլև ընդհակառակը վկայում է նրա մեջ նորմատիվայնության առավել լայն կիրառման մասին: Սահմանադրական սկզբունքները նորմատիվացնում, ընդհանրացնում են հասարակության նյութական ու հոգևոր կյանքի առավել կարևոր, սոցիալական նշանակալից երևույթներն ու գործընթացները, գնահատում են դրանք և ուղղում պետության մեջ ընդունված նորմատիվների հունի մեջ [3]: Դրանք ամենասերտ կերպով կապված են հասարակական հարաբերությունների կարգավորման հետ, ուղղորդիչ ազդեցություն են գործում իրավական համակարգի վրա և գործում են հենց որպես իրավական սկզբունքներ, որոնցով պարտավոր են ղեկավարվել իրավաստեղծ, իրավակիրառող և իրավապահ մարմինները, քաղաքացիները, պաշտոնատար անձինք և հասարակական միավորումները: Սկզբունքները միշտ ունեն նոր_մատիվ բնույթ և հենց դրանով էլ տարբերվում են իրականության հասարակ արձանագրումից:

Նորմատիվային են նաև սահմանադրական ծրագրային սահմանումները, քանի որ դրանք համապարտադիր ազդեցություն են գործում հասարակական հարաբերությունների զարգացման հեռանկարի վրա ամրագրելով իրավական ուղենիշները և նպատակադրումները իրավական կարգավորման և իրավակիրառգործունեության ընդհանրական կազմակերպման համար:

Սահմանադրության նորմատիվությունն արտահայտվում է նաև նրանում, որ այն իրենից ներկայացնում է կոդիֆիկացված օրենք և քանի որ կարգավորում է հասարակական հարաբերությունների լայն շրջանակ, ապա հենց դրա շնորհիվ էլ ստանում է ինտեգրող բնույթ: Սահմանադրությունը հանդես է գալիս որպես օրենսդրության համակարգի ղեկավարությունն իրականացնող ակտիվ կենտրոն: Բնական է, որ այս նշանակությունը նա կարող է. կատարել միայն նրա նորմատիվ- իրավական բնույթի ճանաչման դեպքում: Սահմանադրությունը քաղաքական-իրավական համակարգի հիմքն է: Կանխորոշելով երկրի իրավական համակարգի զարգացման հիմնական ուղղությունները, Սահմանադրությունը ծառայում է ողջ երկրի մասշտաբով պետական և հասարակական կյանքի իրավական հիմքերի ամրապնդմանը:

Սահմանադրությանը որոշ չափով բնորոշ է նորմատիվ կարգավորման ընդհանուր նպատակը հասարակական հարաբերությունների կանոնակարգումը, ընդհանուր կանոնների սահմանման ճանապարհով սոցիալական կյանքում միատեսակության և կայունության ներմուծումը: Սահմանադրության նորմատիվությունն արտահայտվում է նրանում, որ այն ակտիվ դեր է կատարում կարգավորվածության և կարգուկանոնի ոչ միայն միասնական, այլև ժամանակի մեջ տևական և հաստատուն համակարգի ստեղծման գոր-

ծում: Այն կոչված է հասարակական հարաբերությունների հստակեցմանը, կազմակերպվածության ապահովման սկզբունքային հարցերը: Այն հասարակական հարաբերությունների անհրաժեշտ ու նպատակահարմար կարգավորիչն է և իրեն բնորոշող օբյեկտիվ հատկությունների շնորհիվ ի վիճակի է ընդհանուր հիմունքների սկզբունքով ապահովել դրանց կարգավորվածությունը ու հանդես է գալիս որպես հասարակության մեջ համակարգային գործընթացների յուրահատուկ գործոն:

Սահմանադրության նորմատիվությունը կապված է նաև այն բանի հետ, որ այն նպաստում է վարքի տիպային մասշտաբների միասնական, անընդհատ գործող, համապարտադիր համակարգի ստեղծմանը, որն ապահովում է ողջ սոցիալական օրգանիզմի նպատակաուղղված և ներդաշնակ գործառնությունը: Սահմանադրության նորմատիվության ճանաչումը օրինականության հաստատման ու պահպանման անհրաժեշտ պայմանն է:

Նորմատիվության մեջ է կայանում սահմանադրության սոցիալական արժեքի գլխավոր արտահայտություններից մեկը: Սահմանադրության նորմերի իրագործումը նրա նորմատիվության յուրատեսակ փոխադրումն է դեպի հասարակական հարաբերությունների կանոնակարգվածություն: Նորմատիվության ժխտումը ավտոմատ կարգով բերում է սահմանադրության թերագնահատմանը, նրա կարգավորիչ հնարավորությունների նվազեցմանը, ցածրացնում է հասարակական հարաբերությունների վրա նրա ազդեցության արդյունավետությունը:

Անթույլատրելի է Սահմանադրության նորմատիվության նշանակության նույնիսկ անուղղակի, թաքնված թերագնահատումը: Այն շատ հեշտ է հայտնաբերել լայնորեն տարածված «Սահմանադրությունը, նախևառաջ, քաղաքական ակտ է» թեզում: Կասկած չկա, Սահմանադրությունը ոչ միայն հիմնական օրենք է, այլն կարևորագույն քաղաքական փաստաթուղթ: Այնուամենայնիվ, Սահմանադրության առաջնային և հիմնական նշանակությունն է լինել նորմատիվային փաստաթուղթ, հիմնական օրենք: Նրանք, ովքեր պահպանում են Սահմանադրության էության քաղաքական առումը, իրենց տեսակետը հիմնավորում են այն, բանով, որ այն կարգավորում է քաղաքական նշանակություն ունեցող առավել կարևոր հասարակական հարաբերությունները: Սակայն չպետք է մոռանալ, որ դա ոչ միայն քաղաքական, այլև իրավաբանական խնդիր է, որի լուծման համար օգտագործվում են առանձնահատուկ միջոցներ: ՀՀ Սահմանադրության իրավաբանական հատկությունների տարալուծումը նրա հասարակական-քաղաքական նշանակության մեջ չի նպաստի իրավական համակարգի մեջ նրա առաջնայնության և գերակայության հաստատմանը: Սահմանադրական դրույթները համապատասխանում են իրավունքի նորմատիվության պահանջներին, ինչը ներկայացնում է նրա իրավական պահանջների համապարտադիրությունը, ամրագրում է մարդկանց վարքի մասշտաբը, նշանավորում է պետական և

իրավական սահմանումների միասնությունը:

Սահմանադրական դրույթների նորմատիվ բնույթի գնահատման հետ է կապված այնպիսի կարևոր մի հարց, ինչպիսին է սոցիալական սուբյեկտների վարքի վրա նորմերի ազդեցությունը: Սկզբունք-նորմերը, նպատակ-նորմերը և բնորոշում- նորմերը իրենց էությամբ չեն կրում վարքային բնույթ և վարքի կանոններ չեն սահմանում, գրում է Ն. Ս. Միխալևան [4]: Նման պնդման հետ դժվար է համաձայնվել: Իրենց արտաքին արտահայտման առանձնահատկություններով հանդերձ սահմանադրական դրույթները բնորոշում են սոցիալական օբյեկտների վարքի հիմնական պարամետրերը (նպատակները, սահմանները, եղանակները, պայմանները) հասարակական ու պետական կյանքի առավել կարևոր ոլորտներում: Սահմանադրության որոշ նորմերի վարքային բնույթը թաքնված է, քողարկված, սակայն դա ամենևին չի նշանակում, որ նրանք վարքի կանոններ չեն սահմանում: Բանն այն է, որ սոցիալական սուբյեկտների վրա նման նորմերի սահմանման եղանակները, արտահայտության ձևերը, ներազդման մեխանիզմները անչափ բազմազան են: Դրանցից ոմանք սահմանում են միանգամայն կոնկրետ ձևով, մյուսները պակաս կոնկրետ են, երրորդները կողմնորոշում են, կան և այնպիսիներ, որ միայն անուղղակիորեն են ազդում վարքի վրա: Սակայն ամբողջովին զրկել սահմանադրության դրույթների նույնիսկ մի մասը իրենց հատուկ վարքային բնույթից, անընդունելի է: Դա կհակասեր տեսությանը, քանի որ «կանոններ» արտահայտության մեջ պարունակվում է կարգի (օրինաչափ հետևողականության), կանխորոշվածության, պարտադիրության նշանակություն [5]: Բացի այդ, նման բացառությունը կթուլացնի Սահմանադրության կարգավորիչ ներուժը:

Սահմանադրական նորմերը արտացոլում են հասարակական պրակտիկայում ձևավորված վարքի հաստատուն տեսակների ամրագրման նպատակները: Այդ նպատակները մասնավորապես ուղղված են վարքի փաստացի ձևերի կայունացմանը և հետագա ամրապնդմանը, դրան_ցից շեղումների դեմ պայքարին, բնակչությանը վարքի օպտիմալ մոդել_ների մասին իրազեկմանը, փոխկապակցված նորմերի և իրավունքի ինստիտուտների համակարգի զարգացմանը [6]: Նույնիսկ ամենաընդհանուր տեսքով արտահայտված սկզբունք-նորմերը, բնորոշում-նորմերը ունեն վարքային բնույթ, քանի որ դրանցում պարունակվող սահմանումների հետ պետք է հարաբերեն իրենց վարքը, իրենց գործունեությունը ցանկացած սոցիալական սուբյեկտներ: Վարքի կոնկրետ կանոնների հետ մեկտեղ սահմանադրական նորմերը նախատեսում են պահանջները գործո_ղությունների նպատակների, եղանակների և ձևերի վերաբերյալ, ստեղծում են հասարակական կողմնորոշված վարքի ինստիտուցիոնալ ձևեր, վարքի որոշակի պատճառաբանվածություն, քաղաքացիների, կոլեկտիվների կապերի զանազան տարբերակների մոդելներ: Սահմանադրական նորմերին ամբողջապես կարելի է վերագրել եզրակացությունն առ այն, որ սոցիալական բոլոր պահանջները ձևակերպվում են որպես

անհատների ու սոցիալական հանրությունների վարքի նորմեր: Սահմանադրական նորմերը հանդես են գալիս հասարակության կողմից դրանց վարքը վեահսկելու միջոց: Դրանք ունեն կառավարչական զգալի ներուժ, որը ցավոք, դեռ բավական չափավ պահանջարկված չէ:

Ն.Ա. Միխալևայի տեսակետին մոտիկ դիրքորոշում ունի Լ.Ա. Մորոզովա: Ճանաչելով սահմանադրական դրույթների նորմատիվությունը, սահմանադրական կարգավորման նորմատիվ հիմքի բոլոր բաղադրիչների միայն «նորմեր» անվանումը նա համարում է ոչ այնքան ճիշտ, քանի որ նման ունիֆիկացումը իբր աղքատացնում է նրա բնութագրականը [7]: Հենց այստեղից է, որ Հիմնական օրենքի դրույթների մի մասն է միայն դիտվում որպես «բուն սահմանադրական նորմեր», իսկ մնացյալները (սահմանադրական սկզբունքները, ծրագրային-նպատակային սահմանումները, նորմատիվ- իրավական դրույթները) այդ պատվին չեն արժանանում: Կարծում ենք, նման հակադրման համար լուրջ հիմքեր այնուամենայնիվ չկան: Վերջ ի վերջո, չի կարելի իրավական նորմերի մեջ տեսնել ինչ-որ թերի, անլիարժեք մի բան: Այդ պատճառով անհասկանալի է, թե իրավական նորմը ինչպես և ինչու պետք է «աղքատացնի» սահմանադրությունը: Խնդիրն այսօր ոչ թե իրավունքի ինչ-որ դոգմատիվ հայեցակետ «գահընկեց» անելը, այլ նորմատիվիստական մոտեցումը հաղթահարելն է: Ավելի շուտ ընդհակառակը: Իրավունքի ցածր օգտակար գործողության գործակիցը կապված է այն բանի հետ, որ մենք դեռ բավական չենք զբաղվում իրավունքի որպես նորմերի համակարգի առանձնահատկության ուսումնասիրությամբ, չենք բացահայտում իրավունքի առավել լայն հնարավորությունները հասարակական հարաբերությունները կարգավորելու գործում, քիչ ուշադրություն ենք դարձնում նորմերի համակարգի՝ որպես հասարակության ղեկավարման միջոցի, կատարելագործմանը:

Չի կարելի համաձայնել այն բանի հետ, որ իրավական սկզբունքները տարբերվում են սովորական իրավական նորմերից բովանդակությամբ և կարգավորիչ հատկություններով, ինչպես նաև իրագործման եղանակներով [8]: Հենց «սովորականներից», այսինքն՝ դասական մոդելին համապատասխանող, եռատարր կազմությամբ և կարգավորվող հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները նշող իրավունքի նորմերից: Սակայն ձևավորված կարծրատիպերից նահանջը ամենևին առիթ չի տալիս զրկել սահմանադրական շատ դրույթներ իրավունքի նորմի կարգավիճակից: ճիշտ է Ա. Պիգոլկինը, պնդելով, որ «սրանք բոլորն էլ իրավունքի նորմեր» են և դրանք չի կարելի դիտել որպես «միայն իրավունքի մեջ պարունակվող, սակայն իր բովանդակությամբ կողմնակի ինչ-որ բան» [9]:

Լ.Ա. Մորոզովայի դիրքորոշման մեջ կա ևս մեկ հակասություն: «Բուն սահմանադրական նորմերի» շարքում առանձնացնելով ընդհանուր կարգավորիչ նորմերը, նա դրանց թվին է դասում այն սահմանադրական դրույթները, որոնք ամրագրում են պետական-ազգային կառուցվածքը, անձի սահմանադրական

կարգավիճակը [10]: Սակայն դրանց մեծամասնությունը (և դա ակներև փաստ է) ներկայացված են որպես սկզբունքներ, ծրագրային-նպատակային սահմանումներ: Հետևաբար, կամ պետք է ճանաչել նրանց իրավական նորմի որակը, կամ էլ հրաժարվել առաջարկված դասակարգումից: Մեր կարծիքով, արդարացիորեն նկատում է, որ սահմանադրական նորմի տակ պետք է հասկանալ ընդհանուր բնույթի վարքի ցանկացած չափ, արտահայտված սահմանադրական հրահանգավորման, տեսքով և որը ընդգրկում է բոլոր տեսակներն ու եղանակները հասարակական վարքի բնորոշման համար սկզբունքի կամ կանոնի սահմանումը, գործունեության նպատակի, խնդրի կամ ուղղության որոշումը, բնորոշման անվանումը կամ գործառույթի ամրագրումը և այլն:

Լինելով իրավունքի անքակտելի մասը, սահմանադրական նորմերը օժտված են նրա հիմնական հատկություններով, ինչպես նաև ունեն սոցիալական նորմերին ընդհանուր առումով բնորոշ ընդհանուր-համակարգային հատկանշաններ: Դրա հետ մեկտեղ պետք է նկատի ունենալ, որ «սահմանադրական նորմերը, ինչպես մյուս բոլոր նորմերը, արտացոլում են իրավունքի էականական պահերը, արտահայտված նրա արտաքին ձևերում: Սահմանադրական նորմերը բնութագրում են իրերի փաստացի դրությունը ոչ միայն այն, ինչը պետք է լինի, այլ այն, ինչը արդեն կա, ոչ միայն պահանջվողը, այլև գոյը, քանի որ «նորմը սոցիալակնան օրգանիզմի օգտակար, օպտիմալ, հետևապես նաև տիպիկ գործառնական չափն է» [11]: Այս իմաստով սահմանադրական նորմը ամենայն հիմնավորվածությամբ կարելի է. դիտել որպես իրականության հոգևոր-պրակտիկ յուրացման արդյունք: Այս առումի վրա է ուշադրություն դարձնում նան պրոֆեսոր Ս.Ա. Ավագյանը. «Սահմանադրական իրավունքի նորմերը առաջին հերթին արտացոլում են այսպես կոչված վիճակները (կամ իրավական հիմքերը), այսինքն հասարակական կյանքի և պետական կազմակերպման այն անխախտելի երևույթներն ու փաստերը, որոնք բնութագրում են մեր հասարակարգն ընդհանրապես, հանդիսանամ են նրա անքակտելի գծերը» [12]:

Սահմանադրական նորմերի նշանակությունը հասարակական հարաբերությունների նորմավորումը, չափումն ու գնահատումն է: Սահմանադրական նորմերը սահմանում են սոցիալական սուբյեկտների վարքի չափը, նրանց իրավունքների ու պարտականությունների չափը (ընդհանրացման տարբեր աստիճանով), պետության կողմից հասարակական հարաբերությունների կարգավորման չափը: Նրանք ծառայում են սոցիալական արժեքների և սոցիալական պատասխանատվության, սոցիալական բարիքների պահպանման ու բաշխման չափման հատուկ գործիք: Սահմանադրական նորմերը պարունակում են իրավունքի սուբյեկտների վարքի գնահատման միասնական մասշտաբ, ելնում են նրանցից յուրաքանչյուրի հանդեպ հավասար մոտեցման անհրաժեշտությունից: Բոլորի համար ընդհանուր սահմանադրական պահանջների գոյությունը իրավաբանական հավասարության նախադրյալ է:

Սահմանադրական նորմերը յուրահատուկ ձևով փոխադրում, ձևափոխում են սոցիալականը իրավաբանականի, սոցիալական ազատությունները՝ սուբյեկտների պետականորեն նորմավորված, պետականորեն պաշտպանված հնարավորությունների, հանդես գալով որպես ինքնակառավարման ապահովման միջոց, ազատության չափ [13]: Սահմանադրական նորմերն առանձնանում են ինֆորմացիոն հագեցվածությամբ, համապարփակ բազմանպատակ իրենց բնույթով: Սահմանադրական նորմերի բազմությանը համապատասխանում են բազմապիսի սոցիալական նպատակադրույթներ: Սահմանադրական նորմերին բնորոշ է քաղաքացիների, այլ սուբյեկտների շահերի վրա ներազդելու, նրանց առջև որոշակի նպատակներ դնելու ունակությունը, ինչը խթանում է իրավունքում ամրագրված հասարակության պահանջների հանդեպ դրական վերաբերմունքը:

Սահմանադրական նորմերը հանդիսանում են գործունեության սոցիալական և ինստիտուցիոնալ կարգավորիչների տարատեսակ: Նրանք հատուկ կապ ունեն պետության հետ, քանի որ ինչպես դրանց սահմանում, այնպես էլ իրագործման ապահովումը վերջնական հաշվով անհնար են առանց պետության և նրանից դուրս [14]: Ու թեև ինստիտուցիոնալ հրահանգավորումները մեծամասամբ կատարվում են կամովի, նրանք դրանով չեն կորցնում իրենց պևտական-հարկադրական բնույթը: Դրանց կատարումը ապահովվում է ոչ միայն «ինքնակարգապահությամբ» և հասարակական բազմապիսի միջոցներով, այլև պահպանվում է պետության հարկադրական ուժով:

Իհարկե, չի կարելի բացարձակացնել իրավունքի սահմանադրական նորմերի հարկադրական բնույթը (ավելի ճիշտ դրանց կատարման ապահովման հարկադրական բնույթը): Դրա հետ մեկտեղ սխալ է որպես իրավունքի բազիս ճանաչել ուժը: Այդպիսի ուժի դերում հանդես են գալիս օբյեկտիվ սոցիալական գոյի նյութական հարաբերությունները, որոնք էլ պայմանավորում են պետության օրինաստեղծ գործունեությունը: Իմացաբանական առումով ճշմարիտ այդ դիտողությունը այնուամենայնիվ ճշգրտման կարիք ունի որպես նախնական, առաջնային ուժ: Որպես երկրորդային և միաժամանակ անմիջական ուժ, որի վրա հենվում է պետությունը իր գործառույթներում, հանդես է գալիս պետական հարկադրանքը (ավելի ճիշտ դրա կիրառման հնարավորությունը, քանի որ ամեն անգամ չէ, որ ծագում է դրա անհրաժեշտությունը):

Սահմանադրական նորմերը ձևակերպում են վարքի համապարտադիր կանոնները (մասշտաբները, տարբերակները), որոնք նախատեսված են որոշակի պայմանների համար: Սահմանադրական հրահանգավորումների ընդհանուր բնույթը ենթադրում է իրավաբանորեն համանման իրավիճակում հայտնված չանձնավորված, թեև տվյալ տեսակի կոնկրետ սուբյեկտների վարքի պարտադիր միանշանակկությունը: Դա հնարավորություն է ստեղծում սահմանադրական նորմերի բազմակի իրագործման համար դրանց կողմից

կարգավորվող հասարակական հարաբերությունների կրկնության շնորհիվ:

Ինչպես նշում է Բ. Ի. Պուգինսկին, իրավունքի նորմի առանձնացման համար առանցքային հատկանիշ է ծառայում նորմատիվ ակտի առանձին մասում, նախադասությունների խմբում կամ առանձին նախադասության մեջ արտահայտված իրավական սահմանման սուբյեկտների գործողությունները կարգավորելու նպատակով ինքնուրույն կիրառման հնարավորությունը: Եթե առանձին վերցված հարևան նախադասություններից անջատ իրավական դրույթը ինքնաբավ կերպով արտահայտում է անձանց գործողությունների կարգավորման համար պիտանի կանոն, ապա նա հանդիսանում է իրավունքի նորմ: Ինքնուրույնությունը տվյալ դեպքում նշանակում է իրավական սահմանման քերականական և տրամաբանական ավարտվածություն [15]:

Իրավական նորմը տիպային դատողություն է վարքագծի մասին, որն իր բովանդակությամբ հանդիսանում է հրահանգ, հիմնված դեսկրիպտիվ բնութագրումների վրա և իրենից ներկայացնում է զանազան սոցիալական ուժերի գործողությունների, նրանց տնտեսական, քաղաքական և այլ շահերի համարժեք: Դրա հետ մեկտեղ չի կարելի հաշվի չառնել տարբերությունը լեզվային արտահայտությունների գնահատողին, դեսկրիպտիվ և պրեսկրիպտիվ գործառույթների միջև: Այդ իսկ պատճառով իրավունքի նորմերի օժտումը դատողության տրամաբանական կատեգորիայի այնպիսի հատկություններով, ինչպիսիք են ճշմարիտն ու կեղծը, համահավասար չէ նրա իրավական հատկություններին: Ակնհայտ է և մեկ այլ բան՝ արտացոլման ոչ բոլոր հարաբերություններն են ճշմարիտ հարաբերություն:

Այստեղ նշեցինք իրավունքի նորմի միայն ընդհանուր համակարգային հատկանիշներ, որոնք նպաստում են հետազոտական գլխավոր խնդրի լուծ_ մանը. պարզաբանել սահմանադրական նորմերի յուրահատկությունը, ինչը թույլ է տալիս ոչ միայն հասկանալ դրանց ծագումնաբանությունը, սոցիալական հարաբերություններով պայմանավորվածությունը, այլև որոշել սոցիալական հարաբերությունների այն ոլորանները, որտեղ Սահմանադրության գործառնությունը առավել արդյունավետ [16]:

Սահմանադրական նորմերը կյանքի կոչած հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները (դրանում են արտահայտվում նրանց միջև եղած նախնական կապերը) պայմանավորում են վերջինների առանձնահատկությունները երկրորդական (հետադարձ) կապերի բնույթը, իրավական ներգործության մեթոդը, հրահանգավորումների բովանդակությունը, սահմանադրական նորմերի կառուցվածքը, դրանց փոխգործակցությունը և այլն: Դա կապի անհրաժեշտ տեսակ է: «Անհրաժեշտություն» կատեգորիայի բովանդակությունը, ինչպես հայտնի է, ընդգրկում է որոշակի կապերի և հարաբերությունների օբյեկտիվ պահանջմունքներ, օբյեկտիվ օրինաչափությունները: Ցանկացած կանոն արտացոլում է օբյեկտիվ պահանջմունք և հենց դա է նրան դարձնում ընդհանուր և պարտադիր: Բնորոշող հասարակական

հարաբերությունների և իրավական նորմի փոխկապակցվածությունը չպետք է հասկանալ որպես պատճառական կապի պարզ հարաբերություն կամ գործառնական տրամաբանական հարաբերություն: Որպես դրանց միջև միջնորդ օղակ է հանդես գալիս կամքը, որը իրավաբանական շարժառիթ է իրականությանը (օբյեկտիվ-արտացոլվող) իրավունքի (օբյեկտիվ-արտացոլած) ձևափոխման համար: Սահմանադրությունը, ինչպես և ցանկացած այլ իրավական նորմ, օբյեկտիվի սուբյեկտիվ արտահայտությունն է, հանդես եկող որպես բովանդակության ու ձևի միասնություն:

Հայաստանի ժամանակակից հասարակության սոցիալական անմիասեռության, սոցիալական հակասությունների ահագնացող պայմաններում ՀՀ Սահմանադրության ներքին համաձայնվածությունը, անհակասականությունը ներդաշնակությունը զգալի չափով դառնում են անհասանելի, իսկ հասարակական հարաբերությունների և դրանց միջնորդավորված սահմանադրական ձևի միջև եղած հակասությունները դժվար հաղթահարելի:

Սահմանադրական նորմերը իրավական նորմերի այլ տեսակներից տարբերվում են իրավաբանական հատուկ բնույթով: Այդ յուրահատուկ բնույթը, սակայն, չի կարելի հանգեցնել միայն այն բանի, որ դրանք ունեն իրավական կարգավորման միայն իրենց հատուկ ոլորտը: Նախ այն պատճառով, որ նման մենաշնորհ գործնականում գոյություն չունի և միշտ չէ, որ կարելի է «մաքուր տեսքով» առանձնացնել հասարակական այն հարաբերությունները, որոնք ամբողջովին կարգավորվում են սահմանադրական նորմերով: Սահմանադրական կարգավորման ոլորտում գործում են նաև այլ որպես կանոն, պետահիրավական նորմեր, երբեմն էլ իրավունքի այլև այլ ճյուղերի նորմեր: Սահմանադրական նորմերը չեն հավակնում համընդգրկուն, սպառիչ կարգավորման: Այդ իսկ պատճառով ապարդյուն կլինեն փորձերը ամբողջովին և բացառապես սահմանադրական նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություններ: Սահմանադրական նորմերը ամրագրում են կազմակերպման և գործունեության հիմնական սկզբունքները, հիմնական լիազորությունները, գործունեության նպատակներն ու ուղղությունները, այն դեպքում, երբ այդ գործունեության կոնկրետ կարգավորումը, որպես կանոն, իրականացնում են վարչահիրավական նորմերը: Հետևաբար, առարկան գնահատելիս կարևոր է հասարակական հարաբերությունների ոչ միայն տեսակային, այլև կառուցվածքային բնութագիրը:

Երկրորդ, կանխորոշելով սահմանադրական նորմերի բնույթի հիմնական գլխավոր ասպեկտները, հասարակական հարաբերությունները չեն սպառում դրանց իրավաբանական բնույթի բոլոր առանձնահատկությունները: Կարևոր է որոշել ոչ միայն այն, թե որ հասարակական հարաբերություններն են կարգավորվում սահմանադրական նորմերով, այլև այն, թև ինչպես, ինչ եղանակներով է իրավաբանական բնույթը պայմանավորվում է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով:

Սահմանադրական դրույթների առանձնահատկություն է այն, որ սանկցիան որոշիչ դեր չի խաղում, քանզի հարկադրանքի կիրառումը հասարակական հարաբերությունների վրա սահմանադրական ներգործման հիմնական եղանակը չէ: Դրանց իրագործումը հիմնականում կատարվում է սուբյեկտիվ իրավունքի իրացման, պարտականությունների կատարման և իրավական արգելքներին հետևելու ճանապարհով, որն իր հերթին ենթադրում է ողջ հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի բարձր իրավագիտակցության ու իրավական մշակույթի առկայություն:

Օգտագործված գրականություն

1. Братусь С. Н. Юридическая ответственность и законность. - М., 1976. -С. 67; Теория государства и права. Курс лекций (Под редакцией проф. М. Н. Марченко. - М.: Изд-в;Юридический колледж МГУ;, 1965. - Т. II. - С. 85; Малеин Н. С. Правовые принципы, нормы и судебная практика // Государство и право;, 1996, № 6. - С. 13.
2. Зоркькин В.Д. Право в условиях геобольных перемен.Изд-во «Норма» М., 2013:
3. Хабриева Т.Я.Чиркин В.Е. Теория современной конституции.М., «Норма» М., 2005:
4. Михалева Н.А., Теоретические проблемы социалистической конституции (сущность, содержание, форма). Автореферат дис., док. юрид. наук, М., 1984, с. 19.
5. Плахов В.Д. Социальные нормы. Философские основания общей теории. - М.. 1985. - С. 42.
6. Кудрявцев В. Н. Юридические нормы и фактическое поведение //Советское государство и право, 1980, № 2. - С. 16.
7. Морозова Л.А. Конституционное регулирование общественны отношении в СССР.-«Советское государство и право», 1986, №2, с.51-55.
8. Морозова Л.А. Նշվ.Աշխ., էջ 53:
9. Пиголкин А. С. Правовая норма и поведение индивида. - Труды ВЮЗИ. - М., 1978. - Т.С 58.
10. Морозова Л. А, նշվ. աշխ., էջ 62.
11. Кудрявцев В. Н. Юридические нормы и фактическое поведение //Советское государство и право, 1980, № 2. - С. 13
12. Авакьян С. А., Конституционное право Роцции. Том 1, М., с. 82.
13. Нерсесянц В.С. Право - математика свободы. М., 1996;
14. Տե՛ս նույնի էջ 39;
15. Ценность права, как триединства свободы, равенства и справедливости. В кн.: Проблемы ценностного подхода вправе. М., 1996.
16. Пугинский Б. И. Теоретические проблемы права //;Вестник Московского
17. Университета. Сер. 11. Право 1999, №5. -С. 32.

ГАРНИК САФАРЯН, НОРИК ШАХНАЗАРЯН. ПРОБЛЕМА НОРМАТИВНОСТИ КОНСТИТУЦИОННЫХ ПОЛОЖЕНИЙ. *В статье обстоятельно обсуждаются проблемы нормативности положений Конституции РА. Цель статьи-обосновать, что все положения Конституции РА, в том числе предисловие, нормы – принципы, нормы – цели по своей сути и содержанию являются нормативными, то есть обязательными конституционно-правовыми нормами поведения, как и другие нормы Конституции. Следовательно, все нормы Конституции РА являются нормативными и обязательными к исполнению.*

GARNIK SAFARYAN. NORIK SHAHNAZARYAN. THE PROBLEM OF NORMATIVITY OF CONSTITUTIONAL PROVISIONS. *The article discusses thoroughly the problems of normativity of provisions of the Constitution of the Republic of Armenia. The purpose of the article is to substantiate that all the provisions of the RA Constitution, including the preface, norms - principles, norms – goals are normative in their essence and content, that is, mandatory constitutional and legal norms of behavior, as the other norms of the Constitution. Consequently, all the norms of the RA Constitution are normative and are mandatory for performance.*

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ. ԸՄԲՌՆՈՒՄՆ ՈՒ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լիանա Մալխասյան

Երևանի Հայբուսակ համալսարան

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Մուտքագրված է 25.04.22, հաստատված է տպագրության 30.06.22

Ամփոփում. *Ներկայացվում է պետական իշխանությունը որպես հրապարակային ու քաղաքական իշխանություն: Ընդ որում ոչ ցանկացած հրապարակային իշխանությունն է քաղաքական [1], սակայն ցանկացած քաղաքական իշխանություն հրապարակային է, քանի որ միայն պետության հրապարակային իշխանությունը կարելի է ճանաչել որպես քաղաքական իշխանություն [2]: Պետական իշխանության հրապարակայնությունը հարկավոր է հասկանալ հետևյալ կերպով՝ դա այն իշխանությունն է, որը իրականացվում է հասարակության շահերից ելնելով, սակայն բաժանված է դրանից: Հասարակությունը հանդես է գալիս իբրև դրա օբյեկտ, այլ ոչ թե սուբյեկտ, իշխանության կրողը հատուկ հրապարակային կազմակերպություն է, սոցիալական ինստիտուտ՝ պետությունը:*

Հիմնաբառեր. *Պետություն, պետական իշխանության մարմիններ, մարդու իրավունքներ, քաղաքակրթություն, իրավակարգ, ինքնավարություն, միջազգային իրավունք:*

Հասարակության ժամանակակից վիճակին առավել բնորոշ է դրա գոյության պետական ձևը: «Պետություն» եզրույթը, ինչպես նշում է Գ. Քելզենը, կարող է օգտագործվել մի քանի իմաստով: Առաջինը՝ իրավաբանական իմաստով. Պետությունը տվյալ դեպքում կարող է հանդես գալ իբրև իրավաբանական անձ, իրավական երևույթ, իբրև յուրօրինակ համակարգ: Այլ համակարգերից պետությունն տարբերվում է «ազգի կամ երկրի մասշտաբով» [3]: Պետությունն ունի «արտաքին տեսք» և կիրառվող գործողությունների համակարգ ու մարդկանց վարքագիծը կանոնակարգող այնպիսի կարգ, որը սովորաբար անվանում են իրավակարգ:

Երկրորդ. պետության հասկացությունը կարող է օգտագործվել հասարակագիտական իմաստով: Տվյալ տեսանկյունից պետությունը պետք է դիտարկվի իբրև որոշակի հասարակագիտական միասնություն, հասարակական իրականություն, որը գոյությունը ունի անկախ իրավակարգից ու իրավական իրողությունից: Հասարակագիտական իմաստով դիտարկվող պետության համար բնորոշ է իշխանության նախնական /դրա գոյության ու գործառնության պահից/ ցրումը տարբեր մարմիններով [4], ինչի արդյունքում առաջանում են հասարակության մեջ մի քանի գերիշխող խմբեր ու հարաբերություններ:

Երրորդ. պետության հասկացությունը կարող է սահմանվել իբրև «նորմերի համակարգ», «նորմատիվ կարգ» կամ իբրև «քաղաքականորեն կազմակերպված հասարակություն»: Պետությունը դրսևորվում է՝ իբրև քաղաքական

կազմակերպություն առաջին հերթին այն պատճառով, որ այն սահմանում է ուժի, հարկադրանքի, իշխանության օգտագործման կարգը [5]:

Տարբեր ժամանակաշրջանների ռուսստանյան գրականության մեջ կարելի է գտնել պետության բազմաթիվ սահմանումներ: Օրինակ, պետությունը «իբրև մեր մոլորակի օբյեկտիվ փաստ» կամ «բնակչության հաշվին ու երկրի բնակչության համար անհատական կյանքի դրսևորման ու զարգացման պարտադիր պայմանների կորպորատիվ կատարման սոցիալական երևույթ»: Պետությունը սահմանվում էր իբրև մարդկանց կազմակերպված շփում, ովքեր միմյանց հետ կապված են հոգևոր համերաշխությամբ և ոչ միայն ընդունում են այդ համերաշխությունը, այլև՝ աջակցում դրա կայացմանը հայրենասիրական սիրո ուժով, արժանի ու խիզախ արարքներով [6]: Այն դիտարկվում էր նաև իբրև ազատ մարդկանց միություն, ովքեր ապրում են որոշակի տարածքում և ենթարկվում պարտադիր ու ինքնուրույն գերագույն իշխանությանը:

Լ.Ս.Մամուտն առաջարկում է ներառել պետության մասին բոլոր առկա պատկերացումները չորս խմբերի մեջ: Առաջինը, իր կարծիքով, պետք է կազմեն պետության հրապարակային-իշխանական բնույթն արտացոլող հատկանիշների մտացածին արտացոլումները: Երկրորդը՝ դրա ստեղծման վերաբերյալ գաղափարները: Երրորդը՝ այն հայացքները, որոնք կենտ_րոնացված են պետության արտաքին կերպարի, դրա բաղադրիչների նկատմամբ: Չորրորդը՝ դատողություններ դրա գործառնական հատկությունների, մարդկանց կյանքում ունեցած դերի վերաբերյալ [7]:

Ինչպես տեսնում ենք, հատուկ գրականության մեջ մշակվում են պետության հասկացության բազմաթիվ սահմանումներ, որոնք արտացոլում են դրա հետևյալ կողմերը՝ պետությունը՝ իբրև հրապարակային քաղաքական իշխանության կազմակերպում, պետությունը՝ իբրև իշխանության ապարատ, պետությունը՝ իբրև ողջ հասարակության քաղաքական կազմակերպություն:

Դիտարկելով պետության հատկանիշների մասին հարցը՝ հարկավոր է տարբերել դրա տեսական կառույցն ու իրականության մեջ գոյություն ունեցող, զարգացող երևույթը: Իրական պետությունը միշտ չէ, որ համապատասխանում է դրա մոդելին: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ պետության հատկանիշները ձևավորվում են դինամիկ շարք, որում տարրերի հստակ քանակը պետության նկատմամբ կիրառությամբ, կարող է փոխվել: Այդ հատկանիշների կազմի վրա ազդեցություն են գործում մեծ թվով գործոններ՝ ձևը, տնտեսական ու սոցիալական հիմքերը, պետության մշակութային-պատմական զարգացման առանձնահատկությունները, դրա աշխարհագրական դիրքը, կրոնը և այլն:

Գլխավորը, ինչի վրա կառուցվում է տվյալ դինամիկ շարքը՝ դրանք այն հատկանիշներն են, որոնցից ձևավորվում է տեսական մոդելը: Հենց դա է հանդիսանում <<պետություն>> հասկացության սահմանման հիմքը: Այդ հատկանիշներից ոչ բոլորը կարող են անվերապահորեն ընդունվել: Դրանցից մի մասի կիրառումը պետության նկատմամբ կասկածելի է, քանի որ և

տեսաբանները, և պրակտիկները պահանջում են հստակեցում՝ հաշվի առնելով ներպետական օրենսդրության ներկայիս իրավիճակը, միջազգային իրավունքը, պետական շինարարության պրակտիկան ու միջպետական շփումը, ինչպես նաև՝ այն գլոբալիզացիոն գործընթացները, որոնք էական ազդեցություն են գործում ժամանակակից աշխարհում պետության վիճակի վրա:

Ժամանակակից պետության հատկանիշներից առաջինն իշխանությունն է: Այն մեկնաբանվում է ոչ միանշանակորեն: Երբեմն պետական իշխանության հատկանիշը հայտարարվում է՝ ինքնավարությունը [8]: Այդպիսի հարցադրումը, մեր կարծիքով, ճիշտ չէ: Հրապարակային իշխանությունը՝ ինքնավարության հետ մեկտեղ, հանդիսանում է պետության՝ իբրև քաղաքական կազմակերպության հատկանիշը: Տվյալ դեպքում միախառնվում են «իշխանություն» հասկացության տարբեր կողմերը, այն ինչ կապված է այդ եզրույթի բազմաիմաստության ու դրա կիրառման պրակտիկայի հետ: «Իշխանություն» եզրույթն ունի մի քանի իմաստային երանգներ, որոնցից մեկը որոշիչ ազդեցության գործադրում է մարդկանց կամքի ու վարքագծի նկատմամբ, այն հարաբերությունների նկատմամբ, որոնց մասնակիցներն են և սուբյեկտը՝ իշխանության կրողը, և ենթաիշխանական սուբյեկտը՝ նա, ում վարքագիծը հանդես է գալիս իբրև իշխանության օբյեկտ: Մի շարք դեպքերում պետական իշխանությունը նույնացվում է դրա կրողի հետ, ինչը նույնպես հիմնավորված չէ:

Վ.Ի. Եվիմովի կարծիքով, «պետական իշխանությունը՝ պետության իրավունքն ու հնարավորություն է տնօրինել ինչ-որ մեկին ու ինչ-որ բան, ենթարկել սեփական կամքին ու ազդեցություն գործել մարդկանց գործունեության ու վարքագծի նկատմամբ՝ հեղինակության, ուժի, հարկադրանքի, ճնշման, տիրապետության ու այլ եղանակների ու միջոցների օգնությամբ» [9]: Յու. Տիխոմիրովը համարում է, որ «իշխանությունն առավել կուտակված ձևով արտահայտում է կազմակերպված սոցիալական ազդեցության իմաստը, որն յուրօրինակ կերպով դրսևորվում է և իբրև պետական կառավարում, և իբրև ինքնակառավարում» [10], իշխանությունը՝ ինքնանպատակ չէ, այլ՝ նպատակաուղղված համատեղ գործունեության կազմակերպման միջոց [11]:

Գ.Վ.Մալցևը համարում է, որ մարդկությանը հայտնի են իշխանության երկու տեսակներ՝ բնական ծագում ունեցող կազմակերպչական իշխանությունն ու կազմակերպչական իշխանությունը: Առաջինը՝ դա բնական իշխանություն է, ցեղի իշխանությունը, որը «կրում է առաջնային ու հենքային բնույթ» [12]: Կազմակերպչական իշխանությունը «սոցիոմշակութային երևույթ է, որի առաջացումը բաժին է հասնում սոցիոգենեզի ուշ փուլերին, իսկ ծաղկումը կապված է քաղաքականության հետ» [13]: Քաղաքականությունը դա հասարակական զարգացման այն աստիճանն է, որին աշխատանքի բաժանումը, դրանից բխող առանձին անձանց միջև փոխանակումն ու այս երկու գործընթացները միավորող ապրանքային արտադրությունը հասնում են լիարժեք զարգացմանը և հեղաշրջում են կատարում ողջ նախկին

հասարակության մեջ [14]: Այն առաջանում է իբրև զարգացած սոցիալական կազմակերպությունների գործառույթ, որոնք փորձում են գիտակցաբար ձևակերված և ռացիոնալ կերպով կառուցված նպատակներից ելնելով, ակտիվորեն ներգործել հասարակական հարաբերությունների վրա, կառուցել ու վերակառուցել դրանք, հաղորդել դրանց անհրաժեշտ ուղղությունը: Բարդ սոցիալական կազմակերպությունները, որոնցից ամենախոշորը պետությունն է, կառավարում են մարդկանց ու մարդկանց միջև հարաբերությունները որևէ կենտրոնից կամ կենտրոններից:

Բնական իշխանությունը գրավում է անհատի գիտակցությունը՝ կլանելով մարդու ակտիվությունը և հեռացնելով իրեն ինքն իրենից: Մարդը դառնում է ստրկացած օբյեկտիվ հարաբերություններով ու կապերով, որոնց մեջ նա ներգրավված է բնության կամքով ու սեփական գիտակցությամբ: Մարդու մեջ արթնացավ վեր բարձրանալու կարողությունը կապերի այդպիսի բնույթից և կյանքի բնական գործընթացի նկատմամբ, քանի որ դա իշխանության նոր տեսակ է և ենթադրում է մարդկային կեցության այլ պայմաններ:

Ձևավորելով կյանքի նկատմամբ սեփական վերաբերմունքը, յուրացնելով իշխանության միջնորդավորված ձևերը, մարդն ու հասարակությունը մեծ ազդեցություն են ձեռք բերում գոյության բնական ձևերից, սակայն ավելի մեծ կախվածության մեջ են դրվում կազմակերպչական հարաբերություններից: Ընդ որում կազմակերպչական կապերն ունեն զարգացման ու ամրապնդման միտում: Այդպիսի միտումի առկայությունը զգալիորեն պայմանավորված է պետության ու դրա իշխանության դերով, որոնք ուղղակիորեն կապված են բնական ու կազմակերպչական իշխանությունների հետ, քանի որ պետությունը հանդիսանում է սոցիալական կազմակերպման ունիվերսալ ձև, որի գործառնությունը ապահովվում է սոցիալական փոխգործության բնական մեխանիզմների բնականոն աշխատանքով՝ ներառյալ բնական իշխանությունը:

Պետական իշխանությունը՝ քաղաքական իշխանություն է: «Քաղաքականություն» եզրույթն ի սկզբանե նշանակել է պետական իշխանության տարբեր ձևերի դրսևորում: Վ.Ի. Լենինը դիտարկում էր քաղաքականությունն իբրև պետության գործունեության ոլորտ: Քաղաքականությունը՝ «պետության գործունեության ձևերի, խնդիրների բովանդակության սահմանում է» [15]: Նա նաև նշում էր, որ քաղաքականությունը «պետական իշխանության կազմակերպումն է [16], «պետության ու կառավարության հանդեպ բոլոր դասերի ու խավերի հարաբերությունների տիրույթը, բոլոր դասերի միջև փոխգործությունների տիրույթը» [17]: Քաղաքականության լենինյան ընկալումն այսօր սահմանում են իբրև նեղ:

Դիտարկելով քաղաքականությունը լայն իմաստով, ինչպես հայտնում էր Մ.Վեբերը, «իր մեջ ներառում է լայն ասպեկտներ, քանի որ մարդիկ խոսում են բանկերի դրամավարկային քաղաքականության մասին, Կայսերական բանկի դիսկոնտային քաղաքականության մասին, գործադուլի ժամանակ

արիմիության քաղաքականության մասին, կարելի է խոսել քաղաքային կամ գյուղական համայնքների դպրոցական քաղաքականության մասին, կորպորավիայի ղեկավարի քաղաքականության մասին, անգամ խելացի կնոջ քաղաքականության մասին, ով ձգտում է կառավարել իր ամուսնուն» [18]: Իր կարծիքով, ամենալայն իմաստով «քաղաքականություն» եզրույթն ընդգրկում է «ինքնուրույն ղեկավարության գծով գործունեության բոլոր տեսակները» [19]: Այնուամենայնիվ Մ.Վեբերի դատողությունների հիմքում ընկած է քաղաքականության նկատմամբ ավելի նեղ հայացքը, որի մասին նա գրում է իբրև <<կառավարման կամ կառավարման նկատմամբ ազդեցություն գործելու մասին քաղաքական միությամբ, այսինքն՝ մեր օրերում՝ պետությամբ» [20]: Քաղաքականությունը Մ.Վեբերի մոտ «նշանակում է ձգտում մասնակցելու իշխանությանը կամ ազդեցություն գործելու իշխանության բաշխման վրա, լինի դա պետությունների միջև, լինի դա պետության ներսում այն մարդկանց խմբերի միջև, որն այն իր մեջ պարունակում է» [21]:

Իրավագիտության համար կարևոր է դիտարկել իրավունքի ու իշխանության հետ՝ քաղաքականության կապերը: Գ.Վ. Մալցևը գրում էր, որ «քաղաքականության էությունը, ինչպես և իրավունքի էությունը, չի կարող բացահայտվել առանց հասարակական իշխանության, և առաջին հերթին՝ պետական իշխանության: Քաղաքական և իրավական հարցերը իշխանության խնդիրներից անկախ լուծելու ցանկացած փորձերը կլինեն անհաջող: Իշխանությունը՝ դա և՛ քաղաքականության, և՛ իրավունքի ձողն է, դրանց միասնությունը, դրանով է սահմանվում տվյալ միասնության որակը, բնույթը» [22]:

Վ. Ա. Չետվերկինը նշում էր, որ պետությունը՝ դա հրապարակային քաղաքական իշխանության կազմակերպումն է: Քաղաքական իշխանությունը՝ դա «իշխանություն է, որն իրականացնում է հասարակության կառավարումը ընդհանուր առմամբ հասարակության բարեկեցության շահերից ելնելով և կառավարում սոցիալական խմբերի, դասերի, խավերի, կորպորացիաների, էթնիկ, տարածքային, կրոնական խմբերի և այլն միջև հարաբերությունները» [23]:

Հրապարակային քաղաքական իշխանությունը սահմանում են երեք ձևական հատկանիշներ, որոնք ընդգծում են «պետական իշխանություն» և «հրապարակային քաղաքական իշխանություն» հասկացությունների նույնությունը: Վերջինը «միավորում է ենթակաների տարածքային հատկանիշով, ստեղծում ենթակաների տարածքային կազմակերպությունը, քաղաքական ասոցիացիան, որը ինտեգրվում է հրապարակային-իշխանական հարաբերություններով ու կառույցներով, իրականացվում է հատուկ ապարատի կողմից, որը չի համընկնում հասարակության բոլոր անդամների և հասարակությանը հետ ապահովվում է հարկադրանքի հիմքով՝ ընդհուպ մինչև բռնությունը, ունի ինքնավարություն ու օրինաստեղծության առաջնահերթություն՝ կայունության ու կարգուկանոնի նվաճման կամ պահպանման համար» [24]:

Պետական ու հրապարակային-քաղաքական իշխանությունների նմանու-

թյունը չունի ունիվերսալ ու համատարած բնույթ: Ոչ ամեն հրապարակային իշխանություն քաղաքական է և այն միշտ չէ որ հանգեցվում է պետական իշխանությանը: Որպեսզի հնարավոր լինի դիտարկել հրապարակային քաղաքական իշխանությունն իբրև պետական, անհրաժեշտ է համապատասխան պայմանների առկայությունը: «Պետական իշխանությունը՝ դա այնպիսի քաղաքական իշխանություն է, որը ներմուծված է իրավական շրջանների մեջ /առանձնացված է մեր կողմից՝ Յու. Դ., Վ. Մ./, այս կամ այն չափով սահմանափակված է քաղաքացիների /ենթակաների/, քաղաքական-իրավական շփման մասնակիցների ազատությամբ: Դա քաղաքական գերիշխանության այնպիսի մեխանիզմ է, ընդհուպ մինչև քաղաքական գերիշխանության բռնություն, որն այս կամ այլ կերպ միջնորդավորված ու զսպված է իրավունքով, գործում է ոչ թե կամայականորեն; Այս հանգամանքով պայմանավորված ոչ բոլոր պետությունները կարելի է անվանել իրավական պետություն: Սակայն ցանկացած պետություն կոչվում է պետություն այն պատճառով, քանի որ իշխանությունը դրանում գոնե նվազագույն կերպով սահմանափակված է, կապված է իրավունքներով, ենթակաների նվազագույն անխուսափելի ազատությամբ» [25]:

Ներկայումս, պետական իշխանության տվյալ սահմանումը հանդիսանում է այդ հասկացության ու երևույթի նեղ հասկացության դրսևորում, քանի որ ոչ թե տեսության մեջ, այլ գործնականում կարելի է դիտարկել պետություններ, որոնցում հրապարակային քաղաքական իշխանությունը գործում է ոչ թե իրա_ վական դաշտի շրջանակներում, այլ ընդհակառակը՝ դուրս է գալիս օրենքի շրջանակներից և խախտում իրավական սահմանումները:

Վ.Ե. Չիրկինը առանձնացրել է պետական ու քաղաքական իշխանությունների միջև հետևյալ տարբերություններ՝

1/ ոչ ամեն քաղաքական իշխանությունն է պետական, թեպետ ցանկացած պետական իշխանություն ունի քաղաքական բնույթ:

2/ պետական իշխանությունը կատարում է արբիտրաժային դեր հասարակության մեջ, քանի որ պետությունն իրականացնում է ընդհանուր գործերը և կոչված է նվազեցնել զանազան սոցիալական ուժերի հակամարտությունը, որոշակի դասի, սոցիալական շերտի քաղաքական իշխանությունը, սոցիալական այլ խմբեր այս խնդիրները կատարել չի կարող, դրանց հատուկ չի այդպիսի դեր:

3/քաղաքական ու պետական իշխանություններն ունեն իրականացման տարբեր մեխանիզմներ: Պետական իշխանությունը ձևականացված է և իրագործվում է հատուկ պետական ապարատի միջոցով /խորհրդարան, կառավարություն, դատարաններ և այլն/, սոցիալական ընդհանրության քաղաքական իշխանությունը իրականացվում է դրա կազմակերպությունների միջոցով, ինչպես նաև՝ անմիջականորեն, օրինակ՝ քաղաքական «հանցագործությունների» ճանապարհով:

4/ միայն պետական իշխանությունն է լիազորված հասարակության անունից կիրառել դրանում օրինականացված ճնշում և տարածվում է բոլոր անձանց, մարմինների, միավորումների վրա, որոնք գտնվում են պետության տարածքում:

5/ պետական իշխանությունն ունի գերակայություն, այն իրավաբանորեն անկախ է հասարակության մեջ ցանկացած այլ իշխանությունից, սակայն ոչ ժողովրդի իշխանությունից, որը ժողովրդավարական պետության մեջ հանդիսանում է իշխանության աղբյուրը [26]: Ն.Ն. Ալեքսեևը մատնանշել է քաղաքական իշխանության երկու հիմնական հատկանիշները՝ դրա գերակայությունը և հրապարակայնությունը [27]: Բ. Ստրաշունի պնդմամբ, քաղաքական իշխանությունը՝ «դա ողջ հասարակության նկատմամբ մարդկանց որոշակի խմբի /վերնախավի/ իշխանությունն է, որը բնութագրվում է հասարակության չենթարկվելու դեպքում բռնի միջոցների օգտագործում» [28]: Պետության քաղաքական իշխանության նկատմամբ կիրառելի ևս մեկ եզրույթ է օգտագործել Ս.Ս.Ալեքսեևը: Նա գրել է քաղաքական իշխանության մասին, որը փաստացիորեն նույնացրել է պետականի հետ, նշելով, մի կողմից, դրա հրապարակային բնույթը, իսկ մյուս կողմից՝ անվանելով այն ապարատային իշխանություն, որն ամրապնդված է օրենքի ուժով: Ս.Ս.Ալեքսեևը քաղաքական իշխանության այլ առանձնահատկություն է համարել դրա ինքնավարությունն ու լեգիտիմությունը [29]: Ժողովրդի քաղաքական կամքը հիմնադիր բնույթ է, ինչը դրսևորվում է պետության նկատմամբ: Ուստի Վ. Ի.Եվիմովն արդարացիորեն հայտարարում էր, որ «ժողովրդին է պատկանում իշխանության, պետահիշխանական կառույցներ հիմնադրելու բնական-պատմական իրավունքը» [30]:

Բնութագրելով պետական իշխանության այնպիսի հատկանիշ, ինչպիսին է դրա միասնությունը, հարկավոր է նշել, որ պետության տեսության մեջ այդ կապակցությամբ առանձնացնում են երեք մոտեցում ՝սոցիալական, թելեոլոգիական, կազմակերպչական-իրավական: Վերլուծելով դրանք, Վ. Ե.Չիրկինը եկել է այն եզրակացությանը, որ իշխանության բաժանման և պետական իշխանության միասնության սկզբունքները չեն կրում փոխբացառող բնույթ [31]: Ի.Ա. Իլյինը, դիտարկելով պետության իշխանությունն իբրև միասնական երևույթ, որն արտացոլում է նրա մարմինների գործունեության միասնությունը, գրում էր. «Պետության իշխանությունը բաշխվում է դրա բոլոր մարմինների միջև, այն ամբողջությամբ չի պատկանում ոչ մի մարմնի: Պետության իշխանությունը հավասար է նրա բոլոր մարմինների իշխանական լիազորությունների գումարին» [32]:

Ամփոփելով վերոգրյալը կարելի եզրակացնել, որ պետական իշխանությունը հանդիսանում է պետության ինքնուրույն և լիարժեք հատկանիշ, որի իրականացման համար անհրաժեշտ է պետական հարկադրանք, իրավաստեղծ գործունեության արդյունքը՝ որպես հենք և ժողովրդի ազատ կամքի դրսևորում:

Օգտագործված գրականություն

1. Четвернин В. А. Նշված աշխ: , էջ 107; Чиркин В. Е. О публичной власти народа (Постановка проблемы). էջ 8: Նույնի: О сущности субьекта федерации: традиции реалии //Гос. И право. 2003. N 7. էջ Նույնի Конституционные проблемы власти народа //Гос. И право. 2004. N 9: էջ 5:
2. Байтин М. И. Теория государства и права. М., 2000. էջ 43:
3. Kelsen H. General Theory of Law and Satate. N. Y., 1966, P. 181
4. Марченко М.Н. Проблемы теории государства и права. М., 2008. էջ 65:
5. Арзамаскин Н.Н. Общее и особенное в понятиях государство переходное государство//Адвокатская практика. 2006. N 3: էջ 32-33
6. Ильин И. Путь К очевидности. М., 1993: էջ 260:
7. Алексеев С. С. Государство и право. М., 1994. էջ 16:
8. Ефимов В. И. Система Государственной власти. М., 1994: էջ 67:
9. Чиркин В. Е. Նշված աշխ: էջ 87:
10. Ильин И. А. Теория государтства и права. М., 2013. էջ 136.
11. Мамут Л. С. Государство: полюсы представлений //Общественные науки и современность. 1996. N 4: էջ 7-9:
12. Чиркин В. Опубличной власти народа (Постановка проблемы)//Гос. И право. 2003, N 10. էջ 12:
13. Ефимов В. И. Власть в России. М., 1996: էջ 17:
14. Тихомиров Ю. А. Публичное право. М., 1995; էջ 82:
15. Тихомиров Ю. А. Государство: развитиеи теории и общественная практика// Правоведение 1999. N 3: էջ 3:
16. Мальцев Г. В. Право и политика в контексте теории власти //Право и политика современной России. М., 1996 էջ 18:
17. Նույն տեղում էջ 19:
18. Энгельс Ф. Происхождение семьи, частной собственности и государства. В связи с исследованиям Льюиса Г. Моргана. М., 2009: էջ 195:
19. Ленин В. И. Полн. Собр. Соч. Т. 33 էջ 340:
20. Ленин В. И. Полн. Собр. Соч. Т. 23. էջ 235:
21. Ленин В. И. Полн. Собр. Т. 6. էջ 79:
22. Вебер М. Избр. Произв. М., 1990. էջ 644:
23. Նույն տեղում: էջ 646:
24. Четверкин В. А. Понятия права и государства. М., 1997. էջ 85:
25. Նույն տեղում: էջ 86:
26. Чиркин В. Е. Основы сравнительного государствоведения. М., 1997: էջ 77:
27. Алексеев Н. Н. Основы философии права. М., 1999. էջ 214:
28. Конституционное право зарубежных стран. Т. 1. М., 1993. էջ 160:
29. Алексеев С. С. Государство и право. М., 1994. էջ 16:
30. Ефимов В. И. Система Государственной власти. М., 1994: էջ 67:
31. Чиркин В. Е. Նշված աշխ: էջ 87:
32. Ильин И. А. Теория государтства и права. М., 2013. էջ 136.

ЛИАНА МАЛХАСЯН. ГОСУДАРСТВЕННАЯ ВЛАСТЬ. ПОНИМАНИЕ И КОММЕНТАРИИ. *Глядя на государственную власть, можно сказать, что это общественно-политическая власть. При этом не всякая публичная власть является политической, а любая политическая власть является публичной, ибо только публичная власть государства может быть признана политической властью. Публичность государственной власти следует понимать так: это власть, которая осуществляется в интересах общества, но отделена от него. Общество выступает его объектом, а не субъектом, носителем власти является особая общественная организация, социальным институтом является государство.*

LIANA MALKHASYAN. STATE AUTHORITY. UNDERSTANDING AND COMMENTS. *Looking at the state power, we can say that it is a public and political power. Moreover, not any public power is political, but any political power is public, because only the public power of a state can be recognized as political power. The publicity of the state power should be understood as follows: it is the power that is exercised in the interests of the society, but is separated from it. The society acts as its object, not a subject, the bearer of power is a special public organization, the social institution is the state.*

ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Ռաֆիկ Սիրունյան

Երևանի Հայբուսակ Համալսարան

Մուտքագրված է 25.05.22, հաստատված է տպագրության 30.06.22

Ամփոփագիր. *Լիդերները, որոնք հակված են ղեկավարելու, կառավարելու, վերջապես որոշում ընդունելու, նրանց մեջ պետք է ամուր հիմքերի վր դրված լինեն խղճի և արդարության հասկացությունները: Այս երկու բառերը առաջին հայացքից շատ հասարակ և հնացած են թվում այսօրվա պայմաններում, սակայն կարծում եմ այն դեռ ուժը կորցրած չպետք է համարել, քանի որ դրանք կարևորություն ներկայացնող հասկացություններ են, առավել ևս քաղաքականության մեջ պետք է ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել մարդկանց ճակատագրերը տնօրինելու գործին և թույլ չտալ որպեսզի հաղթի հիվանդ բանականությունը:*

Յուրաքանչյուր ժողովուրդ իր առաջնորդից առաջին հերթին սպասում է անկեղծություն, և որքան էլ ժողովուրդը իմաստուն լինի և հասկանա կառավարող շրջաններում ընթացող քաղաքական խաղերի և խարդավանքների գոյության մասին, այն խաղերի, որը կարող է իրացվել նաև իր ընտրյալ լիդերի կողմից, բայց և այնպես իր առաջնորդի անկեղծությունից ելնելով կցուցաբերի զսպվածություն և համբերություն:

Հիմնաբառեր. *Լիդեր, հասարակություն, իշխանություն, առաջնորդ:*

Ով է անհատը, լիդեր, թե ուղղակի ղեկավար, պետ: Նրա հեղինակությունը պայմանավորված է իր աշխատասենյակի, դռան վրա փակցված ցուցանակի էությունից, նրանից դուրս էլ իրականում անձը կա և մնում է լիդեր: Մնում է լիդեր առաջին հերթին իր մարդկային հատկանիշներով և մրդկանց, խմբերի, կազմակերպությունների, պետությունների հետ հարաբերություններ ստեղծելու և պահպանելու ունակությամբ:

Երբևիցէ անհատը խորհում է, թե ինչպես իրեն կարող են ընդունել ենթակաները՝ որպես լիդերի, թե որպես մարդու:

Տարածված է այսպիսի մի արտահայտություն, ծնվում են, թե դառնում են:

Իրականում լիդերության հատկանիշները ձեռք են բերվում սովորելով:

Լիդերությունը նույնպես վարպետություն է, ինչպես ասենք համակարգիչով աշխատելը կամ շախմատ խաղալը:

Լիդերությունը ժամանակ պահանջող ցանկության իրականացում է: Որպեսզի լինես (դառնաս) լիդեր, պետք է ունենաս ձգտում, համբերություն և կրթվածություն:

Լիդերությունը միայն վարքի և մտածելակերպի համալիր չէ, այլ կյանքի ոճ է համապատասխան նշանաբանով. «եթե ոչ ես, ապա ո՞վ»:

Մենք բոլորս ապրում ենք այս աշխարհում և շատ մարդկանցից կախում

ունենք: Ինչու, որովհետև միայնակ դժվար է, և նույնիսկ անկարելի է հաջողությունների հասնել: Մեզ բոլորիս անհրաժեշտ են ընկերներ, օգնականներ, կոլեգաներ, գործընկերներ և վերջապես համախոհներ: Սակայն ինչպես քո կողմը գրավես շրջապատը, այն շրջապատը, որը հետաքրքիր է իր բազմաբնույթ բովանդակությամբ: Շրջապատը, և ընդհանրապես հասարակությունը դաժան է, խստապահանջ, պահանջկոտ, բռնազբոսիկ, ծիծաղկոտ, և ահա եկ և հասարակության մեջ դրսևորիր, կայացիր, ստեղծիր քո «եսը» և ուրիշներին ևս ապացուցիր, որ շատ բաներում քո եսը պետք է իրենց եսը հաստատելու համար: Եվ բնական է, որ շրջապատը ստեղծելու կամ այլ շրջապատում հաստատվելու համար շատ դժվարությունների կարող ես հանդիպել: Դրա համար գոյություն ունեն մի շարք արդյունավետ հնրաքներ, որոնք հոգեբանական ազդեցություն ունենում մարդկանց վրա: Այդ հնարքները օգտագործվում են ամեն օր, ամեն վարկյան: Հենց այդպիսի հնարքների շնորհիվ է, որ մարդը կարողանում է աշխատել մեծ գումարներ, գտնել ընկերներ, ստեղծել ուժեղ թիմ և դառնալ հանրաճանաչ: Հնուց եկած ճշմարտություն է, որ կյանքում հաջողության հասնելու համար պետք է կարողանալ շփվել մարդկանց հետ: Արդյոք անհատը կարող է համակրանք ներշնչել, իր նկատմամբ հետաքրքրություն առաջացնել, կարող է ուրիշներին համոզել, փաստարկելով վիճել՝ միաժամանակ մնալով իր դիրքերում, իր համոզմունքներին հավատարիմ:

Մարդկանց վրա ազդեցություն ունենալու արվեստին տիրապետելով միայն անհատը կարող է հասնել իր նպատակներին և իր ցանկությունները իրականացնել սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում, այն է՝ քաղաքականության, դիվանագիտության, փաստաբանության, բժշկության, գործարարության մեջ և նույնիսկ հանցավոր աշխարհում:

Վերջապես ով է լիդերը: Ով, ինչու և ինչպես է հնարավոր դառնալ լիդեր և կարողանալ պահպանել այն տեղն ու դերը ինչը, ձեռք է բերվել երկարատև պայքարից հետո: Ինչպիսին է լիդերը ընդհանրապես և մասնավորապես ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող երկրներում:Լիդերները, որոնք հակված են ղեկավարելու, կառավարելու, վերջապես որոշում ընդունելու, նրանց մեջ պետք է ամուր հիմքերի վրա դրված լինեն խղճի և արդարության հասկացությունները: Արս երկու բառերը առաջին հայացքից շատ հասարակ և հնացած են թվում այսօրվա պայմաններում, սակայն կարծում եմ այն դեռ ուժը կորցրած չպետք է համարել, քանի որ դրանք կարևորություն ներկայացնող հասկացություններ են, առավել ևս քաղաքականության մեջ պետք է ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել մարդկանց ճակատագրերը տնօրինելու գործին և թույլ չտալ, որպեսզի հաղթի հիվանդ բանականությունը: Այսօր այնքան է քաղաքականացված մեր հասարակությունը, որը բոլորն էլ հասկանում են քաղաքականության դաժան, հիշաչար և անբարո լինելու հանգամանքը: Այո, քաղաքականությունը դաժան խաղ է, սակայն մարդ-լի-

դերը հենց այստեղ է, որ հատուկ առաքելություն ունի այդ խաղի մեջ, որի գլխավոր դերակատարներից է նաև ինքը՝ զերծ պահելու ժողովրդական զանգվածները արհավիրքներից և կարողանա դիմադրություն ցույց տալու իր «ես»-ը և իր դեմքը պահպանելու համար, միաժամանակ ապահովելով իր ընտրազանգվածի պահանջների բավարարումը:

Յուրաքանչյուր մարդ իր էությամբ փառասեր է, և չկա մեկը, որը չձգտի դրան: Երբեմն մտածում ես, որ իշխանության հասնելու և ղեկավարելու ձգտումը առաջին հերթին գալիս է հենց այդ թուլությունից:

Ժամանակին, երբ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Ուինստոն Չերչիլը հանդիսանում էր Լորդերի պալատի պատգամավոր, պառլամենտի ճեմասրահում մի երիտասարդ պատգամավորի խոստովանել է, որ այսքան պայքարելու և իշխանության հասնելու իր ցանկությանը դրդել է միայն <<փառասիրությունը>>:

Այն լիդերը, որը նաև իշխանության է հասնում իր անունը պատմության էջերում դրոշմելու համար, նրա մոտ ժամանակի ընթացքում որոշ զգացմունքներ կարող են հաղթահարվել, փառասիրական մոտեցումները թուլանալ և ագահության չափը նվազի ուստի այդպիսի լիդերը կարող է պաշտելի անհատականություն դառնալ իր ժողովրդի համար: Վերջապես պետք չէ այդքան քարկոծել փառասիրական նկրտումները լիդերների կողմից, որովհետև մարդը պետք է նաև իմանա իր արժեքը, գնահատի ինքն իրեն, որպեսզի գնահատվի նաև ուրիշների կողմից:

Յուրաքանչյուր ժողովուրդ իր առաջնորդից առաջին հերթին սպասում է անկեղծություն, և որքան էլ ժողովուրդը իմաստուն լինի և հասկանա կառավարող շրջանակներում ընթացող քաղաքական խաղերի և խարդավանքների գոյության մասին, այն խաղերի, որը կարող է իրականացվել նաև իր ընտրյալի լիդերի կողմից, բայց և այնպես իր առաջնորդի անկեղծությունից ելնելով կցուցաբերի զսպվածություն և համբերատարություն:

Ճիշտ է, լիդերը կառավարելու ընթացքում շատ դժվարությունների հանդիպելու պատճառով պետք է համագործակցի օլիգարխների, մագնատների և եթե հարկն է նույնիսկ մաֆիայի հետ, սակայն ունենալով իր ձեռքում երկրի ամենահզոր և կարևոր ռեսուրսները՝, բանակ, ոստիկանություն, բանտային համակարգ, տնտեսական դաշտ և այլն, դրանք պետք է օգտագործի վերը նշված կազմակերպությունների կողմից չկլանվելու և ժողովրդի բարեկեցությունը ապահովելու համար: Այս իմաստով շատ բարձր պետք է գնահատել հատկապես ԱՄՆ-ի նախագահ ֆրանկլին Ռուզվելտի նման քաղաքական գործչին:

Ամերիկացիների կարծիքով նա այն լիդերն է, որին կարելի է վստահել բոլորին անհանգստացնող պրոբլեմների լուծումը, և չնայած իր քաղաքականության ուղղության փոփոխություններին՝ պահպանեց բնակչության աջակցությունը: Իրոք Ռուզվելտը ֆենոմենալ անհատականություն էր, որը տնտեսագետներից և

ֆինանսիտներից կազմված մի քանի մարդկանց խմբով, ստեղծվեց «ուղեղային տրեստը», որի շնորհիվ կարողացավ բազում տնտեսական բարեփոխումներ իրականացնել բավարարելով և ժողովրդի պահանջները (սոցիալական մի շարք խնդիրների լուծում), և միաժամանակ կարողացավ մագնատներին համոզել իր գործելաոճի և այդ բարեփոխումների արդյունավետությունը, որը կարող էր նրանց շահույթ խոստանալ: Այսինքն Ռուզվելտը հասկանալով երկու կողմերի ուժն ու անհանդուրժողականությունը այնուամենայնիվ իր նուրբ և մարդասիրական քաղաքականության շնորհիվ կարողացավ լինել իր սկզբունքների և կայացրած որոշումների տերը: Լիդերների այս տեսակները, որոնք հանդիսանում են կառավարող էլիտան ղեկավարող և մարդկային ճակատագրորը տնօրինող անհատների, այնուամենայնիվ գտնում են, որ սոցիալական որ ոլորտներում էլ լիդերը դերակատարում ունենա, միևնույն է պետք է առաջին հերթին ուսումնասիրվի նրա մարդկային հատկանիշները, նրա անհատականությունը, նրա հոգեբանական ինքնահաստատումը և այլ մարդկանց, խմբերին՝ իր կամքը, ցանկությունները թելադրելու ունակությունը:

Քաղաքականությունը կրոնը, սպորտը, ամուսնական կյանքը և նմանատիպ այլ երևույթները, սոցիալական կյանքի այդ ձևերըէ լիդեր հասկացության հետ, ունեն անմիջական կապ:

Լիդերն այն մարդն է, որը իր հետևից տանում է ժողովրդական զանգվածներ (մարդկանց խումբ) ժամանակի և տարածության մեջ [1]:

Իսկ ու՞ր է տանում:

Քաղաքական գործիչները սովորաբար մարդկանց տանում են դեպի կարգ ու կանոնի, արդարության և գրեթե բոլոր քաղաքական ուժերը (կուսակցություններ, կազմակերպություններ և այլն) և դրանց առաջնորդները օգտագործում են օրենք, կարգ ու կանոն, մարդու իրավունքներ կարգախոսը:

Ինչպիսին պետք է լինի լիդերը, որը քարոզում է նման կարգախոս և միաժամանակ պայքար է մղում հանուն իշխանության:

Հետաքրքիրն այն է, որ նման գաղափարը լայն տարածում ունի անցումային փուլում գտնվող երկրներում, որտեղ քաղաքական գործընթացները անկանխելի իրավիճակներ են ստեղծում:

Շատ դեպքերում լիդերին համեմատում են ընտանիքի ղեկավարի հետ և որի ձեռնարկած խիստ միջոցները շատերի կողմից կարող են դիտվել մտահոգությունէ իր ժողովրդի, երկրի հենդեպ (ռուսական ասացվածք կա. «եթե չես ծեծում, ուրեմն չես սիրում»): Ինչպես կասեին հոգեբուժները, մարդիկ էպիլեպտիոդ կերտվածքով անհատականություններ են (էպիլեպտիոդ հոգեկան հիվանդ և նույնիսկ էպիլեպտիկ էր Պետրոս 1-ինը): Հիշաչարությունը և դաժանությունը օգնում է նման լիդերներին (շատ դեպքում աֆեկտի, ուղեկցությամբ) հասնելու իշխանության և պահպանելու, միաժամանակ ոչնչացնելու թշնամիներին:

Լիդերը դա հերոս է: Իզուր չէ, որ գրեթե բոլոր լիդերները իրենց մասին ունեցել են (կամ իրենց համար ստեղծել են) առասպելներ, առասպելներէ հերոսի մասին: Հերոսը պետք է երիտասարդ շրջանում շատ տանջանքներ կրի թշնամիների, անարդարությունների պատճառով և պարտավոր է մարտնչել նրանց դեմ (Լենինը, Ստալինը, Ելցինը - Ռուսաստանում, Լ. Տեր-Պետրոսյանը, Պարույր Հայրիկյանը - Հայաստանում, Ֆիդել Կաստրոն՝ Կուբայում, Նելսոն Մանդելան՝, ՀԱՀ-ում, Բրոզ Տիտոն՝ Հարավսլավիայում, Մաո Ցզե Դունը՝ Չինաստանում և այլն): Շատերը իրենց պայքարի ընթացքում անցել են զրկանքների, աքսորի, տանջանքների միջոցով:

Ժողովուրդը միշտ գնահատում է զրկանքներ կրած մարդկանց, ուստի հալածված քաղաքական գործիչները դառնում են երկրի նախագահ դառնալու ամենահավանական թեկանծուներ:

Հերոս-լրդերը նաև պետք է աղքատության միջով անցած լինի թեև այստեղ կարող են շատերը դեմ լինել այս մտքին այն պարզ պատճառով, որ ժողովրդավարական լեզվով ասած չտեսը անկուշտ է լինում և դրանից կարելի է հետևություններ անել:

Միաժամանակ լիդերը պետք է հեռավոր շրջաններից հայտնվի: Պատճառն այն է, որ տեղում ծնված, մեծացած և գործունեություն ծավալած լիդերը տեսանելի է բոլորի համար՝ իր ամբողջ էությամբ և նա կարող է մարդկանց մոտ անվստահություն ներշնչել:

Շատ լիդերներ եկել են պրովինցիաներից, որոնց կենսագրության, կրթության, բարոյական հատկանիշների վերաբերյալ ժողովուրդը տեղեկությունների չի ունեցել. ուստի նման հանելուկային կեցվածքով լիդերները ավելի ամուր դիրքերում են գտնվել և ուժեղ իշխանություն են ունեցել: Այդպիսի լիդերներ են եղել՝ Ստալինը, Հիտլերը, Նապոլեոնը և այլ առաջնորդներ:

Լիդերը դա մարտիկ է, որը գնում է մինչև վերջ: Նա պետք է շատ բաների ընդունակ լինի, ինչպես նաև կարողանա երկար և էմոցիոնալ խոսել, համոզել (Կաստրո, Լենին): Այդպիսի հմտություն ցուցաբերում էին գրեթե բոլոր հանրահայտ առաջնորդները, որոնք ժամերով կարող էին արտահայտել այնպիսի ֆրազներ, որոնք անմիջապես ներգործություն էին ունենում զանգվածների վրա, օրինակ՝ կարգ ու կանոն, արդարություն, ժողովրդավարություն, ոչ դիկտատորին և այլն:

Լիդերի տիպաբանությունը որոշելիս կարողանում ես ճիշտ կանխատեսումներ անել և տրամաբանել, թե նման լիդերի վարքաբանության շնորհիվ ինչպես կգնա քաղաքական գործընթացը, ինչպիսի քաղաքական որոշումներ կկայացվեն և վերջապես ինչպիսի քաղաքական և սոցիալական համակարգ կձևավորվի քո երկրում:

Ռուսաստանի Հոգեբանության ակադեմիայի նախագահ Իգոր Վագինի կողմից տրվել են լիդերի հոգեբանական տիրպերը, գտնվելով որ յուրաքանչյուր տիպի անհատի մոտ կան ուժեղ և թույլ կողմեր և նա իր միտքը ավելի

պարզեցնելու համար կազմել և հետևյալ աղյուսակ [2].

Ն.Մաքիավելլին լիդեր է համարում նրանց, ովքեր կառավարում իրականացնելիս հաշվի են առնում հետևյալ սկզբունքներ:

- Սեփականության, ընտանիքի և յուրաքանչյուր քաղաքացու պատվի վստահելի պաշտպանվածություն այլ քաղաքացիների ոտնձգություններից
- Անհրաժեշտ է ուժեղ բանակ՝ պետությունը ներքին և արտաքին թշնամիներից պաշտպանելու համար.
- Իրավունքի ռացիոնալ համակարգի ստեղծում, յուրաքանչյուր քաղաքացու պետք է լուսավորել (կրթել) իրավական, քաղաքական գիտելիքներով
- Կրթական համակարգի արժևորում հանուն պետական շահի
- Տնտեսական ազատ հարաբերություններ, աշխատանքը հանուն պետության և անձնական բարօրության պարտադիր է, բայց պետությունը պարտավոր է թույլերին գոյության կայուն երկամուտներ սպահովի:

Քաղաքացիների ընդունակությունների ռացիոնալ ուսումնասիրում, քանզի լավ կառավարողը հաշվարկում և հենվում է կառավարելու իր ունակության վրա, իսկ լավ պետությունն այն է, որտեղ մարդու որակը համապատասխանում է նրա ընդունակություններին:

ՏԻՊԵՐ	ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	ՊՈՏԵՆՑԻԱԼ ՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
վերլուծող	1.կշռադատվածություն 2.հիմնավորվածություն 3.կարգապահություն	1.Որոշումներ ընդունելու պահին բացառում է զգացմունքները 2.Գնում է շատ հեռուն, ձգտում է փառքին 3.Ճկունության բացակայություն և ավելորդ պահանջկոտություն
բարյացակամ	1.Պատրաստ է ցույց տալու աջակցություն 2.Համբերատարություն 3.Դիվանագիտություն	1.Ղեկավարում է այլ մարդկանց ցանկություններով 2.Ժամանակավոր սահմաններ չի դնում և գործը իր ավարտին չի հասցնում 3.Իր ինքնավստահության և անկեղծության մեջ հայտնաբերում է թերություններ

վերահսկող	1.Անկախություն 2.Վճռականություն 3.Նպատակասլացություն	1.Դժվարությամբ է ընդունում համատեղ գործունեությամբ մասնակցությունը 2.Չի հետաձգում որոշման ընդունման այլ հնարավոր տարբերակները քննարկելու համար 3. Ճնշող է, չափից ավելի է կենտրոնանում «իր կարծիքի վրա»
արտահայտվող	1. Շփվող, հաղորդակ-ցվող 2. Խանդավառվող 3.Օժտված է հարուստ երևակայությամբ	1. Չափից ավելի է խոսում 2. Չափից ավելի է ձգտում գնալ առաջ 3. Երազող է, ոչ բավարար ձևով է իրատես

Լիդերության տեսության մշակման վրա մեծ ազդեցություն ունեցավ Ֆ. Նիցշեի (1844-1900) ստեղծած Գերմարդը: Նա սովորական մարդկանցից տարբերվում է իր կենսական ուժով և իշխելու կամքով: Այդպիսիք առողջ են, զարգացած, գեղեցիկ, ուժեղ կամք ունեն և որպես Գերմարդ, իշխում են մարդկանց վրա: Ըստ Նիցշեի նա կարող է առաջնորդել մարդկանց և ուղիներ մատնանշել հասարակության կառավարման համար: Գերմարդու գոյությունն անհրաժեշտություն է, քանզի մարդկության նպատակը միայն նրա բարձրագույն ներկայացուցիչներն են հասկանում ... Մարդկությունը պետք է անխոնջ աշխատի, որպեսզի մեծ մարդկանց ծնի, միայն դա է նրա խնդիրը և ուրիշ ոչինիչ ...

Գոյություն ունի իրադրություն գործառույթ կատարող իրավիճակային լիդերի տեսություն: Կոնկրետ իրավիճակում լիդեր է դառնում նա, ով լիովին հասկանում է, ինչ է պահանջվում իրենից: Հենց այս մեխանզիմում են հանդես գալիս ուժեղ, հանճարեղ կամ նույնիսկ թույլ լիդերները: Յուրաքանչյուր իրադրություն տարբեր կարգի և ոճի լիդերների կարիք ունի: Հետևաբար, յուրաքանչյուր իրադրություն ծնում է իր լիդերը:

Լիդերության տեսության զարգացումն ընթանում է էվոլուցիոն ճանապարհով և ենթադրում է.

Ա. Լիրդերի ի հայտ գալով ուղեկցվող հասարակական շարժումներ

Բ. Կուսակցությունների կազմավորում, դրանց ծրագրի, կազմակերպչական սկզբունքների մշակում.

Գ. Կուսակցական և քաղաքական հարաբերությունների հիերարխիկ ձևավորում

Դ. Բոլոր մակարդակներում իշխանական հարաբերություններում տեղի

համար մղվող պայքարում կուսակցությունների մասնակցությունը երկրի կառավարման գործընթացներին, որի հետևանքով նրանց լիդերները դառնում են երկրի կառավարիչներ.

Ե. Կառավարման ընթացքում բարոյական սկզբունքների պահպանում և շահերի ներդաշնակում:

Թագադրված և թագադրման ձգտող քաղաքական լիդերների տիպաբանության դասական բաժանումը կատարել է Մաքս Վեբերը (1864-1920): Բաժանման հիմքում ընկած է իրականացրած իշխանության լեգիտիմության (օրինականության) տրամաբանությունը: Մ. Վեբերը տարբերակել է լիդերի երեք տիպ՝ ավանդական, խարիզմատիկ և ռացիոնալ-իրավական (Լեգալ):

Ավանդական տիպի լիդերը գործում է ավանդույթի շնորհիվ: Հիմնված է զարգացման որոշակի մակարդակում ձեռք բերված իշխանությանն անվերապահ ենթարկվելու հոգեբանության վրա:

Խարիզմատիկ (հուն.chrisma-աստվածային, տեսլածին) – Առաջնորդներին մարդկային բացառիկ հատկություններով օժտելը և նրանց մարգարեացումը կոչվում է խարիզմ: Այս տիպի լիդերը հատուկ է հեղափոխական փոփոխություններ ապրող և արդիականացնող հասարակությանը: Օտվելով խարիզմատիկ վիճակից կառավարողը «Ես»-ը հաստատում է պաշտամունք՝ իր իսկ անձի և իշխանության հարաբերությունների արժեքային չափորոշիչների հիմքում: Ըստ Վեբերի խարիզմատիկ են համաշխարհային կրոնի հիմնադրիներից Սոլոնը, մեծ զորավարներ Ալեքսանդր Մակեդոնացին, Հուլիոս Կեսարը, Նապոլեոնը, Չինգիզ Խանը: Իսկ ըստ Մ. Մարգարյանի Ֆ. Ռուզվելտի, Շարլ Դը Գոլի, Մ. Թեթչերի, Ռ. Ռեյգանի խարիզման արդյունք է նրանց կառուցողական գործունեության [4]:

Քաղաքական պրակտիկան ապացուցում է, որ ամբոխի օգնությամբ իշխանության հասած լիդերները կառավարումն իրականացնելիս կանխավ դատապարտված են կամ կործանման, կամ փոխակերպման են ենթարկվում դեպի ռացիոնալիզմ: Ռացիոնալ-իրավական (Լեգալ) լիդերի տիպը հիմնված է գործող օրենքի, նրա արդյունավետության վրա [3]: Այդ տիպը բնութագրական է ժողովրդավարար պետությունների համար, որտեղ լիդեր-բյուրոկրատը կամ «մինի» լիդերը հանդես է գալիս ոչ թե որպես քաղաքական գործընթացի որպիսությամբ պայմանավորված պատահական դրսևորում, այլ պետական իշխանության իրականացման խաղային տրամաբանության խորհրդանիշ:

Այստեղ գործում է լիդերի և պետության նկատմամբ քաղաքացիների վստահությունը և սահմանադրական իրավունքը: Լիդեր բյուրոկրատը բնորոշ է զարգացած արդյունաբերական երկրներին և կառավարման համար ունի անհրաժեշտ տվյալներ՝ գիտելիք, կրթություն, սոցիալական ցենզ [5]:Քաղաքական համակարգի կայունությունը հասարակության քաղաքական գիտակցություն ու կուլտուրան իշխանատենչ անհատի ավտորիտար տիպին դրդում են ժողովրդավար կամ լիբերալ գործունեության:

Այս մեխանիզմի երկվությամբ պայմանավորված առավել հստակ բացահայտվում է քաղաքական լիդերի տիպաբանության բազմերանգ բնութագիրը: Այդ ամբողջության մեջ հանդես են գալիս սադիստ, մազոխստ, սադոմազոխիստ, նարգիզ, խարիզմատիկ տիպերը, որոնք բազում սիմբիոզների հնարավորութուն են ստեղծում: Սիմբիոզն անհատի որոշակի տիպի միությունն է մեկ այ; որակի հետ, երբ յուրաքանչյուր կողմը խաթարում է սեփական «Ես»-ը ամբողջությունը, և երկուսն էլ հայտնվում են միմյանցից բացարձակ կախվածության մեջ [6]:

Սադիստները՝ ծագել է «սադիզմ» հասկացությունից, որնց առաջացել է ֆրանսիացի գրող մարկիզ դը Սադի անունից (1740-1814), կյանքի բոլոր բնագավառներում (էրոտիկայից մինչև քաղաքականություն) առանձնանում են իրենց դաժանությամբ, այլոց տանջանքներից և տառապանքներից հաճույք ստանալու անբնական կրքով: Սադիստի համար իշխանությունը հոգեբանական պահանջմունք է, որը թույլ է տալիս ազատվել սեփական թերարժեքությունից՝ սեփական կամքն այլոց պարտադրելով: Սադիստը կախված է իրեն ենթարկվող մարդուց, այնպես, ինչպես վերջինիս կախում ունի նրանից:

Մազոխիստ տիպի՝ առաջացել է ավստրիացի ռոմանիստ Զախեր Մազոխի անունից, անհատները առաջնորդվում են ինքնատանջանքի փիլիսոփայությամբ (հատկապես սեռական հարաբերություններում):Մազոխիստը խոնարհվում է գերազանցող ուժի առջև և դառնում է «Ես»-ի գերին: Դիմում է փախուստի մեկուսացման և մենության անտանելի զգացումից՝ դարձնելով իրեն ուրիշ մարդու անբաժանելի մասը, որը ուղղություն է տալիս նրան, ղեկավարում է, պաշտպանում, ասես դառնում է նրա կյանքը և թթվածինը: Մազոխիստը որոշումներ չի ընդունում ռիսկի, երբեք մենակ չի լինում, բայց և անկախ էլ չի լինում: Նա զուրկ է անկախությունից և դառնում է իրենց անկախ գոյություն ունեցող ինչ որ մեկի կամ բանի կցորդ: Դրանով իսկ նա զուրկ չէ ստեղծարար գործունեությամբ կյանքի խնդիրը լուծելու ունակությունից:

Սադոմազոխիստը խոնարհվում է գերազանցող ուժի առջև և միաժամանակ իրենից թույլի հետ առնչվելիս անհաղթահարելի ցանկություն է ձեռք բերում նվաստացնել և շահագործել նրան և բնականաբար նման վարքը ցույց է տալիս, որ այն թուլության նշան է, ոչ թե ուժի: Սադոմազոխստը սովորաբար տարբեր օբյեկտների նկատմամբ իրենց վերաբերմունքը կարգավորում են կամ սադիստորեն, կամ մազոխիստորեն: Հիտլերը որպես այդպիսին, նախ ժողովրդի նկատմամբ հանդես եկավ, նախևառաջ, որպես սադիստ, սակայն սեփական ճակատագրի, պատմության, բնության, բարձրագույն ուժի հանդեպ՝ իբրև մազոխիստ: Նրա վերջը լիակատար ավերվածության ֆոնի վրա կատարված ինքնասպանությունն էր, նույքան բնորոշ, որքան նրա հաջողության երազանքը՝ լիակատար իշխանության հասնելը:

Նարգիզները [8] զերծ են ուրիշին սիրելու ընդունակությունից, նրանք ինքնասիրահարված են և նրանց հուզում է միայն սեփական «ես»-ը: Նմանօրինակ

անհատը բարիք է ստեղծում միայն իր համար և հաճույք ստանում ոչ այն ժամանակ, երբ տալիս է, այլ երբ վերցնում է: Արտաքին աշխարհը նարգիզ լիդերը գնահատում է շահի հարաբերակցությամբ՝ Ինչ կարող եմ վերցնել ձեզանից, ինչ կարող եք դուք ինձ տալ:

Լիդերության խարիզմատիկ դրսևորմանը առավել կարևոր նշանակություն է տրվում: Այն հստակ պատկերացնելու համար բավական է միայն նայել պատ_ մության էջերը և պատկերացում կազմել բազմաթիվ լիդերների էությունը, նրանց գործելաոճին, վերջապես ֆենոմենալ հատկություններին:

Խարիզմատիկ դրսևորումները հնարավոր են բոլոր հասարակություններում և առանձնահատուկ անհրաժեշտություն են անցումային հասարակությունների համար:

Այսօր թեև մեր երկիրը վարչական այն մասնատվածությունը չունի, ինչ-պիսին էր իտալացի մտածող, քաղաքագետ Ն. Մաքիավելլին (1469-1527) երա-զում էր Իտալիան տեսնել միավորված (նրա օրոք Իտալիան բաժանված էր տարբեր ինքնիշխան պետությունների), միաժամանակ ցանկանում էր, որն այն կառավարվեր ուժեղ տիրակալի կողմից: Նա արդարացնում էր տիրակալի կողմից տարվող դաժան վերաբերմունքը իր հպատակների նկատմամբ՝ պատ-ճառաբանելով, որ ամուր իշխանություն ունենալու և այն պահպանելու համար պետք է լինել խստապահանջ [7]:

Հայաստանն այսօր ինտեգրացման գործընթացում է գտնվում, առաջացել են գլոբալացման խնդիրներ, սակայն գտնում ենք, որ դեռևս վաղ են մեր եր-կրի համար կատարվող արմատական փոփոխությունները, մի երկրի որտեղ նոր է ձևավորվում քաղաքական մշակույթը, և հայերը իրենց ազգային արժեք-ները չվերապրած, չվերհաստատված լինելու պատճառով իրավունք չունեն այլ արժեքներ միանգամից ընդօրինակելու:

Այստեղ կարծում ենք մեծ է դերը այն լիդերի, որը ղեկավարում է այս եր-կիրը և այս ժողովրդին: Գտնում ենք, որ լիդերը անձամբ պետք է ղեկավարի գործադիր իշխանությունը, հաստատի օրենքի դիկտատուրա և անի ամեն ինչ, որպեսզի հսկողություն իրականացվի այդ օրենքների կատարման համար: Պետք է լինի խստապահանջ, և եթե հարկն է նույնիսկ դաժան կառավարման մակարդակում գտնվող յուրաքանչյուր չինովնիկի նկատմամբ և ամենա_ կարևորը ժողովրդի հանդեպ ցուցաբերի անկեղծություն: Քանզի հարգելով ժողովրդին, կհարգվի նաև լիդերը:

Այստեղ հարկ է մեջբերել Մաքիավելլու խոսքերը, որ նա արտահայտել էր ֆլորենցիայի իշխան Լորենցիո Մեդիչիին ուղղված նամակում:

Ինչպես նկարչին բնականաբար նկարելիս անհրաժեշտ է իջնել դաշ-տավայր, որպեսզի կարողանա հայացքով ընդգրկել բլուրներն ու լեռները, և բարձրանալ լեռը, որպեսզի կարողանա հայացքով ընգրկել դաշտավայրը, այնպես էլ այստեղ՝ որպեսզի հասկանաս ժողովրդի էությունը, պետք է լինես տիրակալ, իսկ տիրակալի էությունը հասկանալու համար անհրաժեշտ է լինես ժողովրդի մեջ:

Օգտագործված գրականություն

1. Вагин И.О., Власть, денги сила. Психология выживания в современной России.М., РИПОЛ КЛАССИК, 2002г էջ 90-93.
2. Նույն տեղում էջ 94-96.
3. Մարգարյան Մ., Քաղաքական լիդերություն, Երևան «Պեական ծառայություն» Հրատ., 2001թ.
4. Вагин И.О., Власть, деньги сила. Психология выивания в современной России.М., РИПОЛ КЛАССИК 2002г էջ 9-11.
5. Ольшанскии Д.Политическая психология. СПБ. Питер, 2002г.
6. Սիմբիոս (հուն. համակեցություն) - երկու տարատեսակ օրգանիզմների համակեցություն՝ միմյանցից փոխադարձ օգուտ քաղելով:
7. Макиавелли Н.Государь.Пер. С.М. Планета, 1990г.
8. Նարգիզ (հուն.)- Կեփսիոսս աստծո և Նայադ Լիբիոպեի որդին, որը գետի ջրերում տեսնելով իր արտացոլանքը, սիրահարվում է և մեռնում անհասանելի սիրուց: Աստվածները գեղեցիկ պատանուն վերածում են նույնանուն ծաղկի:

РАФИК СИРУНЯН. ПРОБЛЕМА ЛИДЕРСТВА ПОЛИТИКА ПЕРЕХОДНЫХ ОБЩЕСТВ В ПРОЦЕССАХ. *Армения сегодня находится в процессе интеграции, где только формируется политическая культура, велика роль лидера, который ведет за собой эту страну, этот народ. Мы считаем, что лидер должен лично возглавить исполнительную власть, установить диктатуру закона и сделать все возможное для контроля за исполнением этих законов. Должна быть строгая, если надо, для каждого чиновника на уровне жестокого правления, самое главное - показать искренность к народу. Потому что, уважая людей, лидер будет уважаем. Каждый народ ждет от своего лидера в первую очередь искренности, каким бы мудрым ни был народ, понимания существования политических игр, интриг в правящих регионах, игр, в которые может играть выбранный ими лидер, но и проявлять сдержанность и терпение в силу искренность их лидера.*

RAFIK SIRUNYAN. THE LEADERSHIP ISSUE POLITICS OF TRANSITIONAL SOCIETIES IN PROCESSES. *Leaders who are inclined to lead, manage and, ultimately, make decisions, must have a solid foundation of ideas about conscience and justice. At first glance, these two words seem very old-fashioned in the current conditions, but I think that they should not be considered obsolete, as these are important concepts, especially in politics, you need to take responsibility for managing the fate of people, not to allow the sick mind wins. Every nation expects sincerity from its leader in the first place, no matter how wise the people are, to understand the existence of political games, intrigues in the ruling regions, games that can be played by their chosen leader, but also show restraint, patience due to the sincerity of their leader.*

ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՈՍԿԵԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մկրտիչ Մուրադյան

Երևանի Հայբուսակ համալսարան

Ամփոփագիր. *Հայաստանը 5-րդ դարում կարողացավ հասնել մշակութային այնպիսի վերելքի, որն իրավամաբ անվանվում է Ոսկեդար: Ներկայացված և քննարկված են այդ շրջանում Հայաստանում, հատկապես Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և Մովսես Խորենացու իրավաքաղաքական հայացքները:*

Հիմնաբառեր. *Մեսրոպ Մաշտոց, Մովսես Խորենացի, գրերի գյուտ, Աստվածաշունչ, ավատատիրական իրավունք*

Հայկական լեռնաշխարհը հանդիսացել է մարդկության մշակույթի հնագույն օրրաններից մեկը, իսկ հայ ժողովրդի պատմության մեջ հինգերորդ դարը հետաքրքրական մի ժամանակաշրջան է՝ հարուստ քաղաքական-հասարակական կյանքով և ճոխ ստեղծագործական աշխատանքով արվեստի, գրականության, փիլիսոփայության և այլ բնագավառներում [1]: Հինգերորդ դարը հայ ժողովրդի ինքնագիտակցության և մշակույթի զարգացման ու վերելքի աննախընթաց շրջան է: Չորրորդ դարի վերջերից արդեն հայ ժողովրդի համար ստեղծվել էր քաղաքական ու սոցիալական այնպիսի իրադրություն, որ հրատապ անհրաժեշտություն դարձավ բոլոր միջոցներով հայոց լեզվով գրականություն ստեղծելու հարցը:

Հինգերորդ դարի սկզբին՝ 405 թ., ստեղծվեց հայկական գիրը: Անմիջապես ծայր առավ մշակութային մի հզոր շարժում, որն ընդգրկեց հոգևոր կյանքի բոլոր ոլորտները, չնայած հայոց գահը երերում էր արտաքին ու ներքին հարվածներից, և Հայաստանն ապրում էր ճակատագրական պահեր:

Այս աղետալի, ճակատագրական տարիներին առաջավոր ուժերը չէին կարող մի կողմ քաշվել և հայոց բախտը հանձնել քաղաքական հողմերին: Հայկական առաջադեմ ուժերը՝ ազնվականության ու եկեղեցու առավել խոհուն և հայեցի մտածող մարդիկ դժվար մթնոլորտում հղանում են հայոց գրերի ստեղծման ծրագիրը: Այս մտահղացումն ուներ հատկապես քաղաքական ու հասարակական մեծ խորհուրդ: Այն, ինչ չհաջողվեց նվաճել սրով, արյունով, դիվանագիտությամբ, ներքին տնտեսական քաղաքականությամբ ու բարեփոխումներով, նույնիսկ նահատակությամբ, հաջողվեց նոր ուժերին՝ Վռամշապուհ թագավորին, Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին: Հայոց երկրի թշնամիները չզգացին էլ, թե ինչպես հոգևոր մեկ հղումով հայ մեծերը ստեղծում են գոյության ամենազորեղ խարիսխներից մեկը՝ գիրն ու գրականությունը [2]:

Հայոց գրերի ստեղծումը պետական-քաղաքական նշանակության գործ էր: Այն իր բնույթով դուրս է գալիս աշխարհիկ և հոգևոր ֆեոդալականության դասակարգային ձգտումների շրջանակներից: Հայերեն գրեր և հայերեն լեզվով գրականություն ստեղծելու պատմական մեծագործությունը կապած է հայ ժողովրդի անմահ զավակ Մեսրոպ Մաշտոցի անվան հետ [3]: , իսկ հայ պատմագրության գագաթնակետը հանդիսացավ Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոց» երկը, որը մինչ օրս համարվում է հայ ժողովրդի հնագույն պատմության կարևոր սկզբնաղբյուրներից մեկը:

Մեսրոպ Մաշտոցի իրավաքաղաքական հայացքները

Մեսրոպ Մաշտոցը՝ հայ գրերի ստեղծողը, առաջին թարգմանիչը, առաջին ուսուցիչն ու հայալեզու դպրոցի հիմնադիրը, ծնվել է պատմական Հայաստանի Տարոն գավառի Հացեկաց գյուղում, կիսազատ գյուղացու ընտանիքում: Մաշտոցի ծննդյան տարին ընդունված է համարել 362 թ.: Վախճանվել է 440թ. փետրվարի 17-ին [4]: :

Մեսրոպն իր կատարած գործով ամենամեծն է մեր պատմական հերոսների մեջ: Դրա համար էլ մի բացառիկ, գոնե մեզանում չեղած բախտի է արժանացել: Նա առաջին հայ գործիչն է, որ ականատեսի ձեռքով գրված կենսագրություն ունի [5]:

Մեսրոպ Մաշտոցը դարձավ հայ ժողովրդի հինգերորդ դարի մտավոր ու հոգևոր աննախադեպ շարժման՝ ուսումնական, դպրոցական կյանքի, թարգմանական ու ինքնուրույն գրականության ստեղծման, հեթանոսության դեմ ծավալված կռվի, ազգային ինքնության պահպանման համար մղվող ողջ պայքարի, ազգային գիտակցության մեծ վերելքի գլխավոր ոգեշնչողն ու առաջնորդ [6]:

Նա իր ժամանակի հայրենասեր, կրթված, զարգացած այրերից էր, ակտիվ քաղաքական և եկեղեցական գործիչ, և առաջիններից էր, որ մտատանջվեց հայ գրի ու գրականության ստեղծման հարցով: Նա հեռանում է արքունիկից, թողնում աշխարհիկ կյանքը և նվիրվում քրիստոնեական գաղափարախոսության տարածմանը: Իր քարոզչական գործունեության ընթացքում Մաշտոցը համոզվում է, որ ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ ելքը հայ ազգի համար նշանագրեր ստեղծելն է [7]:

Վերցնելով մի խումբ երիտասարդների՝ Մեսրոպը դիմեց դեպի այն ժամանակվա ուսումնական ու գիտական մեծագույն կենտրոններից մեկը՝ Եդեսիա: Հետը տարած աշակերտների մի մասին պահելով իր մոտ՝ մյուս մասին ուղարկեց Սամոսատ՝ հունական կրթություն ստանալու համար: Նա գիտակ մարդկանց օգնությամբ որոնումներ կատարեց Եդեսիայի հռչակավոր դիվանատանը, որտեղ պահվում էր հսկայական գրականություն: Այստեղ զանազան գրքեր կարդալով՝ նա ուսումնասիրեց տարբեր լեզուների այբուբենները, ծանոթացավ դրանց կառուցվածքին, տառերի ձևերին, գրության սկզբունքներին, որոնց իմացումն անհրաժեշտ էր հայկական գրեր ստեղծելու

համար: Եվ այս բոլորից հետո ձեռնամուխ եղավ հայոց գրերի ստեղծմանը: Ծանոթ լինելով արդեն բազմաթիվ այբուբենների՝ Մեսրոպը հորինեց հայերենի այբուբենը՝ ստեղծելով միանգամայն յուրահատուկ տառեր՝ հետևելով գրության լավագույն սկզբունքներին [8]:

Նրա ստեղծած հայկական այբուբենի հիմնական սկզբունքները հետևյալներն են՝

1. մեկ տառին մեկ հնչյուն, մեկ հնչյունին մեկ տառ համապատասխանությունը

2. աջընթաց հորիզոնական գրություն, իր ժամանակի այբուբեններից շատերը ունեին ձախընթաց գրություն, նա ընտրեց աջընթաց գրությունը, որի առավելությունն ակներև է.

3. տարորոշիչ նշանների բացակայություն, իր ժամանակի այբուբեններից շատերը, այդ թվում և հունարենը, օգտագործում էին տառերի տակ, վրան կամ կողքին դրվող զանազան նշաններ՝ տառերի արտասանությունը ճշտելու, ձայնավորները որոշելու և նման հանգամանքները հայտնի դարձնելու համար: Մեսրոպը խուսափեց այս կարգի նշաններով այբուբեն ստեղծելուց, և դա նրա ստեղծած այբուբենի առավելություններից մեկն է

4. ինչպես ամեն մի կենդանի լեզվի, այնպես էլ հինգերորդ դարի հայերենի համար, անշուշտ, բնորոշ էր հնչյունների զանազան արտասանություն տարբեր վայրերում՝ պայմանավորված մեծ տարբերություններով, որոնք այս կամ այն չափով խախտում էին միասնական արտասանությունը: Մեսրոպը կարողացավ այդ տարբերումությունները հաղթահարել և ներկայացնել միասնական հնչյունական համակարգ՝ ընդունելի բոլորի կողմից:

Այս հիմնական սկզբունքները հնարավորություն տվեցին ստեղծելու հայերենի համար լիակատար այբուբեն, որը ոչ միայն բավարարում էր ժամանակի հայերենի պահանջները, այլև ստեղծումից հետո անցած 1600 տարիների ընթացքում որևէ էական փոփոխության ենթարկելու կարիքը չունեցավ, իսկ եղած փոփոխությունները վերաբերում են հայերենի մեջ ժամանակի ընթացքում ավելացած կամ եղած հնչյունները արտահայտելու համար հավելյալ գրերին (օ, ֆ), որոնք միջին դարերում մտել են հայոց այբուբենի մեջ և ավելացվել վերջում:

Քիչ ժողովուրդներ կան աշխարհում, որոնք հարուստ տվյալներ ունեն իրենց այբուբենի ստեղծման ու գրականության սկզբնավորման հանգամանքների մասին: Բարեբախտաբար Մաշտոցի կյանքի ու գործունեության մասին պահպանվել են արժանահավատ հարուստ սկզբնաղբյուրներ: Հասել է մեզ նրա ավագագույն աշակերտներից մեկի՝ Կորյունի գրած «Վարքն» իր ուսուցչի մասին: Տվյալներ կան Ղազար Փարպեցու և Մեվսես Խորենացու «Պատմություններում» [9]:

Գրերը վերջնականորեն ձևավորելուց հետո Մեսրոպը իր աշակերտների հետ ձեռնամուխ է լինում Աստվածաշնչի թարգմանությանը: Թարգմանությունը կատարում է երկու աշակերտների՝ Հովհաննեսի, որ Եկեղյաց գավառից էր

(այժմ Երզնկա) և Հովսեփի հետ, որ Պաղնական տնից էր [10]:

Այնուհետև Մեսրոպն աշակերտների հետ Սամոսատից գնում է ասորաց եպիսկոպոս Բաբիլասի մոտ, նշանագրերը նրան ներկայացնում և իր աշակերտների հետ վերադառնում Հայաստան:

Մեծ իրարացման մեջ է հայոց մայրաքաղաք Վաղարշապատը: Քաղաքը դուրս էր թափվել իր դռներից: Արևելքը գիտեր առանձին աղմկալի հանդիսության տեսք տալ ուխտագնացություններին, բայց այս հանդեսը սովորական ուխտագնացություն չէր: Երկրի ամբողջ փայլը նրա հետ է: Այնտեղ են քաղաքում գտնվող նախարարները, որոնք մի ամբողջ գունդ են կազմում, այնտեղ է և Սահակ կաթողիկոսը եկեղեցական դասի հետ: Վերջապես ինքը թագավորն էլ դուրս է եկել պալատից և գնում է ժողովրդի հետ [11]:

Այստեղ նրան դիմավորեցին մեծագույն խանդավառությամբ: Հայրենիք վերադառնալուց հետո Մաշտոցը և Սահակ Պարթևը թարգմանեցին Աստվածաշունչը գրեթե ամբողջությամբ, ինչպես նաև թարգմանեցին եկեղեցական մի շարք գրքեր: Բացի դրանից՝ Մաշտոցի կողմից ստեղծվեցին մի շարք ինքնուրույն երկեր, այդ թվում «Ապաշխարության շարականներ», «Հաճախապատում ճառք» ժողովածուն, Պրոկղ եպիսկոպոսին ուղղված թուղթը և այլն: Մեսրոպի մոտ մեծ գաղափար էր հղացել՝ հնարել հայերեն գրերը և հիմք դնել հայ գրականությանը՝ հակառակ զանազան դժվարությունների և արգելքների: Նա վերջապես հաջողվեց հորինել հայերեն այբուբենը և թարգմանել Աստվածաշունչը: Բայց պակաս կարևոր չէր այն տարածելը Հայաստանի պես ընդարձակ երկրի բոլոր գավառներում, որոնք լեռներով, ձորերով անջրպետված էին իրարից, սովորական կարգերի պատճառով հաճախ իրար թշնամի, հայկական, հունական, պարսկական երեք տարբեր կողմորոշմամբ միմյանց հակառակորդ, գրեթե առանձին ազգեր ու երկրներ էին ներկայացնում: Երիտասարդական ավյունով լի, գործի հաջողության հավատով լցված, խանդավառ ու եռանդուն այն անձը, որ այդ գործը կատարեց, նորից Մեսրոպն էր [12]:

Մեսրոպն ու Սահակը իրենց աշակերտների հետ շարունակում էին գրական, լուսավորական, թարգմանական բեղուն գործունեությունը: Փայտակարանում և Այրարատում ուսման ու թարգմանության գործը թողնելով իր պատրաստած փոխարինողների վրա՝ Մեսրոպը թագավորի ու կաթողիկոսի թույլտվությամբ մի խումբ օգնականներով մեկնեց Գողթն գավառը՝ իջևանելով իր նախկին դաստակերտում, ուր ապրել ու տքնել էին ճգնակեցությամբ: Նա §գավառի գյուղերում կարգեց սուրբ վանականներ¦ ապա եղավ Սյունիքում և Արցախում՝ ամրորեն դնելով լուսավորական գործունեության հիմքերը: Արցախում /Ամարասում/ բացեց առաջին հայալեզու դպրոցը [13]:

Վերին աստիճանի կարևոր դեր էին խաղում նաև արտաքին քաղաքական հանգամանքները: Մայրենի լեզվով գիրն ու գրականությունը Հայաստանի քաղաքական անկախության խախտված պայմաններում խոշոր դեր պետք է

խաղային հայ լեզվի և կուլտուրայի ինքնուրույնությունը պահպանելու գործում [14]: Նրա գաղափարներում արտահայտվել է այն դրույթը, որ հայ ժողովրդի մեջ քրիստոնեական կրոնի տարածումն ու արմատավորումը, հայ ժողովրդին լուսավորելը ոչ միայն կրոնական խնդիր է, այլ ունի նաև քաղաքական նպատակ, այն է՝ պատնեշ ստեղծել հայ ժողովրդի ձուլման քաղաքականությունը կանխելու համար: Մաշտոցն այդ խնդրի մասին արտահայտվում է ոչ միայն իր տեսական գաղափարներով, այլ նաև իր ակտիվ գործունեությամբ, որն իրականացնում է իր ամբողջ կյանքի ընթացքում: Նա դեմ էր բազմաստվածությանը, քանի որ Աստված միակն է, նա է ամեն ինչի արարիչը: Ըստ Մաշտոցի՝ պետության ստեղծման ահրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ Աստծո կողմից ստեղծված մարդիկ ժամանակի ընթացքում շեղվում են նրա պատվիրաններից և չարագործություններ կատարում:

Երկրի վրա կարգ ու կանոն, խաղաղություն և շենություն հաստատելու համար Աստված ստեղծել է թագավորներ, իշխաններ և դատավորներ: Նրանք կոչված են կարգավորելու գոյություն ունեցող հասարակական կարգերը: Այսպիսով, Մաշտոցը հանգում է այն հետևության, որ պետությունը պատմական կատեգորիա է, այն առաջացել է ժամանակի ընթացքում օրինականության հաստատման և օրինազանցներին պատժելու համար, պետությունը հասարակության զարգացման արդյունք է: Իշխանության ներքո գտնվողները պետք է հավատարիմ և հնազանդ լինեն, և եթե նրանք կամովին չեն կատարում Աստծո պատվիրանները, ուստի դրանց կատարումը մարդկանց պետք է պարտադրվի թագավորների կողմից: Իսկ ինչ վերաբերում է օրենքին, ապա այն պետք է հավասար լինի բոլորի համար, այսինքն՝ կողմ էր օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքին: Նա հատկապես քննադատում էր այն իշխանավորներին, որոնք՝ խախտելով Աստծո հանձնարարությունը, կատարում էին գողություն, կաշառակերություն և այլ չարագործություններ: Այսպիսի իշխանավորներին նա միայն Աստծո բարկությամբ և հանդերձյալ կյանքով էր սպառնում [15]:

Մաշտոցը հայ գրի ու գրականության, հայ մտավոր մշակույթի պատմության մեջ կատարել է բացառիկ ու անզուգական դեր: Նա եզակի դեմք է և հանդիսանում է հայ դպրոցի ու հայ գրական մշակույթի հանճարեղ հիմնադիրը [16]: Ազգային գրերի ստեղծումը կոչված էր նախ՝ ամրացնել հայ եկեղեցու և քրիստոնեական վարդապետության դիրքերը երկրում: Երկրորդ՝ յուրատեսակ պատնեշ ստեղծեց Սասանյանների կամակատար եկեղեցու դեմ: Երրորդ՝ խորացնել հայ եկեղեցու ազգային բնույթը լեզվի հիմքի վրա՝ հնարավորություն ընձեռելով հունական եկեղեցուց անկախ քաղաքականություն վարել: Հայկական գրերի ստեղծման գաղափարը ոչ թե հասարակական զարգացման անխուսափելի ծնունդ էր 4-5-րդ դարերի սոցիալ-տնտեսական, քաղաքական և քաղաքակրթական մեծ տեղաշարժերի բնական հետևանք [17]: :

Մովսես Խորենացու իրավաքաղաքական հայացքները

5-րդ դարի հայ-պատմական և իրավաքաղաքական միտքը արտացոլված է Կորյունի [18], Ագաթանգեղոսի [19], Փավստոս Բուզանդի [20], Եղիշեի [21], Մովսես Խորենացու [22], Ղազար Փարպեցու [23], երկերում: Այս համաստեղության մեջ առանձնահատուկ տեղ ունի Մովսես Խորենացին, որը վաստակել է «հայոց պատմահայր» պատվանունը [24]: Դարեր ի վեր Մովսես Խորենացու անունը հայ ժողովրդի համար դարձել է նվիրական անուն: Խրենացին եզակի գրական դեմք է մեր հին մատենագիրների մեջ [25]: Նրա «Հայոց պատմությունը» հայ հին կյանքի հանրագիտարանն է: Թեկուզ միայն այն, թե որքան բան է փրկել նա անդառնալի կորստից, բավական է, որ հետագա սերունդները մեծ պատկառանքով ու երախտագիտությամբ հիշեն նրա անունը: Խորենացին իր ժամանակաշրջանի ամենազարգացած, ամենաառաջավոր, ամենահամարձակ մտածող գիտնականներից էր [26]: Նա ծնվել է մոտ 410 թ. Տարոնի Խորնի կամ Խորոնք կոչված գյուղում և մահացել է 5-րդ դարի վերջին և թաղվել Մուշ քաղաքի մոտ գտնվող Առաքելոց վանքի եկեղեցում: Նա աշակերտել է Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին: 20-25 տարեկան հասակում մի խումբ երիտասարդների հետ մեկնել է Ալեքսանդրիա (Եգիպտոս)՝ կրթությունը շարունակելու: Խորը և բազմակողմանի գիտելիքներով զինված Խորենացին իրեն նվիրում է ստեղծագործական-թարգմանչական գործունեությանը [27]: 440 թվականին վերադառնում է Հայաստան և Սահակ Բագրատունու պատվերով հետագայում սկսում է գրել «Հայոց պատմություն»: «Հայ պատմագիրներից ոչ մեկն այնքան հրատարակություններ, թարգմանություններ, քննություններ և ուսումնասիրություններ չի ունեցել, որքան Մ. Խորենացու «Հայոց պատմություն» գիրքը», -գրում էր Մ. Աբեղյանը [28]:

Երկար ժամանակ մատնվել է անուշադրության և հալածանքի: Վերջապես իր դասընկեր Գյուտ կաթողիկոսի կողմից նշանակվել է Բագրևանդի և Արշարունիքի եպիսկոպոս ու հետագայում ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի ամբողջական պատմության ստեղծմանը:

Մարդկության մտավոր զարգացման ամենափայլուն արտա-հայտություններից մեկի՝ Մ. Խորենացու «Հայոց պատմության» մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ՝ թե հայերեն, թե եվրոպական լեզուներով, բայց դրանք դեռ լիովին չեն բացահայտում նրա արժեքը: Բանն այն է, որ եղած հետազոտությունների, ուսումնասիրությունների մեծ մասը հիմնականում պատմաբանասիրական բնույթի են, որոնք սովորաբար քննության չեն առնում Խորենացու գործը իր ամբողջության մեջ, այլ շոշափում են առավելապես աղբյուրագիտական հարցեր և արծարծում են նրա գոյության ժամանակին վերաբերող միանգամայն անհիմն ու արհեստականորեն առաջ բերված վեճեր: Խորենացու «Հայոց պատմության» մեծությունը հայ ժողովրդի հին

պատմության կարևոր աղբյուրներից մեկը լինելու հետ միասին ավելի քան պայմանավորվում է նրա հեղինակի՝ իբրև գիտնականի և մտածողի, իբրև ժամանակի հասարակական մտքի և գիտակցության և ճաշակի ամենախոր կրողի մեծ արժանիքներով:

Մովսես Խորենացին հայ պատմագրության պատմության մեջ առաջինն է, որ իր գործը կոչելով «Հայոց պատմություն»՝ իր առաջ նպատակ է դրել գրել հայ ժողովրդի պատմությունը նրա ծագումից մինչև իր ժամանակները:

«Հայոց պատմություն» կոթողային հուշարձանը բաղկացած է 3 գրքից, որոնցից յուրաքանչյուրը ընդգրկում է պատմական մի քանի ինքնատիպ ու ամբողջական ժամանակաշրջան: Առաջին գիրքը՝ «Հայոց մեծերի ծննդաբանությունը» բաղկացած է 32 գլխից և ընդգրկում է Բաբելոնյան աշտարակաշինությունից մինչև Ալեքսանդր Մակեդոնացու տիրապետության հաստատման ժամանակահատվածը:

Տասներորդ գլխով սկսվում է բուն հայոց պատմությունը՝ Հայկի պատերազմը Բելի հետ [29],, որը տեղի է ունեցել Ք. ա. 2492թ. օգոստոսի 11-ին:

Երկրորդ գիրքը բաղկացած է 92 գլխից, սկսվում է Պարթևների ապստամբությունից Սելևկացոց դեմ և Վաղարշակին հայոց վրա թագավորեցնելուց և վերջանում է Տրդատի մահով, ուրեմն պարունակում է հայոց 450 տրվա պատմություն: Այս մասում պատմական կարևոր շրջանների մասին պատմելիս՝ հեղինակը հիշում է այն աղբյուրները որոնցից օգտվել է: Հայոց պատմության 2-րդ գիրքը վերնագրված է «Միջին պատմություն մեր նախնիների»:

Երրորդ գիրքը՝ «Մեր հայրենիքի պատմության ավարտը», ունի 68 գլուխ և ընդգրկում է 110 տարվա պատմություն՝ Տրդատ Գ–ի մահվանից մինչև 428 թվականը: Այս պարբերացման հիմքում Խորենացին դնում է հայոց և համաշխարհային պատմության առանձին եղանակներ՝ ինչպիսիք են հայ ժողովրդի ծագման, պարսկական աշխարհակալության տապալման և Մակեդոնացու տերության ստեղծման, քրիստոնեության՝ պետական կրոն ճանաչման և հայոց պետականության անկման հարցերը [30]: Խորենացուց հետո՝միջնադարում, այլևս նման փորձ ոչ ոք չի կատարել, այլ համառոտելով օգտագործել են նրա գիրքը և այնուհետև շարունակել արդեն իրենց ապրած ժամանակների անցքերի պատմությունը: Խորենացու «Հայոց պատմությունը» հինգերորդ դարի հայ քաղաքական-հասարակական մտքի ամբողջ հարստությունն արտացոլող ու նրա ամենաբարձր արտահայտությունը հանդիսացող մի հոյակապ հուշարձան է [31]:

Պատմահոր հայացքներին առաջին հերթին բնորոշ է լայնախոհությունը: Ճշմարտության երկակիության ուսմունքը կիրառելով ընկերային իմաստասիրության ասպարեզում՝ նա աշխատում է օգտվել իր տրամադրության տակ գտնվող բոլոր գրավոր և բանավոր աղբյուրներից՝անկախ նրանց հեղինակների ազգային, քաղաքական ու կրոնական պատկանելիությունից, քանի որ

դրանք բոլորն էլ կարող են ճշմարիտ և ընդունելի լինել: Իր օգտագործված աղբյուրներում գոյություն ունեցող տեսակետների բազմազանության մեջ կողմնորոշվելու համար Խորենացին կիրառում է քննադատական և վերլուծական մեթոդներ: Իսկ որպես փաստերի ու տեսությունների ճշտության տրամաբանականության և ընդունելիության չափանիշ՝ նա առաջ է բերում 2 կարգի սկզբունք՝ մեթոդական և տեսական-գաղափարական [32]:

Հայրենիքի ազատության և ազգային միասնության գաղափարը հանդիսացել է Խորենացու իրավաքաղաքական հայացքի հիմքը: Նրա համար ազգը նախ և առաջ մի կուռ ու ամբողջական հասկացություն է: Իշխան թե ռամիկ առաջին հերթին հայ են և հանդիսանում են մի մասնիկը այն մեծ ամբողջության, որ հայ ժողովուրդ է կոչվում: Այս գիտակցումով էլ նա առաջինն էր, որ ստեղծեց այդ ազգի պատմությունը և այն անվանեց §Պատմություն հայոց: Սակայն ձեռնամուխ լինելով §Հայոց պատմության շարադրմանը՝ Մ. Խորենացին կանգնել է դժվարությունների առջև սկզբնաղբյուրների ձեռք բերման գործում: Այդ պատճառով էլ նա կշտամբել է հայոց թագավորներին այն բանի համար, որ նրանցից ոչ մեկը ուշադրություն չի դարձրել հայ ժողովրդի պատմությունը գրի առնելու խնդրին:

5-րդ դարի մյուս պատմիչների համար սկզբնաղբյուրի խնդիրը անհամեմատ դյուրին էր, նրանք ժամանակագրական առումով իրենց մեջ պատմական հատվածներն էին ներկայացնում: Մ. Խորենացու օգտագործած 40 աղբյուրներից ավելի ընդունելի էին Մար Աբաս Կատինայի պատմությունը և հայ ժողովրդական առասպելները: Իր աշխատության մեջ նա ներկայացրել է մի շարք քաղաքական և իրավական գաղափարներ անձի և պետության ինքնիշխանության, ազգային պետականության, հայրենասիրության մասին:

Խորենացին, զարգացնելով ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, նկարագրել է իր անկախության, պետականության համար պայքարող ժողովրդի պատմությունը: Նրա քաղաքական հիմնական գաղափարախոսությունը հայրենասիրությունն է, որը կոչված է պաշտպանելու երկրի անկախությունը կյանքի գնով՝ չվախենալով օտար նվաճողների ուժերի գերակշռումից: Ազգային գաղափարախոսության բոլոր հիմնադրույթները, ռազմավարական և մարտավարական ծրագրերը մշտապես պետք է գտնվեն պետության, ժողովրդի, բոլոր ազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում, որի հիմքում ընկած են ազգային շահերը [33]:

Դեռևս հասարակության զարգացման վաղ շրջանում ձևավորվել էր այն գաղափարը, որ պետությունը պետք է իր գործունեությունը իրականացնի օրենքի հիման վրա, և օրենքը պետք է պարտադիր լինի ինչպես քաղաքացիների, այնպես էլ պետության համար: Այս գաղափարը հիմք է հանդիսացել Հայաստանում իրավական պետության կազմվորման և զարգացման համար: Նա ևս արտահայտել է օրենքի հիման վրա գործող պետության գաղափարը: Թագավորությունը (պետությունը) իր գործունեությունը ծավա-

լում է նախապես հասարակության մեջ կարգ ու կանոն հաստատելով և օրենքներ ընդունելով [34]: Պետականության կորստի հետևանքով ստեղծված համազգային հուսալքման այս ծանր շրջանում շարադրելով անցյալի պատմությունը՝ Խորենացին նպատակ է հետապնդում անցյալի մեծագործությունների շարադրանքով մարդու մեջ վերականգնել ազգային հզորության զգացումը: Խորենացուն բնորոշ է քաղաքական և սոցիալական լավատեսությունը: Անհաջողությունները նա դիտում է իբրև պատահականություն, անցողիկ, հաղթահարելի երևույթներ: Այս առումով Հայաստանի ենթակայությունը ժամանակավոր, դիպվածային բնույթ ունի և ազգը կարող է կրկին նվաճել քաղաքական անկախություն: Որպես հին և քաղաքակիրթ ժողովուրդ՝ հայերը նույնպես անցել են «բարբարոսական» («անկարգության»), «միջանկյալ» (ավագության և ցեղերի տիրապետության), և «քաղաքակրթական» («կարգավորվածության») փուլերը [35]:

Քաղաքակրթության առանձնահատկություններից են պետականության ձևավորումը, բանավոր օրենքի վերածումը գրավոր օրենքի: Պետությունը սոցիալական և քաղաքական հարաբերությունների կարգավորման որակապես նոր աստիճան է, իսկ գրավոր օրենքը առավել հաստատուն է դարձնում հասարակական կարգը ու կանոնը: Պետականության պատմությունը դիտվում է մարդկային հարաբերությունների (քաղաքական-սոցիալական, իրավական և այլն) կարգավորման պատմություն: Նշված ազգային-քաղաքական խնդիրը պահանջում էր հայ ժողովրդի քաղաքական անկախության, բնական իրավունքի, հայոց պետականության ինքնակարգության, ինքնիշխանության օրինականության ու անհրաժեշտության հիմնավորում, ինչը միաժամանակ ազգային-ազատագրական պայքարի իրավաքաղաքական ու բարոյական հիմնավորումն է [36]:

Ուժեղ, կենտրոնացված միապետությունը համարելով ազգի միության, երկրի հզորության նախապայման՝ միաժամանակ նա բարձր էր գնահատում նախարարների դերը, և նա իր առջև խնդիր էր դրել պարզաբանել նախարարական տոհմերի պատմությունը և ծագումնաբանությունը:

Պետության խորհրդանիշը թագավորն է: Նա հայ թագավորներից առանձնացնում է Տիգրան Մեծին (Ք.ա. 95-55 թթ.), ում համարում էր օրինակելի իր ու ապագա ժամանակների համար: Պետական ինքնիշխանության հայեցակարգը նա կառուցում է Տիգրան Մեծի պետական-քաղաքական գործունեության վերլուծության հիման վրա: Ինչ վերաբերում է պետական ինքնիշխանության խնդրին, ապա այն իր հետագա զարգացումը ստացավ ոչ միայն հայ, այլև օտար շատ հեղինակների մոտ: Հայ իրականության մեջ տվյալ խնդրին է անդրադարձել Մ. Գոշը իր «Դատաստանագրքում» [37], իսկ 1576 թ. այդ խնդիրը շոշափել է ֆրանսիացի Ժան Բոդենը «Վեց գիրք հանրապետության մասին» աշխատության մեջ [38], որը յոթ տարում ֆրանսերեն հրատարակվեց 10 անգամ, ապա թարգմանվեց 5 լեզուներով [39]:

Մ. Խորենացու նման Գոշը նույնպես մտահոգված է երկրի բոլոր ուժերի համախմբման հարցերով: Գոշի պետական ինքնիշխանության մասին հայեցակարգի բովանդակությունը արտահայտվում է հետևյալում՝

1. Գոշը ինքնիշխանության կրողն է համարում թագավորին, քանզի թագավորն է պետության կրողը,

2. ուրիշ ժողովուրդներից, պետություններից պետք է հարկ վերցնել կամ համենայն դեպս հարկ չտալ: Այսպիսով, պետական ինքնիշխանության մասին Գոշի հասկացությունը հեռու չէ պետական ինքնիշխանության ժամանակակից գիտական սահմանումից: Նա ինքնիշխանության կարևոր հատկանիշ է համարում պետության գերիշխանությունը հպատակ ժողովրդի նկատմամբ և անկախությունը արտաքին հարաբերություններում: Սակայն պետական ինքնիշխանությունը անսահմանափակ չէ ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին հարաբերություններում: Թագավորին օժտելով պետական ինքնիշխանությամբ՝այնուհանդերձ Գոշը որոշակի իրավանորմերով սահմանափակում է նրա իշխանությունը: Ըստ նրա՝ օրենքին պետք է ենթարկվեն պարտադիր բոլորը, այդ թվում և թագավորը: Ուրեմն պետությունը բացարձակ սուվերեն չէ: Գոշը սահմանում է նաև, որ եթե ինքնիշխան թագավորությունը և անհարկի խախտի խաղաղությունը, ապա այդպիսի թագավորը պետք է գահընկեց արվի:

1576 թվականին ֆրանսիացի քաղաքական մտածող, պետական գործիչ, բացարձակ միապետության գաղափարախոս Ժան Բոդենը, հրապարակելով իր աշխատությունը, Եվրոպայում առաջինը ձևակերպեց պետական ինքնիշխանության մասին ուսմունքը: Դրանով իսկ համաշխարհային իրավագիտությունը որպես պետական ինքնիշխանության ուսմունքի հիմնադիր ճանաչում է Ժան Բոդենին, այլ ոչ թե նրանից մի քանի դար առաջ այդ գաղափարի հիմնադիրը հանդիսացած Մ. Գոշին:

Խորենացին անդրադարձել է նաև այն հարցին, թե ինչպես կարգավորվեց թագի ժառանգության իրավունքն Արշակունիների դինաստիայի ժամանակ: Նա նշել է, որ հատուկ օրենք պետք է սահմանել, թե թագավորի մահից հետո ով կարող է փոխարինել նրան, այսինքն՝ ինչ կարգով պետք է իրականացվի գահաժառանգության հարցը:

Անդրադառնալով պետություն-եկեղեցի հարաբերությանը՝ նա մատնանշում է, որ եթե սկզբնական շրջանում (301 թ. քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո), երբ հոգևոր ոլորտում թագավորական և կաթողիկոսական իշխանությունները հավասար էին, իսկ աշխարհիկ ոլորտում գերակայում էր թագավորական իշխանությունը, ապա ժամանակի ընթացքում աշխարհիկ կյանքում նկատվում է իշխանության երկու ձևերի հավասարեցում, ինչը հոգևոր դասի իշխանական հավակնությունների և նախարարների կենտրոնախույս ձգտումների արդյունք է: Երկու իշխանությունների միջև հակասությունները և մրցակցությունը հանգեցրին քաղաքական իշխանության ճգնաժամին և

որպես հետևանք՝ պետության կործանման և կաթողիկոսական իշխանության թուլացմանը [40]:

Խորենացու իրավաքաղաքական հայացքներում առանձնակի կարևորություն են ստանում միջազգային իրավունքի վերաբերյալ նորմերը, որոնք արտահայտվել են, երբ բնութագրում է պատերազմները: Ըստ նրա՝ պատերազմները տարբերվում են իրենց բնույթով: Խորենացին տարբերակում է պաշտպանողական (արդար) և հարձակվողական (անարդար) պատերազմներ:

Խորենացին անդրադարձել է նաև պետությունների միջև միջպետական դաշինքին, երբ երկու պետություններ հաշտության դաշինք են կնքում կամ պայմանավորվում են երրորդ պետության դեմ համատեղ պատերազմական գործողություններ վարելու շուրջ, ինչպես հեղինակն էր նշում, §ուխտով ու երդումով դաշինք ենք հաստատում [41] իրենց փոխհարաբերությունները կարգավորելու համար:

Անդրադառնալով հայ ընտանիքին՝ Խորենացին այն դիտում էր որպես հասարակության հիմքը: Ընտանիքն է դաստիարակում նոր սերունդ, որի հիմնական խնդիրն է արդար և կարգավորված հասարակության հաստատումը:

Որպես հմուտ մանկավարժ՝մարդկային հարաբերությունները ղեկավարելու և կարգավորելու համար առաջարկում է երեք միջոց՝ անձնական օրինակը, խրատը և պատիժը, որոնց միջոցով էլ կարելի է դաստիարակել մարդկանց: Ամեն մարդ պատասխանատվություն պետք է կրի իր արարքի համար: Այսպիսով, ընդունելի է համարվում անձնական պատասխանատվության սկզբունքի կիրառումը, որով հանցագործի որդիները չպետք է դատվեն հայրերի կատարած հանցանքների համար: Այսօր անձնական պատասխանատվության սկզբունքը կիրառելի է ոչ միայն ՀՀ-ում, այլև բազմաթիվ երկրներում, որի էությունն այն է, որ «անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն անձամբ իր կատարած հանցանքի համար» [42]: Խորենացին իր թողած աշխատություններում անդրադարձել է նաև օրենքներին, որը համարել է հասարակության կայունության գրավականը, որն էլ նպաստում է հասարակական կարգուկանոնի հաստատմանն ու ամրապնդմանը:

Խորենացին ամբողջական տեսություն է ստեղծում քաղաքական լիդերի մասին: Նա քաղաքական լիդերի գնահատման չափանիշը համարում է հայրենասիրությունը, իմաստնությունը, խելքը, մեծահոգությունը, արդարամտությունը և զսպվածությունը: Նրա համար ատելի են թույլ թագավորները, կեղծավոր կրոնավորները, տխմար ուսուցիչները, սովորելու մեջ ծույլ աշակերտները, անարի զինվորականները, կաշառակեր դատավորները, որոնք գայլեր դարձած հոշոտում են հոտը:

Շատ ծանր զգացումով է Խորենացին խոսում հայոց պետականության անկման, վերջին Արշակունուն՝ Արտաշիրին, գահընկեց անելու և պարսիկ կառավարիչ նշանակելու փաստի մասին [43]:

Խորենացին՝որպես իր ժամանակի մեծագույն մտածող, բնական է

համարում այն տարբերությունը, որ գոյություն ունի քաղաքի և գյուղի բնակչության, այսինքն՝ իշխանների, հարուստների և աղքատների միջև: Միաժամանակ արտահայտում է այն միտքը, որ քաղաքացիները պետք է եղբայրաբար վարվեն գյուղացիների հետ:

Խորենացին՝ որպես ավատատիրական իրավունքի և հասարակարգի առաջադեմ գաղափարախոս, բարձր է գնահատում պետության դերը հասարակության համար և հանդես է գալիս նրանց դեմ, ովքեր ոտնձգություն են կատարում դրա նկատմամբ: Նա չի հանդուրժում մարդկանց չարությունը, որն աղետաբեր է համարում ժողովրդի համար, ուստի պայքարում է դրա դեմ, նա որոշակիորեն ձգտում է իր պատմությամբ մարդ դաստիարակել: Նա ուսուցիչ է, մեծ ուսուցիչ [44]:

Խորենացին պատմությունն ավարտում է «Ողբով»: Որը գեղարվեստական մի հոյակապ ստեղծագործություն է, և հանդիսանում է իր պատմական երկի ավարտը: Հակիրճ, սեղմ այդ տողերի մեջ Խորենացին ներկայացնում է Հայաստանի հասարակական կյանքի մռայլ կողմերը Արշակունյաց թագավորության անկման օրերին, մերկացնում հասարակական բոլոր խավերի արատները, հոգևորականների սնափառությունը, վիճակավոր առաջնորդների տգի_ տությունը, պղերգությունը, իշխանների ընչաքաղցությունը, զորականների սնապարծությունը, հեշտասիրությունը և այլն [45]:

Պատմագրի քաղաքական և իրավական հայացքները ժամանակին ծառայել են հայ պետականության վերականգմանը: Նա երազել է Հայաստանը տեսնել անկախ, բարի և կազմակերպիչ թագավորով, համեստ և մարդասեր իշխաններով, օրինապահ դատավորներով, Աստծուն նվիրված հոգևորականներով, աշխատասեր և ուսման ձգտող ժողովրդով, հոգատար տերերով և հնազանդ ծառաներով:

Խորենացու «Պատմությունը» ավելի քան 14 դար շարունակ դպրոցների միակ դասագիրքն է հանդիսացել: Նա իր ջերմ հայրենասիրությամբ, կուռ տրամաբանությամբ և պատկերավոր ոճով կարողացել է համակել տասնյակ սերունդների և հսկայական դեր կատարել ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման գործում [46]:

Այսպիսով, հայ ազգի քաղաքական անկախության, սեփական պետականության վերականգնման խնդիրը միանգամայն արդարացված է պատմական, քաղաքակրթական, իրավական, բարոյական առումներով: Դա ոչ այլ ինչ է, քան պատմական արդարության, օրինական (աստվածային իրավունքի) վերահաստատում: Ավելին, ինչպես պատմության ամբողջ ընթացքում, այնպես էլ հիմա հայ ժողովուրդը ոչ միայն կարող է, այլև պարտավոր է պայքարել հանուն իր բնական իրավունքի, ազգային արժանապատվության, որովհետև դա միաժամանակ պայքար է հանուն, գերագույն ճշմարտության և արդարության հաստատմանն առհասարակ: Հայերն արժանավայել ապրելու հավասար իրավունք ունեն և՛ ներկայում, և՛ ապագայում [47]:

Հայոց պատմության ուսումնասիրության խնդրում հատկապես նշանակալից են ֆրանսիացի հայագետներ Ժան Սեն-Մարտենի (1791-1832 թթ.), Վիկտոր Լանգլուայի (1829-1869 թթ.), Մարի Բրոսեի (1802-1880 թթ.), Էդուարդ Դյուլորիեի (1807-1881 թթ.) աշխատությունները, որոնցում հետազոտված է Մովսես Խորենացու «Պատմություն հայոց» երկը՝ պատմա-աշխարհագրական, քաղաքական և հոգևոր-մշակույթային պատմության հարցերի քննարկման առումով [48]:

Խորենացու պատմության ձեռագիրը պահվում է մատենադարանում: Նա ունեցել է 12 տպագրություն: Անդրանիկ տպագրությունը եղել է 1685թ. Ամստերդամում Թոմաս Նուրիջանյան Վանանդեցու ձեռքով, երկրորդ տպագրությունը լատինական թարգմանության հետ՝ Լոնդոնում 1736 թվականին: Խորենացին թարգմանվել է ռուսերեն՝ 1809 թ., լատիներեն՝ 1733 թ., ֆրանսերեն՝ 1869 թ., իտալերեն՝ 1841թ., հունգարերեն՝ 1892 թ., գերմաներեն՝ 1869 թ.: Ռուսերեն թարգմանվել է երեք անգամ, առաջինը կատարել է Հովսեփ Հովհաննիսյանը, որը լույս է տեսել 1809 թ. Պետերբուրգում, երկրորդն ու երրորդը՝ 1858 և 1893 թթ. Մոսկվայում (թարգմ. Մ. էմին), : Խորենացին թարգմանվել է նաև գրաբարից աշխարհաբար /Խորեն Վ. Ստեփանե, 1889 թ. և 1898 թ./, տպագրվել է Պետերբուրգում: Մյուս թարգմանությունը պատկանում է ակադեմիկոս Ստ. Մալխասյանին: Այս թարգմանությանը կցված է թարգմանչի ներածականը, ինչպես նաև ընդարձակ ծանոթագրությունները: Այն լույս է տեսել 1940 թ. Երևանում:

Օգտագործված գրականություն

1. Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, Ե., 1950, էջ 456:
2. Տե՛ս Հ. Թամրազյան, Երկեր, Ա., Երևան, 2006, էջ 59:
3. Տե՛ս Մ. Մկրյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1987, էջ 108:
4. Տե՛ս Հայ ժողովրդի մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դարեր, Ե., 1976, էջ 7:
5. Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հատոր 5, Ե., 1986, էջ 55:
6. Տե՛ս Գուրգեն Սևակ, Մեսրոպ Մաշտոց, Հայկական գրերի ու մատենագրության սկզբնավորումը, Ե., 1962, էջ 12:
7. Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1980, էջ 31:
8. Տե՛ս Հայ ժողովրդի մշակույթի նշանավոր գործիչներ 5-18-րդ դարում, Ե., 1976, էջ 11:
9. Տե՛ս Լ. Խաչիկեան, Աշխատություններ, հատոր Ա, Հայագիտական մատենադարան, Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը, Ե, 1995, էջ 45:
10. Տե՛ս Ա. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 230:
11. Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատոր 5-րդ, Ե., 1986, էջ 66:
12. Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գրերը, Ե., 1968, էջ 167-168:

13. Տե՛ս Ռ. Հ. Դալաքյան, Ազգերի ինքնության ու ինքնագոյության մշտավառ ջահը /Գրերի գյուտի 1600-ամյակի առթիվ/, Ե., 2005թ., էջ 12:
14. Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Ե., 1975, էջ 126:
15. Տե՛ս Ա. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 228:
16. Տե՛ս Ա. Ալեքսանյան, Հայ իրավաքաղաքական միտքը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, Ե., 2010, էջ 38:
17. Տե՛ս Ս. Արևշատյան, Կ. Միրումյան, Հայ փիլիսոփայության պատմություն, հին շրջան և վաղ միջնադար, Ե., 2007, էջ 65:
18. Տե՛ս Կորյուն, նշվ. աշխ., Ե., 1981:
19. Տե՛ս Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983:
20. Տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Ե., 1987:
21. Տե՛ս Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Ե., 1989:
22. Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997:
23. Տե՛ս Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, Ե., 1982:
24. Գ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Ե., 1991թ., էջ 5-6:
25. Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 61:
26. Տե՛ս Մ. Մկրյան, Երկեր, հատոր 1, Ե., 1987, էջ 173
27. Տե՛ս ՀԺՊՔ, Ե., 2007, էջ 9:
28. Տե՛ս Մ. Աբեղյան, Հայ հին գրականության պատմություն, Ե., 1944, էջ 75:
29. Տե՛ս Մ. Խորենացի, էջ 22:
30. Տե՛ս Հ. Մանուչարյան, Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության, Ե., 2002, էջ 60:
31. Տե՛ս Մ. Մկրյան, հ. 1, էջ 184:
32. Տե՛ս Գ. Խրլոպյան, Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն, Ե., 1970, էջ 233:
33. Լ.Խուրշուդյան, Հայոց ազգային գաղափարախոսություն, Ե., 1999, էջ 14:
34. Տե՛ս Ա. Ալեքսանյան, Հայ իրավաքաղաքականական միտքը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, Ե., 2010, էջ 78:
35. Տե՛ս Կ. Միրումյան, Քաղաքական ուսմունքների պատմություն, Ե., 2006, էջ 217:
36. Տե՛ս Ս. Արևշատյան, Կ. Միրումյան, նշվ. աշխ., էջ 259:
37. Տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի (աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի), Ե., 1975:
38. Տե՛ս История политический и правовый учений, под. ред. О. Э. Лейста, М., 2006, стр 177-181.
39. Լ. Մկրտչեան, Պետութեան ըմբռնումը դարերի երկայնքով, Ե., 1994, էջ 115:
40. Տե՛ս Կ. Միրումյան, նշվ. աշխ., էջ219:
41. Տե՛ս Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1997, էջ 78:
42. Տե՛ս Հ. Մանուչարյան, նշվ. աշխ., էջ 65:
43. Տե՛ս Մ. Մկրյան, հ1, էջ 214:
44. Տե՛ս Ա. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 452:
45. Տե՛ս ՀՀ Քրեական օրենսգիրք, հոդված 8, և ՀՀ Քրեական իրավունք, Ընդհանուր մաս, Ե., 2009, էջ 26-27:

46. Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Ե., 1975, էջ 330:
47. Տե՛ս Ս. Արևշատյան, Կ. Միրումյան, նշվ. աշխ. էջ 261:
48. Տե՛ս Ալիս Դոմիկյան, Մ. Խորենացու «Պատմություն հայոց» երկի արժևորումը Վ. Լանգլուայի հետազոտություններում, Հայոց պատմության հարցեր, Հ. 11, Ե., 2010, էջ 11:

МКРТИЧ МУРАДЯН, ПОЛИТИЧЕСКОПРАВОВАЯ МЫСЛЬ В АРМЕНИИ В ЗОЛОТОМ ВЕКЕ. *В статье рассматриваются взгляды древнеармянских мыслителей М. Маштоца и Мовсеса Хоренаци. В 405 году Месроп Маштоц создал армянский алфавит и стал основоположенником переовда многий древный рукописей на армянский, в том числе и Библии. Мовсес Хоренаци известен своей книгой об истории армянского народа с древнейших времен до середины 5-ого века. В своей работе М. Хоренаци рассматривает строй армянского государства и международного права.*

MKRTICH MURADYAN, POLITICAL AND LEGAL IDEAS IN ARMENIA IN THE GOLD AGE. *5-th century A. D. is one of the most interesting parts of Armenian history. Mesrop Mashtoc founded armenian alphabet and began to translate old manuscripts into Armenian. Movses Khorenatsi wrote a book about armenian 's history from their geneolgy till the half of the fifth century. In his work, he spoke about operation of the Armenian state and international right.*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1911Թ.

Նարեկ Մարտիրոսյան

Երևանի Հայբուսակ համալսարան, ԳԱԱ պատմության ինստիտուտ

Մուտքագրված է 12.05.22, հաստատված է տպագրության 30.06.22

Ամփոփագիր. *1908թ. Երիտթուրքական հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրությունում հռչակվում են «սահմանադրական կարգեր» և ձևավորվում է խորհրդարան: 1909թ. հեղաշրջման փորձի արդյունքում «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հիմքերը սասանվում են: Իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով երիտթուրքերը 1910թ. ձեռնամուխ են լինում ընտրական օրենքի փոփոխությանը, ապա՝1911թ. նաև սահմանադրական բարեփոխումների: Արդյունքում՝ աղճատվում է սահմանադրությունը և Օսմանյան կայսրությունում հաստատվում է ամբողջատիրական վարչակարգ: Խորհրդարանի հայ պատգամավորները, մի կողմից հավատալով Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ իրականացնելու մասին կառավարության կեղծ խոստումներին և մյուս կողմից հավատարիմ մնալով ճգնաժամային իրավիճակներում կառավարությանը աջակցելու սկզբունքին, փաստացի նպաստում են Օսմանյան կայսրությունում ամբողջատիրական վարչակարգի հաստատմանը:*

Հիմնաբառեր*: Օսմանյան խորհրդարան, հայ պատգամավորներ, Արևմտյան Հայաստան, երիտասարդ թուրքեր, ընտրական օրենք, սահմանադրական բարեփոխումներ:*

Երիտթուրքական հեղաշրջումը և խորհրդարանի կազմավորումը

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունը ներքաշվել էր ներքաղաքական և արտաքին քաղաքական խորը ճգնաժամի մեջ: Անտեսվելով կամ հերքվելով Բ.Դռան կողմից՝ ազգային հարցը ի վերջո գրավել էր տերությունների ուշադրությունը և վերածվել արտաքին քաղաքական թնջուկի՝ «Արևելյան հարց» ընդհանուր անվան ներքո: Երբեմնի փառքը և հզորությունը կորցրած Օսմանյան կայսրությունը հայտնվել էր տերությունների նաև տնտեսական շահերի կիզակետում: 1908թ. Ավստրո-Հունգարիայի կառավարությունը Աբդուլ Համիդից ստանում է առանձնաշնորհ՝ դեպի Սալոնիկ երկաթուղի կառուցելու համար [1]: Այսպիսով սրվեց մակեդոնական ճգնաժամը, որի հաղթահարման նպատակով նույն թվականի հուլիսի 24-ին Օսմանյան ընդդիմադիր ուժերին գլխավորող «Միություն և առաջադիմություն» («Իթթիհատ վե թերաքքը») կոմիտեն, որի անդամներն իրենց անվանում էին երիտասարդ թուրքեր կամ երիտթուրքեր, իրականացնում է հեղաշրջում: Սկսվում է Օսմանյան կայսրության «սահմանադրական երկրորդ շրջանը»:

Նույն թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցած ընտրությունների արդյունքում ձևավորվեց երկպալատ խորհրդարանը՝ Երեսփոխանական ժողովը և Ծերակույտը (Այան): Երեսփոխանական ժողովը կամ խորհրդարանի ստորին պալատը ձևավորվում էր երկաստիճան

«գաղտնի» և «հավասար» ընտրությունների արդյունքում [2]: Ընտրություններից առաջ և դրանց ընթացքում կատարված ընտրախախտումների հետևանքով երեսփոխանական ժողովում հայտնված 275 պատգամավորներից 142-ը թուրքեր էին, 60-ը՝ արաբներ, 25-ը՝ ալբանացիներ, 23-ը՝ հույներ, 12-ը հայեր, 5-ը՝ հրեաներ, 4-ը՝ բուլղարներ, 3-ը՝ սերբեր և 1-ը՝ վալախ [3]: Ինչ վերաբերում է պատգամավորների կուսակցական կամ կոմիտեական պատկանելությանը, ապա՝ նրանց պատգամավորներից 160-ը իթթիհատականներ էին, 20-25-ը՝ ազատականներ (Ահրար կուսակցությունից), 4-ը՝ դաշնակցականներ, 2-ը՝ բուլղար կլուբիստներ, 1-ը՝ սոցիալ դեմոկրատ հնչակյան և 70-ը՝ անկուսակցականներ [4]:

Խորհրդարանի հայ պատգամավոր Վահան Փափազյանը, ներկայացնելով խորհրդարանում հայտնվածների թիվն ըստ կուսակցությունների, եզրակացնում էր, որ Օսմանյան խորհրդարանի կուսակցական պատկերը գրեթե զրոյական է [5]: Փաստորեն կարելի է պնդել, որ սկզբում կար մեկ քաղաքական ուժ՝ Իթթիհատը: Սակայն նույն նստաշրջանի ավարտին՝ 1909թ. մարտի 31-ի հեղաշրջման արդյունքում, կտրուկ փոխվում է խորհրդարանի քաղաքական պատկերը՝ Իթթիհատ՝ 85-90, կրոնավորների նոր կուսակցություն՝ «Ջեմիեթը Իլմիյե», 25-30, Ահրար՝ 55-60, անկուսակցական՝ 90-100 [6]: Խմբակցություններում պատգամավորների քանակի նման փոփոխությունը հուշում է, որ ուժերի վերաբաշխումը տեղի էր ունենում գլխավորապես Իթթիհատի հաշվին: Իրավիճակը փոքր ինչ կարգավորվեց հեղաշրջումը ճնշելուց հետո, երբ Աբդուլ Համիդը գահընկեց արվեց: Արդյունքում իթթիհատականների թիվը կրկին բարձրանում է՝ հասնելով 125-130-ի: Որքան էլ որ Իթթիհատին հաջողվեց ժամանակավորապես քաղաքական կայունություն ապահովել, այնուամենայնիվ, խորհրդարանում նոր կուսակցություններն արդեն ձևավորվել էին: Ժամանակի ընթացքում այս կուսակցությունների դիրքերն ամրապնդվեցին, իսկ 1911թ. նրանց մեծամասնությունը միավորվեցին իթթիհատին ընդդիմադիր «Հուրիեթ վե իթիլյաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցության մեջ [7]:

Ընտրական օրենքի փոփոխությունը

Դեռևս 1908թ. հեղաշրջմանը հաջորդած շրջանում երիտթուրքերն նախընտրել էին խորհրդարանում մեծամասնություն ունենալու հաշվին կառավարության գաղտնի հակակշռողի դերը ստանձնելու քաղաքականությունը [8]: Սակայն ուժերի նման վերադասավորումից հետո այս մարտավարությունը ձախողվեց: Ստեղծված իրավիճակում իթթիհատի վերնախավի մոտ հղանում է խորհրդարանը լուծարելու և նոր ընտրություններ անցկացնելու գաղափար՝ ապագա խորհրդարանում բացարձակ մեծամասնություն ապահովելու հույսով: Այս գաղափարն իրագործելու համար անհրաժեշտ էր նախ ապահովել իթթիհատի վերարտադրությունը ապագա ընտրություններում ապա՝ արտակարգ լիազորություններ տալ կառավարությանը:

1910թ. մայիսի 11-ին երիտթուրքերը, հիմնվելով իրենց շարքերում տեղ գտած տոհմիկ ազնվականության վրա, նախաձեռնում են ընտրական օրենքի փոփոխություն: Իրականում այդ օրը քննարկվում էր մարդահամարի օրենքը, որի 38-րդ հոդվածը սերտ կապ ուներ ընտրական օրենքի հետ, որը կազմվել և ընդունվել էր դեռևս 1876թ.՝ նախքան սահմանադրության գործածումը: Ընտրական օրենքը բաղկացած էր 7 հոդվածներից, որոնք տեղ էին գտել «Ծերակույտի և խորհրդարանական պալատի ձևավորման և հաստատման մասին» կանոնադրության մեջ [9]: Քննարկման ժամանակ օսմանյան խորհրդարանի էշրաֆները (տոհմիկ ազնվականներ) առաջ քաշեցին օրինագիծ, որի համաձայն բնակավայրը փոխելիս քաղաքացին հինգ տարի պետք է պահպաներ իր ընտրական իրավունքը նախկին բնակավայրում:

Օրինագիծը ներկայացնում է Կոմիտիների պատգամավոր Իսմաիլ Հագգը բեյը [10]: Խորհրդարանն ընդիմանում է ընտրական օրենքը խախտող այս նախագծին: Հաջորդ օրը Հագգը բեյը ներակայցնում է նոր՝ փոխզիջումային տարբերակով նախագիծ, ըստ որի քաղաքացին պահպանում էր իր ընտրական իրավունքը նախկին բնակավայրում երեք տարի ժամկետով: Նախագահ Ռիզա բեյը քվեարկության է դնում Իսմայիլ Հագգը բեյի ներկայացրած օրինագիծը, որը 51 դեմ 145 կողմ ձայնով ընդունվում է [11]:

Ընտրական օրենքի այս սահամնակափակումը երիտթուրքերն իրականացրեցին իրենց հենարան համարվող մահմեդական տոհմիկ ազնվականության հետևաբար նաև իրենց կուսակցության վերարտադրությունն ապահովելու համար: Ընտրական օրենքի փոփոխությունից հետո իթթիհատը ձեռնամուխ է լինում սահմանադրական բարեփոխումներին: Անհրաժեշտ էր ազատվել ընդդիմադիրներով լեցուն խորհրդարանից և արտահերթ ընտրությունների արդյունքում ձևավորել իթթիհատական բացարձակ մեծամասնությամբ խորհրդարան: Այս ծրագրի իրականացման համար նախ պետք է արտակարգ լիազորություններ տրվեր կառավարությանը: Նպաստավոր պայման դառնում է իտալա-թուրքական պատերազմը:

Ներքաղաքական ճգնաժամի հաղթահարման փորձը

1911թ. հոկտեմբերի մեկին՝ նախատեսվածից մեկ ամիս շուտ, բացվում է Օսմանյան խորհրդարանի 4-րդ նստաշրջանը: Նստաշրջանի շուտ բացվելը պայմանավորված էր ներքին և արտաքին քաղաքական ճգնաժամի խորացումով:

Սեպտեմբերի 27-ին սկսվել էր Իտալա-թուրքական պատերազմը: Երիտթուրքերը Տրիպոլի էին գործուղել մի շարք սպաների՝ տեղում ինքնապաշտպանությունը գլխավորելու համար: Օսմանյան բանակը պատրաստ չէր այս պատերազմին, «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը նույնպես, քանի որ, չէր լուծել նույնիսկ երկրի ներքին քաղաքական անկյունաքարային խնդիրները: Կարելի էր կարծել որ, երիտթուրքերը ոչ մի բարոյական իրավունք չունեին ակնկալելու հայերի աջակցությունը այս պատերազմում:

Տրամաբանական կլիներ հայերի չեզոք կամ հակաթուրքական դիրքորոշումը, քանի որ «Սահմանադրության» հռչակումից հետո անցել էր երեք տարի և չէր լուծվել արևմտահայության և ոչ մի հիմնախնդիր: Սակայն խորհրդարանում արևմտահայության ներկայացուցիչները, անկախ իրենց կուսակցական պատկանելությունից, հավատարիմ մնացին Օսմանյան պետությանը: Պետությանը սպառնացող վտանգը հայությունն ընդունում էր որպես վտանգ ուղղված իրեն:

Պատերազմական իրադրության պայմաններում երիտթուրքերին անհրաժեշտ էր ապահովել ներքին քաղաքական կայունություն, ինչը սկսվում էր խորհրդարանից: Յուրաքանչյուր նստաշրջանի անդրանիկ նիստին Օսմանյան խորհրդարանը պարտադիր կատարում էր նախագահի և երկու փոխնախագահների ընտրություն: Օրենսդիր գերագույն մարմինը բացվեց բավականին լարված մթնոլորտում: Իթթիհատականները ցանկանում էին խորհրդարանի նախագահ վերահաստատել Ահմեդ Ռիզա բեյին՝ խոստանալով ընդդիմությանը տալ մեկ փոխնախագահի մանդատ: Երիտթուրքերի և նրանց ընդդիմադիրների միջև համաձայնություն չէր կայանում: Գործին փորձում են միջամտել հայ պատգամավորներ Գ.Զոհրապը և Վարդգեսը (Հովհաննես Սերենկուլյան)՝ առաջարկելով հետաձգել ընտրությունը, սակայն ապարդյուն [12]:

Արդյունքում նիստին մասնակից 157 երեսփոխանները կատարում են նախագահի ընտրություն: Ընտրության արդյունքում ընդդիմության թեկնածու Մահիր Սայիդ բեյը հավաքում է 55, իսկ իթթիհատական Ահմեդ Ռիզա բեյը՝ 86 քվե: Հայ երեսփոխանները բոլորը, բացի Գ.Զոհրապից, ընտրում են Ահմեդ Ռիզա բեյին: Այսպիսով՝ իթթիհատականները խորհրդարանական ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ առաջին կարևոր քայլը կատարում են հայ պատգամավորների կողմնորոշման շնորհիվ: Պատերազմի օրերին հայազգի պատգամավորների հավատարմությունը Օսմանյան երկրին երևում է նաև Հակոբ Բոյաջյանի՝ Գերմանիայի արտգործնախարարին ուղղած նամակից, որտեղ երեսփոխանը մեղադրում է Գերմանիային և Ավստրո- Հունգարիային Իտալիայի կատարած չարագործությունների վրա աչք փակելու մեջ: Երեսփոխանը խորհուրդ է տալիս նախարարին փոփոխություն մտցնել Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ հօգուտ Թուրքիայի: Հայազգի երեսփոխանների՝ իթթիհատին ցուցաբերած աջակցությունը երևում է նաև հոկտեմբերի 27-ի խորհրդարանի նիստում Վարդգեսի ելույթից, որտեղ պատգամավորը պաշտպանում է Շևքեթ փաշայի գործողությունները ուղղված ընդդիմադիր երեսփոխան Լութֆի Ֆիքրիի անձի դեմ (ձերբակալման հրամանը-Ն.Մ.): Ավելին, Վարդգեսը հայտարարում է, թե ընդդիմադիրները պետք է ամաչեն, որ պատերազմական պահին մամուլի ազատությանը և պատգամավորի անձեռմխելիությանը վերաբերող հարցեր են բարձրացնում: Հայ ներկայացուցչության ցուցաբերած հավատարմությունը Օսմանյան պետությանը բացատրվում է նրանց միակ ցանկության՝ Օսմանյան պետությունում ազատ տեղաշարժի իրավունքի ձեռքբերման հույսով, որը

պետք է ապահովված լիներ սահմանարդությամբ:

Սահմանադրական բարեփոխումը

1911 թ. աշնանը Իտալա-թուրքական պատերազմի բռնկումից և ներքաղաքական դրության սրումից հետո, երիտթուրքական կառավարության նախաձեռնությամբ վերաբացվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու հարցը: Կարելի է կարծել՝ այդ նույն կառավարության հույժ շփոթվածության պատճառով, երբ ստիպված էր գործի դնելու հայերին սիրաշահելու ուղեգիծը: Մյուս կողմից, ծայրահեղորեն լարված ներքաղաքական դրության պայմաններում՝ պատերազմի սկզբից երկու ամիս անց, վարչապետ Սայիդ փաշան ցանկանում էր փոփոխություններ կատարել սահմանադրության 35-րդ հոդվածում և ցրել խորհրդարանը: Դեկտեմբերի 3-ի երեսփոխանական ժողովի հրավիրած նիստին ներկա էր նաև վարչապետը, ով հայտարարեց, որ եկել է հաշտություն կնքելու ժամանակը և, դրա համար անհրաժեշտ է հզոր կառավարություն: Ելույթի վերջում վարչապետը շեշտեց, որ շատ օրենքներ պետք է գործադրի և որպես օրինակ ներկայացրեց հայերի ցավալի վիճակը, եզրակացնելով, որ բարելավելու համար անհրաժեշտ է բարենորոգումների կիրառումը [13]:

Վարչապետի կողմից հայկական բարենորոգումների հարցը խորհրդարանում բարձրացնելը, իրոք, ուներ ամբոխահաճո բնույթ: Բանն այն է, որ 1911 թ. նոյեմբերի 2-ին հայ տասը պատգամավորներ վարչապետին էին ներկայացրել հիշատակագիր «Անատոլիայի արևելյան նահագներուն մէջ անդորրությունն ու արդարությունը ապահովելու միջոցներու մասին» վերտառությամբ, որտեղ ներկայացված էին արևմտահայությանը հուզող բոլոր կարևոր խնդիրները [14]:

Վարչապետը, իրականում, ցանկանում էր ազատվել ընդդիմադիր գործիչներով լեցուն խորհրդարանից և արտահերթ ընտրությունների արդյունքում ձևավորել նոր իթթիհատական բացարձակ մեծամասնությամբ խորհրդարան:

Վարչապետի կողմից ներկայացված սահմանադրության 35-րդ հոդվածի փոփոխությունը բուռն վիճաբանության առիթ դարձավ: Դեկտեմբերի 5-ին, սահմանադրական փոփոխությունը վիժեցնելու նպատակով, իթիլլաֆ կուսակցությունը կատաղի պայքար մղեց իթթիհատականների դեմ: Իթիլլաֆական պատգամավոր Սապրի բեյը հայտարարում է, որ վարչապետը թերթերից մեկում գրել է, թե Օսմանյան կայսրությանը սահմանադրություն պետք չէ, ուստի մտադիր է վերջնականապես լուծարել այն: Այս առիթով Սապրի բեյը խնդրագիր է ներկայացնում խորհրդարան և պահանջում ընթերցել այն նախքան 35-րդ հոդվածի քննարկումը: Իրականում սա ընդդիմության հերթական փորձն էր հետաձգել կամ ձախողել սահմանադրական փոփոխությունը: Ալբանացի պատգամավորներն իրենց հերթին ներկայացնում են մի խնդրագիր, որտեղ պնդում էին, թե 35-րդ հոդվածի փոփոխությունը քաոսային իրավիճակ կստեղծի Ալբանիայում: Ընդդիմադիրները աղմուկ-աղաղակով

խոչընդոտում էին իթթիհատական պատգամավորների ելույթներին: Հայազգի պատգամավոր Վարդգեսը հայտարարում է, որ Սապրի բեյի խնդրագիրը բերվել է խորհրդարան, պատգամավորներին զբաղեցնելու և 35-րդ հոդվածի քննարկումը ծերակույտին ուղարկելը հետաձգելու համար: Ապա հայ պատգամավորը հարցադրում է անում, թե արդյոք արժե այն քննարկել խորհրդարանում: Չնայած ընդդիմության բուռն պայքարին, իթթիհատականները մեկ ընթերցումով ընդունում են 35-րդ հոդվածի փոփոխության մասին վարչապետի ներկայացրած նախագիծը:

Չնայած ընդդիմության պայքարին իթթիհատականները, այնուամենայնիվ, հաջողեցրին լուծարել պառլամենտը: 1912թ. հունվարի 5-ին ծերակույտը սուլթանին է հանձնում իր համաձայնությունը երեսփոխանական ժողովը ցրելու մասին: Մահմուդ Շևքեթ փաշան անձամբ խորհրդարան բերեց կայսերական հրամանը: Խորհրդարանի նախագահ Ահմեդ Ռիզա բեյը հայտնում է, որ երեսփոխանական ժողովը լուծարելու համար կայսերական հրաման է ստացվել և որ այն այժմ պետք է ընթերցվի: Դատական նախարար Մեհմուտ բեյը կարդում է սուլթանի հրամանը. «Հրամայեցի լուծել ներկայ Երեսփոխանական ժողովը՝ համաձայն Սահմանադրութեան 7-րդ յօդուածին եւ հաւանութեամբ Ծերակոյտին, ու ընտրել եւ գումարել նոր Երեսփոխանական ժողովը՝ լուծման թուականէն սկսեալ երեք ամսուան մէջ: Վարչապետը պաշտօն ունի գործադրելու մեր ներկայ իրատէն» [15] :

Հրամանի ընթերցումն ընդունվեց սառն ու անտարբեր: Ընդդիմադիրները առանց որևէ աղմուկ-աղաղակի լքեցին ժողովասրահը:

Օսմանյան խորհրդարանի առաջին գումարումն ավարտվում է խորհրդարանի վաղաժամ լուծարումով: Իրականում խորհրդարանը լուծարելու արտոնությունը վարչապետին տրամադրելը ոչ այլ ինչ էր քան ամբողջատիրական վարչակարգի հաստատում: Օսմանյան պետության ներքաղաքական համակարգի կայունացման ճանապարհին սա առաջին և կարևորագույն վրիպումն էր:

Եզրակացություն

Բացարձակ սխալ էր հայ պատգամավորների բռնած դրական չեզոքությունը սահմանադրական բարեփոխումների նկատմամբ: Իրենց դրական չեզոքությամբ հայ պատգամավորները փաստացի աջակցում էին օրինագծի հաստատմանը և նպաստում ամբողջատիրական վարչակարգի հաստատմանը: Վարդգեսի ելույթից հասկանալի է, որ դաշնակցական պատգամավորները անկախ նրանից, թե իրականում դեմ էին կամ կողմ փոփոխությանը, այնուամենայնիվ դրական վերաբերվեցին այս օրինագծի հաստատմանը: Հայ պատգամավորները, առաջնորդվելով ճգնաժամային իրադրությունում պետությանը և կառավարությանը հավատարիմ մնալու սկզբունքով և հավատալով ու բավարարվելով երիտթուրքերի՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու խոստումով, փաստացի նպաստեցին

Օսմանյան կայսրությունում սահմանադրական կարգի տապալմանը և ամբողջատիրական վարչակարգի հաստատմանը: Սա դյուրահավատության և սահմանափակ մտածողության վրա հենվող հավատարմություն էր, որ պետք է հատուցվեր ցեղասպանությամբ և հայրենազրկմամբ:

Օգտագործված գրականություն

1. Զոհրապ Գ., Երկերի ժողովածու, գիրք երկրորդ, Երևան, 2004, 560 էջ:
2. Համբարյան Ա, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914), Երևան, 1979, 310 էջ:
3. Մանդելշտամ Ա., Օսմանյան կայսրության ճակատագիրը. Երիտթուրքերը պատերազմեն առաջ, Առաջին մաս, Կ.Պոլիս, 1919:
4. Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, Գիրք III, Եր.2009, 1128 էջ:
5. Սիմոնյան Հր.Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, 564 էջ:
6. Փափազյան Վ., Փափազյան Վ., Իմ հուշերը Հատոր Բ., Բեյրութ 1952, 610 էջ:
7. Хнкоян Н.С., Выборы 1912 года В Турции и формирование антимладотурецкого блока, Лрабер, Ереван 1990, N 7, с. 44-52.
8. K u r a n A. Osmanleimparatorluğunda inkilâp hareketler ve milli mücadele. Istambul, 1956, 718 s.
9. Selda Kiliç, 1876 Meclis-i Mebusani ve seçim hazirliklari, Ankara Üniversitesi, D.T.C. Fakültesi, Tarih Bölümü, Ankara 2011, p. 28.
10. Meclisi Mebusan i: 96, 11 Mayis 1326(1910), d: 1, c: 5, içtima senesi: 2.
11. Ազատամարտ, 2.10.1911:
12. Ազատամարտ, 4. 12. 1911:
13. Ազատամարտ, 6.01.1912:
14. Բյուզանդիոն 13.05.1910:
15. Ազատամարտ, 6.01.1912:

МАРТИРОСЯН НАРЕК. КОНСТИТУЦИОННЫЕ РЕФОРМЫ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ 1911 ГОДА. *После младотурецкого переворота 1908 года в Османской империи был провозглашен «конституционный порядок» и был сформирован парламент. В результате попытки государственного переворота в 1909 г. пошатнулись основы комитета «Союз и Прогресс». Для укрепления своих позиций младотурки в 1910 г. начали менять закон о выборах, а затем в 1911 году провели конституционные реформы. В результате конституция искажается и в Османской империи устанавливается тоталитарный режим. Армянские депутаты, с одной стороны, веря в лживые обещания правительства провести реформы в Западной Армении, а с другой стороны, придерживаясь принципа*

поддержки правительства в кризисных ситуациях, фактически способствуют установлению тоталитарной режима в Османской империи.

MARTIROSYAN NAREK. CONSTITUTIONAL REFORMS IN THE OTTOMAN EMPIRE IN 1911. *After the Young Turk's coup in 1908, a "constitutional order" was proclaimed in the Ottoman Empire and a parliament was formed. Because of the coup attempt in 1909, the foundations of the Union and Progress committee were shaken. To strengthen their position, the Young Turks began to change the electoral law in 1910, and then in 1911 carried out constitutional reforms. As a result, the constitution was distorted and a totalitarian regime was established in the Ottoman Empire. On the one hand, the Armenian deputies, believing in the false promises of the government to carry out reforms in Western Armenia, and on the other hand, adhering to the principle of supporting the government in crisis situations, actually contributed to the establishment of a totalitarian regime in the Ottoman Empire.*

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ և ՁԵԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Համլետ Ստեփանյան

Հայբուսակ Համալսարան, ՀՀ փաստաբանական պալատ
Մուտքագրված է 17.05.22, հաստատված է տպագրության 30.06.22

Ամփոփագիր. *Հոդվածում հիմնավորվում է, որ փաստաբանության հասկացությունը, որպես պետության կառուցվածքային տարրերը, օրինակ՝ դատախազությունը, պետք է սահմանադրական ամրագրում ստանա, որի պարագայում հավուր պատշաճի կընկալվի փաստաբանության դերը և նշանակությունը հասարակության կողմից, փաստաբանը կզգա իրեն սահմանադրորեն պաշտպանված:*

Հիմնաբառեր. *Փաստաբանություն, քաղաքացիական հասարակություն, սահմանադրություն, փաստաբանների պալատ, ինքնակառավարվող միավորում:*

Փաստաբանությունը, որպես հասարակությունում ձևավորված պահանջմունքի արդյունք, առաջացել է վաղ քաղաքակրթության հետ մեկտեղ և իրեն բնորոշ այժմեական գծերը ձեռք է բերել պետության կողմից պաշտոնապես ճանաչում ստանալուց հետո: Ընդ որում, եթե դատարանները պատմականորեն առաջացել են ոչ վաղ անցյալում, ապա դրանից առաջ ծնունդ առած պաշտպանությունը մշտապես փնտրել է իր աշխատանքի օբյեկտը: Հատկանշական է, որ փաստաբանության բնորոշ գծերը և հատկանիշները ձևավորվել են Հռոմում. արդեն իսկ Հռոմեական կայսրության ժամանակներում փաստաբանությունը ճանաչվեց պետության կողմից և հիմք հանդիսացավ տարբեր պետություններում փաստաբանության ինստիտուտի զարգացման համար: Պատմականորեն, մինչիրավական և իրավական պետականու-թյան զարգացմանը զուգընթաց, փաստաբանությունը ունեցել է տարբեր կարգավիճակ՝ գտնվել է պետությունից կախյալ կամ հարաբերականորեն անկախ վիճակում: Օրինակ, խորհրդային Ռուսաստանում (այդ թվում՝ խորհրդային Հայաստանում), փատաբանությունը հռչակվեց որպես հանրային ինստիտուտ և դիտարկվում էր որպես հասարակական կազմակերպություն, սակայն, իրականում, խորհրդային փաստաբանությունը մինչև վերջ մնաց կուսակցական-պետական մեքենայի մասը և նրա շահերը սպասարկող գործիքներից մեկը:

Փաստաբանությունը, որպես ըստ կազմակերպական–իրավական ձևի հասարակական կազնակերպություն, չի կարող լինել հարային իշխանության կազմում, այն, որպես այդպիսին, օժտված է կորպորատիվ իշխանությամբ, փաստաբանական գործունեությունը կրում է ոչ առևտրային բնույթ:

Հայրենական փաստաբանության ձևավորումը, սկսած Հայաստանի 1-ին Հանրապետության ժամանակաշրջանից, ընթացավ Ռուսաստանի փաստաբանության ձևավորման օրինաչափություններին ու կանոններին համա-

հունչ: Սակայն Հայաստանի անկախությունը հայրենական փաստաբանության համար նշանավորեց զարգացման նոր փուլ: 1998թ. հունիսի 18-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որը լուծեց ՀՀ փաստաբանների միություն հիմնադրելու, փաստաբանության կարգավիճակին բնորոշ՝ օրենքով նախատեսված բոլոր իրավունքներից օգտվող, անկախ, ինքնակառավարվող միվորում լինելու, փաստաբանների արտոնագրման, փաստաբանական ծառայության վճարովիության, մրցակցության հիմնահարցը:

ՀՀ Ազգային ժողովը 2004 թ. Դեկտեմբերի 14-ին ընդունեց «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը՝ նոր խմբագրությամբ, և սկսվեց փաստա_ բանության զարգացման արդի փուլը: Արդյունքում՝ ստեղծվեց մեկ միասնական կառույց՝ ՀՀ փաստաբանների պալատը: Օրենքը նպատակ է հետապնդում հզորացնել այդ կառույցը, բարձրացնել փաստաբանության հեղինակությունը: ՀՀ փաստաբանների պալատը, որպես փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն, իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում օրենքով սահմանված կարգով գրանցվելու պահից:

Օրենսդրությամբ սահմանված՝ փաստաբանության կարգավորման կառուցակարգերն ընդհանուր առմաբ համապատասխանում են միջազգային նորմերին: Փաստաբանության արդի փուլի վերջին մի քանի տարիները բնութագվում են աննախադեպ առաջընթացով. փաստաբանների պալատը ապահովված է նյութատեխնիկական առումով հագեցած, պետական, իրավապահ մարմիններին պատկանող կառույցներին ոչնչով չզիջող շենքով, սակայն փաստաբաններին տեղերում շենքերով ապահովելը մնում է խնդրահարույց, և այս առումով, կարծում ենք, անհրաժեշտ է վերականգնել խորհրդային ժամանակների փորձը. ՀՀ տարածքի վարչական միավորներում անհատույց օգտագործման հիմունքներով առանձնացնել մեկուսի տարածքներ, որտեղ, փաստաբանների պալատի որոշմամբ, կարող են գործունեություն ծավալել սկսնակ և դրա կարիքը ունեցող փաստաբանները: Նոր օրենքի համաձայն՝ Պալատի նախագահի պաշտոնավարման ժամկետը, պայմանավորված նախագահի՝ ավտորիտար կառավարիչ դառնալու երկյուղով, սահմանափակ է. նախագահն ընտրվում է չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ: Գտնում ենք, որ բացառիկ դեպքերում, եթե նախագահը, անմնացորդ նվիրված լինելով փաստաբանության զարգացմանը, իրականացնում է լայնածավալ բարեփոխումներ, որոնք շարունակական են և, որ կարևոր է, վայելում է փաստաբանների գերակշիռ մասի վստահությունը, ապա նրան պետք է ընձեռնել հետագա ընտրություններին մասնակցելու հնարավորություն:

Փաստաբանությունը, որպես հասարակությունում ձևավորվող պահանջմունքի արդյունք, երբևէ չի հանդիսացել պետական համակարգի բաղադրամաս:

Այն ունի դարերեց եկող արմատներ: Փաստաբան եզրույթը լատինական ծագում ունի (advocates), որը նշանակում է օգնության կանչված [1]: Փաստաբանը այն իրավաբանն է, որը մանագիտական իրավական օգնություն է ցուցաբերում դրա կարիքն ունեցողներին: Փաստաբանությունը, որպես պաշտպանության ձև, ծագել է շատ վաղ անցյալում: Ի սկզբանե մարդն ինքնուրույն է պաշտպանվել արտաքին ազդակներից ու վտանգավոր երևույթներից և միայն հետո, իր զարգացմանը զուգընթաց, սովորել է հարաբերություններ հաստատել այլոց հետ՝ հաղորդակցվել, առևտուր անել և այլն: Այսպիսի վարքագիծը, ինքնին, ինքնապաշտպանության դրսևորում էր, որը հարազատների, ցեղակիցների պաշտպանության հետ միասին դարձավ կենսաբանորեն պայմնավորված զբաղմունք: Փաստաբանության առաջնային դրսևորման՝ մասնագիտական պաշտպանությունն, իր հերթին, առաջացել է վաղ քաղաքակրթության ձևավորման հետ մեկտեղ, երբ թույլը խնդրում էր ուժեղին օգնել իրեն, և վերջինս բավարարում էր խնդրանքը: Հետաքրքրական է, որ ի սկզբանե դա արվում էր հաճույքի համար, իսկ հետո՝ վճարովի հիմունքներով: Հենց այդ սոցիալական աղբյուրներից էլ սկիզբ է առնում փաստաբանությունը: Փաստաբանությունն իրեն բնորոշ այժմեական գծերը ձեռք բերեց պետության կողնից պաշտոնապես ճանաչում ստանալուց հետո: Մեր համար ընդունելի չէ այն հայեցակետը, թէ փաստաբանումության առաջացումը պայմանավորված է դատարանների ձևավորմամբ: Բանն այն է, որ դատարանները, որպես վեճեր քննող պետական մարմիններ, պատմականորեն առաջացել են ոչ վաղ անցյալում, իսկ վաղ անցյալում ծնունդ առած պաշտպանությունը մշտապես փնտրել է իր աշխատանքի օբյեկտը, որը հստակեցվեց, երբ սոցիալական ասպարեզում հայտնվեցին դատարանները: Պատմականորեն՝ տարբեր երկրներում փաստաբանության ձևավորումը բազմապատկեր է: Օրինակ, Հունաստանում փաստաբանների խավ, որպես այդպիսին, չի եղել: Հունական «փաստաբանությունն» առավելապես կապված էր հռետորական արվեստի հետ: Իրավական ներկայացուցչությունը Հունաստանում չհասցրեց ձևավորվել: Դատարանում քաղաքացին ինքն էր անձամբ ելույթ ունենում կամ նրա բարեկամները:

Հին Հռոմում փաստաբանությամբ կարող էին զբաղվել միայն Հռոմի լիարժեք քաղաքացիները: Եթե հանրապետական Հռոմում փաստաբանությունը բացարձակապես ազատ մասնագիտություն էր, ապա սկսած մ.թ.ա. 4-րդ դարից, Հռոմեական կայսրության ժամանակներում, այն վերածվեց պետական ծառայության:

Փաստաբանության կազմակերպման այդ ուղղությունների գոյությունը Հռոմում հետագայում անդրադարձավ տարբեր պետություններում փաստաբանության ինստիտուտի զարգացման վրա [2]:

Պատմականորեն, մինչիրավական և իրավական պետականության զարգացմանը զուգընթաց, փաստաբանությունը ունեցել է տարբեր կարգա-

վիճակ՝ գտնվել է պետությունից կախյալ կամ հարաբերականորեն անկախ վիճակում: Անկասկած, պետությունից կախյալ վիճակում գտնվող՝ դատարանի կազմում հայտնված փաստաբանությունը երբեք չի արդարացրել բնակչության վստահությունը: Այս առիթով մինչհեղափոխական ժամանակների հայտնի իրավաբան Ի. Ֆոյնիցկին գրում է. «Դառնալով պաշտոնատար անձինք, փաստաբանները կորցնում են իրենց վստահված շահերի պաշտպանության համար անհրաժեշտ անկախությունը և ինքնուրույնությունը: Փաստաբանների՝ դատարանի կազմում հայտնվելը, վնասում է նրանց անկախությանը. պետք է ենթադրել, որ դատավարություններում բաց պայքարը կլրացվի դատարանի ազդեցիկ դատավորների հետ անդրկուլիսային համաձայնություններով» [3]:

Հարցի վերաբերյալ Յու. Ստեցովսկին տեղին է նկատում, որ «լիարժեք իրավական օգնության համար անհրաժեշտ է անկախ և ինքնակառավարվող փաստաբանություն, դրա մասին խոսք լինել չի կարող, եթե փաստաբանների ընդունելության և կարգապահական պատասխանատվության գործառույթը պատկանում է պետական մարմիններին, այլ ոչ թե փաստաբանությանը: Հաստիքային փաստաբանումությունը այլ նպատակ էր հետապնդում. փաստաբանին դնել կախյալ, ենթակայական վիճակում, դարձնել նրան վարչակազմի կամքի խոնարհ կատարող» [4]:

Բոլշևիկյան Ռուսաստանի մի կարճ ժամանակահատվածում պաշտպանը համարվում էր պետական հիմնարկի պաշտոնատար անձ: Նրանց ընտրում էին Խորհուրդների գործկոմները և ընդգրկում պաշտպանների, մեղադրողների և քաղաքացիական գործով կողմերի ներկայացուցիչների կոլեգիայի կազմում՝ դատավորի աշխատավարձին հավասար աշխատավարձով: Դատավարությանը մասնակցելու գումարի չափը որոշում էր դատավորը: Այդ գումարները անցնում էին պետությանը:

Շուտով աչքի զարնվեց կազմավորված նոր փաստաբանական կառույցի անկենսունակությունն ու անարդյունավետությունը, և առաջ քաշվեց փաստաբանության որոշակի ինքնուրույնության, ինքնավարության հիմնահարցը: Արդյունքում՝ 1922 թ. օրենսդրորեն Խորհրդային Ռուսաստանի դատապաշտպանների ինստիտուտին (կոլեգիաներին) տրվեց հատուկ կարգով գործող ոչ պետական կազմակերպության կարգավիճակ, սակայն կոլեգիաները՝ ունենալով իրենց հատուկ կառուցվածքը և ինքնուրույն գործառույթները, շարունակում էին մնալ պետական մարմինների վերահսկողության ներքո. ինչպես ցույց տվեց խարհրդային իրականությունը, կոմունիստներին անկախ փաստաբանություն պետք չէր: Տեղերում բնակչության իրավական օգնության, մեղադրանքի և պաշտպանության կազմակերպման պարտականությունը դրվեց համապատասխան պետական մարմինների (Արդժողկոմատների)՝ արդարադատության բաժինների վրա: Պաշտպանի մասնակցության հարցը տնօրինական նիստով լուծում էր դատարանը՝ դատաքննության փուլից [5]:

Սակայն դրական զարգացումն այն էր, որ լուծում ստացավ փաստա-

բանության համար այն կարևորագույն հարցը, որ փաստաբանը չի կարող նշանակվել և լինել պետական ծառայող, այլ կազմակերպությունն ինքն է փաստաբանին ընդունում իր շարքերը՝ առանց պետության միջամտության:

Ինչպես ցույց է տալիս փորձը, փաստաբանները միայն այն դեպքում կարող են իրականացնել իրենց մասնագիտական պարտքը, եթե միավորված են ինքնուրույն հասարակական կազմակերպության մեջ: Պարզ է, որ երբ պաշտպանը և մեղադրողը հանդիսանում են պետության ներկայացուցիչներ, իրենց տրամադրության տակ ունեն միևնույն ապացույցները, ապա, հավանաբար, գործով նրանց հետևությունները կլինեն միանման: Նման իրավիճակում պաշտպանը անխուսափելիորեն դառնում է դատախազի օգնականը, իսկ դատավճիռը՝ մեղադրական:

Հաճախ կարծիք է հնչում, թե փաստաբանությունը դատարանի օժանդակ կազմավորում է: Իրականում դատարանների և փաստաբանության իրավական բնույթը տարբեր է: Թեև փաստաբանի աշխատանքը առավելապես կապված է դատարանների հետ, սակայն այն ունենալով այլ գործառույթներ ու նպատակներ, այդպիսի որակներ ձեռք չի բերում: Ճիշտ էր Մ. Շալամովը, երբ փաստաբանությունը համարում էր ոչ թե այդպիսին, այլ «հասարակական և ինքնակառավարվող կազմակերպություն» [6]:

Անառարկելի է, որ փաստաբանական գործառնությունը պետական նշանակություն ունի, սակայն դա չի նշանակում, որ փաստաբանը պետության ներկայացուցիչն է. դատավարությունների ժամանակ գործով ճշմարտության բացահայտման աջակցությունը չի փոխում փաստաբանության իրավական բնույթը: Փաստաբանությունը մնում է որպես հասարակական կազմակերպություն և չի դառնում «դատավորի օգնական»:

1977 թ. ընդունվեց ԽՍՀՄ երրորդ Սահմանադրությունը, որում առաջին անգամ խոսք գնաց փաստաբանության մասին. այն հռչակվեց որպես հանրային ինստիտուտ (հոդ. 161) և ըստ իր իրավական բնույթի՝ հասարակական կազմակերպություն: Դա է պատճառը, որ խոսքը գնում էր այն մասին, որ «փաստաբանների կոլեգիաները՝ ոչ պետական, մասնագիտական, կամավոր միավորումներ են» [7]: Ինչպես այլ հասարակական կազմակերպություններ, փաստաբանների կոլեգիաները պետք է կազմավորվեին ինքնակառավարման սկզբունքով, ինչը բնութագրվում է. Անդամության կամավորությամբ, ընտրովի մարմիններում մասնակցությանբ և դրանց գործունեության նկատմամբ հսկողությամբ, կոլեգիայի նյութական միջոցների ձևավորմանը փաստաբանների մասնակցությամբ և այլն:

Փաստաբանական կազմավորումները գոյատևում էին սեփական միջոցների հաշվին: Դրանց ստեղծման համար փաստաբանները հոնորարի մի մասը փոխանցում էին կոլեգիաներին:

Սակայն, ստացվեց այնպես, որ շարադրված դրույթների մեծ մասը մնաց որպես բարի ցանկություն և նպատակ: Խորհրդային փաստաբանությունը եղել

է և մնաց կուսակցական-պետական մեքենայի մասը, նրա շահերը սպասարկող գործիքներից մեկը: Փաստաբանությունը, որպես հասարակական կազմակերպություն, էականորեն տարբերվում է այլ իրավապաշտպան կազմակերպություններից նրանով, որ փաստաբանական հանրությունը իր անդամներին առաջադրում է սովորականից ավելի բարձր մասնագիտական և որակական պահանջներ, իսկ նրա մարմինները՝ վերահսկում են փաստաբանների գործունեությունը: Փաստաբանները չվերածվելով պետական պաշտոնյաների, մնում են որպես «ազատ մասնագիտության» մարդիկ: Շատ կարևոր է, որ փաստաբանական գործունեությունը ոչ առևտրային բնույթ ունի: Անկասկած, փաստաբանի աշխատանքը պետք է ըստ արժանվույն վարձատրվի: Դրա հետ մեկտեղ, փաստաբանական գործունեության նպատակը սկզբունքորեն այլ է: Այս ամենը փաստաբանին դարձնում է որակյալ համակողմանի իրավական օգնություն ցուցաբերող սուբյեկտ:

Իրավական պետությունը և կայացած քաղաքացիական հասարակությունը փոխկապված են, լրացնում են միմյանց՝ մեկի գոյությունը պայմանավորված է մյուսի առկայությամբ: Իրավական պետության առանցքային գործառույթը՝ իրավունքի պաշտպանությունը, իրականացնում է պետութունը՝ իր կողմից ստեղծված վերահսկող մարմինների միջոցով: Սակայն պետությունը չի կարող արդյունավետ կերպով վերահսկել ինքն իրեն, որը լրացնում է քաղաքացիական հասարակությունը՝ համապատասխան ինստիտուտներով, այդ թվում՝ փաստաբանության միջոցով: Արդյունքում, փաստաբանական գուծունեությունը ձեռք է բերում պետական հասարակական նշանակություն:

Այսպիսով, փաստաբանությունը, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ, իրավական պետության կայացմանը նպաստող գործոն, համարվում է ոչ պետական և ոչ առևտրային՝ փաստաբանական գործունեությամբ զբաղվող անձանց մասնագիտական (իրավապաշտպան) կամավոր միավորում, որի նպատակը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է, ծառայելով հասարակությանը և ունենալով պետական նշակություն՝ հավասարակշռություն է ապահովում հասարակության, առանձին քաղաքացիների և պետության շահերի միջև, ապահովում է արդարադատութան մատչելիությունը:

Հայրենական փաստաբանության առաջացման, ձևավորման, զարգացման սկիզբը դրվեց Հայաստանի 1-ին Հանրապետության ժամանակաշրջանում, և Հայաստանի՝ ԽՍՀՄ–ի կազմում ընդգրկվելու պարագայում, այն ամբողջությամբ ընթացավ վերը շարադրված դրույթներին, օրինաչափություններին ու կանոններին համահունչ: ՀՀ 1995թ. Սահմանադրության 40, 93 և 16 լույսի ներքո՝ 1995-2005թթ. իրականացված բարեփոխումները նշանավորում են Հայաստանում փաստաբանության ձևավորման նոր փուլ՝ անկախ պետականության պայմաններում:

Անցած դարի 90-ականներին մեր երկրում իրականացված բարեփոխում-

ները սրություն հաղորդեցին քաղաքացիների իրավունքները արդյունավետ պաշտպանելու (հատկապես ձեռնարկատիրության ոլորտում) ունակ փաստաբանություն ստեղծելու հիմնախնդրին:

Երկրում իրականացվող դատահիրավական բարեփոխումներին զուգահեռ մշակվեց և 1998թ. հունիսի 18-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որը վավերացվեց ՀՀ Նախագահի կողմից հուլիսի 18-ին [8]: Օրենսդրորեն փաստաբանների կոլեգիայի իրավահաջորդ ճանաչվեց ՀՀ փաստաբանների միությունը, որը, փաստորեն, պետք է հիմնադրվեր առաջինը: Օրենքը թույլատրում էր միությունների բազմակիությունը:

Օրենքով լուծվեց փաստաբանության կարգավիճակին բնորոշ՝ օրենքով նախատեսված բոլոր իրավունքներից օգտվող, անկախ, ինքնակառավարվող միավորում լինելու հիմնահարցը: Որպես այդպիսին նորաստեղծ փաստաբանների միությունը պետք է գրանցվեր վճռաբեկ դատարանում: Իրավաբանական կոնսուլտացիաների փոխարեն թույլատրելի էր օրենքով նախատեսված աշխատանքի կազմակերպական-իրավական ցանկացած ձև:

Օրենքով առաջին անգամ ներմուծվում էր փաստաբանների արտոնագրման գաղափարը: Փաստաբան էր համարվում՝ փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր ստացած փաստաբանը, որի համար անհրաժեշտ էր բավարարել երկու պահանջի՝ ունենալ բարձրագույն իրավաբանական կրթություն, հանձնել որակավորման քննություն՝ ստանալ համապատասխան վկայական և դիմում ներկայացնել ՀՀ փաստաբանների միություն՝ արտոնագիր ստանալու համար:

Արտոնագրումը ուներ մի լուրջ բացթողում: Բանն այն է, որ արտոնագրվողին որոշակի փորձ ունենալու պահանջ չէր ներկայացնում: Արդյունքում Փաստաբանների միությունն համալրվեց անփորձ, բուհ-ն ավարտած երիտասարդ փաստաբաններով, որոնք կարիք ունեին մասնագիտական պատրաստման:

1999 թ. մարտի 7-ին տեղի ունեցավ ՀՀ փաստաբանների միության հիմնադիր ժողովը և նախկին փաստաբանների կոլեգիայի փոխարեն ստեղծվեց ՀՀ փաստաբանների միությունը: Կազմավորվեցին միության մարմինները: Նախկին կառուցվածքը համալրվեց նոր մարմնով՝ կարգապահական հանձնաժողովով, որը պետք է հետևեր փաստաբանների կողմից օրենքով սահմանված կարգապահական դրույթների պահպանության վերահսկողության իրականացմանը: Փաստաբանական գործունեության վճարովիությունը օրենսդրական ամրագրում ստացավ: Հոնորարի չափն ու վճարման կարգը որոշվում էր փաստաբանի և վստահորդի միջև կնքված քաղաքացիա-իրավական պայմնագրով: Պահպանվեց անվճար իրավաբանական օգնության ինստիտուտը. անհրաժեշտության դեպքում այն ապահովում էր պետությունը՝ ՀՀ փաստաբանների միության միջոցով՝ պետության ֆինանսավորմամբ: Կարելի է ասել, որ 1998թ. օրենքը որոշակիորեն լուծեց ևս մեկ հիմնախնդիր՝

մրցակցությունը փաստաբանության համակարգում: Արդեն 2005 թ. արտոնագրված փաստաբանների թիվը 483-ն էր [9]: Աստիճանաբար աճում էր որակյալ փաստաբանական ծառայությունների առաջարկը: Սակայն փաստաբանների ցրվածությունը առանձին միություններում չէր նպաստում որակյալ ծառայություններ մատուցելուն: Ելքը՝ նրանց համախմբելն էր մեկ ընդհանուր կառույցում:

ՀՀ Ազգային ժողովը 2004թ. Դեկտեմբերի 14-ին ընդունեց «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը՝ նոր խմբագրությամբ, որը ՀՀ Նախագահը ստորագրեց 2005թ. հունվարի 13-ին [10] և սկսվեց փաստաբանության զարգացման արդի փուլը: Նախ, վերացվեցին փաստաբանների միությունները և ստեղծվեց մեկ միասնական կառույց՝ ՀՀ փաստաբանների պալատը: Օրենքը նպատակ է հետապնդում հզորացնել այդ կառույցը, բարձրացնել փաստաբանության հեղինակությունը, լիակատար ազատություն է շնորհում փաստաբանությանը՝ թույլատրում է նրան ազատորեն իրականացնել ինքնակառավարման իրավունքը:

Օրենքը, ՀՀ փաստաբանների պալատը որակելով որպես փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն, նախատեսում է, որ այն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում օրենքով սահմանված կարգով գրանցվելու պահից: Այսինքն, փաստաբանների պալատը գրանցվում է ոչ թե վճռաբեկ դատարանում, ինչպես մինչ այդ էր, այլ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրում: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը թույլատրում են փաստաբանին՝ փաստաբանությանը զուգահեռ զբաղվել ցանկացած այլ գործունեությամբ: Միակ սահմանափակումը՝ Կանոնագրքի 2.5 կետով նախատեսված՝ պետական կամ համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամանակ փաստաբանական գործունեություն իրականացնելու արգելքն է: Ստացվում է, որ փաստաբանը միաժամանակ կարող է զբաղվել նաև, օրինակ, բիզնեսով, արհեստով և այլն: Հայտնի է, որ որակյալ իրավապաշտպան գործունեությունը փաստաբանից պահանջում է մտավոր ներուժի, մասնագիտական գիտելիքների, կենսափորձի, ժամանակի, էնեգիայի անմանացորդ ներդրում՝ առաջադրված նպատակներին հասնելու համար: Որոշ փաստաբաններ հավելյալ շահույթ ունենալու համար գործունեություն են ծավալում այլ ոլորտներում: Կարծում ենք, մշտական հիմունքներով մի քանի այս կամ այն գործունեությամբ զբաղվող փաստաբանը ի զորու չէ ապահովել փաստաբանության պատշաճ որակ: Խնդիրը լուծելու հանար նպատակահարմար է օրենքի ուժով արգելել փաստաբանին՝ զբաղվել այլ գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք (բիզնես, արհեստ և այլն), բացի գիտական, մանկավարժական ստեղծագործական աշխատանքից:

Օրենսդրությամբ սահմանված փաստաբանության կարգավորման կառուցակարգերն ընդհանուր առմաբ համապատասխանում են միջազգային

նորմերին: Դրանց համահունչ, իր առջև դրված խնդիրները լուծելու համար, օրենքով նախատեսված կարգով Պալատը կազնավորել է մարմիններ (ընդհանուր ժողով, Պալատի խորհուրդ, որակավորման և կարգապահական հանձնաժողովներ), որոնցից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ գործառույթներ և իրավասություններ: Պալատի նախագահը փաստաբանների պալատի գրրծադիր մարմնի բարձրագույն պաշտոնատար անձն է: Նախագահն ընտրվում է առնվազն տաս տարվա փաստաբանական ստաժ ունեցող անդամների կազմից փակ գաղտնի քվեարկությամբ՝ չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու ամգամ անընդմեջ: Գտնում ենք, որ Պալատի նախագահի պաշտոնավարման ժամկետի այսպիսի սահմանափակումը, պայմանավորված նախագահի՝ ավտորիտար կառավարիչ դառնալու երկյուղով, չի բխում փաստաբանության զարգացման հեռանկարային շահերից: Թեպետև երկյուղը փարատվում է մի շարք օրենսդրական երաշխիքներով. ընտրության կարգը, հետկանչի հնարավորությունը և այլն: Սակայն գտնում ենք, որ բացառիկ դեպքերում, եթե նախագահը, անմնացորդ նվիրված լինելով փաստաբանության զարգացմանը, իրականացնում է լայնածավալ բարեփոխումներ, որոնք շարունակական են և, որ կարևոր է, վայելում է փաստաբանների գերակշիռ մասի վստահությունը, ապա նրան պետք է ընձեռնել հետագա ընտրություններին մասնակցելու հնարավորություն:

Փաստաբանության արդի փուլի վերջին մի քանի տարիները բնութագվում են աննախադեպ առաջընթացով. ՀՀ կառավարության 2012թ. թիվ 601-Ա որոշմամբ Փաստաբանների պալատին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է Երևան քաղաքի Զաքիյան 2 հասցեի, նյութատեխնիկական առումով հագեցած, պետական, իրավապահ մարմիններին պատկանող կառույցներին ոչնչով չզիջող, 1560, 1 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շենքը (փաստաբաններին տեղերում շենքերով ապահովելը մնում է խնդրահարույց, և այս առումով, կարծում ենք, անհրաժեշտ է վերականգնել խորհրդային ժամանակների փորձը. ՀՀ տարածքի վարչական միավորներում անհատույց օգտագործման հիմունքներով առանձնացնել մեկուսի տարածքներ, որտեղ, փաստաբանների պալատի որոշմամբ, կարող են գործունեություն ծավալել սկսնակ և դրա կարիքը ունեցող փաստաբանները), հիմնադրվել և հաջողությամբ գործում է Փաստաբանական դպրոցը (ուսումնառության համար նախատեսված են նաև անվճար տեղեր), երիտասարդների խորհուրդը և փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը, առաջադեմ երկրների մասնագետների ներգրավմամբ ստեղծվել է փաստաբանների մասնագիտական վերապատրաստման գործուն կառուցակարգ: Պալատն անդամակցել է Փաստաբանների միջազգային միությանը, համագործակցություն է հաստատել Վրաստանի, Բելառուսի, Մարսելի, Փարիզի, այլ երկրների փաստաբանական պալատների հետ [11], ինչը նոր որակ ու երանգ հաղորդելով հայրենական փաստաբանությանը, դառնում է Երկրում

քաղաքացիական հասարակության կայացմանը նպաստող որոշիչ գործոն: Երկրում իրականացվող դատաիրավական բնարեփոխումների համատեքստում արմատական փոփոխություններ է կրել փաստաբանության համակարգը, բարձրացել է նրա դերն ու նշանակությունը քաղաքացիական հասարակության և իրավունքի գերակայության ամրապնդման գործում, որի ուժով փաստաբանությունը ձեռք է բերել պետության կարևորագույն իրավական ինստիտուտի որակ, իրավական բնույթով ու գործառույթներով հենասյունային նշանակություն ունի իրավական պետության և քաղաքակիրթ հասարակության կառուցման համար: 2016թ. նոյեմբերի 01-ի դրությամբ Հանրապետությունում արտոնագրված փաստաբանների քանակը 1978-ն է, որից 247-ը կասեցրել են իրենց արտոնագրի գործողությունը, ինչի արդյունքում գործող փաստաբանների թիվը կազմում է 1731 անձ: Հանրային պաշտպանների հաստիքների ընդհանուր թիվը 66–ն է, որոնցից 38-ը գործել են մարզերում, իսկ 28-ը՝ Երևանում: 2016թ. Հանրային պաշտպանների վարույթում եղել է 3985 քաղաքացիական և 4410 քրեական գործ [12]: Այժմ փաստաբանների թիվը շուրջ 2400 է: ՀՀ Սահմանադրությունն [13] ամրագրել է այս ինստիտուտի համար մի շարք առանցքային նշանակություն ունեցող դրույթներ. իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների, հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում գործի հրապարակային քննության, իրավական օգնություն ստանալու, ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք (61, 63, 64 հոդ.), որոնք սկզբունքային նշանակություն ունեն փաստաբանության ձևավորման և զարգացման համար: Սակայն, մեր կարծիքով, փաստաբանությունը՝ որպես փաստաբանի կարգավիճակ ստացած անձանց կողմից մասնագիտական հիմունքներով ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող որակյալ իրավական օգնություն և արդարադատության մատչելիությունը ապահովող գործունեություն, ինպես պետության կառուցվածքային տարրերը, օրինակ՝ դատախազությունը, պետք է բարձրացվի սահմանադրական մակարդակի:

Փաստաբանության հասկացությունը պետք է սահմանադրական ամրագրում ստանա, որի պարագայում հավուր պատշաճի կընկալվի փաստաբանության դերը և նշանակությունը հասարակության կողմից, փաստաբանը կզգա իրեն սահմանադրորեն պաշտպանված:

Շարադրվածից ելնելով, արդարացված ենք համարում ՀՀ Սահմանադրության 64 հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

1. «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

2. Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխա-

վորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը, որի կազմակերպման համար ստղծվող Փաստաբանների պալատը ղեկավարում է առնվազն տասը տարվա փաստաբանական ստաժ ունեցող անդամների կազմից փակ գաղտնի քվեարկությամբ՝ չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու ամգամ անընդմեջ ընտրված նախագահը: Բացառիկ դեպքերում երկու ամգամ անընդմեջ ընտրված նախագահը կարող է մասնակցել հաջորդ ընտրություններին: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով»:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18 հոդ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով .

(...) 9. չզբաղվել այլ գործունեությամբ, չկատարել այլ վճարովի աշխատանք (բիզնես, արհեստ և այլն), բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից»:

Օգտագործված գրականություն

1. Баранов Д., Смоленский М., Адвокатское право: Учебник. - М.: Издательско-торговая корпорация "Дашков и К", Ростов н/Д: Наука-Пресс, 2006. С.7.

2. Ազարյան Ե. Փաստաբանության հիմունքները, Ուսումնագործնական ձեռնարկ .-Եր., Գաասպրինտ, 2006, էջ 17:

3.Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводетва. Т.1. СПб., 1912. 483-484.

4.Стецовский Ю.И. Адвокатура и государство. - М.: Юристь, 2007. С. 76.

5.Ղազինյան Գ. Ս. Քրեական դատավարության պատմական և արդի հարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալսարան հրատ., 2001թ., էջ 77:

6.Шаламов М.П. Слово адвокату. Советская юстиция. 1982. №.6. С.32.

7.Осетров Н.Ю. Юридическая помощь адвокатов гражданам и организация. Социалистическая законность.1982. №. 5. С. 24.

8.«Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 1998/15 48, 27.07.1998թ.

9.ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի ԱՂ/59, 26.01. 2015թ. գրություն:

10. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, ՀՕ-29-Ն, ՀՀՊՏ 2005/6/378, 21.01.2005, հոդ.120:

11. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի հաշվետվությունը ռազմավարական (այդ թվում՝ նախընտրական) ծրագրի կատարման վերաբերյալ (2013 թ. Հոկտեմբեր - 2014թ. դեկտեեմբեր): Ք. Երևան, 23 դեկտեմբերի 2014թ.

12.ՀՀ փաստաբանների ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի նո. 01105, 1/1123-16, 07.11.2016թ. գրություն

13. http: //www.president.am/hy/constitution-2015/

ГАМЛЕТ СТЕПАНЯМ. АДВОКАТУРА КАК ИНСТИТУТ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА: ПОНЯТИЕ, ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ. *На наш взгляд, понятие адвокатуры, как структурные элементы государства, например- прокуратуры, должно получать конституционное закрепление, в условиях которого роль и значение адвокатуры должным образом будет воспринят обществом, адвокат почувствует себя конституционно защищенным.*

HAMLET STEPANYAN. THE ADVOCACY AS AN INSTITUTION OF A CIVIL SOCIETY, THE NOTION, DEVELOPMENT AND CREATION PROBLEMS. *The notion of the Bar, like the structural elements of state, such as prosecution, should be consolidated by the Constitution. This will help to properly understand the role of the Bar and its significance by the society, while the lawyers will feel protected by the Constitution.*

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿ-Ի ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Գրիշա Առաքելյան

Սան Պաուլոյի համալսարան, Հայբուսակ համալսարան

Մուտքագրված է 11.04.22, հաստատված է տպագրության 30.06.22

Ամփոփագիր. *Բարեփոխումներ իրականացնելու հիմախնդիրները առաջնային նշանակություն ունեն: Դրանք առավելապես ակտուալ դարձան անցյալ դարի 90-ականներից: Գործընթացն առաջին հերթին կապում են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի գործունեության հետ: Անցած 77 տարիների ընթացքում կազմակերպության անդամ պետությունների թվաքանակը 50-ից հասել է 193 և ստեղծված իրավիճակում պահանջվում է Անվտանգության խորհրդի գործունեությունը համահունչ դարձնել ժամանակի պահանջներին: Նման պահանջով հանդես են գալիս Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրները:*

Բանալի բառեր. *Համաշխարհային Հանրություն, միջազգային ռիսկ, վետոյի իրավունք, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ, միջազգային անվտանգություն, գործիքակազմեր, ադապտացիա:*

ՄԱԿ-ին նվիրված բազմաթիվ և բազմակողմ հետազոտությունները վկայում են այն մասին, որ 75 տարուց ավել Կազմակերպության ստեղծման դոկտրինի վերաբերյալ միանշանակ մոտեցում գոյություն չունի: Այս առնչությամբ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հայտնի խորհրդային դիվանագետ, պատմաբան, երկար տարիներ ԽՍՀՄ մշտական ներկայացուցիչ ՄԱԿ-ում, պրոֆեսոր Վիկտոր Իսրայելյանի աշխատությունները և հրապարակումները խնդրո առարկա բնագավառին նվիրված: Այդուհանդերձ, Ազգերի Լիգային փոխարինող նոր ունիվերսալ կազմակերպություն ստեղծելու գաղափարն առաջին անգամ բարձրաձայնեցին ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը և Բրիտանիայի վարչապետ Չերչիլը 1991թ. Օգոստոսին «նյուֆաունդլենդում» գտնվող բրիտանական ռազմածովային բազայում: Բանակցությունների արդյունքում ստորագրվեց այսպես կոչված «Ատլանտյան խարտիա», որին նույն թվականի սեպտեմբերին միացավ խորհրդային միությունը: Փաստացի նշված փաստաթուղթն իրենից ներկայացնում էր յուրահատուկ ճանապարհային քարտեզ՝ ձևավորելու ապագա միջազգային կազմակերպությունը [1]: 1942թ. Հունվարին արդեն իսկ ձևավորված «Հակահիտլերյան Կոալիցիայի» քաղաքականությունը պաշտպանելու իրենց անվերապահ աջակցությունը հայտնեցին 26 պետություններ, որոնք միաժամանակ բարձր գնահատեցին «Ատլանտյան խարտիայի» դերն ու նշանակությունը: Այսուհանդերձ գործընթացը շարունակվեց բավական ինտենսիվ և 1943թ. հոկտեմբերին ԽՍՀՄ, ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի մասնակցությամբ Մոսկվայում հրավիրվեց խորհրդաժողով, որի ավարտին

ընդունվեց համընդհանուր անվտանգությանը վերաբերող հռչակագիր: Իր ստորագրությամբ փաստաթղթին միացավ նաև Մոսկվայում Չինաստանի դեսպանը:

Հռչակագրում ամրագրված էր, որ մասնակիցները՝ հնարավորինս կարճ ժամկետում պարտավորվում են ստեղծել խաղաղությունը և միջազգային անվտանգությունը պաշտպանող ունիվերսալ միջազգային կազմակերպություն: Շարունակելով, նշենք, որ ՄԱԿ-ի (ի դեպ նման ձևով կոչելու եզրույթն առաջարկեց նախագահ Ֆ. Ռուզվելտը) ձևավորման վերջնական պայմանավորվածությունը ձեռք բերվեց 1945թ. մարտին Յալտայի կոնֆերանսում [2]:

1945թ. հունիսի 26-ին Սան-Ֆրանցիսկոյում (Կալիֆորնիա) 50 պետությունների պատվիրակությունների մասնակցությամբ անցկացվեց գագաթաժողով, որի ավարտին ոտնկայս և միաձայն ընդունվեց ՄԱԿ-ի կանոնադրությունը: ցավոք, գագաթաժողովին բացակայում էր հիմնադիր հայրերից ՖՐանկլին Ռուզվելտը, ով հանկարծամահ եղավ 1945թ. ապրիլի 12-ին Սպիտակ տան իր առանձնասենյակում: ՄԱԿ-ի կանոնադրությունն ուժի մեջ մտավ 1945թ. հոկտեմբերի 24-ին, այն բանից հետո երբ Խորհրդային Միությունը ներկայացրեց վավերացման մասին փաստաթուղթը՝ այդպիսով ապահովելով ձայների անհրաժեշտ քանակը [3]: Յուրաքանչյուր տարի հոկտեմբերի 24-ը նշվում է որպես ՄԱԿ-ի օր:

ՄԱԿ-ի ողջ համակարգում արմատական բարեփոխումների հինախնդիրը դրվեց անցյալ դարի 90-ականներին: Ստեղծված բարդ աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական և աշխարհառազմավարական իրավիճակը լուրջ մարտահրավերներ է ստեղծել ՄԱԿ-ի գործունեության բնագավառում: Օր-օրի խորանում և ընդլայնվում է համաշխարհային հանրության հիասթափությունը կառույցի նկատմամբ:

Ստեղծված իրավիճակն առավելապես բարդացնում են միջազգային ահաբեկչությունը, տարածաշրջանային և միջազգային զինված հակամարտությունները, հսկայական չափերի հասնող միգրացիան, Covid-ը արևադարձային հիվանդությունները; Այս ամենը հաղթահարելու համար անհրաժեշտ է մշակել և ընդունել նոր դոկտրին: Այս առնչությամբ առանցքային տեղ է զբաղեցնում ՄԱԿ-ի գլխավոր իրավական մարմինը՝ Անվտանգության խորհուրդը, որին վերապահված է խաղաղության և միջազգային անվտանգության պատասխանատվությունը: Այս մարմնում բարեփոխումներ իրականացնելու խնդիրն ակտուալ է դարձել վերջին 20 տարիներին: 2015թ. ՄԱԿ-ի հոբելյանական 70-րդ գլխավոր նստաշրջանում մի շարք «ծանրաքաշ» պետությունների պատվիրակությունների կողմից առաջարկներ հնչեցին՝ մեծացնելու ԱԽ, ինչպես մշտական, այնպես էլ ոչ մշտական անդամների թվաքանակը: Առավելապես հրատապ է համարվում մշտական անդամների թվի համալրումը ևս 5-ով: Որպես հնարավոր թեկնածուներ հանդես են գալիս Բրազիլիան, Գերմանիան, Հնդկաստանը և Ճապոնիան: Սակայն այս հարցում

նույնպես փորձագիտական կարծիքները հակասական են: Շրջանառվում է այն մոտեցումը, որ մշտական անդամների թվի ավելացումը կարող է ճգնաժամ առաջացնել որոշումների և բանաձևերի ընդունման գործընթացում: Այս կա_ պակցությամբ նպատակահարմար է հիշեցնել, որ ԱԽ բաղկացած է 15 ան_դամներից, որոնցից 5 մշտական են [4]: Դրանք պաշտոնական միջուկային տերություններն են և ՄԱԿ-ի հիմնադիր հայրերը (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ռուսաստանի Դաշնություն, Չինաստան և Ֆրանսիա): Ոչ մշտական 10 անդամներն ընտրվում են երկու տարի ժամկետով գլխավոր նստաշրջանում՝ ելնելով տարածաշրջանային գործոնից: Սկզբունքային նշանակություն ունի այն, որ ԱԽ կազմակերպչական որոշումներն ընդունվում են 15-ից 9 կողմ ձայնով ներառելով բոլոր հինգ մշտական անդաների քվեները (ի նկատի է առնվում վետոյի իրավունքը): ՄԱԿ-ի կանոնադրության 25-րդ հոդվածի համաձայն ԱԽ բոլոր բանաձևերն ունեն իմպերատիվ բնույթ [5]:

Ընդհանուր առմամբ ՄԱԿ-ի անդամ 100-ից ավել պետություններ յուրաքանչյուր տարի գլխավոր նստաշրջանում հարց են բարձրացնում՝ ապահովելու արդարացի ներկայացուցչություն ԱԽ-ում՝ բոլոր տարածաշրջաններից: Նույնիսկ աշխատանքային խումբ է ձևավորվել այս կապակցությամբ: 2020թ. ՄԱԿ-ի 75-րդ գլխավոր նստաշրջանում Ֆրանսիայի և որոշ աֆրիկյան երկրների պատվիրակությունների կողմից առաջարկվեց սահմանափակել վետոյի իրավունքը բոլոր այն դեպքերում, որոնք կապված են ռազմական հանցագործությունների, միազգային ահաբեկրության, ցեղասպանության, մարդկության դեմ իրականացվող հանցավորությունների հետ: Նշված նստաշրջնաում ՌԴ պատվիրակությունը բարձրաձայնեց ընդլայնելու պատժամիջոցների կիրառման ԱԽ իրավական գործիքակազմը [6]: Այս առնչությամբ կարևորվում է ԱԽ էմբարգոյի ինստիտուտը: Առաջընթաց է համարվում այն, որ վերջին ժամանակաշրջանում այդ կառույցը իրականացնում է այսպես կոչված «smart» (խելոք) պատժամիջոցներ այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք զբաղվում են զենքի անօրինական վաճառքով կամ փողերի լվացումով, ինչպես նաև օֆշորային գոտիներով: Այդուհանդերձ ԱՄՆ համարում են, որ բարեփոխումները ԱԽ-ում չպետք է վերածվի միակ և վերջնական նպատակի: ՄԱԿ-ի հանգրվանային բարեփոխումները պետք է իրականացվեն անդամ պետությունների համատեղ ջանքերով: ԱՄՆ, ՌԴ և Չինաստանը պնդում են, որ ՄԱԿ բոլոր կառույցները պետք է պահպանեն բարձր էթիկական չափանիշները և ռացիոնալ ճանապարհով օգտագործեն բյուջեի ֆինանսական միջոցները: Պատահական չէ, որ ԱՄՆ մշտապես դժգոհում են, որ յուրաքանչյուր տարի 5 մլրդ դոլար են հատկացնում կազմակերպության նպատակների իրականացմանը և ցանկանում են վերահսկել ֆինանսական հոսքերը [7]:

Վարչական բարեփոխումների առումով ԱՄՆ և Մեծ ԲՐիտանական ձգտում են ուժեղացնել ներքին վերահսկողությունը՝ բյուջետային կարգապահության

առումով և բաձրրացնել ֆինանսական աուդիտի դերակատարությունը: Այս կապակցությամբ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը 2021թ. հաշվետվությունում շեշտում է, որ ՄԱԿ-ի ամենամյա ֆինանսական ծախսերը 1950թ. սկսած ավելացել են գրեթե 45 անգամ: ՄԱԿ-ը ուռճացած և բյուրոկրատական կառույցի է վերածվել [8]: Այս պահին այն ներառում է 17 մասնագիտացված գործակալություններ, որոնցից յուրաքանչյուրը միջազգային իրավունքի սուբյեկտ է համարվում, 14 հիմնադրամներ, քարտուղարությունն իր 17 դեպարտամենտներով և 45 հազար աշխատակիցներով:

Անհերքելի փաստ է, որ ՄԱԿ-ի բյուջեի 25% ապահովում են ԱՄՆ: Կարևոր է նաև ԱՄՆ-ի ֆինանսական դերը կազմակերպության խաղարար և խաղաղապահ գործունեության բյուջեի ձևավորման բնագավառում: 2020-2021թթ. Այն կազմել է գրեթե 2, 5 մլրդ ԱՄՆ-ի դոլար: Ի դեպ ստեղծված իրավիճակում ԱՄՆ կառավարությունը սպառնում է սեկվեստրի ենթարկել կազմակերպության բնուջեն ընդհանրապես [9]: Հանուն արդարության անհրաժեշտ է շեշտել, որ գլվախոր քարտուղար Անտոնիու Գուտերեշը ջանքեր է ներդնում ֆինանսական քաղաքականությունը համահունչ դանձնելու ժամանակի պահանջներին: Այս կապակցությամբ կարևորվում է գլխավոր քարտուղարի լիազորությունների ընդլայնումը և որպես գլխավոր քարտուղարի ինստիտուտին օժանդակ կառույց՝ էթիկայի հարցերով Բյուրոյի ստեղծումը: Միաժամանակ կազմակերպության գլոբալ բարեփոխումների առումով կարևորագույն նշանակություն ունեցավ Մարդու իրավուքնների խորհրդի ստեղծումը [6]: Այս հարցում իր ուրույն դերակատարությունն ունեցան ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը և բազմակողմ քննարկումները: Տնտեսական և սոցիալական ծորհրդում (Экосос): Նորաստեղծ կառույցի վերաբերյալ բանաձևն ընդունվեց 2005թ.՝ ՄԱԿ-ի 60-ամյա գործունեությանը նվիրված պետությունների և կառավարությունների ղեկավարների գագաթաժողովում: Մարու իրավունքների խորհուրդն ամրագրվեց որպես գլխավոր նստաշրջանի ենթադաս մարմին և միաժամանակ հաշվետու գլխավոր քարտուղարին: Կարգավիճակի նման բարձրացումը վկայում է այն մասին, որ մարդու իրավուքնեների հիմնախնդիրը դիտվում է որպես ՄԱԿ-ի գործունեության երեք հիմնասյուներից մեկը՝ խաղաղության ևամիջազգային անվտանգության հետ միասին [10]:

Հարկ է նշել, որ խորհրդի ստեղծման ամենամեծ ջատագովն ԱՄՆ էին, որի սպասումներն, այդուհանդերձ, չարդարացան քանզի բանաձևի վերջնական տեքստում տեղ չգտան այն առաջարկները, որոնցով արգելվում էր, այսպես կոչված «изгой» պետություններ, Սիրիային, Իրանին, Իրաքին և Հյուսիսային Կորեային երբևէ հանդես գալ որպես թեկնածուներ՝ խորհրդի կազմում ընտրվելու համար: Արդյունքում ԱՄՆ բանաձևին դեմ քվեարկեցին և հրաժարվեին անդամակցել: Խորհուրդը բաղկացած է 47 անդամ պետություններից, որոնք ընտրվում են ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում

գաղտնի քվեարկությամբ՝ երեք տարի ժամկետով: Իրար հաջորդող երկու ժամկետների ավարտից հետո վերընտրվելու իրավունք չունեն: ՄԱԿ-ի համակարգում լուրջ բարեփոխում է համարվում Գլխավոր քարտուղարի ընտրության նոր կարգը: Պրակտիկորեն 70 տարի շարունակ գործում էր գլխավոր քարտուղարի ընտրության նույն ճանապարհային քարտեզը [11]: Սակայն 2015 դեպտեմբերին կազմակերպության անդամ պետությունների պահանջով գլխավոր նստաշրջանի նախագահի և Անվտանգության խորհրդի նախագահի համատեղ ստորագրությամբ պատրաստվեց փաստաթուղթ՝ գլխավոր քարտուղարի ընտրության Նոր կարգի վերաբերյալ և ներկայացվեց ՄԱԿ-ում հավատարմագրված բոլոր մշտական ներկայացուցչություններին և դիտորդներին [12]: Նորամուծությունը թույլ է տալիս անդամ պետություններին առաջադրել գլխավոր քարտուղարի պաշտոնի համար թեկնածուներ:

Արմատական բարեփոխումները ՄԱԿ-ի համակարգում շարունակում են մնալ միջազգային հանրության ուշադրության ներքո:

Օգտագործված գրականություն

1.https: //gazeta.ru/2017/01/26/
2. https: //lenta.ru/news/2017/05/21/
3. https: //zia.ru/med.a/2019/02/16/
4. Федоров В.Н. Организация обúединенних нации М.МГИМО 20122, с 452-453
5. Кофи Аниан: ООН нуждается в пеформировании https: // pPolit.ru/2012/04/14/
6. Burns Nicholas on UN reforms. https: //expert.ru/2014/10/21/
7. Позиция США по пеформированию ООН МЭМО. М. 2017, с.111-116
8.Г.Камилов ООН как Зерколо турбулентного мира М., 2019г. С. 29-31
9. Юрченко М. Позиция США по пеформированию ООН М. 2016, с 54-57
10.А. Калящин. Реформа совета Безониеихми ООН МЭМО N7, 1016 с.48-59
11.В.А.Соколов СССР и США в ООН М. США Канада N12 с.-97-104
12. А.Ролин Юбилейные итоги юбилея ООН М.М.Ж N8 2020 с. 6-11

ГРИША АРАКЕЛЯН. В КАКИЕ РЕФОРМЫ НУЖДАЕТСЯ ООН. *Рассмотрен основные аспекты одаптации Совета Безопасности ООН к реалям XXI века Привлечено внимание к назревшим изменениям, связанными с необходимости устранить недопредставительность развивающехся стран Азии, Африки и Латинской Америки в СБ ООН, удовлетворить разумные заявки стран этих континентов на членство в Совете на постоянной основе. через эффективное содействования возможностей СБ мировое сообщество может справляться с существующими и ожидаемыми визовами мировой стабильносту и совершить качественный рывок в ряде областей обеспечения всеобщой безопасности в полицеитричном мире.*

GRISHA ARAKELYAN. WHAT REFORMS DOES THE UN NEED? *The article addresses key aspects of the The UN Security Council (UNSC) adaptation to the 21 st century realities The author argues that the scole and diversity of major chaleuges to the world strategic stability in the forescelably future are such that naations can cope with them successfully only by acting together and taking full advantage of the UNSC facilities to mange global processes. The survival and sustainable development of polycentric world require maintaining and upgrading the UNSC proviciency, expanding collaforation between tha major powers in this format, based on international law. The need is stressed to do away with the under-representation of developing countries o Asia, Africa and Latin America in the UNSC.*

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Նորիկ Շահնազարյան

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Մուտքագրված է 10.06.22, հաստատված է տպագրության 30.06.22

Ամփոփագիր. *Հոդվածում համգամանորեն քննարկվում է սահմանադրության հասկացությունը և էությունը: Կատարված ուսումնասիրությունների նպատակն է հիմնավորել, որ սահմանադրությունը որպես պետության հիմնական օրենք, իրենից ներկայացնում է պատմահիրավական և իրավաքաղաքական փաստաթուղթ, որում ամրագրված է պետության կառուցվածքը, կառավարման ձևը, քաղաքական ռեժիմը, մարդու իրավունքների կարգավիճակը, պետական մարմինների և տեղական ինքնակառավարման համակարգը: Սահմանադրությունը ընդունվում և փոփոխվում է հատուկ ընթացակարգով:*

Հիմնաբառեր՝ *սահմանադրություն, հիմնական օրենք, պատմահիրավական և իրավաքաղաքական փաստաթուղթ, մարդու իրավունքների կարգավիճակ, կառավարման ձև, քաղաքական ռեժիմ, պետական կառուցվածք:*

Սահմանադրությունը բառիս ժամանակակից իմաստով, նոր ժամանակ ծնունդն է, թեն բուն տերմինի արմատները խորանում են հնագույն ժամանակները:

Սահմանադրությունը պատմահիրավական և իրավաքաղաքական կատեգորիա է: Հին Հռոմում ծնունդ առած սահմանադրության, /կոնստիտուցիա/ եզրույթը դարերի խորքերից, հասել է մեզ և հաստատուն տեղ գրավել աշխարհի շատ ժողովուրդների իրավական համակարգերում: Ինքը՝ սահմանադրություն եզրույթը լատիներեն Constitutio բառի թարգմանությունն է, որը նշանակում է «սահմանել» կամ «կառուցվածք»: Պատմական իրավական հաշարձանները վկայում են, որ սահմանադրություն եզրույթը իրավաբանական իմաստով օգտագործվել է դեռևս հունական և հռոմեական փիլիսոփաների ու իրավագետների աշխատություններում, հռոմեական կայսրերի և եվրոպական պետությունների օրենսդրության մեջ: Օրինակ, Հին Հռոմում սահմանադրություններ /կոնստիտուցիաներ/ էին կոչվում կայսրերի արձակած որոշ իրավական ակտերը, ի տարբերություն ազատ քաղաքացիների ժողովրդական ժողովների ընդունած օրենքների: Սակայն ոչ ստրկատիրական և ոչ էլ ֆեոդալական պետություններին սաահմանադրությունը՝ իբրև գրված հիմնական օրենք, վերջինիս այժմեական իմաստով, հայտնի չի եղել: Այս որակով սահմանադրությունները ծնունդ առան բարժուական հեղափոխությունների դարաշրջանում և արդյունք են բացարձակ միապետությունների դեմ տարած հաղթանակի և ազգային-ազատագրական պայքարի [1]:

Սահմանադրությունը որպես պատմահիրավական և իրավաքաղաքական

կատեգորիա ուղղած էր ավատական միահեծան պետական կարգերի և աստիճանավորված հասարակական կառուցվածքի դեմ: Սահմանադրությունը եկավ հաստատելու և իրավաբանորեն ամրագրելու մարդու բնական ու անբաժան իրավունքները և ազատությունները, սահմանելն այնպիսի պեաահիրավական կառուցակարգ, որն ապահովեր մարդու արժանապատիվ, բարեկեցիկ և անվտանգ կյանքը:

Սահմանադրությունները իրավաբանորեն ամրապնդեցին և կարգավորեցին, առաջին հերթին, պետական իշխանության կազմակերպման ու իրականացման ձևերը, մեթոդները և եղանակները [2]: Սակայն, եթե հիմնահարցը դիտարկելու լինենք այն սոցիալական արժեքների տեսանկյունից, որոնք հաստատվեցին այն ժամանակ և այժմ հաստատվում են աշխարհում, պարզ է դառնում, որ սահմանադրություն կոչված երևույթն, առաջին հերթին, կյանքի է կոչվել մարդու իրավունքներն արտահայտելու ն ամրապնդելու համար, ուստի այդ առնչությամբ միայն ու միայն պետք է կանոնավորի ու սահմանափակի պետական իշխանությունը:

Սահմանադրությունը պարզապես երկրի հիմնական օրենքը չէ, այլ հենց այն իրավաբանական փաստաթուղթը, որն ունակ է /և պետք է/ մարդու իրավունքները դարձնել իրական ու անսասան: Այսպես ընկալեցին հիմնահարցը պետության հիմնարար նշանակության օրենքներ ստեղծելու ուղղությամբ առաջին քայլեր կատարող իմաստունները, որոնք դրանց օգնությամբ ու միջոցով փորձեցին պատնեշ կառուցել պետական իշխանության կամայականությունների դեմ:

Սահմանադրական իրավունքի տեսաբանները դիտարկում են, որ հասարակության մեջ առկա են փաստական սահմանադրություն և Իրավաբանական [3]: Սա ուշադրության արժանի հանգամանք է: Փաստական սահմանադրությունը պետական իշխանության առնչությամբ հասարակության տարբեր խմբերի և նան ազգերի միջև քաղաքական հարաբերություններն է: Դրանք գոյություն ունեն փաստացի, օբյեկտիվ կերպով: Խոսքը հասարակության և պետության կառուցվածքի մասին է անկախ օրենքում ամրագրված լինելու հանգամանքից: Այստեղից էլ փաստական սահմանադրություն հասկացությունը: Փաստական սահմանադրությունն իր արտացոլումն է ստանում իրավաբանականի մեջ, այսինքն՝ պետության մեկ օրենքում կամ օրենքների համակարգում: Սկզբունքորեն փասական և իրավաբանական սահմանադրությունների միջև պետք է համապատասխանություն լինի, բայց այն, ինչ որ պետք է լինի, միշտ չէ, որ լինում է: Այս է հարցի բարդությունը:

Սահմանադրությունը բովանդակությամբ կարող է շատ ժողովրդական լինել և իրականությանը չհամապատասխանող ամբողջությամբ կամ առանձին դրույթներով: Նման պարագայում սահմանադրությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ իրական է (կեղծ): Սահմանադրությունների պատմությունը նման օրինակներ շատ գիտե /օրինակ բոնատիրական վարչակարգերի

սահմանադրությունները/:

Սահմանադրությունն իրավաբանական տեսակետից հանդիսանում է պետության հիմնական օրենքը, որն ամրագրում է հասարակական և պետական կարգի կարևորագույն սկզբունքները, իշխանության աղբյուրը, պետության կառուցվածքն ու կառավարման ձևը, քաղաքացիների իրավական դրության հիմունքները [4]:

Ինչպես նշել է հայտնի սահմանադրագետ Վ.Նազարյանը. «Սահմանադրությունը բարձրագույն իրավաբանական ուժով օժտված մեկ միասնական, ամբողջական նորմատիվ իրավական ակտ է, որը ժողովրդի կամքին համապատասխան կարգավորում է կյանքի բոլոր ոլորտներում ծավալվող ամենից էական, արմատական, վճռորոշ հարաբերությունները, այն պաշտոնապես հռչակում և իրավաբանորեն ամրագրում է ի ծնե մարդուն և ժողովրդին /ազգին/ պատկանող բնական և անօտարելի իրավունքներն ու ազատությունները և հիմնադրում է դրանց իրացման /կենսագործման/ պետական եղանակը» [5]: Պրոֆեսոր Ն.Այվազյանի կարծիքով «Սահմանադրությունը նորմատիվ ակտ է, որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ պետության իրավական ողջ համակարգի նորմերի նկատմամբ կոչված է կարգավորելու, մի կողմից, մարդու և հասարակության, մյուս կողմից մարդու և պետության միջև հարաբերությունները, ինչպես նաև հենց իր պետության կազմակերպման հիմունքները» [6]:

Ինչպես տեսնում ենք, վերոնշված հեղինակները ընդգծում են սահմանադրության միայն իրավական հատկանիշը (որպես բարձրագույն իրավաբանական ուժը) չանդրադառնալով նրա սոցիալական (հասարակական) և քաղաքական կողմերին: Վերջիններս սահմանադրության էական. Ելակետային հատկանիշներ են, քանզի սահմանադրությունը առաջացավ քաղաքական խոշոր իրադարձությունների (հեղափոխություններիմ ազատագրական պայքարի) արդյունքում: Երկրորդ, ինչպես նշել ենք՝ սահմանադրությունը իրավաքաղաքական որոշիչ ակտ է, յուրահատուկ հասարակական պայմանագիր՝ պետության կառուցվածքի, կառավարման ձևի, քաղաքական ռեժիմի և անձի սոցիալ-իրավական կարգավիճակի մասին: Եվ հենց այս գործոններից է բխում, նրա «բարձրագույն իրավաբանական ուժի» հատկանիշը:

Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է, որովհետև ամրագրում է հասարակության և պետության կարգի հիմունքները, քաղաքացիների իրավական դրությունը, այսինքն՝ հասարակության հիմքը, որի վրա հիմնադրվում է մնացած ամեն ինչ: Սահմանադրության հոդվածները անհատի, հասարակական և պեւռական շահերի տեսանկյունից արտացոլում են /պետք է արտացոլեն/ ամենակարևորը, ամենաէականն ու ամենահիմնականը: Սահմանադրության դրույթները առավել կոնկրետացվում են սովորական օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մեջ:

Սահմանադրությունն իբրև հիմնական օրենք օժտված է բարձրագույն

իրավաբանական ուժով /մի հանգամանք, որն ուղղակի ամրագրված է բոլոր սահմանադրություններով/ և հենարան է, հիմք՝ ընթացիկ օրենսդրության համար:

Իրավաբանական ուժը նորմատիվ ակտերի համադրելիության հատկությունն է:

Այս պարագան նշանակում է, որ բոլոր սովորական օրենքներն ու պետական մարմինների այլ ակտերը պետք է արձակվեն սահմանադրության հիման վրա և վերջինիս դրույթներին համապատասխան. օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը:

Իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին» (ՀՀ Սահմանադրություն, հոդվ.6, 2-րդ մաս):

Հիմնական օրենքի և այս կամ այն նորմատիվ ակտի միջև հակասության դեպքում, վերջինս, սահմանադրական պահանջներին համապատասխան, անհապաղ պետք է վերացվի կամ ենթարկվի փոփոխության: Այստեղից հետևում է ևս մեկ կարևոր հանգամանք սահմանադրության մշակումն ու ընդունումը ենթադրում է ընթացիկ օրենսդրության թարմացում և նորացում [7]:

Սահմանադրությունն ընդունվում և փոփոխվում է հատուկ կարգով: Այդ կարգը ամրագրվում է սահմանադրություններում հիմնական օրենքի առանձին բաժնի կամ / հոդվածի տեսքով և էականորեն տարբերվում է սովորական օրենքների ընդունման կամ փոփոխության ընթացակարգից:

Սահմանադրաթյունը ժամանակակից իմաստով, ի տարբերություն մյուս իրավական ակտերի, ընդունվում է ժողովրդի կողմից կամ նրա անունից: Այդ սկզբունքի գործողությունը սկսվել է այն ժամանակներից, երբ ծագել է Սահմանադրության ստեղծման գաղափարը /XVIII դար/:

Սահմանադրություններն ընդունվում են ոչ միայն ժողովրդի կողմից անմիջականորեն (հանարքվեի կլամ ընտրված մարմինների (սահմանադիր ժողովի կամ խորհրդարանի միջոցով) այլ նաև հենց ժողովրդի անունից: Այսպես, Իտալիայի Հանրապետության Սահմանադրության նախաբանում նշվում է, որ այն հավանության է արշժանացել և ստորագրվել Սահմանադիր ժողովի՝ 1974 թվականի դեկտեմբերի 22-ին:

Ժողովրդավարական պետություններում ժողովուրդը հանդիսանում է ինքնիշխանության կրողը և իշխանության միակ աղբյուրը: Եթե պետական իշխանությունը համարվում է ժողովրդի կամքի արտահայտման, դրսնորման բարձրագույն ձև, ապա միայն այդ իշխանությունն է, որ կարող է ունենալ հիմնարար բնույթ:

Հիմնական օրենքների մշակման և ընդունման հատուկ ընթացակարգի իմաստն այն է, որ որևէ, մեկ պետական մարմին իր հայեցողությամբ չվարվի սահմանադրական նորմերի հետ: Ժողովրդի բարձրագույն կամքն իրավաբանորեն արտացոլվում է հիմնական օրենքի մեջ, որն իր իրավաբանական ուժով վեր է ցանկացած նորմատիվ իրավական ակտից:

Վերջապես, հարկ է ընդգծել, որ սահմանադրությունն առավել ակյուն և հիմնարար բնույթի իրավաքաղաքական փաստաթուղթ է:

Հիմնական օրենքը ստեղծվում է երկարատև ժամանակաշրջանի համար: Սահմանադրության հոդվածների հաճախակի փոփոխությունները ծայրահեղ անցանկալի են: Պետության հիմնական օրենքը պետք է այնպես կառուցված լինի, որ այնտեղ իրենց արտացոլումը գտնեն հասարակության, պետության և քաղաքացու փոխհարաբերությունների հիմքերը կազմող հիմնարար անձանց նշանակության արժեքները: Սահմանադրության մեջ կարող են ամրագրվել և ամրագրվում են սոցիալական քաղաքականության կամ ծրագրային բնույթի դրույթներ:

«Սահմանադրություն» եզրույթի հետ մեկտեղ, կիրառվում են այլ արտահայտություններ: Լատինական Ամերիկայի որոշ երկրներում (օրինակ Կոլումբիայում, Վենեսուելայում) օգտագործվող «քաղաքական սահմանադրություն» հասկացությունը կոչված է տարբերակել սահմանադրությունը որպես հատուկ տեսակի ակտ, կանոնադրությունից, որը մի շարք լեզուներում նույնպես հնչում է որպես սահմանադրություն (constitution): «Քաղաքական» բառն առանձնացնում է հիմնական օրենքը, օրինակ, արհմիության կանոնադրությունից: Որոշ երկրներում սահմանադրություն է կոչվում միայն այն կազմող ակտերից մեկը (օրինակ՝ Կանադայի 1982թ. Սահմանադրությունը, թեն նրա կազմի մեջ են մտնում ևս երկու տասնյակի հիմնական օրենքներ): Ավստրիայում հիմնական ակտը կոչվում է «Սահմանադրական օրենք» («Դաշնային սահմանադրական օրենք»): Այլ երկրներում սահմանադրությունը կազմում են հատուկ արարողակարգով ընդունված մի քանի օրենքներ, սակայն այս դեպքում նրանցից յուրաքանչյուրն անվանվում է համապատասխան կարգավորման առարկայի (օրինակ «Կառավարման ձևը» Շվեդիայամ կամ «ձողի մասին» Իսրայելում) [8]:

Գերմանիայում 1949թ. Սահմանադրությունը պաշտոնապես անվանվում է հիմնական օրենք, ընդ այդմ այդ օրենքի ընդունման ժամանակ այս երկու հասկացությունների միջև արվել է հստակ տարբերակում: Հիտլերյան Գերմանիայի վերացումից հետո մշակելով 1949թ. ակտը Գերմանիայի մի մասի համար (պատերազմից հետո Գերմանիայի մեծ մասի վրա ստեղծվեց Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը դաշնակիցների օկուպացման գոտում և Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը՝ ԽՍՀՄ-ի օկուպացման ավելի փոքր գոտում), Խորհրդարանական խորհուրդը (լանդթագների գերմանական պատմական հողերի ներկայացուցիչների մարմինը) ենթադրում էր, որ սահմանադրություն կընդունվի նրա երկու մասերի վերամիավորումից հետո: 1990թ. Գերմանիան միավորվեց: Ստեղծվեց հատուկ հանձնաժողով սահմանադրության նախագիծը մշակելու նպատակով, սակայն եկան այն եզրակացության, որ 1949թ. ակտը միանգամայն համապատասխանում է ժամանակակից պայմաններին և հարկ չկա այն փոխարինելու

(հիմնական օրենքի մեջ մինչ այդ արվել էին մի քանի տասնյակ լրացումներ և փոփոխություններ, ճիշտ է, մեծամասամբ ոչ էական): Այսպիսով, թերևս, վերացվեց գերմանական իրավաքաղաքական մտքի (և գիտության) կողմից «սահմանադրություն» և «հիմնական օրենք» հասկացությունների միջև արվող տարբերությունը:

Ընդունված և հաստատուն [9] մոտեցումը ճիշտ է, խորհրդային իշխանության առաջին տարիներին այս իրավական ակտն ուներ բաղադրյալ կազմություն՝ նրա մեջ էր մտցված 1917թ. շահագործվող և աշխատավոր ժողովրդի իրավունքների հռչակագիրը: Բարդ կազմություն ուներ նաև ԽՍՀՄ-ի 1924թ. Սահմանադրությունը (հիմնական օրենք):

Եվ վերջապես, նշենք, որ Սահամադրության կարևոր առանձնահատկություններից է նրա յուրահատուկ կարգավորման առարկան, այսինքն՝ հասարակական հարաբերությունների այն հատուկ բնասգավառները, որոնք պահանջում են սահմանադրական կարգավորում: Ի տարբերություն մյուս իրավական ակտերի, որոնք կյանքի են կոչվում կարգավորելու որևէ, կոնկրետ բնագավառ կամ որոշակի խումբ հասարակական հարաբերություններ, սահմանադրությունն ունի կարգավորման համապարփակ բնույթև Այն ընդգրկում է հասարակության կյանքի բոլոր ոլորտները՝ քաղաքական և տնտեսական, հոգևոր և այլն, ընդ որում, կարգավորելով այդ ոլորտների առավել կարևոր, հիմնային, առանցքային նշանակության հասարակական հարաբերությունները: Այդպիսիք են հանդիսանում՝ սեփականության ձևերն ու բովանդակությունը, անհատի հ պետության փոխհարաբերությունների բնույթը, պետական իշխանության պատկանելությունը և իրացման ձևերն ու մեխանիզմները, պետության և քաղաքական կուսակցությունների տեղն ու հարաբերակցությունը քաղաքական համակարգում և այլն [10]:

Սահմանադրություն հասկացության հետ անխզելիորեն կապված է սահմանադրականության հասկացությունը, որը բարդ հասարակական-քաղաքական և պետական իրավական կատեգորիա է, որի հիմքը կազմում են սահմանադրական ժողովրդավարության, /այսինքն սահմանադրության որպես պետության և հասարակության հատուկ փաստաթղթի վրա հիմնված ժողովրդավարության իդեալների, իշխանության որոշակի ինստիտուտների առկայությունը, սահմանադրությանը համապատասխան քաղաքական ռեժիմի և ժողովրդավարության արժեքների պաշտպանության համակարգը, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, սահմանադրական կարգն ամբողջությամբ»:

Սահմանադրականությունը իդեալ է, որին պետք է ձգտի հասարակությունը, որը գնում է սոցիալական առաջադիմության ուղիով: Սահմանադրականության հիմնական բաղադրիչներն են.

Սահմանադրական գաղափարները, մասնավորապես պետության ու հասարակության կապվածությունը իրավունքի և օրենքի հետ, մարդկային

արժեքների առաջնությունը /գերապատվությունը/ և որպես հասարակության բարձրագույն արժեքի իմաստավորումն ու գիտակցումը, ժողովրդի անմիջական մասնակցությունը պետական իշխանության մարմինների ձևավորմանը, և այդ մարմինների գործունեությունը ժողովրդի շահերին ծառայեցնելը, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մեխանիզմների ու երաշխիքների առկայությունը, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ նյութաֆինանսական բազայի և իրավական հիմքերի առկայությունը, հասարակական և քաղաքական կազմակերպությունների գործունեության երաշխիքների ապահովումը:

Հասարակության նորմատիվ իրավական հիմքերի առկայությունը, որն արտահայտում է, ամենից առաջ, պաշտոնական սահմանադրության ընդունմամբ՝ ներառելով սահմանադրական իրավական ինստիտուտների հանրագումարը: Սահմանադրական իրավական ինստիտուտները կարող են ստեղծել ժողովրդավարական հասարակություն, եթե արտահայտեն մարդու բնական իրավունքներն ու ազատությունները և դրանց իրականացման իրական երաշխիքները, ամրագրեն հանրային իշխանության կազմակերպման իրավական սկզբունքները /իրավունքի գերակայություն, իշխանությունների տարանջատում, տեղական ինքնակառավարման հիմունքներ և այլն/, քաղաքական բազմակարծությունը և բազմակուսակցության սկզբունքը:

Ժողովրդավարական սահմանադրությանը համարժեք փաստացի քաղաքական ռեժիմի առկայությունը: Սահմանադրականության մասին խոսք չի կարող լինել, եթե սահմանադրությունը չի համապատասխանում փաստացի ձևավորված ժողովրդական սկզբունքներին և պետաիրավական ռեժիմին /օրինակ սոցերկրների սահմանադրությունները/: Տվյալ պարագայում գործ ունենք դեկլարատիվ, թղթային, պատրանքային հիմնական օրենքի հետ, որը ոչ մի կապ չունի իրականության հետ:

Այսպիսով, սահմանադրականության բաղադրամասերից է նրա համապատասխանությունը փաստացի հասարակական հարաբերություններին, որը սահմանադրական նորմերի անմիջական ն արդյունավետ գործողության կարևոր երաշխիքներից է:

Սահմանադրության և սահմանադրական կարգի պաշտպանության համակարգի առկայությունը: Սահմանադրականությունը ենթադրում է ազգային իրավական համակարգում սահմանադրության գերակայություն: Այսինքն սահմանադրական կարգավորմանը ենթակա հասարակական հարաբերությունները չի կարելի փոխարինել օրենսդրական, ենթաօրենսդրական ակտերով: Սահմանադրության գերակայությունը կապված է ոչ միայն նորմատիվ իրավական վերադասության /սուբորդինացիայի/ խնդրի, այլ նաև հասարակական գիտակցությունում դրա իմաստավորման ու արժևորման հետ:

Որպեսզի առավել բացահայտվի սահմանադրականության էությունը, անհրաժեշտ է դիտարկել համաշխարհային սահմանադրական զարգացման

գործընթացը նոր և նորագույն ժամանակաշրջանում:

Մասնագիտական գրականության մեջ համաշխարհային սահմանադրական զարգացման գործընթացում առանձնացնում են հետևյալ չորս հիմնական, փուլերը.

Առաջին՝ փուլը ներառում է XVIII դարի վերջից մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը.

Երկրորդն՝ ընդգրկում է երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածը.

Երրորդ՝ շրջանը՝ 1945 թվականից մինչև 80-ական թվականների վերջը.

Չորրորդը՝ 90-ական թվականներից մկնչև մեր օրերը [11]:

Սահմանադրականության զարգացման առաջին փուլը բուրժուա-ժողովրդավարական կարգերի ձևավորման և հաստատման գործընթացն է Եվրոպայի և Ամերիկայի երկրներում: Հենց այստեղ են ծագել առաջին սահմանադրությունները՝ ԱՄՆ-ի /1787թ./, Ֆրանսիայի /1791թ./, որոնք իրենց հռչակագրերով /Անկախության մասին 1776թ. և Մարդու և քաղաքացու իրավունքների մասին հռչակագրերը/. Նշանակալի ազդեցություն ունեցան համաշխարհային սահմանադրական մտքի և պրակտիկայի զարգացման վրա:

Խնդրո ժամանակաշրջանում սահմանադրական զարգացումը որոշակի սահմանափակված էր, քանզի անցում էր կատարվում բացարձակ միապետություններից սահմանադրական կարգերի: Այդ ժամանակաշրջանի սահմանադրությունների հիմքում, որպես կանոն, ընկած է ազատականության հայեցակարգը, ըստ որի սահմանադրության նպատակն էր առավելագույնս սահմանափակել պետության միջամտությունը քաղաքացիական հասարակության և մասնավոր կյանքի ոլորտում: Այդպիսի մոտեցումը կանխորոշում էր սահմանադրության իրավական բովանդակությանը, որը հանգում էր հանրային իշխանության կազմակերպման իրավական հիմքերին և անձի կարգավիճակին: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ընդգծել, որ նույնիսկ այդ ժամանակաշրջանում փորձ արվեց սահմանադրական նորմերով ամրագրել պետության «սոցիալական» դերը: Այսպես, օրինակ 1848թ. Ֆրանսիայի սահմանադրության նախագծի քննարկումների ժամանակ առաջարկություն արվեց Ֆրանսիայի հանրապետությունը որակել որպես «սոցիալական», սակայն առաջարկությունը մերժվեց:

Համաշխարհային սահմանադրական զարգացման երկրորդ փուլը բնութագրվում է սահմանադրական իրավաստեղծ գործունեության աննախընթաց աշխուժացմամբ, որն արդյունք է մեծ թվով նոր պետությունների երևան գալով /օրինակ Եվրոպայում՝ Ավստրա-Հունգարիայի կայսրությունների խորտակմամբ, իսկ Ասիայում՝ գաղութատիրության համակարգի ճգնաժամի ու քայքայման հետևանքով/ և հին սահմանադրական պետություններում ժողովրդավարական քաղաքական վարչակարգերի ձևավորմամբ /Գերմանիա, Իսպանիա, Մեքսիկա/:

Սահմանադրականության զարգացման երրորդ փուլը բնութագրվում է համաշխարհային գաղութային համակարգի փլուզումով և սահմանադրական գործընթացում առավել քան 130 նոր պետությունների /Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի/ առաջացմամբ: Այդ ժամանակաշրջանին բնորոշ է սահմանադրական զարգացման երկու հիմնական մոդելներ՝ արևմտյան ժողովրդավարության և սոցիալիստական /օրինակ Ալբանիա, Բուլղարիա, Լունգարիա, 4իետնամ, ԳԴՀ, Չինաստան, Կուբա, Լեհաստան, Հյուսիսային Կորեա, Ռումինիա, Չեխոսլովակիա, Հարավսլավիա, Մոնղոլիա/ և վերջապես նոր սահմանադրական մոդելներ գաղութատիրությունից ազատագրված երկրներում:

Նշված երեք սահմանադրական մոդելներն ունեին իրենց առանձնահատկությունները և զարգացման միտումները:

Համաշխարհային սահմանադրականության զարգացման չորրորդ փուլը ներառում է արդի ժամանակաշրջանը, երբ ամբողջատիրական սոցիալիստական երկրների համակարգը, ըստ էության, փլուզվեց և առաջացան նոր պետություններ, որոնք ընդունեցին արևմտյան տիպի ժողովրդավարական սահմանադրական մոդելներ ն որոնց դրույթների բավականին մասը դեռևս կրում են թղթային, դեկլարատիվ բնույթ: Նոր զարգացող պետությունները, որոնք նախընտրել են ժողովրդավարական ճանապարհը դեռևս հսկայական անելիքներ ունեն պետական շինարարության ոլորտում, հատկապես իրավական հիմքերի վրա դնելու հանրային քաղաքական իշխանության կազմակերպումը, անկախ դատական իշխանության մարմինների համակարգի ստեղծումը և, ամենակարևորը՝ մուրդու ու քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների ամրապնդումը: Այս խնդրում հսկայական է սահմանադրականության տեսական և կիրառական ներուժը, որի յուրացումը կնպաստի նորանկախ և ժողովրդավարական ուղին բռնած երկրներին սոցիալ-քաղաքական ճգնաժամից դուրս գալուն ու քաղաքացիական հասարակության ձևավորմանը, որտեղ կապահովվի յուրաքանչյուր անհատի անվտանգ և արժանավայել կենսակերպը:

Օգտագործված գրականություն

1. Хабриева Т.Я., Чиркин В.Е. Теория современной конституции. М„ 2005, с. 12-13; Авакян С.А.Конституционное право России. Том 1, 2005, с. 136; Арутюнян Г.Г., Баглай М.В. Конституционное право. Энциклопедический словарь. М., 2005, с. 228.
2. Greavaz H., The British constitution, London, 1995, էջ 11: Այստեղ պնդվում է, թե անգլիական սահմանադրությունը հանդիսանում է «Օրենքներում և սահմանադրական համաձայնագրերում շարադրված սկզբունքներին համապատասխան գործող ինստիտուտների ամբողջություն: Սահմանադրու-

թյունը՝ հասարակությունն է նրա քաղաքական տեսանկյունից»:
3. Хабриева Т.Я., Чиркин В.Е. Теория современной конституции. М., 2005, с. 48-54.
4. Авакян С.А. Конституционное право России. М., 2003.
5. Վ.Նազարյան. ՀՀ սահմանադրական կոնցեպցիան. Երևան, 1992:
6. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Դասագիրք բուհերի համար: Պատ. խմբ. Պրոֆեսոր Ն.Մ.Այվազյան. Երևան, 2003, էջ 48:
7. Мазуров А.В. Конституция и общественная практика. М. 2004, ст. 22-23:
8. Хабриева Т., Чиркин В., Теория современной конституции, М., 2005, С.34.
9. Տես Հայաստանի Հանրապետության սահմադրական իրավունք. էջ 57:
10. Տես Сравнительное конституционное право.М., с. 67-81., Конституционное право. Учебник.Отв. ред. Профессор В.В.Лазарев. М., 1999, с.39., Конституционное право зарубежных стран. Учебник для вузов. Под общей пед. М.В. Баглая, Я.И.Лейбо, Л.М.Энтина. М., 1990, С. 58-69.
11. Տես Прело М. Конституционное право Франции. М., 1957, С. 350.

НОРИК ШАХНАЗАРЯН. ПОНЯТИЕ И СУЩНОСТЬ КОНСТИТУЦИИ. *В статье обстоятельно обсуждается понятие и сущность конституции. Цель проведенных исследований-обосновать, что конституция как основной закон государства представляет собой историко-правовой и политико-правовой документ, в котором закреплены структура государства, форма правления, политический режим, статус прав человека, система государственных органов и местного самоуправления. Конституция принимается и изменяется по специальной процедуре.*

NORIK SHAHNAZARYAN. THE CONCEPT AND ESSENCE OF THE CONSTITUTION. *The article discusses thoroughly the concept and essence of the constitution. The purpose of the conducted research is to substantiate that the constitution, as the basic law of the state, is a historical, legal and legal- political document that enshrines the structure of the state, the form of government, the political regime, the status of human rights, the system of state bodies and local self-government. The Constitution is a adopted and amended by a special procedure.*

ԵՀՀ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ 2022

ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

YEREVAN "HAYBUSAK" UNIVERSITY SCIENTIFIC AND SCIENTIFIC-METHODOLOGICAL JOURNAL

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

SOCIAL SCIENCES

2(3)

EDIT PRINT
43 D.Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am